

ԼԵՍԼԻ ԳԵՎԻՍ

ՍՊԱՆԳԻ ՆԱՀԱՆԳԸ



9(47.925)

7-41

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

ԼԵՍԼԻ Ա. ԳԵՎԻՍ

ՍՊԱՆԴԻ ՆԱՎԱՆԳԸ

3213

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

«ԳՆԼԼ»
ԵՐԵՎԱՆ - 2001



ISBN 941 (479.25)
ISBN 63.3 (24)52
9-411

Թարգմանությունը՝ ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿՅԱՆԻ

Դեյս, Լ.Ա.

Գ 411

Սպանդի նահանգը: Ամերիկյան դիվանագետի զեկույցագիրը
հայկական ցեղասպանության մասին, 1915-1917թթ.: - Եր.:
ԴԱԼԼ, 2001, 368 էջ:

Leslie A. Davis. The Slaughterhouse Province
An American Diplomat's Report on the
Armenian Genocide, 1915-1917.


Дэвис А. Лесли. Провинция бойни
Доклад американского дипломата об
Армянском геноциде, 1915-1917гг.

Գ 0503020913
0189(01)-2001

ԳՄԴ 63.3 (24)52

ISBN 99930-915-0-2

© ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿՅԱՆ, 2001



Առաջին համաշխարհային պատերազմի 1876-ին՝ Պարս Անի քաղաքում, առ
սահման ապրիլներուն հրատարակած է հրատարակագրու-
թյանը, հայնպատարանն նախադեպին հետո՝ իրադարձութեա-
թյանը: Քանի որ ասոր ինքուններս արքան էր, պետական
զինարարունները՝ արտաքին արժեք նախադարձութեա-
նայնասանքի կրկուտին՝ Քալիֆում զինանախադարձութեա-
նայնութեան կարճից նախադ կարճագոյն ստեղծու առ ներսն
արքայ պատերազմներն զինանախադարձութեա-
նայնից շրջանադարձութեան կ'հասարակութեան: Ըստնախադարձութեան

**Գրքի Հրատարակությունը
Հոգացել են**

դոկտոր Ջան Ե. Լյուսի ՏեՐ-ՄԱՆՈՒԵԼՅԱՆՆԵՐԸ
(Բոստոն) ի հիշատակ իրենց ծնողների՝
Սարգիս Ե. Մարգարիտ ՄԱՆՈՒԵԼՅԱՆՆԵՐԻ,
Գառնիկ Ե. Օղիտա ԳԼԸՃՅԱՆՆԵՐԻ,
ինչպես նաև

դոկտոր Ճորճ Ե. Թամարա ՏեՐ-ՄԽՍՅԱՆՆԵՐԸ
(Նյու Յորք) ի հիշատակ իրենց ծնողների՝
Երվանդ Ե. Մարիամ ՏեՐ-ՄԽՍՅԱՆՆԵՐԻ,
Կարապետ Ե. Մարո ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐԻ

**ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՅԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԸ**

Վերջապես նվիրական նպատակ մը կիրադործվի՝ Հայ ընթերցողին կներկայացվի մեր պատմության մեծագույն ողբերգության՝ Համազգային ցեղասպանության ամենեն արժեքավոր ու արժանահավատ վկայություններեն մեկը՝ ամերիկյան Հյուպատոս Լեսլի Դեիսին պաշտոնական հաշվետվությունը: Ավելցնենք անմիջապես, որ Դեիսը երբեք գիրք չէ գրած, հավանաբար այդ տեսակ նպատակ չէ ալ ունեցած: Սակայն դիվանագետներուն ճակատագիրը անկանխատեսելի է: Ո՛վ գիտե կոռնուելի, կոլումբիայի, Նյու Յորքի համալսարաններեն շրջանավարտ ելած, իմաստասիրության եւ իրավաբանության բակալավրի տիտղոսի արժանացած, բայց դիվանագետ դարձած Դեիսին կյանքը ի՞նչ շարունակություն պիտի ունենար, եթե 1914 թ. մայիսին Սարբերդ՝ Հյուպատոսի պաշտոնին չկոչվեր: Ատկե առաջ իր գործունեությունը շատ սովորական ընթացք ունեցած, բացառիկ ապագա կանխագծած չէ:

Լեսլի Դեիսը ծնած է 1876-ին՝ Պորտ Ջեֆֆերսոն, ուսանած տարիներուն հրապուրված է հրապարակագրությանը, համալսարանն ավարտելեն հետո՝ իրավագիտությանը: Քանի որ օտար լեզուներու տիրած էր, պետական դեպարտամենտը՝ արտաքին գործոց նախարարությունը աշխատանքի կընդունե՝ Բաթում դիվանագիտական ծառայության կղրկե: Շուտով կպարզվի սակայն, որ երիտասարդ պաշտոնյային միջպետական հարաբերություններեն ավելի շրջապատույտները կհետաքրքրեն: Ընձեռված առիթը

օգտագործելով ան Ուզբեկիստան՝ Միջին Ասիայի անապատները կհասնի, ապա նաեւ Կովկասյան լեռները՝ հուսկ Արարատին գագաթը կրարձրանա: Անշուշտ, երեք տարի հետո, երբ աշխատանքային պայմանաժամը լրացավ եւ հայրենիք վերադարձավ, ծառայողական բնութագիրը խոստումնալից չէր կրնար ըլլալ: Պետական ղեկարտամենտի տնօրինութիւնը բավական երկար կմտմտա, թե ո՞ր երկիրը ղրկե անհեռանկար ղիվանագետին եւ ի վերջո Պարբերող հարմար կգտնե, որը Օսմանյան կայսրութեան՝ Միացյալ Նահանգներու տասներեք հյուպատոսութիւններէն մեկը՝ ամենեւն մեկուսացածը կնկատվեր: Բավական է հիշել, որ այն ժամանակ Պարբերող նավահանգիստներէն նվազագույնը տասներեք, չոգեկառքի կայարաններէն տասնութ օրվա հեռավորութիւն ունեւ: Նոր պաշտոնավայր հասնելէն հետո ալ Դեւիսը կշարունակե նախկին նախասիրութիւններով տարվիլ՝ ձիով շրջապտույտների կեյլե, տեղի թուրք պաշտոնյաներուն բրիջ կտորվեցնե, թղթախաղի երեկոներ կկազմակերպե: Մինչեւ այն պահը, երբ ծայր կառնե իր արտահայտութեամբ՝ «համաշխարհային պատմութեան աննախադեպ նախճիրը»՝ արեւմտահայութեան բնաջնջումը: Ճակատագրական զուգադիպութեամբ Մամուրեթ-ու-Ազիզի կուսակալութիւնը սպանդի վայր ընտրված էր, հոն կկուտակեին եւ ապա կբնաջնջեին ոչ միայն տեղվույն, այլեւ Արեւմտահայաստանի տարբեր գավառներէն եւ նահանգներէն քված քարավանները: Դեւիսը Անատոլիա մնացած վերջին օտար ղիվանագետն էր, սակայն չկրցավ անտարբեր գտնվիլ, կամովին ստանձնեց նահատակվող հայութեան պաշտպանութիւնը: Հյուպատոսը գիտեք, իրեն պաշտոնապես տեղեկացուցած էին, որ անձնական ու ղիվանագիտական գրագրութիւնը խիստ քննութեան կենթարկվի, սակայն նկատի չառնելով այդ պարագան, անվերջ ծածկագրեր, ճեպագրեր, հեռագրեր կհղեր

թուրքիայի ամերիկյան դեսպան Մորգենթաուին, պետական ղեկարտամենտին, կնկարագրեր ոճրագործութեան սահմոկեցուցիչ մանրամասները, կհորդորեր իր երկրի կառավարութեան անունով միջամտել, արհաւիրքը կանխարգելել: Ան չէ զլացած՝ նույնիսկ մեկ հայու կյանք ազատելու համար բազում անգամներ դիմած է ընդհանուր կառավարիչին, ոստիկանապետին, մինչեւ տեղական իշխանութիւնները ձանձրացած, հասկցուցած են հյուպատոսին, որ իրավունք չունի իրենց ներքին գործերուն խառնվելու: Ամեն պարագայի Լեւի Դեւիսը չհուսահատեցավ, ճիշտ հակառակը, ավելի հանդուգն քայլի դիմեց՝ հյուպատոսարանը ապաստարանի վերածեց, տարիներով մեկ քանի տասնյակ հայ պատսպարեց, իսկ որուն որ կրցավ, Դեւիսի քյուրտերուն կաշառելով Արեւելահայաստան փախցուց: Ամերիկյան հյուպատոսը ատով ալ չէր գոհանար, կյանքը վտանգի ենթարկելով, գաղտագողի կհետեւեր աքսորվող քարավաններուն, ընդհուպ սպանդի վայրերը կհասնեւ եւ կլուսանկարեր այն ամենը, ինչը ոչ թե բառերով պատմել, երեւակայելը նույնիսկ անհնար էր...

1917-ին, ինչպես հայտնի է, Միացյալ Նահանգները եւ թուրքիան խզեցին ղիվանագիտական հարաբերութիւնները, պետական ղեկարտամենտը Դեւիսին հրահանգեց երկիր վերադառնալ, ներկայացնել երեք տարիներու հյուպատոսական գործունեութեան գրավոր հաշվետվութիւնը: Սակայն, այն ինչ Դեւիսը գրեց ամիսներու համառ, հետեւողական ջանադրութեամբ, ղիվանագիտական փաստաթուղթ ըլլալե ավելի ականատեսի անողոք մեղադրական է, որը անհերքելի փաստերով ու մանրամասնութիւններով կներկայացնե երիտթուրքերուն հղացած, նախաձեռնած ու իրագործած այն ոճրագործութիւնը, որը հետագային, իրավմամբ, «դարու առաջին ցեղասպանութիւն» պիտի կոչվեր: Դեւիսին ներկայացուցած վավերագիրը այն

աստիճանի անկողմնակալ, անաչառ, անհերքելի էր, որ պետական ղեպարտամենտի պաշտոնյաներն անգամ, երբ ընթերցեցին, խուճապի մատնվեցան, «զաղտնի» կնիքով դրոշմեցին, որը եւ պատճառ դարձավ, որ երկար տարիներ անձեռնմխելի, անհասանելի մնա: Համեմատաբար վերջերս միայն մեր ժողովուրդի մեկ ուրիշ բարեկամ՝ ամերիկուհի Հետազոտող տիկին Սյուզան Բլերը, զոր անձամբ ճանչնալու եւ աջակից ըլլալու գոհունակությունը ունեցած եմ, պատճենահանեց Հաշվետվության մեկ օրինակը, զաղտնազերծեց ու գիտական մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկեց: Տիկին Բլերը անձնական նախաձեռնությամբ ու ջանքերով մինչեւ անգամ Լեւի Դեւիսին 1915 թվականին Նարբերդ կատարած լուսանկարներուն մեկ մասը Հայտնաբերեց, որոնց պահպանվելն իսկ Հրաշք պետք է համարել ու այդ ամենը հանգամանալի ծանոթագրություններով անգլերեն տպագրեց: Գիրքը շուտով վերահրատարակվեցավ Նյու Յորք, թարգմանվեցավ, լույս տեսավ Ֆրանսա եւ ահա, վերջապես, Հայերենին հերթն ալ հասավ:

Կուզեմ օգտագործել առիթը, շնորհակալություն Հայտնել սիյուռքահայ գրասերներ տեր եւ տիկին Ճան եւ Լյուսի Տեր-Մանուելյաններուն, տեր եւ տիկին Ճորձ եւ Թամարա Տեր-Մխայաններուն, որոնք ամենայն պատրաստակամությամբ ստանձնեցին այս տեսակ կարեւոր հրատարակության մը ծախքը եւ Գրիգոր Զանիկյանի տարիներու տքնանքը վերջնական հանգրվանի հասցուցին:

Լեւի Դեւիսին գիրքի լույս ընծայումը Հայերեն՝ նախ բարոյական պարտք է անշահախնդիր բարեկամի մը հիշատակին հանդեպ, ապա մեր անժամանցելի դատին ու պահանջատիրության հերթական ահազանգը, որը պիտի հնչեցնենք այնքան, մինչեւ հասնինք արդարացի հատուցման:

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇՃՅԱՆ

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ

Եթե սկսելու լինեմ այն անսովոր ողիսականի ելակետից, որի շնորհիվ այս գիրքը կայացավ, ապա նախ շնորհակալություն պիտի հայտնեմ հանգուցյալ գիտնական Հայր Գրիգոր Գերգերյանին, որն իր գործի նկատմամբ անմնացորդ նվիրումով ոգեւորեց ինձ ու չափազանց շատ բան սովորեցրեց: Էլսի Կելլին ու պատվելի Ջոն Մ. Սատոնը նույնպես արժանի են երախտիքի, որովհետեւ ինձ ծանոթացրին ամերիկյան բարեգործական կազմակերպության այն աշխատակիցներին, ովքեր վաթսուն տարի պահպանել էին Հյուպատոսի կատարած լուսանկարները: Պրոֆեսորին, կնոջը, դուստրերին, որոնք ինձ օգնեցին նյութեր հայթայթել, հատուկ շնորհակալություն եմ հայտնում: Իմ բարեկամները՝ Լինդա Բրանները եւ Ջինը աջակցել են իրենց հուսադրող խոսքերով, խորհուրդներով, սատարել են բարոյապես:

Վաշինգտոնում ինձ ընդառաջել են Ազգային արխիվի նախկին դիվանագիտական բաժնի աշխատակիցները, չնայած դա իրենց անմիջական պարտականությունների մեջ չէր մտնում: Նույն կերպ վարվեցին միկրոֆիլմերի ընթերցասրահի ու կենտրոնական գիտահետազոտական բաժնի ծանայողները:

ԱՄՆ-ի կոնգրեսի գրադարանի ձեռագրերի բաժնի սպասարկողների անսահման բարեհաճությունն ու բարձր արհեստավարժությունը նպաստեցին, որ իմ կատարած ուսումնասիրություններից ես լիարժեք բավականություն ստանամ:

Գերաշնորհ Մեսրոպ Աշճյանը՝ Նյու Յորքի հայ առաքելական եկեղեցու Կիլիկյան թեմի առաջնորդը անհաշիվ ժամեր հատկացրեց այս գրքի ընդգրկած պատմական փուլի բարոյագիտական ու բարոյական խնդիրները քննարկելու նպատակով: Կարծում եմ նա եւ իմ մյուս հայ բարեկամներն ինձ կներեն մինչեւ հրապարակումը վերջին հայտնագործությունները՝ Դեւիսի հաշվետվությունն ու լուսանկարները թաքցնելու համար: Դոկտոր Պերճուհի Նաջարյան-Սվաճյանն ու հանգուցյալ ամուսինը՝ դոկտոր Ստեփան Գ. Սվաճյանը ինձ Ուարեբրդի նահանգի, ցեղասպանության զոհերի հոգեբանության մասին տեղեկություններ տրամադրեցին:

Հենրի Մորգենթաու 3-րդը օժանդակեց խորհուրդներով, տարբեր դրվագների պատմություններով, պապի՝ Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաու ավագի մասին անձնական հավաքածուում ունեցած նյութերով:

Դոկտոր Կոստանդին Հաջիդիմիտրուն ընթերցեց նախաբանի նախնական տարբերակը, բազմաթիվ օգտակար քննադատական նշումներ կատարեց: Պրոֆեսոր Ռիչարդ Գ. Հովհաննիսյանը, չնայած սեփական գիտական զբաղումներով այդքան ծանրաբեռնված լինելուն, ծանոթացավ նախաբանին, շատ արժեքավոր դիտողություններ արեց:

Հանգուցյալ Բարբարա Թաչմանը՝ դեսպան Հենրի Մորգենթաու ավագի թոռնուհին, որը ծնվել է 1915-ի հունվարին՝ Կոստանդնուպոլսի ամերիկյան դեսպանատանը, խորհուրդներով նպաստեց գիրքը հասարակությանը ներկայացնելու կազմակերպմանը: Իսկույն եւեթ հասկանալով նյութի կարեւորությունը, պաշտպանեց այս գիրքը ստեղծելու իմ մտադրությունը:

Ես պետք է շնորհակալություն հայտնեմ նաեւ Վիրջինիայի նահանգի Ֆեբրֆակսի շրջանի ոստիկանության ղեպարտամենտին, հետաքննության ֆեդերալ բյուրոյին, ինչ-

պես նաեւ պետանվտանգության ծառայության խորհրդական էդվարդ Լիին, որոնք ինձ օգնեցին անվտանգության խնդիրները լուծելուն: Ուզում եմ շնորհակալություն հայտնել նաեւ Ռոբերտ Բրաունին, որը հնարավոր բոլոր միջոցներով սատարեց, որպեսզի այս աշխատանքը կայանա:

Իմ հրատարակիչը՝ Արիստիդ Կարատցասը եւ գլխավոր խմբագիր Ջոն Էմերիչը երախտագիտություն են արժանանում, չնայած անսովոր դժվարություններին, արտադրական ժամկետացանկը կազմելու եւ իրագործելու համար:

Վերջապես ես շնորհակալություն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր նպաստեցին այս գիրքը ավարտելուն՝ «Ֆոտոկոմպ» ընկերությանը՝ լուսանկարների վերատպման, Ջեննիին՝ ֆեդերալ ճեպընթացով ուղեւորվելու եւ ընդհանուր օգնության, Անջելին՝ շարվածասյունները սրբագրելու, իմ փեսա Ռոբերտին տեսողական վերծանման, դստերս՝ ճաչեր պատրաստելու, ցեղասպանության հետազոտմամբ զբաղված անհավասարակշիռ մորը հանդուրժելու եւ վերջապես ընտանիքիս մյուս անդամներին՝ օժանդակության, աջակցության համար:

Ս.Կ.Բ.

Կան օրաթերից 1915-ի ապրիլ-գեյսեմբեր ամիսներին ավարտվեց մուսափորապետ ԵՐՈՍՍՑ հոգու սպանելով: Օսմանյան կայսրության որդեգրած այս մրախիթ, որին ութ ամսվա բնակացում գտնվեց Անատոլիայի հայ ազգայնականության մեկ նորորդը, իր նպատակն ընդգրկած արքայապետությանը անհամեմատ գերազանցում է նախնական անբաղձությունները, չնայած չափազանց զարգացած էին տեխնիկական միջոցները, որոնք պրոֆեսորին նրկորդ այսպահանքով ընթացում:

Քաղաքի շրջանային Վ. Պանթըր Թանայան կայսրության մասունն ձեռնարկան նախահանգստուն ԱՄՆ-ի հրապարտական գործառն է այս տարածաշրջանի իրազարմությունների մասին պետականարտաձեռն հրան համեմատ

ՆԱԽԱԲԱՆ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՎԿԱՅՈՒՄ Է ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Իրադարձությունները եւ վայրը, որոնք նկարագրվում են այս գրքում, ամերիկյան ներկա իրականությունից չափազանց հեռու են: Օսմանյան կայսրությունում, 1914-1923 թվականներին, փաստաթղթերով վավերացված մարդկային ողբերգությունը՝ իշխանությունների նախաձեռնած Հայ ազգարնակչության մեկուսացումը, բնաջնջումը կամ բռնագաղթը պահպանել են իրենց նշանակությունը՝ որպես 1930 եւ 1940-ական թվականների՝ անհամեմատ ավելի լավ ծանոթ Հրեշավոր Հանցագործությունների նախանշան: Կառավարության¹ Հրամանով կայսրության Հայ ազգարնակչության արտաքսումը սեփական օջախներից 1915-ի ապրիլ-դեկտեմբեր ամիսներին ավարտվեց մոտավորապես 600000² Հոգու սպանողով: Օսմանյան կայսրության որդեգրած այս ծրագիրը, որին ութ ամսվա ընթացքում զոհ գնաց Անատոլիայի Հայ ազգարնակչության մեկ երրորդը², իր նպատակամղված «արդյունավետությունը» անհամեմատ գերազանցում է նացիստական ոճրագործությունները, չնայած չափազանց զարգացած էին տեխնիկական միջոցները, որոնք գործադրվեցին երկրորդ աշխարհամարտի ընթացքում:

Ինչպես չվեյցարացի Վ. Պիտերը՝ Օսմանյան կայսրության Սամսուն սեւծովյան նավահանգստում ԱՄՆ-ի Հյուսիսատոսական գործակալն է այդ տարածաշրջանի իրադարձությունների մասին պետդեպարտամենտ Հղած Համառոտ

զեկուցագրում դառը քմծիծաղով գրում՝ «Ընդհանուր առմամբ Թուրքիան ի վիճակի չէ առաջադիմել այն բոլոր բնագավառներում, որոնք առնչվում են կազմակերպվածութայնը կամ տաղանդին, բայց այս անգամ, երբ խնդիրը վերաբերում էր կոտորածին, թալանին եւ այլնին, ի հայտ բերեց լավ ծրագրավորում եւ արագ իրապործում: Միայն Թուրքն է ի վիճակի այդքան կարճ ժամանակում մյուս աշխարհն ուղարկել հարյուր հազարավոր մարդու»³:

Անհամեմատ մեծ թվով հայեր, որոնք կտրված էին իրենց տներից, զրկված էին գոյություն միջոցներից, մահացան քաղցից ու հիվանդություններից, ենթարկվեցին բազմապիսի վտանգների: Հազարավոր հայեր էլ 1917-ից մինչեւ 1920 թվականը նահատակվեցին Ռուսաստանի կողմից վերահսկվող Հայաստանի տարածքները Թուրքական բազմաթիվ՝ պարբերական ներխուժումների հետեւանքով: Վերջապես շատ հայեր նախճիրի դոհ դարձան կամ սպանվեցին 1919-1923 թվականներին՝ Թուրքական ազգայնական հեղափոխության ժամանակ:

Հիմնականում փաստաթղթերի անմատչելիության, խորամանկ քարոզչության պատճառով բազմաթիվ ամերիկացիներ, նույնիսկ նրանք, ովքեր հետաքրքրվում են այդ ժամանակի պատմությունում, հայկական ցեղասպանություն մասին ոչինչ չգիտեն: Արդի Թուրքիայի ղեկավարները ընդհանրապես են ժխտում նման փաստը եւ ամեն տարի ահռելի գումարներ են վատնում հանրային մտայնության վրա ներազդելու համար, որպեսզի ամրագրեն պատմական փաստաթղթերի կեղծումը: Հասարակական կարծիքը ձեւավորող մասնագետների կազմած գրքույկները պատմական վավերագրերից սխալ են մեջբերումներ կատարում, հաճախ հիմնվում են դիտավորություն կատարված կրճատումների վրա, աղավաղում են բնօրինակի հստակ միտքը: Հույս ունեւ, որ ամերիկացի դիվանագետի՝ ԱՄՆ-ի պետղե-

պարտամենտի ներքին օգտագործման համար գրած հաշվետվության ամբողջական հրատարակումը կնպաստի այդ արհավիրքի պատմական ճակատագրի հետագա աղավաղումը կանխելուն: Այս հանգամանալի հաշվետվությունը, որը հյուպատոսը գրել է 1917 թվականին՝ Ամերիկա վերադառնալուց հետո, երբ ԱՄՆ-ը ընդդեմ Թուրքիայի դաշնակից Գերմանիայի մասնակցել է Առաջին աշխարհամարտին, լուսարանում է Մամուրեթ-ուլ-Ազիզ նահանգի (Թուրքերեն՝ վիլայեթ) հայերի բռնագաղթն ու բնաջնջումը, ինչպես նաեւ նկարագրում է հյուպատոսի ջանքերը, որը, որքան իրավիճակը թույլ էր տալիս, փորձում էր հնարավորին չափ շատ հայ փրկել: Եվ չնայած հյուպատոսը վիճարկում է տեղական իշխանությունների գործունեությունը, ներկայացնում տարածաշրջանի տարբեր ժողովուրդների, քաղաքական իրադարձությունները, Թուրքերի ռազմական ճիգերը, հակահայկական ձեռնարկումներն այնպիսի ահռելի ցնցում են առաջացնում, հյուպատոսական ենթատարածքում ամեն ինչ տակնուվրա անում, խլում ամբողջ ժամանակը, որ, բնականաբար, հաշվետվությունում ամենամեծ տեղը դրան է հատկացնում: Այս գրքի հավելվածում, որպես լրացուցիչ վավերագրեր տեղ են գտել նաեւ Դեւիսի՝ 1915 թվականին գրած, քանի որ «տեղահանությունը» հենց այդ թվականին տեղի ունեցավ, եւ կոստանդնուպոլիս՝ այն ժամանակվա Թուրքիայի մայրաքաղաքը, ներկայիս Ստամբուլը, ամերիկյան դեսպանատուն ուղարկած մի քանի կարճ տեղեկագրերը: Այդ հաղորդումներում հյուպատոսը մատնանշում է այն վայրերը, որտեղ իրագործվել է նախճիրը: Հայերի սպանող նա հանգամանորեն նկարագրում է 1918 թվականի փետրվարին ներկայացրած զեկուցագրում, հիշատակում անձամբ կատարած լուսանկարները: Այդ լուսանկարները, 1984 թվականին ես վերցրել եմ մի ամերիկացի գիտնականի ու նրա կնոջ անձնական հավաքածուից:

Նրանք 1919 թվականին եղել են Մամուրեթ-ուլ-Ազիզում, օգնություն հասցրել վերապրող հայերին: Լուսանկարները, որ ամուսինները ստացել են հյուպատոսի թարգմանից, նույնպես հրապարակվում են այս գրքում:

Լեսլի Ա. Դեիսի հաշվետվությունը, ում ԱՄՆ-ի հյուպատոս էին նշանակել Արեւելյան Անատոլիայի Նարբերդ եւ նրան կից Մեզիրե, նաեւ Մամուրեթ-ուլ-Ազիզ (այժմյան էլազիզ) քաղաքներում, բացառիկ է, որովհետեւ արխիվներից հանված առաջին փաստաթուղթն է, որը գրել է չեզոք երկիր ներկայացնող արտասահմանյան դիվանագետը: Նա անձամբ այցելել է Ջարդի վայրերը, տեսել սպանված հայերի դիակները, որոնց հետ ոչ շատ վաղուց, երբ դեռեւս կենդանի են եղել, հանդիպել է: Դեիսի հաշվետվությունը «1914-ից 1917 թվականներին Նարբերդի ամերիկյան հյուպատոսարանի գործունեության մասին», որը 132 մեքենագիր էջ է կազմում, գրված է իր վերադասի՝ ԱՄՆ-ի պետդեսպարտամենտի հյուպատոսական գրասենյակի տնօրեն Վիլբուր Զ. Կարրի պահանջով: Դեիսը այդ հանձնարարությունը ստացել է 1917 թվականի սեպտեմբերին՝ պետդեսպարտամենտի վարչական հին շենքի գրասենյակում իր պետի հետ ունեցած հանդիպման ժամանակ: Այս գրքի բուն նյութը հենց այդ հաշվետվությունն է: Արեւմուտքում մինչեւ Հունաստան, արեւելքում ընդհուպ Պարսկաստան, հարավում՝ Արարական թերակղզի ձգվող Օսմանյան Թուրքիայում հայերի հալածանքների վերաբերյալ նշանակալի քանակություն մատուցելու համար: Աշխարհի արխիվներում պաշտոնական փաստաթղթերի դեզեր են պահվում: Ցավոք, ընթերցողների մեծ մասը պարզապես չգիտի դրանց տեղն ու ծավալը:

Չեզոք դիտորդների վկայությունները հատկապես բարձր է գնահատվում: Դրանց թվին կարող են դասվել ամերիկյան հյուպատոսների ու հյուպատոսական գործակալների՝

հայկական դեսպերի մասին ամերիկյան կառավարությունը տեղեկացնող հաղորդագրումները: Չպետք է մոռանալ, որ ԱՄՆ-ը Առաջին աշխարհամարտում՝ ընդհուպ 1917 թվականը չեզոք դիրք էր գրավում: Չնայած հակահայկական իրադարձություններն սկսվելուն պես Օսմանյան կառավարության սահմանած խիստ գրաքննությունը՝ հյուպատոսարանի ու դեսպանատան, անգամ պետդեսպարտամենտի գրազրույթյան առգրավման բազում դեսպերին, ամերիկյան դիվանագիտական անձնակազմի հաղորդումների զգալի մասը հասել է պետդեսպարտամենտ եւ պահվում է Ազգային արխիվի դեսպարտամենտի թիվ 59 խմբահամարի փաստաթղթերում: Չեկուցագրերը, որոնք 1918 թվականի խաղաղության բանակցություններին ներկայացրել է ԱՄՆ-ի հանձնաժողովը, մեծ մասամբ պատկանում են ամերիկյան գործարարներին ու միսիոներներին, որոնք 1914-ից մինչեւ 1917-ը աշխատել են Թուրքիայի տարրեր շրջաններում եւ կազմում են Վաշինգտոնի Ազգային արխիվի փաստաթղթերի մյուս՝ կարելի էր մասը: ԱՄՆ-ում են գտնվում նաեւ Արտասահմանյան առաքելությունների ամերիկյան լիազոր խորհրդի գրառումները, որը ղեկավարում էր Թուրքահայաստանով մեկ տարածված միսիոներական դպրոցների ու հիվանդանոցների գործունեությունը: Այդ թղթածրարներում են տեղ գտել առաքելության այն ծառայողների մեծ թիվ կազմող հաղորդումներն ու նամակները, ովքեր ակա՛նատես են եղել հայերի բռնազաղթին, օգնել, բժշկել, խնամել են Ջարդից փրկվածներին: Ամերիկացիները, ովքեր պատերազմի վերջում հայերին սատարելու գործին էին նվիրվել, նկարագրում են, թե ինչ պայմաններում են գտնվում վերապրողները, այն նոր բռնությունները, որոնց վկաններն ու ականատեսներն են դարձել իրենք: Տեղեկագրերի մի մասը գտնվում է Ազգային արխիվում, մյուսները հրապարակված են որպես ականատեսի վկայություններ: Կոնգրեսի

32/3



գրադարանի ձեռագրերի բաժնի՝ Վուդրո Վիլսոնի, Հենրի Մորգենթաուի, Ջեյմս Հարրորդի, Մարկ Պրիստոլի, Հարվարդի Համալսարանի Հոուտոնի գրադարանի, Պրիստոնի Համալսարանի Ֆայերստոունի գրադարանի, Հերբերտ Հուվերի եւ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտի նախագահական գրադարանների մասնավոր արխիվների հավաքածուները նույնպես հակահայկական հալածանքների մասին տեղեկություններ են պարունակում: Զարդից փրկված Հայերի բանավոր պատմություններին ամեն ոք կարող է ծանոթանալ Մասաչուսեթս նահանգում՝ Քեմբրիջում գտնվող Զորյան ինստիտուտում:

Օսմանյան Թուրքիայի դաշնակիցների՝ Գերմանիայի ու Ավստրիայի վավերագրերը տեղեկություններ են հաղորդում Հայ փոքրամասնությունը ոչնչացնելու կառավարական ծրագրի հղացման մասին: Այսպես, Հալեպում Գերմանիայի Հյուպատոս, դիվանագետ Ռյուսլերը «ցեղային բնաջնջման» գաղափարը հայտնաբերել էր դեռեւս 1915 թվականի ապրիլի կեսերին: Այդ ծրագրին առնչվող փաստաթղթերը պահպանվում են Բոննում՝ Գերմանիայի արտաքին գործոց նախարարությունում (Auswärtiges Amt):

Նման փաստաթղթերի միկրոֆիլմերին եւ գերմանական ռազմական վավերագրին, որոնք դաշնակիցները առգրավել են Երկրորդ աշխարհամարտի վերջում, կարելի է ծանոթանալ Կոլումբիայի Փեդերալ օկրուգում, Վաշինգտոնում գտնվող ԱՄՆ-ի Ազգային արխիվում:

Առաջին համաշխարհային պատերազմին առնչվող Թուրքական արխիվները դեռեւս մատչելի չեն լայն հասարակությունը, չնայած աշխարհամարտի վերջում ռազմական դատարանը՝ մահվան դատապարտեց մի շարք հանցագործների, դատաքննության սղագրությունը 1919-ին լույս տեսավ Թուրքական պաշտոնական մամուլում՝ Takvim-i Vakayi Divan-i Harbi-i Orfi, Muhakemat-i Zabıt

Ceridesi, 1919: Դատարանում բռնագաղթի փաստաթղթերը ներկայացվեցին որպես ապացույցներ, յուրաքանչյուրի վավերականությունը հաստատեցին ինչպես առաքողները, այնպես էլ ստացողները: Հանգուցյալ գերապայծառ Գրիգոր Գերգեբյանը՝ Հոսմեա-կաթուղիական եկեղեցու գիտնական Հոգեւորականը, Հայերի ցեղասպանությունից վերաբերյալ փաստաթղթերի ահուկ արխիվ է հավաքել, որոնց միկրոֆիլմերը կարելի է դիտել Մասաչուսեթս նահանգում, Քեմբրիջում գտնվող Զորյան ինստիտուտում: Հավաքածուն ընդգրկում է ռազմական հանցագործների դատական արձանագրությունների պատճեններն ու անդլերեն, ֆրանսերեն թարգմանությունները:

Ընթերցողները, որոնք ցանկանում են ծանոթանալ Հայերի ցեղասպանությանն առնչվող արխիվային հավաքածուների ամբողջական ցանկին, կարող են ընթերցել դոկտոր Ռիչարդ Հովհաննիսյանի կազմած՝ արխիվային նյութերի եւ արեւմտյան լեզուներով հրատարակված երկերի մատենագրությունը, որը կրում է «The Armenian Holocaust. A Bibliography Relating to the Deportations, Massacres and Dispersion of the Armenian People 1915-1923» խորագիրը:

Երկրորդ վերանայված հրատարակությունը լույս է տեսել 1980 թվականին Մասաչուսեթս նահանգում, Քեմբրիջում, Armenian Heritage Press հրատարակչության կողմից:

Լեսլի Ա. Դեիսը ծառայել է Օսմանյան Թուրքիայի կայսրության տասներեք ամերիկյան Հյուպատոսություններից ամենահեռու ընկածում եւ միակ չեզոք դիվանագետն էր, որը պաշտոնավարում էր Թուրքահայաստանի ճիշտ կենտրոնում: Նրա մոտակա գործընկերը էր գրումում Գերմանիայի Հյուպատոս Շյոբներ-Ռիխտերն էր, որը հետագայում, Մյունխենյան խռովության ժամանակ կանգեց Ադոլֆ Հիտլերի կողքին ու զոհվեց: ԱՄՆ-ի պետդեսպարտամենտի ղուտ վարչական՝ 1913 թվականին Լեսլի Ա. Դեիսին Նարբերդ

Հյուպատոս ուղարկելու որոշումը, նրա՝ նահանգում ձիով շրջագայելու սերը, Առաջին աշխարհամարտի ընթացքում այդ տարածաշրջանում կատարված իրադարձությունների մասին գրած վկայությունները ուղղակի բացառիկ դարձրին:

Պորտ Ջեֆֆերսոնում գտնվող հայրական տանը, որտեղ ապրում էր այրի մոր ու կնոջ հետ, Հյուպատոս Դեվիսը ավելի քան երկու ամսում գրեց իր հաշվետվությունը եւ ըստ սահմանված կարգի, 1918 թվականի փետրվարի 9-ին ուղարկեց դեպարտամենտի պետքարտուղարին: Կից նամակում Դեվիսը հայտնում է, որ «Թուրքիայում՝ Սարբերդում ամերիկյան Հյուպատոսություն գործունեություն վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում է երկու օրինակից»: Նա երկու օրինակներն էլ ստորագրել է: Ստորագրությունները համանման են բոլոր նրանց, որոնցով Դեվիսը ամերիկյան Հյուպատոս եղած երկար տարիների ընթացքում վավերացրել է բազում այլ փաստաթղթեր (ծրարի վրայի պետդեպարտամենտի մուտքի գրասենյակի դրոշմակնիքը վկայում է, որ երկու օրինակները հասցեատիրոջն են հասել 1918 թվականի փետրվարի 11-ին): Հաշվետվության գույգ պատճենները գտնվել են պետդեպարտամենտում, օգտագործվել ներքին շրջանառություն համար, որակվել «գաղտնի»:

Առաջին օրինակը, որն ի վերջո ուղեկցող նամակի հետ կարվել է պետդեպարտամենտի վարչական թղթածրարում, Հյուպատոսական գրասենյակը դրոշմակնիքել է 1918 թվականի փետրվարի 13-ին: Ջ.Դ.Ջ. (Հյուպատոսական գրասենյակի աշխատակից Ջոն Դ. Ջոնսոն) սկզբնատառերով ձեռագիր մակագրությունը վկայում է. «Պատասխանն ուղարկված է փետրվարի 20-ին: Պահել թղթածրարում»:

Մի այլ դրոշմակնիք փաստում է, որ հաշվետվությունն ուղեկցող նամակի հետ գրանցված է 1918 թվականի մարտի

11-ին: Ավելի ծավալուն ձեռագիր արձանագրությունը հավաստում է. «Սա բացառիկ արժեքավոր եւ հետաքրքիր հաշվետվություն է, հարկավոր է դրա համար ոչ միայն շնորհակալություն հայտնել միտք Դեվիսին, այլ նաեւ բարձր գնահատել այն հիանալի աշխատանքը, որ նա կատարել է տաժանելի, դժվարին պայմաններում: Գ. Ս. Գ.» (Հյուպատոսական գրասենյակի պետ Հերբերտ Ս. Գենսլեր): Վիլբուր Ջ. Կարրի 1918 թվականի փետրվարի 20-ի նամակի վավերացված պատճենը հաստատում է, որ Դեվիսի հաշվետվությունը ստացվել է պահպանվում է պետդեպարտամենտի գործերում: Նամակում նշվում է.

«Դեպարտամենտը 1918 թվականի փետրվարի 9-ին ստացել է Ջեր պաշտոնական ղեկուցագիրը՝ այն աշխատանքի հաշվետվությունը, որ Դուք կատարել եք Թուրքիայում, Սարբերդում պաշտոնավարելու ընթացքում: Մենք հսկայական հետաքրքրություններով ընթերցեցինք այն եւ չափազանց կարեւոր ենք համարում:

Դեպարտամենտը լիովին գիտակցում է դժվարությունները, որոնք Դուք Սարբերդում Ջեր պարտականությունները կատարելիս հաղթահարել եք եւ, օգտվելով առիթից, բարձր է գնահատում պաշտոնավարություն ընթացքում ներդրած ջանքերը, շնորհավորում է այն հիանալի, արդյունավետ աշխատանքի համար, որը կարողացել եք ի կատար ածել ծայր աստիճան ծանր պայմաններում (տասնորդական թղթապանակ 123D 291/62):

Երկրորդ պատճենը Վիլբուր Ջ. Կարրի գրասենյակ է հասել եւ Հյուպատոսական ծառայության տնօրենի կնիքով դրոշմակնիքվել է 1918 թվականի հուլիսի 16-ին: Այնուհետեւ հաշվետվությունը ուղարկվել է պետդեպարտամենտի Մերձավոր Արեւելքի գրասենյակը, դրոշմակնիքվել 1920 թվականի սեպտեմբերի 21-ին: Պետդեպարտամենտի մի այլ դրոշմակնիք վկայում է, որ հաշվետվությունը մտցվել է

կենտրոնական տասնորդական թղթապանակ որպես թիվ 392 փաստաթուղթ (թղթածրար 867.4016)՝ այն փաստաթղթերի Հետ, որոնք վերաբերում են 1910 թվականից Հետո թուրքիայում առաջացած տնտեսական հիմնահարցերին:

Երկու օրինակներն էլ պետղեպարտամենտի գործերում մնացել են մոտ քսան տարի: Այնուհետև, 1944 թվականին, պետղեպարտամենտը բոլոր փաստաթղթերը, որոնք առնչվում են ԱՄՆ-ի՝ 1910-ից 1929 թվականների արտաքին գործունեությունը, Հանձնվել է Ազգային արխիվ: Համալիրները, փաստորեն, մինչև 1945 թվականի Հունիսի 28-ը քարտարան չեն մտցվել, այդ թվականին է միայն գործավար Օլմեն Ռ. Ռայտը իր անուն-ազգանվան սկզբնատառերով նշել փաստաթղթերի ստացման իրավաբանական փաստը:

Դրանից Հետո միայն Համալիրների գաղտնագերծված փաստաթղթերը մատչելի են դարձել լայն Հասարակայնությունը: Մինչ այդ գաղտնագրված նյութերին, ինչպես օրինակ Լեսլի Ա. Դեկսի Հաշվետվությունը, Հնարավոր է եղել ծանոթանալ միմիայն պետղեպարտամենտի թույլտվությունը: Այն ժամանակ գտնում էին, որ նման ծանոթությունը ամենեւին էլ Համապատասխան տեղեկությունների տարածում չի նշանակում:

Պետղեպարտամենտի փաստաթղթերի Համալիրներից Վ.Գ. Անդերսոնը 1958 թվականի Հունվարի 8-ին Ազգային արխիվ գրած նամակով գաղտնագրծել է թիվ 59 խմբահամարի խմբի փաստաթղթերը: Գաղտնագրծումը փաստորեն 1961 թվականի մայիսին կատարել է արխիվի Հաստիքային աշխատակիցը (ստորագրությունն անընթեռնելի է):

Երկրորդ պատճենը 1969 թվականին՝ 1910-ից 1929 թվականներն ընկած ժամանակաշրջանի ԱՄՆ-ի արտաքին գործունեությունն առնչվող կենտրոնական տասնորդական թղթապանակի թիվ 59 խմբահամարի այլ փաստաթղթերի

Հետ նկարահանվել է միկրոֆիլմով (M-353 միկրոֆիլմային արտադրություն): Առաջին օրինակը մնացել է Դեկսի Համալիրում: Այն միկրոֆիլմի չի վերածվել եւ պաշտոնապես չի գաղտնագրծվել մինչև այս գրքում օգտագործելու Համար պատճեն չի Հանվել եւ պետղապարտամենտից 1972 թվականի Հունվարի 11-ին ստացված նամակի վրա Հիմնվելով, 1987 թվականի նոյեմբերի 27-ին Ազգային արխիվի դիվանագիտական բաժնի նախկին պետ Միլտոն Օ. Գուստաֆսոնը չի վավերացրել:

«ՀԵՌԱՎՈՐ ՈՒ ԴԺՎԱՐ ՀԱՍԱՆԵԼԻ»

ՆԱՐԲԵՐԴԸ

1915 թվականին Արեւելյան թուրքիայի վարչական մարզը ամերիկյան միսիոներներին եւ դիվանագիտական անձնակազմին Հայտնի էր որպես «Սպանդի նահանգ», քանի որ Օսմանյան թուրքիայի կառավարությունը այն դարձրել էր Հայերի զանգվածային նախճիրի վայր: Այդ տարածաշրջանը գտնվում է Արեւելյան Անատոլիայում եւ Համընկնում է ներկայիս էլազիգի նահանգին: Այսպես կոչված Հայկական լեռնաշխարհի օղակով շրջափակված՝ Նարբերդ եւ Մամուրեթ-ուլ-Ազիզ (վերջինս նույնանուն վիլայեթի մայրաքաղաքն էր) մերձակա քաղաքներով նահանգը ուներ ավելի քան 180 Հայկական Հողագործական գյուղեր⁵: Չնայած այս տարածաշրջանը քրիստոնյա Հայերի հինավուրց Հայրենիքի մի մասն էր, բյուզանդական, արաբական, թուրքական բռնազավթումները, վերջինիս Հաջորդած բազմադարյան թուրքական գերիշխանությունը փոխել էին ժողովրդական վիճակագրությունը: 1912 թվականին պրոֆեսոր Ջաստին Մակկարտին Հիմնականում Հենվելով նույն տարվա Օսմանյան կայսրություն

ազգարնակչության մարդահամարի տվյալների վրա, պարզել էր, որ նահանգում հայերի թիվը 111000 է⁶: Հյուպատոս Դեիսն իր ղեկուցագրում նշում է, որ 1914 թվականին նահանգի հայերի թվաքանակը հասել է 150000-ի: Առաջին աշխարհամարտի իրադարձությունները, երբ թուրքական կառավարությունը փորձեց ազատվել հայ ազգարնակչությունից, ավարտեցին վիճակագրություն փոփոխությունը: Այսօր նահանգում փաստորեն հայ չի մնացել, որն ակնհայտորեն վկայում է, որ «վերաբնակեցման» օրենքը հասել է իր հետապնդած նպատակին: Հայերի վերացումը «Սպանդի նահանգում» միայն տեղի ազգարնակչության դեմ չի եղել ուղղված: 1915 թվականի դեկտեմբերի 30-ի ղեկուցագրում Դեիսը Թուրքիայում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուին հայտնում է.

«Սպանդի վիլայեթ» արտահայտությունը, ինչպես կոչել էի այս նահանգը նույն դեպքերի առնչությամբ գրած իմ վերջին՝ սեպտեմբերի 7-ի հաղորդագրությունում, ելնելով այն ամենից, ինչ այդ ժամանակից ի վեր իմացա եւ տեսա, լիովին արդարացավ: Պարզվեց, որ քարավանի տղամարդկանց, կանանց եւ երեխաներին, ում հիշատակել եմ այդ գեկուցագրի 15-րդ էջում, այստեղից ոտքով հինգ ժամվա հեռավորության վրա կոտորել են: Իրոք, գրեթե հաստատ է, որ բացի չնչին բացառությունից, հուլիսի առաջին օրերին բռնազաղթածներին, բոլոր նրանց, ում տարել են քաղաքից, վիլայեթի սահմաններից չհանած, ջարդել են: Բավական դժվար է ըմբռնել այն ծրագրի իմաստը, որն ստիպում է Տրապիզոնի, Օրդուի, Կիրասոնի, Ջարայի, էրզրումի, Երզնկայի գաղթականներին հասցնել այստեղ՝ այստեղ կոտորել... Ինքներս մեզ հարց ենք տալիս, թե ինչու է այս վիլայեթն ընտրված որպես սպանդանոց»⁷:

Հավանաբար Օսմանյան կայսրության պաշտոնական իշխանությունները ենթադրել են, որ այստեղ իրենց համար

ավելի հեշտ կլինի զանգվածային սպանդան իրագործելը, որովհետեւ նահանգը դժվարհասանելի է եղել, բացի դրանից քիչ օտարազգիներ են ապրել, որոնք կարող էին տեղեկացնել կատարվածի մասին: Լիճը, որի ափին տեղի է ունեցել սպանությունների մեծ մասը, գտնվել է մոտ հինգ ժամ հեռու այն մերձակա քաղաքներից, որտեղ ապրել են Դեիսը, մի խումբ ամերիկացի միսիոներներ եւ միայն մի իտալացի գործարար: Արտաքին միջամտություն հնարավորությունը նույնքան անհավանական էր նման վայրում, որքան բնակավայրն էր հեռու: Դեիսը այդ կապակցությունը գրում է.

«Պարբերի Հյուպատոսությունը աշխարհի ամենահեռավորներից ու անմատչելիներից մեկն է: Այն գտնվում է ասիական Թուրքիայի խորքում, ցանկացած նավահանգստից կամ երկաթգծից հարյուրավոր մղոն հեռու: Տեղ հասնելու համար Սեւ ծովի Սամսուն⁸ նավահանգստից, որը ամենահարմարն ու բանուկն է, հարկ եղավ տասներեք օր սայլակառքով ճամփորդել, իսկ երբ վերադառնում էի, տասնութ օր ձիով ճամփա կտրեցի, որպեսզի հասնեմ էրեզլի երկաթուղային կայարանը, որտեղից եւ զնացքով երեք օրում Կոստանդնուպոլիս մտանք: Պարբերը տանող երրորդ ճանապարհն անցնում էր Հալեպով, ընդ որում զնացքից իջնելուց հետո պետք էր տասը օրվա ճամփա անցնել»:

Հյուպատոսարանի շենքը պետղեպարտամենտի պաշտոնյային ներկայացված է որպես «լավագույնը քաղաքում»: Դեիսի նախորդը «Արեւելյան գորգերի ու կտավների նկատմամբ նուրբ ճաշակ ունեւր, այնպես որ կարողացել էր ներկայանալի ու գեղեցիկ Հյուպատոսարան ստեղծել»: Շենքը գտնվում էր գործարար շրջանի՝ Ամբար Մաալեսի փողոցի վերջում, շուկայից ոտքով վեց բոպե հեռու, տարեկան 352 դոլարով վարձակալել էին Հաջի Ահմեդ աղայից: Այն այնքան ընդարձակ ու տարողունակ էր, որ հիանալի

ապաստարան էր դարձել զանգվածային ջարդից փախած ութսուն հայերի համար, որոնց Դեւիսը հյուպատոսարանում թաքցրել էր 1915-1916 թվականների ընթացքում:

«Բարեբախտաբար հյուպատոսարանում չափազանց շատ սենյակ կար: Ծեկքը, որ լավագույններից էր Փոքր Ասիայի խորքերում, երեքհարկանի ու չափազանց ընդարձակ էր: Մեծ էր նաեւ պարտեզը, որը մոտ քառասուն խոշոր ծառուններ ու շրջափակված էր բարձր ցանկապատով, ուստի հարեւան թուրքերին թույլ չէր տալիս տեսնելու, թե ով կանայք էին: Քանի որ ամռանը Սարբերդում չի անձրեւում, մարդկանց մեծ մասը պարտեզում, թթենիների տակ էր գիշերում: Մոտ քառասուն հոգի ամբողջ ամառը այդպես՝ կողք-կողքի քնելով անցկացրեց»:

Վիլայեթում ու կից տարածաշրջանում բնակվող ժողովուրդների ազգային խայտարղետությունը զբոսանքը քաղաքի փողոցներում տեսողական արկածախնդրություն էին վերածում: Հարավում ապրում էին ճչացող վառ գույնի զգեստ կրող կարճահասակ տիրիկ քրդեր, զազա քրդերը բարձրահասակ էին, աղքատ էին հագնված: Կային նաեւ արարներ եւ բացի զինվորականներից շատ քիչ իսկական թուրքեր: Մամուրեթի փողոցներում շրջագայելիս կարելի էր հանդիպել նաեւ հյուսիսային զազա քրդերի, լեռնային Դերսիմի բնապաշտ քրդերի, որոնք դեմ չէին շիիթ մահմեդականներ դառնալ, միայն թե չգրգռեին կենտրոնական կառավարությունը, որը ձգտում էր բոլոր ոչ քրիստոնյաներին իսլամ դարձնել⁹: Այդ քրդերը, որոնց սիր Մարկ Սայկսը ներկայացնում է «փոքրամարմին, մկանուտ, կոպիտ դիմագծերով, խելամիտ, գույների, հանդերձանքի նկատմամբ խիստ զարգացած գեղարվեստական զգացողությամբ օժտված», հայերին Եփրատի վրայով, գաղտնի, իրենց հուսալի, ամրակուռ լեռները, այնտեղից՝ ազատություն էին առաջնորդում: Ղզլրաչները կամ «կարմրագլուխ» սուֆիտ մուսուլմաններ

ը, որոնց մի ժամանակ զանազանում էին իրենց կարմիր գլխարկներով կամ ապարոչներով, հայտնվում էին մեծ խմբերով:

Հյուսիսից Սինյար ուխտագնացության էին ուղևորվում եզդիները,¹⁰ որոնք, ինչպես ենթադրում էին իրենց նախապաշարված հարեւանները, պաշտում էին սատանային, ոմանք դեմքի երկու կողմերում մազի վեց-յոթ հյուսքեր էին կրում: Հայերը, որոնք թվում եւ Սարբերդի ու Մամուրեթ-ուլ-Ազիզի բնակիչները, մեծ մասամբ եվրոպական զգեստներ էին հագնում, իսկ գյուղացիները, հարեւան քրդերի նման, գունազեղ ազգային տարազ: Այս ամենին ավելանում էին Սարբերդում եւ Մամուրեթ-ուլ-Ազիզում տեղակայված պատահական հազուստներ հագած նորակոչիկ զինվորները: Ավելի ապաշխարհիկ խառնարան դժվար էր պատկերացնել:

Ահա այս՝ իր բնույթով եզակի միջավայրում հայտնվեց ամերիկյան նոր հյուպատոսը: Դեւիսը բաց երկնքի տակ հնարավորին չափ շատ ժամանակ անցկացնել սիրող անձնավորություն էր, խիստ հետաքրքրասեր էր եւ ոչ թե սղալված, անմիջականությունից հեռու ջննտլմեն, որպեսզին պետք է որ լիներ դիվանագետը Առաջին աշխարհամարտից առաջ՝ միապետության ու ինքնակալության դարաշրջանում:

Նա ամենեւին արտասովոր չէր համարում կոտորածի հնարավոր զոհերին ամերիկյան հյուպատոսարանում թաքցնելը, ոչ էլ այն ուսկը, որին ենթարկվում էր զանգվածային սպանդի մասին հաշվետվություններ-հետազոտություններ ուղարկելիս: Իսկ հայերի՝ «ընդհատակյա երկաթուղիով»՝ Եփրատ գետով դեպի քրդերի վերահսկած տարածքները փախչելուն օգնելը ուղղակի երկրորդ զբաղում էր դարձրել: Չնայած թուրքական իշխանությունների նախազգուշացումներին, վերապրողներին օգնելը նույնպես վերածել էր

կանոնավոր առօրյայի: Դեւիսը ոչ մի նշանակութիւն չէր տալիս այն հանգամանքին, որ թուրքական կառավարութեան 1915-ի հունիսի որոշմամբ հայերին աջակցելը հանցանք էր համարվում, դատապարտվում էր մահապատժով: Որ Դեւիսը գիտակցում էր իրեն սպառնացող վտանգը, ակնհայտ է դառնում այն գիշերների նկարագրութիւնն էր, որոնք նա անցկացնում էր իրեն այցելած նահանգապետի կամ մյուզիքի՝ ոստիկանապետի հետ, այն դեպքում, երբ հյուպատոսարանում թաքնված հայեր էին լինում: Եթե հյուպատոսը հրաժարվեր նման վտանգավոր գործունեութիւնից, որն իր անմիջական պարտականութիւններին ամենեւին չէր առնչվում, մենք այսօր չէինք ունենա Օսմանյան թուրքիայում Առաջին աշխարհամարտի տարիներին հարյուրհազարավոր հայերի խողխողման անկողմնակալ նկարագրութիւնը:

Ձնայած քաղաքացիներին ստույգ մահից ազատելը տվյալ երկրի ներքին գործերին միջամտել էր նշանակում, դեսպան Հենրի Մորգենթաուն եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների պետդեսպարտամենտը արդարացնում էին Դեւիսի գործունեութիւնը, մանավանդ որ ուղղված էին համարում այն մարդկանց փրկութեանը, ովքեր ամերիկյան հպատակութեան էին հավակնում: Սարբերդի եւ չրջակայքի հարյուրավոր հայեր՝ հատկապես տղամարդիկ ինչ որ ժամանակ տարագրվել էին ԱՄՆ, դարձել Ամերիկայի լիիրավ քաղաքացիներ: Գումարը, որ նրանք տուն՝ հարազատներին էին ուղարկում, բարձրացնում էր տեղական կենսամակարդակը: Շատերը տասնյակ տարիներով երկրում էին թողել իրենց կանանց ու երեխաներին, որոնք նույնպես, ամուսնութեան ու ազգակցականութեան օրենքի համաձայն, փաստորեն դարձել էին ամերիկահպատակներ: Հյուպատոսարանում Դեւիսի թաքցրած հայերի մեծ մասը այդ դասակարգմանն էր պատկանում, չնայած օսմանյան կառավար-

ութիւնը իր քաղաքացիների հպատակութեան փոփոխութեան իրավունքը չէր ընդունում: Սարբերդի վալիի համար հյուպատոսարանում ապաստանած հայերը այնպիսի օսմաններ էին, ինչպես Դեւիսի Գյոլջուկ՝ այժմյան Սազար գյուղճի ափին լուսանկարած խողխողված հայերը:

Մերդինի, Ջմյունիայի, Հալեպի, Բեյրութի, Տրապիզոնի, Սամսունի հյուպատոսարանների Դեւիսի ամերիկյան պաշտոնակիցներից ոմանք նույնպես որոշակի ռիսկի էին դիմում, երբ հակադրվելով թուրքական կառավարութեան կամքին, դրամական օգնութիւն էին բաշխում հայերին, չնայած նրանց քայլերը նախօրոք արտոնագրում էր ամերիկյան կառավարութիւնը:

Դեւիսը անհամեմատ լուրջ վտանգի էր ենթարկում իրեն, քանի որ ԱՄՆ-ի հյուպատոսարանում թաքնվում էին իր գործունեութեան կենդանի վկաները՝ ընդհանուր հաշվով ութսուն հայ, մանավանդ որ նրան, որպես հյուպատոսի, հայտնի էր, թե օսմանյան իշխանութիւնները որքան քիչ նշանակութիւն են տալիս դիվանագիտական անձեռնմխելութեանը: 1917-ին, երբ օսմանյան կառավարութիւնը խզեց դիվանագիտական հարաբերութիւնները ԱՄՆ-ի հետ, քանի որ վերջինս պատերազմ հայտարարեց Գերմանիային, Դեւիսը մինչեւ անգամ վախեցավ, որ իրեն չեն թողնի դուրս գալ թուրքիայից: Հայտնի է, օրինակ, թե ինչպես ԱՄՆ-ի հյուպատոսական գործակալը, որը ականատես է եղել հայերի ջարդին¹¹, ստիպված հրաժարական է տվել ու 1915 թվականի հոկտեմբերին Սարբերդի եւ Սիրիայի Հալեպ քաղաքի միջեւ գտնվող Ուրֆայում կասկածելի պայմաններում մահացել: 1915-1916 թվականներին, այսինքն այն ժամանակաշրջանում, երբ հայերին արտաքսում եւ մորթում էին, Դեւիսի Կոստանդնուպոլիս՝ ամերիկյան դեսպանութիւն ու ԱՄՆ՝ պետդեսպարտամենտ հղած ճեպագրերը վկայում են նրա լավատեսութիւնը ապագայի նկատմամբ:

Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպանին՝ Հենրի Մորգենթաու ավագին ուղարկած 1915 թվականի դեկտեմբերի 30-ի տեղեկագրում նա գրում է.

«Այժմ ամենազլխավորը այդ մարդկանց կենդանի պահելն է, հետո օգնելը, որ հենց հնարավոր լինի թողնեն երկիրը: Ամեն դեպքում իմանալու ոչ մի հնարավորություն չկա, թե ինչ է ձեռնարկվելու այստեղ մնացած փոքրաթիվ վերապրողների նկատմամբ, իսկ դժվարությունը, որ ներկա պայմաններում, վտանգի պահին կարող է առաջանալ նրանց տարածաշրջանի մարդասպաններից ազատելու համար, անհամեմատ մեծ է, քան ի վիճակի է պատկերացնել ավելի քաղաքակիրթ վայրերի բնակիչը: Ինչպես արդեն բացատրել եմ՝ միակ արդյունավետ միջոցը, որ ես գտել եմ, մարդկանց հենց հյուպատոսարանում պահելն է, սակայն հասկանալի է՝ այդ կերպ փրկվածների թիվը սահմանափակ է»:

Կասկած չի կարող լինել, որ բացի ցուցաբերած անձնական խիզախությունից, Դեիսի դերը որպես չեզոք երկրի միակ պաշտոնական ներկայացուցիչ խիստ կարեւորվում է, քանի որ իր աչքերով տեսել է Հայերի՝ ակնհայտորեն ծրագրված զանգվածային սպանդի զոհերին: Նրա անկողմնակալությունը ավելի է արժեւորվում նաեւ այն պատճառով, որ ներքուստ Հայերի՝ ազգային հավաքականության հանդեպ սեր չի տածում: Դեիսը փոքրամասնությունների իրավունքների զգացմունքային պաշտպան չէր եւ նույնիսկ հակված էր հայկական հարցի նշանակությունը նսեմացնելուն: Հենրի Մորգենթաուին նա գրում է.

«Ես՝ արդեն այն ամենը, ինչ տեղի է ունենում այստեղ, ամենախիստ ձեւակերպումներով նկարագրել եմ, որովհետեւ անհնար է լուել, այլ կերպ արտահայտվել: Եվ դա ամենն էին էլ ոչ այն պատճառով, որ ուզում եմ հանդես գալ որպես Հայ ցեղի պաշտպան: Դա այն ազգը չէ, որով կարելի լիներ

հիանալ, որի հետ հնարավոր լիներ ապրել: Բայց, ինչպիսի սխալներ էլ որ թույլ տված լինեն Հայերը, որքան էլ համոզիչ հնչեն որոշ մասի հեղափոխական դավադրությունը մասնակցելու փաստարկները, պատիժը նրանց նկատմամբ այնքան դաժան է, ողբերգությունն ահավոր, որ անհնար է այդ ամենը տեսնել, այդ միջավայրում լինել ու մինչեւ հոգու խորքը չազդվել: Երբ հանդիպում ես յոթանասուն-ութսուն տարեկան, կույր, հիվանդ ծերունիների ու պառավների, անպաշտպան, անմեղ կանանց ու երեխաների, որոնց քչում են կոտորելու, որեւէ այլ կերպ մեռցնելու, եւ ավելի ուշ իրոք, երբ շուրջը ամենուր նրանք արդեն մեռած են լինում կամ մեռնում են, անհնար է դառնում նման խիստ պատժամիջոցներն արդարացնող թեկուզ չնչին պատրվակ գտնելը»¹²:

ԴԵԻՍԸ ԲՈՒ ԼԵՄՅԱԼ Է

Տեղի եւ իրավիճակի զուգադիպությունը ոչ մի կասկած չի հարուցում, որ Լեսլի Ամերտոն Դեիսի ծննդավայրում՝ մեր դարի առաջին ցեղասպանության վկա դառնալը սոսկ պատահականություն է: Դեիսն իր կյանքը սկսել ու ավարտել է որպես սովորական ամերիկացի: Նա ծնվել է 1876 թվականի ապրիլի 29-ին Նյու Յորք նահանգի Պորտ Ջեֆֆերսոն քաղաքում, ապրել է Լոնգ Այլենդի հյուսիսային՝ խաղաղ ծովափնյա նավահանգստում, որտեղ գրեթե գյուղական միջավայրում է հասակ առել: Նյու Յորքի արվարձաններն այդ ժամանակ ընդարձակվելով նոր-նոր էին Խատ-Ռիվերային հասնում, Լոնգ Այլենդը դեռեւս լեցուն էր ագարակներով: Դեիսի վաղ պատանեկությունն եւ ընտանիքի մասին քիչ բան է հայտնի:

Նրա կրթական անվանակարգը հնչեղ է՝ 1898-ին փիլիսոփայության բակալավրի աստիճանի է արժանացել Նյու

Յորքի նահանգում, Իթաքա քաղաքի Կոոնուելի Համալսարանում: Այնուհետև դասախոսություններ է լսել Կոլումբիայի Փեդերալ օկրուգում, Վաշինգտոնի Ջորջ Վաշինգտոնի անվան Համալսարանի իրավաբանական բաժանմունքում, 1904-ին իրավագիտություն բակալավրի դիպլոմ է ստացել, ապա ուսանել է Նյու Յորքի Համալսարանի իրավաբանական բաժանմունքում: Ուսմանը զուգընթաց Դեիսը լրագրող է աշխատել՝ այդ հանգամանքն էլ հետագայում նրա՝ ԱՄՆ-ի Հյուպատոսի զեկուցագրերը դարձրել է ազդեցիկ ու տպավորիչ: Նրա գրագրությունը բնորոշ էր ավարտվածությունը՝ մի բան, որն այնքան պակասում էր իր գործընկերներին: Ճնշագրերը վկայում են, որ Դեիսը առանձնանում էր շրջապատի ամեն մի մանրուքը զգալու եւ ճիշտ վերլուծելու հատկությունը, որը եւ այդքան կենսական է դարձնում քսաներորդ դարասկզբի ասիական Թուրքիայի մասին հաղորդած նրա տեղեկությունները:

Պետդեպարտամենտում պահպանվող վավերագրերից Հայտնի է դառնում, որ նախքան դիվանագիտական աշխատանքի անցնելը Դեիսը երեք տարի Նյու Յորք քաղաքում իրավաբանություն է զբաղվել: 1912 թվականին պետդեպարտամենտ ընդունվելու ժամանակ նա արդեն որոշակի կենսափորձ ուներ՝ դեռեւս ուսանողական տարիների ամառային արձակուրդներին զբոսաշրջիկների ուղեւորություններ էր կազմակերպում Եվրոպա: Այդ աշխատանքը, ինչպես նաեւ հետեւողական ուսումը նրան ֆրանսերենի, գերմաներենի, ռուսերենի եւ իսպաներենի իմացությունը օժտեցին՝ լեզուներ, որոնք բոլորն էլ ըստ էության Մամուրեթ-ուլ-Ազիզում ծառայելու ընթացքում օգտակար չեղան, սակայն Հնարավոր է, որ Մանհեթենի Փինանսական աշխարհում իրավաբանությունը զբաղվելիս անբավարարվածություն հիմնական պատճառը դարձան, դրդեցին դիվանագիտական պաշտոնի ձգտել:

Դեիսին տրված բնութագրում փաստեր կան այն մասին, որ ինքն ու իր ընտանիքը նշանակալի քաղաքական կշիռ են ունեցել: 1910 թվականին, երբ դիմել է պետդեպարտամենտ՝ աշխատանքի նշանակվելու համար, նրա թեկնածությունը պաշտպանել են Հինգ կոնգրեսմեն, երեք սենատոր, Ջորջ Վաշինգտոն Համալսարանի ռեկտորը, Փեդերալ դատավորն ու ինքը՝ նախագահ Վիլսոնը¹³:

Իր առաջին նշանակումը Դեիսը ստացել է Ռուսաստանում՝ Բաթում նավահանգստային քաղաքում, ներկայիս Վրաստանի Հանրապետությունում՝ Սեւ ծովի ափին, որտեղ ծառայել է 1912-ի մարտից մինչեւ 1914-ի ապրիլի 24-ին Պարբերդ աշխատանքի ուղարկվելը (այլ կերպ ասած Կոստանդնուպոլսում՝ աչքի ընկնող Հայերի զանգվածային ձերբակալությունից ուղիղ մի տարի առաջ): Երիտասարդ փաստաբանը չի հապաղում օգտվել այն հիանալի Հնարավորություններից, որ իրեն ընձեռվում է Բաթումում: Նա ռուսերեն է սովորում, ուսումնասիրում ցարական կայսրությունը: Կինը, օրիորդական անուն-ազգանունով Կատարին Կարմանը, Նյու Յորքի նահանգի Վեյդինգ Ռիվեր բնակավայրից էր, հետը 1912 թվականի դեկտեմբերին էր ամուսնացել: Նա ամուսնու ետեւից գալիս է Բաթում, սակայն եղանակը վատ է ազդում վրան, հաջորդ ամառ վերադառնում է տուն:

Բաթումում Դեիսը փորձառություն է ձեռք բերում ամենատարբեր բնագավառներում: Նա հաճույքով է օգտվում ոտքով երկար զբոսանելու, ձիով շրջագայելու ամեն մի առիթից:

Սակայն 1913 թվականի հոկտեմբերին, Հյուպատոսական ծառայության պետ Ա.Լ. Գոտշոլկը անձնակազմի ամփոփ վերլուծականում Դեիսին, Բաթումում վեց ամիս ծառայելուց հետո, արժանացնում է սոսկ «բավարար» վարկանիշի: Հյուպատոսական ծառայության պետը, քանի որ

պայմանականութիւններով առաջնորդվող, մակերեսային անձնավորութիւն էր, Դեւիսին Համարում էր անտաշ¹⁴: Դեւիսի սերը ոտքով զրոսնելու, ձիով շրջագայելու նկատմամբ, դժգոհում էր Գոտշուկը, ասեկոսեններ Հարուցեցին Հատկապես 1913 թվականի սեպտեմբերին, երբ իր արձակուրդից օգտվելով, ոտքով շրջագայեց Ուզբեկստանում ու Կովկասյան լեռներում, իսկ Հետո, քանի որ այն ժամանակ դեռևս Ռուսաստանի տարածքում էր գտնվում, Արարատ բարձրացավ: Դեւիսը Արարատի՝ ձյունով պսակված գագաթը Հասավ 1913 թվականի սեպտեմբերի 7-ին, նա իր նվաճումով շատ Հպարտ էր: Սակայն Գոտշուկը Արարատի գագաթը նվաճելու մեջ առանձնահատուկ ոչինչ չէր տեսնում, չնայած ասում էին, որ այնտեղ է Հանգրվանել Նոյյան տապանը: Այն, որ Դեւիսը երկարատեւ Հետիոտն ուղեւորութիւնների սեր ուներ, Հյուպատոսի կարծիքով «քմծիծաղի առիթ է տալիս: Ծատ ոտաներ գտնում են, որ նա կարող է ձիով շրջագայել»: Այսպիսով, Դեւիսը Բաթումում, մյուս դիվանագետների Համեմատութեամբ, «որոնք ավելի բարեկիրթ շարժուձեւ ունեին», առավելութիւններով աչքի չընկավ: Եվ պետդեսպարտամենտի ղեկավարները վճռեցին, որ նա ավելի Հարմար է «Հեռավոր, ոչ քաղաքակիրթ, նրբավարութիւն չպահանջող» վայրերի Համար: Հենց այդ պատճառով էլ, բարեբախտաբար, նրան Պարբերդ ուղարկեցին:

Դեւիսը Բաթումը թողնում է 1914 թվականի մայիսի 8-ին, սակայն Պարբերդ է Հասնում Հազիվ մայիսի 31-ին: Բաթումից նա նավակով լողում է մինչեւ Սամսուն՝ Սեւ ծովի թուրքական ափը, որտեղից եւ սկսվում է ցամաքային ուղեւորութիւնը՝ լեռների միջով մոտ երեք Հարյուր մղոն է Հաղթահարում սայլակառքով, որի արագութիւնը քիչ էր տարբերվում արագաչարժ Հետիոտնից՝ ժամում կազմում էր երեք մղոն: Ճանապարհը ոչ միայն խիստ զառիվեր էր,

նեղ ու անհուսալի, այլեւ այնքան վտանգավոր էր Համարվում, որ ընդունված կարգի Համաձայն, ճանապարհորդներին պետք է առաջնորդեր առնվազն մեկ վարձու ուղեկցող:

Դեւիսի նախորդը Պարբերդից Սամսուն է ուղարկում Հյուպատոսարանի պահապաններից մեկին, որպեսզի նոր պաշտոնյային դիմավորի, նահանգ ուղեկցի¹⁵: Հյուպատոսական ծառայութեան պետ Վիլրուր Զ. Կարրը, ըստ երեւույթին գտել էր, որ Համարձակ ու դիմացկուն Դեւիսը նման Հեռավոր վայրի Համար Հիանալի դիվանագետ է:

Այդ նույն ամռանը Դեւիսը լուր է ստանում, որ ծնողները Հիվանդ են, Հոր մոտ քաղցկեղ են Հայտնաբերել: Երբ նրա արձակուրդի՝ ծնողներին տեսնելու Համար ԱՄՆ ուղեւորվելու խնդրանքը բավարարվում է, ընտրում է Բեյրութի՝ Հարավային, ցամաքային ճանապարհը: Սակայն, մինչեւ Եգիպտոս Հասնելը սկսվում է Առաջին Համաշխարհային պատերազմը: Դեւիսը Հեռագրում է Վաշինգտոն՝ իր պետին, Հարցնում, ղեպարտամենտը նպատակահարմար չի՞ Համարում, որ ինքը Պարբերդ վերադառնա, իր անմիջական պարտականութիւններին անցնի ու Հետ դառնալու հրահանգ է ստանում¹⁶: Վերադարձի ճանապարհին Դեւիսը օգտակար շատ բան է իմանում: Օգոստոսի 2-ին թուրքական կառավարութիւնը Գերմանիայի Հետ գաղտնի պայմանագիր էր կնքել, իսկույն եւեթ իր բանակային ուժերը զորակոչի ենթարկելու հրաման արձակել: Ամբողջ ճանապարհին՝ Բեյրութից գնացքով Ռաս-ուլ-էյն, այնուհետեւ սայլով՝ Ուրֆայով ու Դիարբեքիրով ետ՝ Պարբերդ վերադառնալիս Դեւիսը տեսնում է նորակոչիկների ցաքուցրիվ խմբեր, որոնք ցնցոտիներով էին, տանջվում էին սովից ու Հոգնածութիւնից: Հարուստ թուրքերը սովորաբար Հատուկ վճարով ազատվում էին զինվորական ծառայութիւնից, բանակ գնում էին միայն աղքատներն ու նրանք, ովքեր մինչ այդ մարտական փորձ էին ձեռք բերած լինում:

Նարբերդ վերադառնալուց հետո Դեիսը ընդհուպ 1917 թվականի ապրիլը չի լքում պաշտոնավայրը, չնայած հայրը 1915 թվականի փետրվարի 2-ին մահանում է քաղցկեղից: Նա մինչև անգամ մերժում է 1915 թվականի վերջում իրեն արձակուրդ տալու առաջարկը¹⁷:

Պաշտոնապես Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ է մտել 1914 թվականի նոյեմբերի 2-ին: Մեկ ամիս անց արդեն թուրքական բանակը ռազմական նախարար էնվեր փաշայի գլխավորությամբ ներխուժում է Կովկաս՝ մարտարշավ, որը միանշանակ պետք է բացարձակ հիմարություն համարել: Դաժան ձմեռը Հայկական լեռնաշխարհի ժայռոտ տեղանքը փաստորեն անանցանելի էր դարձրել: Վատ մատակարարման պատճառով ցրտից ու հիվանդություններից թուրքական բանակը ավելի շատ կորուստներ ունեցավ, քան հակառակորդի զնդակից: Հետագա ամօթալի պարտությունը քավության նոխազ էր անհրաժեշտ: Հայերը, որոնք ապրում էին ռուս-թուրքական սահմանի երկու կողմերում, մեղադրվեցին հակառակորդի հետ համագործակցելու մեջ: 1915 թվականի գարնանը ձերբակալվեցին Նարբերդի երեւելի հայերը, որոնց թվում Եփրատ քոլեջի դասախոսները: Նրանցից շատերին մահանալու աստիճան տանջեցին: Հունիսի վերջին կենտրոնական իշխանությունը, խռովության կասկածանքի պատրվակով, բոլոր հայերին հրամայեց նախապատրաստվել «վերաբնակեցման»: Թիրախ դարձան նաև միսիոներները: Մի քանիսին ձերբակալեցին ու արտաքսեցին: Երկուսը՝ գերապայծառ Հենրի Նապլը Բիթլիսում եւ գերապայծառ Ֆրենսիս Ա. Լեսլին Ուրֆայում, որը միաժամանակ ստանձնել էր ԱՄՆ-ի Հյուպատոսական գործակալի պարտականությունները, այն բանից հետո, երբ հայկական ջարդերի փաստական վկաները դարձան, կասկածելի իրավիճակներում մահացան: Դեիսը եւ մյուս՝ Սամսունի, Մերդինի, Տրապիզոնի, Հալեպի, Բեյրութի

Հյուպատոսները թուրքիայում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուին եւ Վաշինգտոն՝ պետդեսպարտամենտի քարտուղարին հղած իրենց մշտական տեղեկագրերում անընդհատ նշում էին տարածաշրջանում իրավիճակի վատթարացման մասին (տես՝ հավելվածը):

ՕՍՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ

Որպեսզի հասկանալի դառնա Դեիսի՝ որպես Հյուպատոսի կամ ԱՄՆ-ի կառավարության առևտրական լիազորի դիրքորոշումը նման հեռավոր տարածաշրջանում, որն այսօրվա արեւելյան թուրքիան է հանդիսանում, նախ պետք է անդրադառնանք ամերիկյան ներկայության համառոտ պատմությունը այն աշխարհագրական տարածքում, որտեղ հետագայում կազմավորվել է Օսմանյան թուրքիայի կայսրությունը:

ԱՄՆ-ը առևտուրն Օսմանյան կայսրության հետ սկսել է 1792 թվականից, երբ շատ համապատասխան՝ «Գրանդ թուրք» («Մեծ թուրք») անունով նավը Ջմյունիայի՝ ներկայիս Իզմիրի նավահանգիստը մտավ, որպեսզի թուրք, գորգ գնի: Մոտավորապես 1800 թվականին ամերիկացի առևտրականները դրդեցին ԱՄՆ-ին, որ թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատի, սակայն սուլթանն Ամերիկյան այնպիսի աննշան երկիր էր համարում, որ գաղափարը չպաշտպանեց: Երբ 1827 թվականին Նավարինոյի ճակատամարտում եվրոպական միացյալ ուժերը ջախջախեցին օսմանյան տորմիդի ութսունհինգ տոկոսը, սուլթան Մուհամմեդ 2-րդի հետաքրքրությունը փոքրինչ մեծացավ այն նոր ազգության նկատմամբ, որը 1812 թվականին պարտության էր մատնել բրիտանական ահեղ նավատորմին: 1830 թվականին կնքված ամերիկա-թուր-

քական՝ բարեկամություն եւ առեւտրի պայմանագիրը հող-ված էր պարունակում «ամենաբարգավաճող ազգություն» մասին եւ ստորագրող կողմերին տալիս էր նույն իրավունքները, որոնք յուրաքանչյուրն արդեն տվել էր այն երկրներին, որոնց հետ մինչ այդ դիվանագիտական հարաբերություններ էր հաստատել: Թուրքիա՝ երկրի տորմիլը վերականգնելու մեկնած ամերիկացի նավաշինարարները, սակայն, շատ չանցած հետ դարձան, քանի որ հիասթափվեցին Թուրքերի՝ իրենց նավատորմի շարժականացման նկատմամբ ցուցաբերած անտարբերությունից¹⁸:

Օսմանյան կայսրությունում ամերիկացի միսիոներներն իրենց թվաքանակով շատ շուտ գերազանցեցին առեւտրականներին: Արտասահմանյան առաքելությունների ամերիկյան միացյալ լիազոր խորհրդի առաջին ներկայացուցիչները, որոնք Ջոյուոնիա հասան 1819-ին, լի էին անսահման լավատեսությամբ: Սակայն, երբ իմացան, որ մահմեդականի դավանափոխությունը հանցագործություն է համարվում եւ մահվան է դատապարտվում այնպիսի երկրում, որտեղ պետության ղեկավարը միաժամանակ հոգեւոր առաջնորդ է հանդիսանում, որոշեցին իրենց ուշադրությունը կենտրոնացնել հույների, հայերի, քրիստոնյա մյուս փոքրամասնությունների վրա: Առաջին աշխարհամարտի սկզբում տեսլապաշտ ամերիկացիները 1915 թվականի քառասուն միլիոն դոլար ներդրեցին Թուրքիայում դպրոցներ, հիվանդանոցներ, եկեղեցիներ կառուցելու համար¹⁹: Գործելով օսմանյան կառավարության տված արտոնագրերի համաձայն, այդ հաստատությունները 1914 թվականին ունեին 450 ամերիկացի եւ 4500 Օսմանյան կայսրության հպատակ, տարբեր ազգային փոքրամասնություններ ներկայացնող աշխատակիցներ²⁰:

Օգտվելով բարձրաստիճան ամերիկացիների հովանավորությունից, մեր միսիոներները անհամեմատ մեծ հա-

ջողությունների հասան, քան առեւտրականներն իրենց՝ Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայությունը ավելի ազդեցիկ դարձնելու ճիգերով: 1862 թվականին արեւելյան Թուրքիայում ելուզակների կողմից երկու միսիոների սպանվելուց, հաջորդ դարասկզբին ուրիշ երկու միսիոների էլ հարձակման ենթարկվելուց հետո ամերիկացիների գործունեությունն ավելի համառ, հետեւողական դարձավ: Վերջիվերջո, 1906 թվականին, կոստանդնուպոլսում ամերիկյան ավագ դիվանագետը բարձրացավ դեսպանի աստիճանի: Երեք տարի անց պետդեսպարտամենտը, թերեւս ելնելով 1909 թվականին Կիլիկիայի հայկական ջարդերի ժամանակ միսիոների մահից, կազմակերպեց Մերձավոր Արեւելքի բաժանմունքը: Դեսպանի նոր պաշտոնը, ինչպես մինչ այդ դեսպանորդինը, պետդեսպարտամենտի ղեկավարությունը այնքան էլ կարեւոր չէր համարում:

Ինքնին Օսմանյան կայսրությունը, որն ընդհուպ 16-րդ դարը շարունակում էր հաղթարչավոր Եվրոպայում, դադարել էր հզոր ուժ լինելուց: Սուլթանները կորցրել էին Հունաստանը, Բալկանները, Հյուսիսային Աֆրիկան եւ վերջիվերջո, 1908-ին, երբ հեղափոխությունը սուլթան-խալիֆին, որը համարվում էր Աստծո ստվերը երկրի վրա, վերածեց ձեւական տիրակալի՝ նաեւ իրենց բացարձակ իշխանության հավակնությունները: Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուն պես երկրի կառավարությունը ձեռքն առավ քաղաքական հանցախումբը, որը հայտնի էր «Միություն եւ առաջադիմություն» («İttihad ve Terakki») անվամբ: Կոմիտեն գլխավորում էին ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը, ռազմական նախարար Էնվեր փաշան, հանրային հարաբերությունների, հետազայում ծովային նախարար Ջեմալ փաշան: Այդ ընդհատակյա քաղաքական ընտրախափն իր դիրքերն ամրապնդեց ընդդիմադիրներին անգթորեն ու հետեւողականորեն ոչնչացնելով՝

դառնալով բոլշևիկ հեղափոխականների նախորդը կամ թերեւս ոգեչնչողը: «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեի ղեկավարները, որոնք ավելի շատ հայտնի էին «Երիտթուրքեր» անվանումով, իրենց գաղտնի ժողովներում կանխորոշում էին երկրի ապագան: Կոմիտեն պահպանեց սուլթանին ու խորհրդարանը սոսկ որպես պերճանք: Շեյխ-ուլ-իսլամը՝ սրբազան մահմեդականը, որը կոչված էր որոշելու, թե արդյո՞ք նոր օրենքները չեն հակասում իսլամի պատվիրաններին, արտաքսվեց ու փոխարինվեց այնպիսի անձնավորութեամբ, ում կարելի էր վստահել «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեի գործունեության վավերացումը: Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն երիտթուրքերին համեմատում էր Թամանիի⁹ ղեկավարների հետ ու ԱՄՆ վերադարձած իր ընտանիքին գրում էր, որ երբ պատգամավորների պալատի ներկայացուցիչը խորհրդարանի սրահում ընդվզել է հայերի ցեղասպանութեան դեմ, նրան ասել են, որ եթե համառորեն շարունակի իր հրապարակային բողոքները, հայերն ավելի արագ կոչնչացվեն²¹: Նման միջոցներով երիտթուրքերը ստիպեցին լռել ընդդիմադիր բոլոր ուժերին:

Պատմականորեն հայերի ցեղասպանութունն իր արձատներով հասնում է ընդհուպ Թուրքիայում միլլեթի՝ ոչ մահմեդական ազգերի համակարգի ստեղծումը՝ այն բանից հետո, երբ 1453 թվականին օսմանցի թուրքերը նվաճեցին Բյուզանդական՝ Արեւելյան Հռոմեական կայսրության մայրաքաղաքը՝ Կոստանդնուպոլիսը: Երբ քոչվոր օսմանցի թուրքերը կենտրոնական Ասիայում գտնվող Ալթայի լեռներից սկսեցին շարժվել դեպի արեւմուտք, իրենց ճանապարհին բախվեցին որոշակի տարածքներում բնակվող այնպիսի հինավուրց ազգերի, ինչպիսիք էին հույները, արաբներն ու հայերը եւ նրանց միախառնված քոչվոր քրդերը: Հայերն Անդրկովկասի հարավում եւ Փոքր Ասիայի արեւելյան մա-

սում ապրում էին դեռեւս մինչեւ Քրիստոսի ծնունդը՝ առաջին հազարամյակից: Նրանք առաջինն են 301 թվականին քրիստոնեությունը պետական կրոն հռչակել, իրենց դավանաբանությունը հավատարիմ մնացել, որը մյուսներից սկսեց տարբերվել 451 թվականից, երբ կրոնական պատերազմը զրադաշտական Պարսկաստանի հետ հայերին թույլ չտվեց մասնակցել Քաղկեդոնական տիեզերաժողովին:

Մահմեդականութունն ընդունելուց հետո թուրքերը իրենց հպատակեցրած քրիստոնյա ազգերին ու հրեաներին առաջարկեցին կամ մահմեդական դառնալ կամ էլ մեկուսանալ երկրի հասարակական կյանքից: Հրեաներին, որպես «Գրքի»՝ այսինքն Աստվածաշնչի ժողովրդի, որն ընդունում է մահմեդականությունը, իրավունք տրվեց ապրել իսլամական համայնքի ներսում: Հրեաներին պիտի հովանավորեին նաեւ մահմեդական առաջնորդները, սակայն Ղուրանը տարածելու ջանքերը այդպես էլ արդյունքի չհանգեցրին: Օրենսդրորեն, կրոնական փոքրամասնութեան կարգավիճակ ստացած հույները, հայերն ու հրեաները դատապարտված էին գոյութեան ամենաստորին կարգին, որոնց իրավասութունները հասարակութեան մեջ ընդունվում էին միայն այն համակարգի միջոցով, որը հանրային գլխավոր կառուցվածքից դուրս էր: Հույն եւ հայ միլլեթները գլխավորում էին սուլթանի նշանակած այդ համայնքների արքեպիսկոպոսները կամ պատրիարքները: Հայերի պատրիարքը ներկայացնում էր նաեւ այլ՝ մոնոֆիզիտ⁹ քրիստոնյաների, որոնց թվում ղպտիներին, ասորիներին, հարեչներին: Հրեա փոքրամասնութունն ուներ իր գլխավոր բարբինը կամ խալաւ-բաշին, որը նշանակվում էր որպես աշխարհիկ ու կրոնական առաջնորդ: Միլլեթները ըստ էութեան պետութուն էին պետութեան մեջ, բայց ենթակա կարգավիճակ ունեին: Ոչ մահմեդականների իրավունքների որոշ սահմանակումը մահմեդական ավանդույթների հետեւանքն էր, խտրակա-

նության այլ ձևեր զուտ օսմանյան ծագում ունեին: Գյավուրը (անհավատը) չէր կարող իսլամական դատարանում վկայութիւն տալ: Եթե տեղական ոստիկանութիւնը որեւէ գործ էր քննում, քրիստոնյայի կամ հրեայի ցուցմունքը մուսուլմանի ցուցմունքի դեմ ոչ մի արժեք չէր ունենում: Քրիստոնյան կամ հրեան չէին կարող մահմեդական կնոջ հետ ամուսնանալ, բայց մահմեդականը իրավունք ուներ քրիստոնյա կամ հրեա կին ընտրել: Գյավուրի սպանության համար այնքան խիստ չէին պատժում, որքան մահմեդականի: Ընդհուպ 1908 թվականի հեղափոխութիւնը փոքրամասնութիւնները իրավունք չունեին զենք կրել, պարտավոր էին լրացուցիչ հարկեր մուծել: Դարեր շարունակ միլլեթի անդամներն ստիպված էին ողբալ իրենց որդիների կորուստը, որոնց բռնութեամբ խլում, մեծացնում էին որպէս մահմեդականների, որպէսզի համալրեն սուլթանական հետեւակային զորամիավորման՝ ենիչերների շարքերը²²:

19-րդ դարում, երբ Հայերի ազգայնականութիւնը ազդեցիկ դարձավ, նրանք, ինչպէս եւ թուրքերը, ձգտեցին ազատվել սուլթանների բռնատիրական գերիշխանութունից: Հիմնականում գործելով տարագրութեան պայմաններում՝ Հայկական եւ թուրքական խմբավորումները համագործակցում էին: 1908 թվականին, երբ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդին վերջնական մարտահրապարակեց, Հայերը իրենց երիտթուրք համախոհներին օգնեցին, որ սահմանադրութեան գործունեութիւնը վերականգվի, նոր թուրքական խորհրդական հրավիրվի, որը սուլթանը «ցրել» էր երեսուն տարի առաջ: Սակայն, ցավոք, թուրքական ազգայնականութիւնը ծայրահեղական բնույթ ստացավ, ձգտեց վերականգնել օսմանցիների երբեմնի փառքը²³: Չիա Գյոկալպի նման մտավորականները երազում էին կենտրոնական Ասիայում միավորել թրակիայից մինչեւ իրենց նախահայրենիքում²⁴ բնակվող բոլոր թուրք ժողովուրդներին:

Հայերը կանգնած էին թուրքական ցեղերի միավորման այդ մեծ ծրագրի ճանապարհին:

ԳԵՐԳԵՐՅԱՆԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՊՐՈՂ Է ՈՒ ԳԻՏՆԱԿԱՆ

Երկար տարիներ Լեսլի Դեւիսն ինձ համար պարզապէս մեկն էր այն մի քանի ամերիկյան Հյուսիսատոսներից, որը ծառայել էր Օսմանյան Թուրքիայի կայսրութիւնում, Հայերի «վերարնակեցման» մասին կարճ, նկարագրական զեկուցագրեր գրել: Առաջին անգամ ես Դեւիսի մասին լսել եմ իմ ուսուցչից ու ղեկավարից՝ գիտնական, կյանքի հիսուն տարիները Հայկական ցեղասպանութեան ուսումնասիրութեանը նվիրած, այժմ արդեն Հանգուցյալ Հայր Գերգերյանից: Նա թուրքական տարրեր վավերագրերի իր կատարած անգլերեն թարգմանութիւնների համար խմբագրի կարիք էր զգում: Հայր Գերգերյանը տասնյակ հազար էջերի հասնող նյութ էր հավաքել, վերլուծել ու մեկնաբանել, հետո մեծ մասը թարգմանել էր անգլերեն, Փրանսերեն, ժամանակակից թուրքերեն: Նա ճգնավորի կյանք էր վարում, դրամը ծախսում միմիայն փաստաթղթերի ֆոտոպատճենների ու միկրոֆիլմերի տպագրութեան վրա: Առանց կողմնակի օգնութեան այնպիսի ծրագիր էր իրագործել, որի համար թերեւս գիտական մի ամբողջ ինստիտուտ անհրաժեշտ լիներ:

Մի քանի տարի շարունակ մենք շարաթական մեկ կամ երկու երեկո միասին էին անցկացնում, թարգմանութիւնները վերանայում: Սակայն ավելի շատ ժամանակ հատկացնում էինք պատմական թեմաներով զրույցներին: Ես չնորհակալ աշակերտուհի էի՝ նա ինձ Հայաստանի պատմութեան վերաբերյալ խորը գիտելիքներ էր հաղորդում: Մեր

քննարկումներն առնչվում էին Օսմանյան կայսրության անցյալին, օսմանցի թուրքերի ազգայնականության ուժեղացմանը, հպատակ՝ Հույն, Հայ եւ արաբ ժողովուրդների վրա ունեցած ներգործության հետեւանքներին, ինչպես նաեւ թուրք-հայկական հարաբերությունների վատթարացմանը, որն Առաջին աշխարհամարտի տարիներն հանգեցրեց հայկական փոքրամասնության «վերարնակեցման» ու եղեռնին:

Մենք միասին բարելավեցինք նրա հին՝ օսմանյան թուրքերենից, որը գրվել է արաբական այբուբենով, կատարած զինվորական ատյանի դատական նիստերի նյութերի թարգմանությունը՝ ատյան, որը դատում էր իր իսկ կայսրության քաղաքացիների դեմ ոճիր գործած հանցագործներին: Դատական այդ նիստերը Առաջին աշխարհամարտի վերջում նախաձեռնել էր թուրքական նոր կառավարությունը: Հենց որ ռազմական պարտությունը հանգեցրեց երիտթուրքերի վարչակարգի տապալմանը, թուրքական նոր կառավարողները այդ ամենի համար պատասխանատու հանցախմբին պատժելու խիստ անհրաժեշտություն զգացին:

Հայր Գերգերյանն ինձ ցույց էր տալիս դատական նիստերի ընթացքում որպես ապացույց ներկայացված կենտրոնական կառավարության հեռագրերն ու գրավոր հրամանները տեղական իշխանություններին, որոնցով պահանջվում էր կայսրությունով մեկ ոչնչացնել Հայերին: Թուրքական պաշտոնյաները, որոնք այդ հրահանգները ուղարկել կամ ստացել էին, հավաստում էին վավերականությունը:

Նման նյութերով մշտապես զբաղվելը սկզբում ճնշում էր ինձ, բայց հետզհետե ես սովորեցի հեռվից ընկալել մարդկային ողբերգությունը: Ճիշտ նույն ձևով էլ Հայր Գերգերյանը աստիճանաբար ինձ վարժեցրեց արխիվային

հետազոտության առանձնահատկություններին ու ներքին փոխհատուցման զգացողությանը, որն իր թեկուզեւ չնչին արտահայտություններ հանգեցնում է մարդկային նկարագիրը ավելի լավ ընկալելուն: Հայր Գերգերյանը փոխեց իմ կյանքը:

Նա ինձ հաղորդեց, որ ԱՄՆ-ի ժողովուրդները, անհամեմատ ավելի, քան որեւէ այլ ազգ, իրենց դրամական ներդրումներով, ապրանքներով ու այլ միջոցներով նպաստել են Հայերի հարությունը: Օգնության եւ վերականգնման ծրագիրը, որն իրագործվել է տասնհինգ տարի, նաեւ ամերիկյան մանկական որբանոցներ է ստեղծել, որտեղ ապաստան են գտել, ուսում ստացել ավելի քան 120000 Հայ երեխաներ: Արաբները, Հույները, պարսիկներն ու թուրքերն էլ են օգտվել աջակցության այդ ծրագրից: Հայերը, լիրանանցիները եւ պարսիկները իրենց հայրենակիցների փրկությունը մեզ են վստահել, քանի որ մերոնք դա արել են առանց հետին դրդապատճառների: Ես որոշեցի մոռացումից փրկել այդ կորած մարդասիրությունը, ներդրված ահուկ ջանքերի մասին զիրք գրել:

Երբ սկսեցի սեփական հետազոտություններս, Հայր Գերգերյանն իր հարուստ անձնական հավաքածուից ինձ համար իմ ուսումնասիրության նյութին առնչվող գրքեր եւ արխիվային փաստաթղթեր առանձնացրեց: Մի քանի տարի շարունակ ես ամեն երեկո, հենց որ ազատ էի լինում, նրա տունն էի գնում: Եվ անխուսափելիորեն ինձ այնտեղ նյութերի մի նոր դեղ էր սպասում: Քույրը, ում հետ նա ապրում էր, մեզ փոքրիկ բաժակներով թուրքական սուրճ, տանը պատրաստված հայկական թխվածք էր հյուրասիրում, իսկ հետո, երբ սկսում էինք աշխատել, տեղավորվում էր հեռուստացույցի դիմաց: Սկզբնական շրջանում հեռուստացույցի ու գիտական հետազոտության մեկտեղումը մեր աշխատանքին սյուրոնալիստական երանգ էր հաղորդում:

Հաճախ երեկոնները Հայր Գերգերյանը կարդում էր թուրքական ու հայկական սկզբնաղբյուրները, տեղնուտեղը թարգմանում: Երբեմն էլ ինձ Համար Բրիտանիայի Արտաքին Հարաբերությունների եւ ԱՄՆ-ի Ազգային արխիվների փաստաթղթերի երկար ցուցակներ էր դուրս գրում, նախապատրաստելով իմ առաջին աշխատանքային ուղեւորությունը Կոլումբիայի Փեդերալ օկրուգ՝ Վաշինգտոն, որտեղ ես գիտական հետազոտություններ ավտի զբաղվեի: Նա բազում օրեր էր անցկացնում Ազգային արխիվի նյութերն ուսումնասիրելու համար, բայց ինձ նախազգուշացնում էր, որ թեմային առնչվող աղբյուրներն այնքան շատ են, որ բոլորը գտնելու համար տարիներ են պետք:

Մի անգամ երեկոյան Ազգային արխիվում պահվող պետքեպարտամենտի փաստաթղթերի միկրոֆիլմերի փաթեթները դիտելիս, որոնք Հայր Գերգերյանը պատրաստել էր ինձ համար, ես նկատեցի Դեիսի Հաշվետվությունների շարքը, որոնցից յուրաքանչյուրը մոտավորապես 12-14 էջ կլինեին: Բոլորն էլ նկարագրում էին Մամուրեթ-ուլ-Ազիզ վիլայեթի եւ Հյուսիսային շրջանների հայերի բռնի «վերարնակեցման» ու բնաջնջման ահավոր մանրամասները: Ամռան վերջում, 1915-1916 թվականների ձմռան մոտենալուն զուգընթաց Դեիսի Հաղորդումները ավելի ու ավելի պատկերավոր էին ներկայացնում իրադարձությունները, որոնք չափազանց տագնապալի էին դառնում: 1915-ի ամենավերջին Հաղորդագրության եզրափակիչ մասում Դեիսը յուրահատուկ ձևով համազրում է այն, ինչ ինքը լսել է որիչներից ու տեսել անձամբ.

«Պարզվում է, որ բոլոր նրանց, ովքեր գտնվում էին այն խմբերում, որոնց մասին հիշատակել եմ նախորդ գեկուցագրի 15-րդ էջում՝ տղամարդիկ, կանայք եւ երեխաներ, մորթել են այն վայրում, որն այստեղից հինգ ժամ հեռու է գտնվում»:

Ես ցնցված էի, չկարողացա ընթերցումը շարունակել: Հյուպատոսը իրոք «առնչվել» էր սպանդի զոհերին: Առաջին աշխարհամարտի տարիներին Թուրքիայում ծառայող ուրիշ ամերիկյան եւ գերմանական Հյուպատոսներ էլ էին գրել, որ հանդիպել են տներից արտաքսված, ցրտից, հիվանդություններից, տանջանքներից մեռնող հազարավոր հայերի: Ոմանք տեսել էին ճանապարհի երկայնքով ընկած նախճիրի զոհերի մարմինները, սակայն ԱՄՆ-ի Հյուպատոս Լեալի Ամերտոն Դեիսը ավելին էր տեսել: Ես շարունակեցի կարդալ.

«... Այժմ կարելուրը այդ մարդկանց կենդանի պահելն է, հետո օգնելը, որ հենց հնարավոր լինի, թողնեն երկիրը...»:

Պատիվ ունեմ սիր, մնալու Ձեր խոնարհ ծառան՝
ԼԵՍԼԻ Ա. ԴԵԻՍ
(ստորագրություն)
Հյուպատոս»:

Վերջում նկատեցի «ծածկագրված է» նշումով հետեւյալ լրացումը.

«Ես նպատակ ունեմ հայերի մարդաթափի (ըստ երեւույթին պիտի լինի «բռնագաղթի»-Ս.Բ.) եւ կոտորածի վերաբերյալ գեկուցագրերը լրացնել իմ երկու ուղեւորությունների հաղորդագրություններ, որոնք մինչ այժմ կատարել եմ այստեղից մոտ հինգ ժամ հեռու գտնվող լճի՝ շրջակայքում, որտեղ տեսել եմ առնվազն տասը հազար հայերի դիակներ, որոնց մեծ մասը վերջերս էր սպանված, ինչպես նաեւ պատկերագրողը լուսանկարներով, որոնք նկարահանել եմ, երբ տարագիրները դեռեւս ողջ՝ ճամբարում են եղել: Նման հաղորդագրությունն այժմ ուղարկելը խելամիտ չեմ համարում»:

1915 թվականի դեկտեմբերի 30-ի ամսաթիվը կրող այս ճեպագիրը այն մի քանի գեկուցագրերից մեկն է, որը Դեիսը նախ եւ առաջ առաքել է Հենրի Մորգենթաու ավագին: Սկզբնական պատճենը սակայն այդպես էլ չի հասել Հաս-

ցեատիրոջը: Թուրք գրաքննիչները, որոնք միայն խոսքով էին արտասահմանյան դիվանագետներին իրավունք տալիս զմուռսով կնքված նամակներ ուղարկել իրենց դեսպանություններին կամ իրենց երկրի այլ հաստատություններին, առգրավել են Դեիսի այս եւ մի քանի այլ հաղորդագրությունները, որոնք գրված էին նույն թվականին եւ առնչվում էին վաղնջական ժամանակներից այդ տարածաշրջանում ապրող հայ ազգաբնակչության «վերաբնակեցմանն» ու բնաջնջմանը: Իրոք, ԱՄՆ-ի դիվանագիտական գրազրույթյանը թուրքերը այնքան հաճախ ու նյարդայնացնող ձևով են միջամտել, որ պետղեպարտամենտի ծառայողներից մեկը նկատել է. «Մենք կարող էինք նույն հաջողություններ գործունեությունը շարունակել առանց դիվանագիտական հարաբերությունների պահպանման ծաղրի»:

Ես հուզվել էի, որ գտել եմ Դեիսի անձնական դիտարկումները, ինչպես նաեւ այն բանի համար, որ նա լուսանկարներ է արել: Բայց որտե՞ղ կարող էին լինել դրանք: Ես Հայր Գերգերյանի ուշադրությունը ուղղեցի այդ հղման վրա ու հարցրի, թե երբ ինքը ճեպագիրը տեսել է, հետը լուսանկարներ եղե՞լ են: Ոչ, չէին եղել: «Բայց լուսանկարները հիանալի ապացույց չէին լինի» հարցրի ես: Մենք սովորություն էինք դարձրել ցեղասպանության ոճրագործության մեղադրական դատավճիռը կազմելիս մարզային դատախազի մանրախնդրությունը ու ներթափանցությունը դիմել վկայությունների ու հանցանշանների: Տարիների ընթացքում Հայր Գերգերյանի մտահոգությունները նաեւ իմն էին դարձել: Արտասահմանյան երկրի կառավարության ներկայացուցչի լուսանկարների գոյությունը, որոնք նա կատարել էր ծառայողական պարտականությունների բերումով, որպեսզի զեկուցի իր հյուպատոսական տարածաշրջանի քաղաքական իրավիճակի մասին, ոչ ոքի հայտնի չէր: ԱՄՆ-ը չեզոք երկիր էր եղել, ընդհուպ 1917 թվականի ապ-

րիլը չէր մասնակցել պատերազմին, այնպես որ ոչ ոք չէր կարող ամերիկյան հյուպատոսին մեղադրել այն բանի համար, որ թաքուն նպատակներ է հետապնդել կամ էլ հայտարարել, որ նրա լուսանկարները «դաշինքի քարոզչություն» են, ինչպես թուրքական կառավարությունը վարվեց «Վերաբերմունք հայերի հանդեպ» («The treatment of the Armenians») զեկույցների գրքի կապակցությամբ, որը Անգլիայում պատրաստել էին դերկոմս Ջեյմս Բրայսն ու Առնոլդ Թոյնթին:

Հայր Գերգերյանն ընդունեց, որ նման լուսանկարները կարող էին օգտակար լինել, չնայած որպես վկայություն պաշտոնական փաստաթղթերն ավելի արժեքավոր էր համարում: Եթե Դեիսը հաշվետվություն գրեր, նկարագրեր այն, ինչ տեսել էր, եւ ապա, իրադրության պարզաբանություն համար լուսանկարներ նույն տեսարանները, այդպիսի լուսանկարները, որպես վկայություն անհամեմատ արժեքավոր կլինեին: Սակայն Հայր Գերգերյանն ինձ հիշեցրեց. «Դեիսի լուսանկարները ես չեմ տեսել: Կան ուրիշները, որոնք Կոնիայում Կարմիր խաչի բժիշկներն են արել: Հիմա ցույց կտամ»:

Նա հեռացավ ու մի քանի րոպե անց վերադարձավ մի ծրարով, որի վրա «Ազգային արխիվ» հետհասցե կար: Ծրարում ներփակված էին ութը տասի վրա մոտ տասներկու փայլատ լուսանկարներ, որոնց կցված էին սեւանկարները եւ բնօրինակների լուսապատճենները՝ համապատասխան մակագրություններով: Հեղինակը Կարմիր խաչի բժիշկ Վիլֆրեդ Պոստն էր: Պոստը դրանք վստահելի անձի միջոցով հասցրել էր դեսպան Մորգենթաուին, որը 1915 թվականի հոկտեմբերի 20-ին դիվանագիտական փոստով ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի պետքարտուղարին՝ Ռոբերտ Լանսինգին էր ուղարկել: Այդ լուսանկարները, որոնք մինչեւ 1961 թվականը համարվում էին պետղեպարտամենտի

զաղտնի փաստաթղթեր, պատկերում են Հյուսիսային Կոնիայի Հայ փախստականներին, որոնց վիճակվել է ոտքով Հարյուրավոր մղոն կտրել, կամ էլ ճանապարհի մեծ մասը լեփլեցուն ապրանքատար վագոններով անցնել: Տարագիրների ճնշող մեծամասնությունը կամ հիվանդացել կամ մահացել է: Այդ լուսանկարները Հստակ պատկերում են ծանր փորձություններից ուժասպառ եղած, Հյուժված Հայերին: Սակայն դոկտոր Պոստը կառավարական պաշտոնյա էջը, նրա լուսանկարները որոշակիորեն մատնացույց չէին անում, թե ովքեր են այդ զոհերի դահիճները:

Հայր Գերգերյանն ինձ բացատրեց լուսանկարների վավերականությունը ապացուցելու դժվարին գործընթացը. «Լուսանկարը կարելի է սխալ էլ մեկնարանել: Ամեն ոք կարող է պնդել, որ լուսանկարը այն իրողություն ճիշտ Հակառակն է ներկայացնում, ինչ պատկերում է իրականում»: Նա ինձ ցույց տվեց Ֆրանսերեն Հրատարակված «Հայկական կոմիտեների ձգտումներն ու հեղափոխական գործունեությունը՝ օսմանյան սահմանադրության հռչակումից առաջ եւ հետո» գիրքը, որը թուրքական կառավարությունը իր քայլերը արդարացնելու համար տպագրել էր 1917 թվականին: Գրքում բոլորովին նոր, ինքնաշխատ մաուզերների եւ գերմանական հրացանների մոտ տասներկու լուսանկար կար, որոնք ըստ երեւույթին հենց նոր էր Օսմանյան կայսրությունն ստացել թուրքական բանակի համար, մինչդեռ ներկայացվում էր իբր երկրի տարբեր քաղաքներից, «վտանգավոր» Հայ հեղափոխականներից բռնազրաված: Լուսանկարներից մեկն էլ պատկերում էր կանանց, որոնք փարվել էին մի քանի տղամարդկանց դիակների: Վերջիններս սեռական օրգանները ծածկված էին լաթի ծվեններով: Մակագրությունը հավաստում էր, որ զոհերը թուրքեր են, նրանց սպանել են Հայ հեղափոխականները: Իսկ կանայք իբր Հարազատներ են, որ ողբում են յուրայինների մահը:

Հայր Գերգերյանը նշեց, որ չնայած այդ քարոզչությունը բավական համոզիչ է «դիտվում», իրականում սպանվածները Հայեր են: Ազդրերը ծածկող լաթերը հենց այն բանի համար են, որ թաքցնեն տղամարդկանց թլպատված չլինելը, քանի որ նրանք թուրք՝-մահմեդականներ չեն: Իսկ կանանց բերել են հարեւան գյուղից ու վճարել, որպեսզի համապատասխան դիրք գրավեն լուսանկարող սարքի առջև: Այս ամենը մի գերմանացի է վկայել, որը եւ նկարագրել է մանրամասները: Ինչպես արտահայտվեց Հայր Գերգերյանը՝ «ահա թե թուրքական կառավարությունը ինչպես է փաստագրում այսպես կոչված «Հայկական հեղափոխությունը»:

Ես բարձրաձայն մտորեցի այն մասին, թե լուսանկարում որքան քիչ են կողք-կողքի շարված զենքերը եւ ինչպես մի քաղաքում անընդհատ տեղից տեղ են տարել, որպեսզի տարբեր բնակավայրերում լուսանկարված լինելու պատրանք ստեղծեն:

Հայր Գերգերյանը համաձայնվեց ինձ հետ, բայց շեշտեց, որ քանի դեռ չի պարզվել, թե ո՞վ, որտե՞ղ, ճշգրիտ ե՞րբ է կատարել տվյալ լուսանկարը եւ ի՞նչ որոշակի նպատակով՝ այն փաստաթուղթ, վկայություն չի կարող համարվել: Եթե լուսանկարչի անկողմնակալությունը հավատ չի ներշնչում, լուսանկարները կարող են կասկածելի լինել:

«Լուսանկարների հարցում զգուշ եղեք», - նախազգուշացրեց նա: Ակնհայտորեն Հայր Գերգերյանը լուսանկարներին, որպես պատմական վկայությունների, քիչ էր վստահում: Ես հասկանում էի, որ նրա կասկածամտությունը լիովին հիմնավորված է, բայց ոչինչ չէի կարող անել՝ զգուշ էի, որ եթե փաստարկներով հաստատված լուսանկարները գտնվեն, տեսողական ներգործությունը հաշվետվություն սովորական շարադրանքի համեմատությամբ անհամեմատ ազդեցիկ կարող է լինել:

Հետագա տարիների իմ որոնումներն ինձ հասցրին Նախագահական գրադարան, Հարվարդի համալսարանի միսիոներական, Մերձավոր Արեւելքի օգնության մասնավոր արխիվները, Կոնգրեսի գրադարանի ձեռագրերի բաժինը, եւ վերջիվերջո Ազգային արխիվ, որտեղ անցկացրի համարյա ամբողջ 1982 թվականը: Իսկ դրանից հետո իմ ամեն մի ազատ ընթացք: Ազգային արխիվի շենքն արտաքուստ Վաշինգտոնի հայտնի՝ Հունական Վերածննդի ոճի բազում կառույցներից մեկն է, որն զբաղեցնում են Փեդերալ իշխանության հաստատությունները: Նրա ծավալները երկչոտություն են հաղորդում այցելուին, բայց, իհարկե, ոչ այնքան, որքան պարունակությունը: Ցանկացած ամերիկացի կարող է նստել այնտեղ եւ Ազգային արխիվի հաստիքային աշխատողների հսկողության ներքո ընթերցել Հյուսիսատոնների ու դեսպանների հաշվետվությունները՝ դիվանագետներ, որոնք Բենջամին Ֆրանկլինի ժամանակներից ի վեր օվկիանոսի մյուս կողմում ներկայացրել են ԱՄՆ-ը: Ինչպես հայտնի է, Բենջամին Ֆրանկլինն իր հերթին մեր երկիրն է ներկայացրել Ֆրանսիայում: Ինձ հետաքրքիր էր իմանալ, թե ԱՄՆ-ի դիվանագիտական անձնակազմը ինչ է մտածել Թուրքիայի՝ Առաջին աշխարհամարտի ժամանակվա իրադարձությունների մասին: Ամեն առավոտ ես հասնում էի քաղաքի կենտրոն, անձնական իրերս թողնում կողպվող արկղում ու գլխավոր գիտական կաբինետում կամ միկրոֆիլմերի հատուկ սրահում ձեռնամուխ էի լինում ընթերցանության: Մութն ընկնելուց հետո անգամ ինձ շարունակում էին կլանել տասնյակ տարիներ առաջ մեռած տղամարդկանց ու կանանց ձեռքերով գրված ողբերգությունների պատմությունները: Ինձնից մոտ մի մղոն հեռու Կոնգրես-

սի պալատում օրենքների նախագծեր էին քննարկվում, որոնք այնքան աննշան էին թվում Առաջին աշխարհամարտի իրադարձությունների կարեւորություն համեմատությամբ:

Եթե նյութը, որը ես կարդում էի, այդքան առանձնահատուկ չլիներ, նման երկար ժամերը ձանձրալի կթվային, դժվարությամբ կանցնեին: Ազգային արխիվում, միկրոֆիլմերի վրա ես կարդացի նաեւ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության՝ Առաջին աշխարհամարտի տարիների արձանագրությունների պատճենները, երբ այդ երկիրը Թուրքիայի դաշնակիցն էր: Բոլոր սկզբնաղբյուրները համամիտ էին՝ 1915 թվականի դեպքերը որակում էին «ցեղային ընաշնջում»: Այդ թվականին Թուրք կառավարողները հայերին ոչնչացնելու իրենց ծրագրերը քողարկելու փորձ նույնիսկ չէին անում, բացահայտորեն խոսում էին մտադրությունների մասին:

Մի անգամ, փետրվարին, կեսօրին, երբ նստած էի միկրոֆիլմերի ընթերցարանում, նորից հանդիպեցի Դեւիսի մի տեղեկագրին, որտեղ լուսանկարների վերաբերյալ հիշատակություն կար: Ու նորից համակվեցի դրանք գտնելու ցանկությամբ:

Ես փնտրտուքներս շարունակեցի բոլոր թղթածրարներում, որտեղ ենթադրում էի՝ Հյուսիսատոնի լուսանկարները հայտնաբերելու բանալին կարող էր լինել: Ազգային արխիվի լուսանկարների պահպանման բաժինը ինձ կարողացավ տրամադրել միայն մի նկարաչար, որը 1919 թվականին լուսանկարել էր գեներալ Ջեյմս Հարրոդը, երբ Փարիզի խաղաղության խորհրդաժողովին ներկայացնելու նպատակով քննական ուղեւորություն էր կատարել Թուրքիայում եւ Հայաստանում: Կոնգրեսի գրադարանի հավաքածուն նույնպես ինձ ոչինչ չտվեց: Բայց ես վստահ էի, որ լուսանկարները գտնվելու են: Հավանական չէր, որ Դեւիսի նման

բարեխիղճ Հյուպատոսը նման լուսանկարներ աներ ու Հետո ոչնչացներ:

Գուցե ինչ որ մեկը թոցրե՞լ էր: Ինձ Հայտնի էին արխիվային նյութեր գողանալու դեպքեր: Անհետացել էր, օրինակ, Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպանատան 1915 թվականի գրազրույթյան մի քանի Հատոր: Մի ամբողջ ենթարածին, որը նվիրված էր Օսմանյան Թուրքիայի կայսրության 1915 թվականի տնտեսական խնդիրներին, որը կարող էր տեղեկություններ տալ Հայկական ցեղասպանության վերաբերյալ, Հաստափոր Հատորից պոկել, միայն էջերի սկզբնամասերն էին թողել: Միկրոֆիլմերի ամբողջական փաթեթներ, որոնք տվյալներ էին պարունակում Հյուսիսարեւմտյան Պարսկաստանում Հայերի ու ասորիների ջարդերի մասին, երբ Առաջին աշխարհամարտի տարիներին այդ տարածքն էին ներխուժել թուրքական զորքերը, կորել էին արխիվային միկրոֆիլմերի սրահից: Ես այդ նյութերը ուսումնասիրեցի մի ամբողջ շաբաթ, սակայն մի քանի օր անց, երբ ցանկացա ճշտել իմ հղումները, փաթեթներն արդեն չքացել էին: Իհարկե, դրանք առանձին դեպքեր չէին: Կոլումբիայի ֆեդերալ օկրուզի գերագույն դատարանի 1989 թվականի փետրվարի դատավճիռը պատմաբան-արվեստաբան Չարլզ Մոնթի նկատմամբ՝ արխիվից, ձեռագրերի այլ պահպանողներից փաստաթղթեր գողանալու համար, վկայում է, թե երբեմն որքան անհուսալի է թեկուզ լավագույն հսկողությունը: Այժմյան արխիվային համակարգը, որը Հետազոտողին թույլ է տալիս ձեռքն առնել վավերաթղթերի բնօրինակներն ու պատճենահանել, հանգեցնում է չարաչառումների:

Չնայած լուսանկարների իմ փնտրտուքը արխիվներում անհաջողությամբ ավարտվեց, ես չմոռացա դրանց մասին վկայող մի այլ զեկուցագիր, որը խաղաղության բանակցությունների ամերիկյան Հանձնաժողովի համար պատրաստել

էր Սարբերդում աշխատած միսիոներ, վերապատվելի Հենրի Ռիցը: Նա հիշատակում էր երկու ամերիկացիների, որոնց հաջողվել էր խույս տալ թուրքական հսկողությունից ու վաղ առավոտյան ջարդերի ենթադրվող տեղերը հասնել: Ռիցն իր աչքերով տեսել էր նրանց արած լուսանկարները:

«Տարբեր աղբյուրներից մեզ Հայտնի էր դարձել, որ Սարբերդից հարավ ձգվող ճանապարհին բռնազաղթողները զանգվածային կոտորածի են ենթարկվում: Համոզվելու համար, որ նման լուրերը հավաստի են, երկու ամերիկացիներ որոշում են անցնել այն ճանապարհը, որով քշել էին տարագիրներին, անձամբ ամեն ինչ իրենց աչքերով տեսնել: Որպեսզի ոստիկանությունը չնկատի ու չարգելի, նրանք վեր էին կացել լուսաբացից առաջ, բռնազաղթածների Հետեից քայլել արահետներով ու ճանապարհներով, կտրել հովիտներ, մազլցել լեռներ, պտտվել Գյոլջուկ լճի ափերով: Տեղ հասնելու ու վերադառնալու համար քսան մղոն անցնելով, նրանք ուշ գիշերին ուշ տուն էին մտել, սահմոկեցուցիչ վկայություններ բերել: Ես խելամիտ չեմ համարում երկու ամերիկացիների անուն-ազգանունները հիշատակելը, չնայած դա բավական կլիներ նրանց հաղորդումները անհերքելի համարելու համար, թեկուզեւ ինքս չեմ տեսել տեղի ունեցած աննկարագրելիորեն ահավոր տեսարանների լուսանկարները: Լճի ափերը սպանդանոցի էին վերածվել շուրջ բոլորը ծվարած հազարավոր այն անօգնական բռնազաղթածների համար, որոնց անվտանգությունը վալի Սարիթ բեյը այնքան հանդիսավոր, պաշտոնապես ստանձնել էր: Մարդկանց սպանել էին սվիններով ու մահակներով, հազուստները վրաներից նախօրոք քաշել-հանել էին, որ չարյունոտվի (այդ զգեստները, դեզերով, վաճառում էին Մեդիթեր շուկայում): Յուրաքանչյուր կիրճում, խոր Հեղեղատում կամ ձորում կուտակված դիակների կույտերը ինքնին պատմում էին իրենց պատմությունը: Սոցոտված, բզկտված, այլանդակ-

ված, ճեղքված որովայններով դիակները խոսուն վկաներն էին այն սանձարձակութեան, որը մի քանի օր առաջ տեղի էր ունեցել կողմնակի աչքից հեռու՝ այդ անդնդախոր կիրճերում, բարձունքներում: Բազմաթիվ կանանց մարմինների դիրքն ու վիճակը ուղեկցող զինվոր-ոստիկանների այլասերվածությունն ու անմարդկայնությունն աղաղակող մեղադրականն էր՝ այն աստիճանի արգահատելի ու նողկալի, որ չի կարելի թուղթը պղծել: Այդ ուղեւորությունը կատարած ամերիկացիներն ինձ պատմեցին, որ տվյալ՝ մի օրվա ընթացքում իրենք տեսել են ամենայն հավանականությամբ տասը հազարից ոչ պակաս մարդկային անթաղ մարմիններ:

Որոշ վայրերում դիակների մնացորդները այրելու փորձ էին արել, որպեսզի կանխեն այդ տեղերի մթնոլորտի սարսափելի աղտոտումը: Սակայն, մեծ մասամբ, բնական երեւույթների կործանարար ներգործությունը միջամտելու ոչ մի փորձ չէր ձեռնարկվել: Մոտակա գյուղերը գրեթե անբնակելի էին դարձել, ժամանակի ընթացքում բնակիչները հիմնականում համաճարակների զոհ էին զնացել:

Քրդական ինձ հայտնի գյուղերից մեկը գոնե անտանելի նեխահոտից ու գարշահոտությունից դատարկվել էր, մի քանի ողջ մնացածներ ուրիշ տեղեր էին փախել, եւ միայն լքված շինությունների կիսավեր պատերն էին մեզ հաղորդում իրենց պատմությունը:

Ես կարող էի մասնակցել իմ երկու բարեկամների այդ ճնշող շրջագայությունը, եթե արդեն պայմանավորված չլինեի նույն օրը այլ ուղղությամբ գնալ: Այդ ճանապարհով նույնպես հազարավոր դժբախտ տեղահանվածներ էին քայլել: Սակայն քանի որ այն անընդհատ անցնում էր հարթ տարածքներով, մշտապես գտնվում որեւէ քաղաքի կամ գյուղի տեսադաշտում, զանգվածային նախնիրի թատերաբեմ չէր դարձել: Բոլոր ղեպքերում այստեղ էլ օդը, նույնիսկ մեծ քաղաքների մոտ, հազեցած էր նեխահոտով: Ամբողջ

ճանապարհի երկարությունը ակնհայտ էին տեղի ունեցած ողբերգության հետքերը: Չնայած ճամփեզրին մարդկային հատուկենտ դիակներ էին ընկած (նրանցը, ովքեր ուժասպառ էին եղել ու քարավանից հետ էին մնացել), տեսարանը կրկնվում էր հաճախ: Երբ գնում էի գլխավոր ճանապարհով, կեսարիա քաղաքից երկու մղոն շառավիղով տարածքում առնվազն ութսուն դիակ տեսա: Ես կտրեցի ամբողջ գլխավոր ուղին՝ Սվազից հասա մինչեւ այն հանգրվանը, որը գտնվում էր Նարբերդից զգալի հեռավորություն վրա եւ չնայած իմ անցնելուց առաջ ճանապարհների մեծ մասը նախօրոք մաքրել էին, բավականաչափ դիակներ կային, որպեսզի վստահ լինեի, որ երկու մղոնը, որտեղ հաշվել էի ոչ վաղուց ընկած մարմինները, մահվան ավելի քիչ վկայություն ուներ, քան միջին հաշվով գլխավոր ուղու այն հատվածը, որն անցնում էր Նարբերդի նահանգով:

Ճամփեզրի դիակները մեծ մասամբ հապճեպ թաղվածի տպավորություն էին թողնում՝ հնարավոր է, որ հարադատներն էին ջանացել մի կերպ ծածկել մարմինները: Բայց այդ թաղումներն այնքան մակերեսային էին, որ անթիվ-անհամար շներն ու գիշանզդները հանում էին, քարչ էին տալիս, զելս խրախճանքներ սարքում: Ճանապարհները մաքրելու հուսահատ փորձեր, իհարկե, արվել էին: 1915 թվականի աշնանը, երբ ամերիկացիների մի խումբ հեռանում էր Բեյրութից, մերձակա գյուղերի բնակիչներին բերել էին ճանապարհային աշխատանքների, որպեսզի խնամքով քողարկեն սրտառած արհավիրքների ամենասակնառու հետքերը: Այդ գուղացիները մոտեցան մեզ ու պատմեցին, որ իրենց ստիպել են հավաքել դիակները, իրար վրա կիտել ու այրել, քանի որ տեղեկացել էին, որ «այդ ճանապարհով ինչ որ հյուպատոսներ են անցնելու»: Բայց այլ ղեպքերում, մանավանդ գլխավոր ճանապարհից հեռու, ընդհանրապես չէին փորձել թաղել կամ թաքցնել տեղի ունեցած ողբերգության ահա-

վոր վկայությունները: Այդ օրը, որի մասին պատմում եմ, ես փոքր ինչ հեռացա գլխավոր ուղուց եւ հարյուր քայլ էլ չանցած, բլրի հետեւում, աչքից հեռու կանացի մի դիակ տեսա: Ծներն ու գիշանգղները ամբողջովին հոշոտել էին մարմինը, այնպես որ մնացորդներով հնարավոր չէր պարզել, թե ով է մեռել ամայի հեղեղատում: Սակայն մեկուսի վայրը, որտեղ կինը մահացել էր, վկայում էր, որ նա այդ լքված անկյունը իր կամքով մեռնելու չի եկել: Այսինքն հենց գլուխը, որն անջատվել էր մարմնից, մի կողմ գլորվել, փաստում էր, թե ինչով է ավարտվել ահավոր տեսարանը, երբ թուրքը, վերջացնելով իր նողկալի գործը, սրբել է յաթաղանն ու զնացել, հասել զինընկերներին:

Այս երկրի հովիտներից ու դաշտերից անհետացող համր վկաները դեռեւս աղաղակում են Աստծուն բազում տեսարանների աննկարագրելի սարսափների մասին, աղաղակում են դիվային գործնականության ու անասնականության զուգակցման դեմ, որով շարունակում է առաջնորդվել թուրքիան»²⁶:

Երջանիկ պատահականություն, թե՞ նախախնամություն կամքով մի անգամ բարեկամուհիս զանգահարեց ու հայտնեց ընկերուհու հետ ունեցած զրույցի մասին, ում ծնողները 1919-ից 1920 թվականը առնչություն էին ունեցել հայերին օգնելու գործին: Հենց բարեկամուհիս պատմել էր իմ ուսումնասիրությունների մասին, ընկերուհին համառորեն խնդրել էր, որ զրուցեմ ծնողների՝ պրոֆեսոր Լ. էյջ. Մակ-Դանիելսի ու կնոջ հետ, որոնք սիրում են վերհիշել Մերձավոր Արեւելքում անցկացրած տարիները: Ինձ տեղեկացրին նաեւ, որ չնայած նրանք 95-ն անց են, հիանալի պահպանել են իրենց հիշողությունը, որ պարոն Մակ-Դանիելսը Կոռնուելի համալսարանում բուսաբանության վաստակաշատ պրոֆեսոր է, դեռեւս զբաղվում է գիտական գործունեությամբ: Պրոֆեսորն ու կինը, որոնք ամուսնացել

են օգնության ծառայության ցանկում արձանագրվելուց քիչ առաջ, այն եզակի զույգերից էին, որոնք աշխատանքի էին մեկնել Մերձավոր Արեւելք: Նրանք Մերձավոր Արեւելքի օգնության՝ երբեւէ Նարբերդում եղած միակ կենդանի վկաներն էին:

Բավական երկար ժամանակ անցավ, մինչեւ ես կարողացա Կոլումբիայի ֆեդերալ օկրուզից՝ Վաշինգտոնից Նյու Յորքի նահանգ՝ Իթաքա մեկնել: Պրոֆեսորն ու կինը, որոնք մեղմաբարո, հարգարժան, հյուրընկալ, զրոսասայլակներին ապավինած մարդիկ էին, արդեն սպասում էին ինձ: Սեղանի մի անկյունում դրված էր թերթերի մի ամբողջ կապոց եւ լուսանկարչական ալբոմներ, որոնց կաշվե կազմերը մաշվել էին ժամանակից:

Մակ-Դանիելսները, ինչպես եւ ես, շտապում էին ավարտել ծանոթության ձեւականություններն ու բուն նյութին անցնել: Պրոֆեսորը սեւեռուն հայացք, սուր միտք ուներ: Կինը անհամեմատ հանդարտաբարո էր, բարձրահասակ, նրա գեղեցկությունը թերեւս փոքր ինչ խամրել, բայց դեռեւս պահպանվել էր: Նա գեղանկարչի ճշգրտություն մը հիշում էր այն ժամանակվա դեպքերը, վայրերն ու մարդկանց: Վաթսուն տարուց ավելի ոչ ոք չէր հետաքրքրվել Առաջին աշխարհամարտի վերջում՝ Նարբերդում ծավալած նրանց գործունեությունը:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո տուն էին վերադարձել ողջ մնացած հայերը, իսկ նրանց, ում հափշտակել էին թուրքերը, փախել էին կամ էլ սկսել էին դուրս գալ թաքստոցներից: Այնպես որ 1919 թվականի Հունիսի վերջին, երբ պրոֆեսորն ու կինը, օգնության վերջին խմբերից մեկի կազմում Նարբերդ՝ իրենց ծառայության վայրն էին հասել, դեռեւս հանդիպել էին սովամահ եղող, ցնցոտիներով, հիվանդ ու սարսափով համակված հայերի: Ամուսինները ներողություն խնդրեցին իրենց թույլ տեսողու-

թյան, առողջության, նվազած մյուս կարողությունների համար: Նրանք մեկը մյուսի հետեւից իմ առջեւ էին դնում ալբոմներ, որոնց լուսանկարներն արված էին երկու ապարատով: Ես նայում էի նրանց՝ ամերիկյան հարմարավետ ու անվտանգ տնից հազարավոր մղոններ հեռու ձգվող ուղեւորության լուսանկարներին, օգնություն գործընկերների դեմքերին ու պատկերացում կազմում էի Պարբերդում ծավալված աշխատանքի, այն մարդկանց մասին, ում հետ առիթ էին ունեցել հանդիպելու, ինչպես նաև շրջակա միջավայրի, 1919 թվականի Փոքր Ասիայի գյուղատնտեսություն մասին:

Պրոֆեսորն ու կինը ուրիշ լուսանկարներ էլ ունեին: Ամուսինը ձայն տվեց դատերը, որպեսզի օգնի գտնել այն լուսանկարների ծրարը, որոնք «արել էր ամերիկյան առևտրական մի ներկայացուցիչ»: Ծրարը գտնվում էր բակի ծածկապատշգամբում, կոշիկի տուփի մեջ: Պատերազմից առաջ, երբ դուստրը բերելու գնաց, բացատրեց միստր Մակ-Դանիելսը, Պարբերդում ամերիկյան առևտրական ներկայացուցիչ կար, բայց ինքը չէր հիշում պաշտոնը:

- Հյուպատոս էր, - անհամբեր հարցրի ես:

- Այո, - ասաց նա, - ճիշտ նկատեցիք: Կարծես Վոդավորտ էր անունը: Մենք ունենք նրա լուսանկարներն այն ամենի մասին, ինչ հայերի հետ պատահել է 1915 թվականին:

Նա այնքան սովորական ձայնով արտաբերեց այդ նախադասությունը, կարծես լուրիկի սերմերի ծլարձակման պայմանների մասին էր խոսքը:

Հյուպատոսի լուսանկարներ: Որտեղից էր ձեռքն անցել: Պրոֆեսորը բացատրեց, որ երբ ԱՄՆ-ը պատերազմի մեջ է մտել, Թուրքիան խզել է դիվանագիտական հարաբերությունները, եւ Հյուպատոսը, մեկնելուց առաջ, լուսանկարներն ու ինչ-ինչ թղթեր թաքցրել է լքված ջրհորում: Միստր Մակ-Դանիելսը նշեց նաև, որ երբ իրենք աշխատել

են Պարբերդում, իրենց թարգմանը եղել է նույն անձավորությունը, որը ծառայել է Հյուպատոսին: Հյուպատոսը թարգմանին տեղեկացրած է եղել, թե որտեղ է թաքցրել լուսանկարները եւ խնդրել է կազմակերպել երկրից ասպահով դուրս հանումը, եթե իհարկե ինքն անձամբ վերադառնալու հնարավորություն չունենա: Կարապետ էր թարգմանի անունը՝ հիշեցին ամուսինները:

Ինձ արդեն չափազանց մոտ էր թվում այն լուսանկարները տեսնելու պահը, որոնք այդքան երկար որոնել էի: Բայց այդպե՞ս էր արդյոք: Դեռեւս վստահ չէի: Ո՞վ էր Վոդավորտը: Ենթադրում էի, որ Հյուպատոսի անունը թերեւս Դեւիս է եղել եւ ոչ թե Վոդավորտ: Պրոֆեսորը ասաց, որ ինքը Հյուպատոսի հետ ծանոթ չի եղել, նրան այդպես է կոչել թարգմանը, որ ինքը դժվարությամբ է հիշում այն անձանց անունները, ում հետ չի հանդիպել: Բայց տվյալ անձնավորությունը այդ ժամանակ եղել է ամերիկյան կառավարության միակ ներկայացուցիչը Պարբերդում:

Մի քանի րոպե անց կոշիկի տուփով վերադարձավ դուստրը: Պրոֆեսորը ձեռքից վերցրեց, բացեց, սկսեց զննել պարունակությունը: Ես անհամբերությամբ հետեւում էի, թե ինչպես է նա հանում վրան մակազրություն ունեցող հին, շագանակագույն ծրարը: Հինգ մատնաչափ լայնությամբ, յոթ մատնաչափ երկարությամբ ծրարի մակազրությունը հետեւյալն էր.

«Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակներ (հայերի բռնազաղթը): Անատոլիայի գյուղերը, Այնճաբը²⁶: Այս լուսանկարներն արել է ԱՄՆ-ի առևտրական կցորդ Վոդավորտը²⁷ Մեզիբեում (Պարբերդի մոտ): Պատերազմի տարիներին պահվել են ջրհորում: Վոդավորտի թարգմանը (Կարապետը), որը եղել է նաև Մակ-Դանիելսների թարգմանը, հանձնել է իրենց (Մակ-Դանիելսներին)»:

Մրարն այնքան մաշված էր, որ թվում էր, եթե դիպչեմ, կփշրվի: Ես զգույշ հանեցի լուսանկարների բարակ փաթեթը: Զգտելով թաքցնել հուզմունքս, որպեսզի չխռովեմ ամուսիններին, մի քանի լուսանկար վերցրի: Վերելում ցնցոտիներով փախստականների լուսանկարներ էին, որոնք ցաքուցրիվ էին եղել ճանապարհին կամ առանց ծածկի նստել էին բաց երկնքի տակ: Հիվանդագին նիհարությամբ ոտքերով մի տղա կանգնած էր հյուծված, տառապած մի խումբ մարդկանց մեջտեղում: Հաջորդում էր մի այնքան խունացած լուսանկար, որ ես ստիպված եղա հնարավորին չափ մոտեցնել աչքերիս եւ քարանձավի կողքին մարդկային գանգ տեսա: Մյուսը խառնիխուռը պառկած, իրար վրա ընկած դիակներ էր ներկայացնում, հագուստների ծվեններ, որոնք մարդկային մարմնի առանձին անդամներ էին ծածկում: Հաջորդ լուսանկարներում՝ լճափին նեխող կմախքներ էին: Երելում էին նաեւ ավազից դուրս ցցված ձեռքեր կամ ոտքեր, ասես այդ դիակները թաղված էին եղել, բայց ջուրը սրբել էր ավազը, ծածկված մարմինների մի մասը լույս աշխարհ հանել: Սեւացած մաշկ: Հողմահարված մարմին: Ես երբեք այդպիսի բան չէի տեսել: Արյունը սառեց երակներիս մեջ...

Սենյակում լուսթյուն էր տիրում: Ամուսինները բազում տարիների ընթացքում վարժվել էին լուսանկարների իրողությունը: Բայց ես խորապես ցնցված էի: Պատկերացրեք, որ դուք էլ եք հյուպատոս Դեւիսի հետ ձի հեծնում, հասնում այդ լճի ափը եւ ականատես եք լինում նման տեսարանների, որոնց կրկնությունը էլի ու էլի եք տեսնում: Ապա Դեւիսին պատկերացրեք Սարբերդում, նրա հետզհետե սովորական կյանքով ապրելու փորձերը, այն դեպքում, երբ գիտե, որ բլուրի մյուս՝ հարավային կողմում նեխում են հազարավոր՝ մեծ մասամբ սպանված կանանց ու երեխաների դիակներ ու այդքանից հետո ստիպված է շփվել այնպիսի անձանց հետ,

ովքեր կարգադրել ու կազմակերպել են այդ կոտորածը: Պատկերացրեք նաեւ հյուսիսից հարավ քայլող հայերին, որոնք գիտեն, որ մահվան են դատապարտված այն պահից, երբ ստիպված են եղեք թողնել իրենց քաղաքը, անապատ ուղղվել:

Հնարավոր է այս աշխարհում պատահած նման դեպքերը նկարագրել, որտեղ ոչ մի փնտրված ու գտնված բառ ի գորու չէ բնորոշել աննախադեպ գազանությունը:

Պրոֆեսորն ու կինը ինձ վստահեցին այդ լուսանկարների հրապարակումը: Միայն թե հաջորդ օրն իսկ իմ տրամադրություն տակ եղած լուսանկարների պատասխանատվությունն սկսեց մտահոգել ինձ: Ես հիշեցի Հայր Գերգերյանի խորհուրդը: Նախքան հայկական ցեղասպանություն իրողությունը փաստող հիմնական վկայությունների շարքում տեղ հատկացնելը, պետք էր հաստատել լուսանկարների վավերականությունն ու սկզբնաղբյուրը: Ես պետք է ապացուցեի, որ հիշատակված կարապետն իրոք եղել է Դեւիսի թարգմանը եւ այն աստիճանի է վստահությունը չահել, որ հյուպատոսը նրան հայտնել է լուսանկարների գտնվելու տեղը: Բացի դրանից պիտի համոզվեի, որ հենց այդ լուսանկարներն է նկարագրել միսիոներ Հենրի Ռիցը: Առաջին հայացքից դա իհարկե այդպես էր, բայց արդյո՞ք լուսանկարները ներկայացնում էին Դեւիսի տեսած նախնիները:

Դրանից մոտ մի տարի անց ես ստիպված եղա ուսումնասիրել այն իրողություն մանրամասները, ըստ որի Բաթումում Դեւիսին փոխարինած հյուպատոսը յուրացրել էր օգնության հիմնադրամի գումարները: Ինձ հաջողվեց իմանալ նաեւ Դեւիսի հավանական՝ ուղղակի ժառանգների հասցեները, որոնց թերեւս ինչ որ բան հայտնի պիտի լիներ լուսանկարների մասին: Բաթումի ու Սարբերդի հյուպատոսարանների գործունեությունն առնչվող փաստաթղթերը,

ինչպես նաև Դեիսի անձնական գործը ինձ՝ որոնումների տրամաբանական հիմքերն էին թվում, ահա թե ինչու որոշեցի մի անգամ էլ ստուգել պետղեպարտամենտի ու Ազգային արխիվի թղթապանակները: Սարբերդի Հյուպատոսարանի արխիվային մի փաստաթուղթ ինձ առաջին կարելու տեղեկությունը հաղորդեց այն մասին, որ այդ լուսանկարներն անձամբ Դեիսն է արել: Դեիսի՝ պետղեպարտամենտ ուղարկած 1914 թվականի դեկտեմբերի 12-ի տեղեկագիրը ամբողջությամբ նվիրված էր «ղավազին (Թիկնապահին - Թարգմ.) երկրորդ թարգման» նշանակելուն: Հյուպատոսը խնդրում էր, որ սուրհանդակ ու ղավազ Կարապետ Պետրոսյանի «երկար տարիների անձնվեր ծառայությունը» գնահատանքի արժանանար այն առումով, որ նրան Հյուպատոսարանի երկրորդ դրագոման (Թարգման - Թարգմ.) նշանակեին: Դեիսը նշել էր, որ Կարապետը հաճախ է կատարում թարգմանի պարտականությունները՝ հատկապես այն ժամանակ, երբ հաստիքային դրագոմանը քացակայում է: Պաշտոնական թարգմանը, ում մինչ այդ համառորեն երաշխավորել էին այդ պաշտոնի համար, հույսերը չէր արդարացրել: Այդ պատճառով էլ Դեիսն իրականում Կարապետ Պետրոսյանին էր իր թարգմանը համարում: Դեպարտամենտը չի հաստատել նրա պաշտոնի ձևական բարձրացումը, բայց համենայն դեպս աշխատավարձի ավելացմանը հավանություն տվել է²⁸: Այլ փաստաթղթեր եւս հավաստում էին, որ Դեիսը լիովին հենվել է Պետրոսյանի վրա՝ նկատի ունենալով Թուրքական իշխանությունների հետ հարցեր լուծելու նրա կարողությունն ու Մամուրեթ-ուլ-Ազիզում տրված հանձնարարությունները կատարելու հատուկությունը: 1914 թվականին, արձակուրդ գնալիս, Դեիսը Կարապետ Պետրոսյանին վերցրել է հետը: Նա որոշել էր ցամաքային ճանապարհով Բեյրութ հասնել, բայց սկսվող պատերազմի լուրը պետղեպարտամենտին ստիպել էր

նրան իր պաշտոնին վերադառնալու կարգադրություն անել: Հայր ակնհայտորեն վայելել էր Հյուպատոսի վստահությունը:

Այնուհետև, մի այլ թղթապանակում Դեիսը հիշատակում է, թե ինչպես է Հյուպատոսարանի պաշտոնական ունեցվածքը թաքցրել հորում: Հյուպատոսարանում իր կատարած գրառումները տեղավորելու կապակցությամբ Դեիսը, 1917 թվականի մայիսի 16-ին, Սարբերդը թողնելուց առաջ պետքարտուղարին գրել է.

«Կոստանդնուպոլսից՝ ամերիկյան դեսպանատնից ստացած հրահանգի համաձայն այրեցի կարմիր ծածկագրի մյուս բանալիները, որոնք գտնվում էին գրասենյակում, ինչպես նաև աղավաղեցի Հյուպատոսական կնիքները: Ամենափոքրերը ես Ջրհոր իջեցրի, իսկ ամենամեծը, որով սովորաբար կնքում էի Հյուպատոսարանը, փորփրեցի ու հանձնեցի Կոստանդնուպոլսի Ծվեղական առաքելությունը: Այրեցի նաև, ինչպես ինձ հրահանգել էին դեսպանատնից, վերջին շրջանի արխիվներն ու քաղաքական, գաղտնի կամ անձնական բնույթի թղթակցությունները:

Մնացած արխիվն ու կահույքը թողեցի Հյուպատոսարանում, քանի որ համարյա բոլոր իրերը տեղավորվեցին իմ աշխատասենյակում, որը ես հուսալիորեն կնքեցի»²⁹:

Ջրհորի հիշատակումը հուսադրեց ինձ: Ամենայն հավանականությամբ Հյուպատոսական կնիքները միակ իրերը չէին, որ նախատեսված էին խնամքով թաքցնելու համար:

Ուրիշ թղթապանակում ես կարդացի Դեիսի՝ 1918 թվականի ապրիլին, այն հաշվետվությանը կատարած հղումը, որը նա պատրաստել էր բանավոր հրահանգի համաձայն, քննարկման ներկայացրել նույն տարվա փետրվարին: Հետո տեսա Դեիսի՝ 1917 թվականի դեկտեմբերի 21-ի նամակը, որով նա իր պատրաստելիք ծավալուն հաշվետվության համար գրելու ու պատճենահան թուղթ էր խնդ-

րում: Կից երկտողը տեղեկացնում էր. «Հյուպատոսական ծառայությունն պետ միստր Կարրը Հյուպատոս Լ.Ա. Դեւսին խնդրել է Նարբերդում ամերիկյան Հյուպատոսարանի վերջին երեք տարիների գործունեությունն մասին ընդհանուր հաշվետվություն պատրաստել»³⁰: Իմ հուզմունքը գագաթնակետին հասավ՝ հասկացա, որ մոտ եմ նպատակիս: Հնարավոր էր, որ Դեւսը նշած լիներ, թե ինչ է արել լուսանկարները: Կամ գուցե հաշվետվության հետ այլ լուսանկարներ էլ լինեին, որոնք նա խոստացել էր դեռևս 1915 թվականին:

Հաշվետվությունն այնքան բարակ թղթի վրա էր մեքենագրված, որ իրականից անհամեմատ կարճ էր թվում, ուստի քիչ մնաց վրիպեր աչքիցս: Փաստաթղթերի տուփի մեջ այն տեղում չէր, ուր պետք է լիներ, 132 էջերին նախորդում էր կից նամակ. «Որպես լրացում այն ամենին, ինչ ներկայացվում է հաշվետվությունում, - գրել է Դեւսը, - Նարբերդում ես այլ նյութեր էլ ունեմ՝ բազմաթիվ անձանց ինքնակենսագրություններից հատվածներ, որոնց հիշատակում եմ իմ զեկուցագրերում, ինչպես նաև մեծ թվով լուսանկարներ, որոնք այնտեղ եմ արել, որոնք պարզաբանում եմ իմ նկարագրած տեսարաններից շատ-շատերը: Իհարկե, այդ ամենից անհնար էր ինձ հետ ինչ որ բան բերել»: Պետզեպարտամենտի նրա անմիջական ղեկավարները կից նամակի լուսանցքում հաշվետվությանը «արժեքավոր ու հետաքրքիր» գնահատականն են տվել:

Ամբողջ հաշվետվությունը ես մի շնչով կարդացի: Ինչպես իր մյուս հաղորդագրություններից էլ էր ինձ հայտնի, Դեւսը լավ էր գրում: Բայց հաշվետվությունը նրա գլուխգործոցն էր: Օսմանյան Թուրքիայի կայսրության պատերազմական տարիների իրադարձությունները իրենց ամբողջ խելացնորությունը ուրվագծվեցին իմ առջև: Նորից կենդանություն առան Դեւսի ծանոթները՝ վալի Սարիթ

բեյը՝ այն նահանգի կուսակալը, որտեղ կատարվել էր սպանդը, որը պատասխանատու էր հազարավոր կանանց ու երեխաների անիմաստ մահվան համար եւ պարբերաբար Հյուպատոսարան էր այցելել, որ բրիջ խաղալով ժամանակ անցկացնի:

Հյուպատոսի հաշվետվությունը էական հարցի էր պատասխանում՝ առօրյա կյանքում ինչ էին անում այն մարդիկ, ովքեր իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս գազանային դաժանությունների պատասխանատու էին դառնում: Եվ վերջապես Դեւսը՝ Նյու Յորքից ժամանած սովորական ամերիկյան իրավաբանը, որը պատոնի բերմամբ ստիպված էր չփվել ու բարեկամական հարաբերություններ հաստատել նման ճիվաղների հետ: Այդ ծայրամասի բիրտ տեսարանը այնքան որոշակի էր հառնել իմ աչքերի առջև, որ թվում էր թե կարող եմ շնչել նրա օդը: Ես համարյա լսում էի ձիերի սմբակների դոփյունը, որը խզում էր մահվան լուռությունը, երբ Դեւսն ու ուղեկիցները կիրճերով ու լեռներով հասնում էին Գյոլջուկ լճի ափերը՝ այն տեղերը, որտեղ կատարվել էր սպանդը: Ակնհայտ էր, որ պրոֆեսորի ինձ տված լուսանկարները պատկերում էին Դեւսի նկարագրած տեսարանները: Զեկուցագրի ցանկացած ընթերցող չի էլ կարող կասկածել, որ դրանք վավերական են: Դեւսը գրել է քայքայվող մարմինների մասին, որոնք թուրքերը մասամբ թաղել են ավազների մեջ, բայց քամին ու ալիքները երեւան են հանել: Նա ներկայացրել է մահվան դատապարտված բռնագաղթողներին, որոնց լուսանկարել է, երբ դեռևս ողջ են եղել, որոնց մարմիններն ավելի ուշ տեսել է լճի շուրջը:

ՀԵՏԵՒԱՆՔԸ՝ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՒ
ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Դեւիսի Հաշվետվությունը ցնցող է: Իրոք, անհասկանալի է, թե նման փաստաթուղթը ինչպես էր այդքան երկար աննկատ մնացել Ազգային արխիվում: Առավել անհասկանալի է իհարկե այն, որ բուն իրադարձությունները, որոնց առնչվում է այդ տեղեկագիրը, նույնպես անուշադրություն են մատնվել: Դեւիսի Հաշվետվության մի օրինակը, որը միկրոֆիլմի է վերածված, փաստաթղթերի Հավաքածուում, որից Հաճախ մեջբերումներ են կատարում, հեշտությամբ կարող էին գտնել Հայկական ցեղասպանության մասին գրող հեղինակները: Բայց քանի որ Հաշվետվությունը Հիմնավորապես կարված է եղել բոլորովին այլ թղթապանակում, միայն Համառ պրպտումները ի Հայտ պիտի բերեին (երկրորդ օրինակը եղել է Դեւիսի անձնական գործում):

Հաշվետվությունը ներկայացնում է մեկուսացած Մամուրեթ-ուլ-Ազիզ քաղաքի կյանքը, պատերազմը, տեղի թուրք պաշտոնյաներին, բանակը, Հայերի Հալածանքը, Հյուսիսից քշված աքսորականների տառապանքներն ու տանջանքները, որոնց նախքան դեպի ստույգ մահը տանելը կուտակել են Նարբերդին մերձակա ճամբարում: Դեւիսը Հանգամանորեն նկարագրում է իր Գյուլջուկ՝ այժմյան Սազար գյուղ կատարած երկու ուղեւորությունները, որտեղ եւ արել է լուսանկարները: Ամեն անգամ նա իր հետ նոր ուղեկից է վերցրել, ընդ որում առաջինը թուրք է եղել: Հյուսիստոր երկրորդ՝ ավելի երկարատեւ ուղեւորությունը, որի ընթացքում էլ լուսանկարել է, կատարել է դոկտոր Ատկինսոնի հետ: Նա ամերիկացի միսիոներ է եղել, դրանից քիչ անց մահացել է: Սակայն այրին՝ Թեյսին գրել է ամուսնու վրա այդ ուղեւորության թողած ներգործություն մասին այն

փաստաթղթում, որը 1919-ին ներկայացրել է Փարիզի խաղաղության բանակցությունների ամերիկյան Հանձնաժողովին: Նրա նամակը նույնպես երբեք չի հրապարակվել³¹.

«Մոտավորապես հոկտեմբերի վերջին դոկտոր Ատկինսոնը ուղեւորվեց Գյուլջուկ լիճը, որը գտնվում էր մոտ տասնհինգ մղոն հեռու: Հաղիվ է նա փոքր ինչ հեռանում քաղաքից, ճանապարհին սկսում է մեռած մարմինների հանդիպել: Լեռան ստորոտում դրանց թիվը՝ բոլորն էլ հազուստներով, չափազանց մեծ է եղել: Լճի ափին, սակայն, իր հաշվումներով, հինգից տասը հազար ամբողջովին մերկ դիակներ է տեսել (որոնց մեծ մասը կանանց, երեխաների), ընդ որում գրեթե բոլոր կանաց մարմինները, պետք է հուսալ մահից հետո, կտրտված են եղել, սպիները վկայել են, որ տարբեր ձեւերով են սպանվել: Մի մասին գնդակահարել են, մյուսին՝ գլխատել, երրորդին դանակով մորթել կամ կացնով անդամահատել են: Մի այլ տեղ խորխորատ է գտել, ուր դիակները չորս-հինգ շաբթ՝ այդպես, ինչպես ընկել են, դիզվել են իրար վրա: Հավանաբար նախքան կիրճը շարտելը թուրքերը զոհերի վրայից հանել են հազուստները, շարել անդունդի եզրին: Որոշ վայրերում, մոտակայքում բնակվող քրդերը, ըստ երեւույթին զարչահոտությունից ազատվելու համար, դիակները կույտ-կույտ դիզել, այրել են: Այդ հայերն ամենայն հավանականությամբ տեղացի չեն եղել, Հյուսիսից են բռնագաղթել, դա են վկայել այստեղ-այնտեղ ընկած թերթերի պատառիկները: Նրանք, անկասկած, այն հազարավոր գաղթականներից էին, որոնք ամբողջ ամուսնը մնացին Մեզիրեի մերձակա ճամբարում: Եվ միթե՞ զարմանալի է, որ դոկտոր Ատկինսոնը տուն վերադարձավ սրտի սուր ցավով, նա այլեւս չէր ցանկանում ապրել այս դաժան աշխարհում:

Երկու ամիս անց ամուսինս մահացավ, եւ ես դատապարտվեցի ապրել առանց նրա, բայց ոչ մեռակ, որովհետեւ Տիրոջ գոյությունն ու առաքած ուժը այդ օրերին հրաշագործ

ազդեցություն ունեցան: Այն նույն մարդիկ, որոնք մեզ այդ-
քան հուզմունք էին պատճառել, որոնց ձեռքերը դեռևս
արյունոտ էին, ինձ թեւանցուկ արեցին, լաց եղան Ատկին-
սոնի վրա»:

Երրորդ ուղեւորության ընթացքում Դեւիսի հետ ամե-
նայն հավանականությամբ եղել է Հյուպատոսարանի Հայ
Թարգմանն ու թիկնապահը՝ Կարապետ Պետրոսյանը: Վեր-
ջինս իրենց ուղեւորության մասին 1923 թվականին նամա-
կով տեղեկացրել է պետդեպարտամենտի Դեւիսի անմիջա-
կան ղեկավարին: Այդ Հայը, ում կյանքը փրկել է Հյուպատո-
սի հովանավորությունը, 1923 թվականի հուլիս 25-ին՝ ԱՄՆ
ժամանելուն պես, Դեւիսին արժանին է մատուցել՝ նրա մա-
սին գրել է պետդեպարտամենտի Հյուպատոսական ծառա-
յության պետ Վիրջուր Կարրին: Կարապետ Պետրոսյանը
գնահատել է Դեւիսի՝ Հայերին փրկելու ու օգնելու անձնվեր
ջանքերը, տեղեկացրել, որ Հանդես է գալիս մոտ ութսուն
Հայրենակիցների անունից, որոնց Հյուպատոսը թաքցրել է
Պարբերղում, ջարդից ազատել:

Կարապետը՝ այն նույն Կարապետը, ով Մակ-Դանիելս-
ների ու մերձավորարեւելյան օգնության աշխատակիցների
համար Պարբերղում թարգման է եղել, նամակում, այժմ էլ
ինձ ապշեցնող խոստովանություններ է կատարել, գրել է,
որ 1915-ին, երբ Հայերի հալածանքը սկսվեց.

«Մի քանի օր անց արդեն մեզ Հայտնի դարձավ, որ տա-
րազիրներին քաղաքից մի քանի մղոն հեռու սպանել են:
Հյուպատոս Դեւիսը դժվարանում էր դրան հավատալ, այդ
պատճառով մենք միասին, ձեռքով դուրս եկանք Պարբերղից
և երբ մոտ երեք մղոն հեռացել էինք, ճանապարհի երկու
կողմերում դիակներ տեսանք: Տասնհինգ մղոն ավելի հեռու
հանդիպեցինք հազարավոր խողխողված տղամարդկանց,
կանանց ու երեխաների, որոնք մեռել ու արդեն քայքայվում
էին: Հյուպատոս Դեւիսը այդպիսով անձամբ համոզվեց, որ

կառավարությունը որոշել է իր երկրում արմատախիլ անել
հայ ցեղը, այդ պատճառով էլ սկսեց Հնարավոր ամեն ինչ
անել, որպեսզի կենդանի մնացածներին օգնի ու պաշտպա-
նի»³²:

1915 թվականի իրադարձությունների Հայերի գրավոր
վկայությունները ավելի են հիմնավորում Դեւիսի Հաշվետ-
վությունը: Հայալեզու թղթակցությունների բրիտանական
գրաքննիչ Պետրոս Տոնապետյանը հավաքել է վերապրող-
ների նամակները և «Ձայն տառապելոց» խորագրով,
առանձին գրքով 1922 թվականին լույս է ընծայել Փարի-
զում: Նա մեջբերում է կատարում Ս. Ծիրվանյանից, որը
Բաղդադից եղբորը՝ Վահանին գրում է. «Երեխաներն սպա-
նելու համար դիւային խաղ մը ստեղծուեցաւ. անոնցմէ եր-
կու առ երկու ոտքերէն բռնած իրարու զարնելով կսպան-
նէին»: Նա հիշեցնում է նաև, որ նման կոտորած տեղի է ու-
նեցել Գյոլջուկ լճի ափին՝ Պարբերղից Դիարբեքիր տանող
ճանապարհի վրա³³:

Հենրի Ռեյցի քույրը՝ Մերին, որը միսիոներական դպրո-
ցում է դասավանդել, չնայած անձամբ չի եղել Գյոլջուկի
ափին, ԱՄՆ վերադառնալուց հետո ահավոր տեսարաններ
է նկարագրել, որոնց իրենք ականատես են եղել 1915 թվա-
կանի վերջին, դեպի Հարավ՝ Բեյրութ ճանապարհորդելիս.

«Մեզ՝ միսիոներներին, տարագրության ժամանակ
թույլ չտվեցին ուղեկցել մեր բռնագաղթող մտերիմներին:
Ավելի ուշ, աշնանը, երբ մեզնից մի քանիսը ցանկացան Ամե-
րիկա վերադառնալ, կառավարությունն սկսեց անընդհատ
հետաձգել մեկնումը: Թուրքերը մեզ արգելեցին Հայերի աք-
սորից անմիջապես հետո տեղներիցս շարժվել: Եվ երբ
1915-ի նոյեմբերին վերջապես թույլ տվեցին ճամփա ընկնել,
դժվարություններ սալակառք, ձի և կառապան գտանք: Ու
հենց կտրեցինք Պարբերղի հովիտը, իսկույն համոզվեցինք,
որ փորձում են մեր աչքերից թաքցնել այն ամենը, ինչ տեղի

է ունեցել այդ ճանապարհին: Մերթ ընդ մերթ մենք տեսնում էինք հողի թարմ թմբեր, որոնք ամենայն հավանականութեամբ բերնեբերան դիակներով լցված խանդակներ էին, որոնցից հաճախ ձեռքեր ու ոտքեր էին ցցված լինում: Ճանապարհից հեռու՝ լեռներում, փոքրիկ գոգահովիտներում հաճախ հանդիպում էին անդամահատված դիակներ, չափազանց շատ գանգեր, տարրեր ոսկորներ:

Որքան հեռունում էինք Սարբերդից, այնքան զգում էինք, որ այդ ամենը թաքցնելու քիչ ճիգ է արվել, իսկ հետագայում հաճախակի էին հանդիպում ուղղակի ճանապարհին ընկած դիակներ: Գրեթե միշտ այդ մարմինները մերկ, դեմքով գետնին էին պռակած լինում: Տեղանքը ապականված էր, որոշ վայրերում մթնոլորտը գարշահոտություն էր հագեցած: Երբ մենք հաղթահարում էինք Կույսի կիրճը, որտեղ ճանապարհը անդունդի եզրով է անցնում, տեսանք ահավոր դաժանություն անհերքելի վկայություններ: Նեղ կիրճում, խոր խորատում անթիվ-անհամար դիակներ կային, որոնց դիրքը վկայում էր, որ բարձունքից են ցած նետել: Մեծ մասը անդունդում հայտնվել էր մեր անցնելուց մի քանի օր առաջ: Ծարունակելով ճանապարհը, մի հովիտ հասանք, որն, իրոք, մարտադաշտ էր հիշեցնում: Այն ամբողջովին ծածկված էր կմախքներով ու դիակներով, տեղ-տեղ էլ ածխացած նստվածքները հուշում էին, որ դիակները վերացնելու համար խարույկ են վառել»³⁴:

Ուստի, ոչ մի կասկած չի մնում, որ Սարբերդում բնակված ամերիկացիներն էլ են վկայել բացառիկ դաժան տեսարանների առկայությունը: 1915 թվականի այդ իրադարձությունների եւ ընդամենը երեք տասնամյակ անց հրեաներին Եվրոպայից արմատախիլ անելու փորձերի միջև եղած կապը դարասկզբի նախադեպը ավելի տազնապալի է դարձնում: Մեզնից նա, ով ապրում է անխռով կյանքով, որտեղ գերիշխում է ավանդապահությունը, դժվարություն

կպատկերացնի, որ, իրոք, նման գաղանություններ տեղի ունեցել են: Դա հենց՝ ցեղասպանություն հանցագործությունը կատարվելուց առաջ չկանխելու պատճառներից մեկն է, քանի որ մարդկային գիտակցությունը գրեթե ի վիճակի չէ նման իրողությունն ընկալել:

1917 թվականին, ԱՄՆ վերադառնալուց հետո Դեւիսին հարցերով սկսեցին գրոհել հայերը, ովքեր հարազատներ ունեին Մամուրեթ-ուլ-Ազիզ վիլայեթում: Պետդեպարտամենտը Դեւիսին լիազորեց մեկնել Նյու Յորք, Ուորեսետեր, Բոստոն, Պրովիդենս, տարածաշրջանի այլ քաղաքներ եւ հանդիպել բնակիչների՝ խարբերոցի հայերի հարազատների հետ: Վաշինգտոնից տուն՝ Լոնգ Այլենդ վերադառնալու ճանապարհին նա եղավ Ֆիլադելֆիայում, հետո ուղեւորվեց Նոր Անգլիայի ներքին նահանգները, կանգ առավ այն մեծ ու փոքր քաղաքներում, որտեղ զգալի քանակությամբ հայեր էին բնակվում, որպեսզի խարբերոցի գաղթականներին տեղեկություններ հաղորդի հարազատների ու մտերիմների ճակատագրի մասին: Դեւիսը 277 հայերից, ովքեր պետդեպարտամենտի միջոցով հարցում էին ուղարկել Սարբերդ կամ Մամուրեթ-ուլ-Ազիզ, հանդիպել է 189-ին, քանի որ Թուրքիայից ուղարկած պատասխանները, մեծ մասամբ առգրավում էին թուրք գրաքննիչները:

Հարյուրավոր այլ հայեր նույնպես հարազատների վերաբերյալ որեւէ տեղեկություն ստանալու հուսահատ ակնկալիքով եկել են Դեւիսին տեսնելու եւ մեծ մասամբ իրենց հուզող հարցերի պատասխանները ստացել են: Արդեն ամերիկյան քաղաքացիություն ընդունած այդ հայերից շատերը չնորհակալական նամակներ են հղել պետդեպարտամենտ, իրենց երախտիքն են հայտնել Հյուսիսատոնի հետ հանդիպելու՝ իրենց ընձեռված հնարավորություն համար³⁵:

Դեւիսի ջանքերը գնահատել են ոչ միայն հայերը: Միսիններ Հենրի Ռիցը, որը ընդհուպ 1917 թվականը ծառայել է

Պարբերդում, պետղեպարտամենտի Հյուպատոսական ծառայության պետին գրել է Դեիսի՝ Հայերին օգնելու, պատասպարելու ուղղությամբ կատարած աշխատանքների մասին:

«Միստր Դեիսը Հետեուդական էր, Համարձակ, շրջահայաց, դրա շնորհիվ էլ կարողացավ փրկել բազմաթիվ զաղթականների, որոնք հակառակ դեպքում ամենայն հավանականությամբ զոհ կգնային, չնայած տեղական իշխանությունները խիստ համառ էին Հյուպատոսի նման՝ «Թուրքիայի ներքին գործերին» միջամտելու իրավաբանական իրավունքները ժխտելու ասպարեզում»³⁶:

Ջեյմս Լեի Բարտոնը՝ Արտասահմանյան առաքելությունների ամերիկյան խորհրդի լիազոր քարտուղարը, որն իր միսիոներական գործունեությունն սկսել էր Պարբերդում, այդ հեռավոր տարածաշրջանում ամերիկյան շահերը պաշտպանելու համար Դեիսի հասցեին հետևյալ գովասանական խոսքերն է գրել:

«Եփրատ քոլեջի ուսուցիչներն ու ծառայողները, ինչպես նաև այստեղ հաստատված միսիոներները, շատ բարձր էին գնահատում Դեիսին, որը ամերիկյան շահերը պաշտպանում էր պատերազմի սկզբից մինչև այն պահը, երբ Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունները խզվելու պատճառով ստիպված եղավ հեռանալ: Հյուպատոս Դեիսը ցույց տվեց, որ Թուրքերի եւ քրդերի, ինչպես նաև տարածաշրջանի Հայ ազգաբնակչության համակրանքն ու վստահությունը շահելու արտասովոր հատկություն ունի: Նա բոլորի հետ լավ հարաբերություններ էր պահպանում, միաժամանակ կարողանում էր հնարավորին չափ պաշտպանել ամերիկյան շահերը:

Դեիսը հանգուզն էր ու գործունյա, ես նրա հմուտ գործունեությունը միմիայն լիովին արդարացնող խոսքերով կարող եմ բնութագրել»³⁷:

Սակայն պետղեպարտամենտը Դեիսին թույլ չէր տա Հայերի եւ ասորիների օգնության ամերիկյան կոմիտեի հիմնադրամ ստեղծելու նպատակով ելույթներ ունենալ: Պետղեպարտամենտի քաղաքականությունը ԱՄՆ-ի Հյուպատոսների մասնակցությունը օգնության հիմնադրամների ստեղծմանը սահմանափակում էր, նրանց գործը համարելով դիմումների նախապատրաստումը, որոնք հավանության արժանանալուց հետո ընթացք ստանալու համար փոխանցվում էին կոմիտեին, կարգ, որը գործում էր կոմիտեի ստեղծումից՝ 1915 թվականի սեպտեմբերից ի վեր³⁸:

Դեիսն այլևս երբեք չվերադարձավ Օսմանյան կայսրության իր պաշտոնական պարտականություններին: Ռուսերենի իմացությունը պատճառ դարձավ, որ 1918 թվականի մայիսի 3-ին աշխատանքի նշանակվի Արխանգելսկում, որպեսզի «Սպիտակ Ռուսաստանում» ներկայացնի ԱՄՆ-ի շահերը: Նրա որդին ծնվեց Արխանգելսկի ճանապարհին՝ Անգլիայում: Աշխատանքի միօրինակությունը ստիպեց նրան դժգոհությունը հայտնել պետղեպարտամենտին: Իհարկե, «Սպանդի նահանգից» հետո նավահանգստային քաղաքը կարող էր տաղտկալի թվալ: Երբ բուլղարիկների առաջխաղացումը Արխանգելսկից հեռանալը անխուսափելի դարձրեց, պետղեպարտամենտը նրան տեղափոխեց Ֆինլանդիա՝ Հելսինկի:

Դեիսի արտասահմանյան ծառայության տարիների փաստաթղթերը վկայում են, որ հետագա պաշտոնները ինքնազոհողություն դրսևորելու հնարավորություն չստեղծեցին, ինչպես դա տեղի ունեցավ Առաջին աշխարհամարտի տարիներին: Նրա խիզախությունն ու սերը վտանգների նկատմամբ վատ էին համատեղվում հաշվետվություններ պատրաստելու համար անընդհատ նստակյաց կյանք վարելու հետ, որով զբաղված էր ԱՄՆ-ի Հյուպատոսների մեծ մասը: Եթե իրադարձությունները թղթին հանձնելու արժա-

նի ոչինչ չեն ունենում, որ տեղական նորությունների մասին զեկուցագրերը հետաքրքիր դարձնեն, Հյուպատոսական աշխատանքը սահմանափակվում է սոսկ առեւտրի ու մահերի վիճակագրությամբ: Դեւիսի հետագա գործունեությունն իր ամենահիշարժան դիպվածը թվում է, թե նրա անպատասխան սերն է եղել հաստիքային մեքենագրուհու նկատմամբ, որը հարուցել է նրանց նախանձը, ում նկատմամբ Հյուպատոսը նման զգացմունք չի տածել³⁹:

Նելսինկիից հետո Դեւիսը ծառայել է Օպորտոյում, Զագրերում, Պատրասում, Լիսարոնում եւ Գլազգոյում: Նրա կոչումները մինչեւ 1941 թվականը, վաթսուհինգ տարեկանում թոշակի անցնելը, դանդաղ բարձրացել են: Երբ սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը նա առաջարկեց հետաձգել իրեն թոշակի ուղարկելը, որպեսզի նման ծանր պահին իր երկրին ծառայելու հնարավորություն ունենա, բայց պետդեպարտամենտը այդ ցանկությունը չարձագանքեց⁴⁰:

Դեւիսը մահացել է 1960 թվականի սեպտեմբերի 27-ին, Մասաչուսեթս նահանգում, Պիցֆիլդում, այլեւս երբեք չենթարկվելով արտասովոր ու սարսափելի իրավիճակների վտանգներին, որոնց կիզակետում՝ «Սպանդի նահանգում»⁴¹ հայտնվեց 1914-ից մինչեւ 1917 թվականը:

ՍՅՈՒՋԱՆ Կ. ԲԼԵՐ

ԼԵՍԼԻ Ա. ԴԵԻՒՍԻ՝
ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ ԽԱՐԲԵՐԴԻ
ՆԱԽԿԻՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐԿԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԶԲԻՑ Ի ՎԵՐ
ԽԱՐԲԵՐԴՈՒՄ ԱՄԵՐԻԿՅԱՆ
ՀՅՈՒՊԱՏՈՍԱՐԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետվությունը պատրաստված է Հյուպատոսական ծառայությունից պետ Վիլբուր Զ. Կարրի¹ պահանջով²



Խարբերդի լեռները
Լուսանկարը՝ Լ. Մակ-Դանիելսի

կու հարյուր մղոն հարավ՝ այսինքն դարձյալ անհրաժեշտ է սայլակառքով մի շարաթ ճամփորդել: Երկաթուղազիծը կառուցվել է ռազմական նպատակներով, այս տարվա մայիսին, երբ ես վերադառնում էի Սարբերդից, թուրքական իշխանությունները թույլ չտվեցին այդ ճանապարհով անցնել՝ ամենայն հավանականությամբ չէին ուզում, որ տեսնեմ շրջակայքում ծավալվող ռազմական գործողությունները, շինարարական աշխատանքները:

Վերջին երեք տարիներին թղթակցություն ատաքումը Սարբերդից Կոստանդնուպոլիս եւ ետ՝ յուրաքանչյուր ուղղությամբ մոտավորապես երեք շարաթ էր տեսում, այսինքն երկու անգամ ավելի, քան պատերազմից առաջ էր անհրաժեշտ, որպեսզի նամակը թուրքիայից Նյու Յորք հասներ: Կոստանդնուպոլսի հեռագրերը մենք ստանում էինք երկու օրից մինչեւ երկու շարաթվա ընթացքում, այլ կերպ ասած՝ առնվազն հինգ-վեց օր ճամփա էին կտրում: Նույն շարաթում խիստ հազվադեպ էր հնարավոր հեռագրի պատասխան ստանալ, եթե անգամ երկու կողմից էլ «կայծակ» սակագնով՝ սովորականից երեք անգամ թանկ վճարվեր:

Սարբերդ հասցնող ցանկացած ուղին ընտրելիս անհրաժեշտ է ճանապարհի համար ուտելիքի որոշակի պաշար ունենալ՝ թուրքիայի խորքերում հյուրանոցներ չկան եւ չափազանց քիչ են այն տեղերը, ուր կարելի է սնունդ հայթայթել: Պատերազմը սկսվելուց հետո նույնիսկ հացն է վերացել: Ավելին, քանի որ ուղին անցնում է անապատով, խմելու ջուր բնավ չէր հանդիպում: Սա վերաբերում է հատկապես Հալեպի՝ ճանապարհին, որով տարագրվեց Սարբերդի հայություն մեծ մասը: Ուղեւորն ուղղակի պարտավոր է հետը կժերով ջուր ունենալ, դատարկվելու դեպքում լցնել ճամփեզրի աղբյուրներից, երբեմն նույնիսկ ցեխոտ առուներից, ուստի անխուսափելի է օգտագործելուց առաջ եռացնելը: Թուրքիայում ճանապարհորդելիս գիշերել կարելի է միմի-

այն տեղական խաներում⁵, որոնք իրականում ավելի շատ գում են հիշեցնում, կառուցված են մի կողմը բաց քառակուսի բակի շուրջն ու չափազանց կեղտոտ են: Նման հաստատություններում սովորաբար մեկ կամ երկու սենյակ կա, ուր գիշերողը հնարավորություն ունի հողե հատակին փռել հետը բերած անկողինը կամ ծալովի մահճակալ բացել, բայց քանի որ այդ սենյակներ գարշահոտ էին, լեցուն վխտացող միջատներով⁶, ես նախընտրում էի անկողինս փռել տանիքին ու նույնիսկ ցուրտ եղանակին քնել բաց երկնքի տակ:

Սարբերդի հյուպատոսական ենթատարածքը չափազանց ընդարձակ էր, որոշակի սահմաններ չունեի՝ ներառում էր գրեթե ամբողջ թուրքահայաստանը մոտավորապես հավասար էր Նոր Անգլիայի բոլոր նահանգներին:

Սարբերդում օտարերկրյա հյուպատոսական ոչ մի պաշտոնական ծառայող չկար, միակը Դիարբեքիրի բրիտանական փոխհյուպատոսն էր, որը պատերազմն սկսվելուն պես թողեց-հեռացավ, էրզրումում միայն գերմանական հյուպատոսը⁷ մնաց: Այսինքն՝ ես ոչ մի գործընկեր չունեի, ում հետ դժվար պահերին խորհրդակցեի: Ամենամոտ ամերիկյան հյուպատոսությունները գտնվում էին Սիրիայի Հալեպ քաղաքում, Սե ծովի ափին՝ Տրապիզոնում, ընդ որում երկուսն էլ տասը օրով հեռու էին ինձնից:

Սարբերդը՝ մոտ երեսուն հազար բնակչություն ունեցող քաղաքը, գտնվում է չորս հազար ոտնաչափ բարձրությամբ ոչ այնքան մեծ լեռան գագաթին եւ իշխում է հազար ոտնաչափ ներքեւ տարածվող անծայրածիր, բարեբեր դաշտավայրի վրա: Այն Մամուրեթ-ուլ-Ազիզ⁸ նահանգի կամ վիլայեթի ամենամեծ քաղաքն է, չնայած տեղական իշխանությունների նստավայրը մի այլ՝ դաշտերով երեք մղոն հեռու Մեզիրե կամ Մամուրեթ-ուլ-Ազիզ քաղաքում է: Վերջինս Սարբերդի կեսի չափ հազիվ կլինեի, բայց պատերազմից առաջ սկսեց արագ թափով դարգանալ ու բացի վալիի՝

վիլայեթի ընդհանուր կառավարչի պաշտոնավայրը լինելուց, վերջերս նաև թուրքական 11-րդ զորքանակի ռազմակայանը դարձավ, առեւտրի առումով անգամ երկու քաղաքներից կարելուրը համարվեց: Այնպես որ ամերիկյան հյուպատոսարանը նույնպես, թեև պաշտոնապես Պարբերդում էր, ըստ էության հաստատվել էր Մամուրեթ-ուլ-Ազիզում: Պարբերդ քաղաքը եւ շրջակա բնակավայրերը կազմում էին վիլայեթի մի գավառը, որը գազա է կոչվում, կառավարվում գայմազամի կողմից: Նա ենթարկվում է միայն վալիին: Վիլայեթի մյուս խոշոր տարածաշրջանները Մալաթիայի ու Դերսիմի սանջակներն են, որոնք մութասարիֆներ են ղեկավարում: Դերսիմը լեռնային վայրի տարածք է, գրեթե բացառապես քրդերով է բնակեցված⁹: Պատերազմի սկզբում նահանգի ազգաբնակչությունը հասնում էր հինգ հարյուր հազարի, որի մոտ հարյուր հիսուն հազարը հայ էր, մնացածը՝ թուրք ու քուրդ: Պարբերդ քաղաքում հիմնականում մահմեդականներ էին ապրում, Մամուրեթ-ուլ-Ազիզում ու շրջակա բնակավայրերում, առնվազն կիսով չափ հայեր¹⁰: Պարբերդի դաշտավայրում ավելի քան հարյուր գյուղ կար, որոնցից յուրաքանչյուրը հիսունից մինչև հինգ հարյուր տուն ուներ: Գյուղական բնակչության մեծամասնությունը նույնպես հայեր էին, որոնք հիմնականում հողագործությամբ էին զբաղվում: Այժմ համարյա բոլոր գյուղերը ավերակ, բնակիչները խողխողված են¹¹:

Գյուղատնտեսությունը Թուրքիայի այդ տարածաշրջանի միակ կարելուր բնագավառն է՝ բնակչության մեծ մասը ուտում է այն, ինչ աճեցնում է, փոխադրամիջոց չլինելու պատճառով արտահանման համար համարյա ոչինչ չի մշակվում: Գրեթե ամենուր՝ հատկապես Պարբերդի շրջակա գյուղերում, հողը չափազանց բերրի է: Ճիշտ է, վարուցանքի ձևերը խիստ նախնական էին եւ դարեր ի վեր ըստ

էության չէին փոխվել, ցորենը առատ բերք էր տալիս: Բացի մետաքսագործական մի քանի ոչ մեծ արհեստանոցներից, նահանգում ուրիշ ձեռնարկություն, էական արդյունաբերություն չկար: Գործարարությունն ու վաճառականությունը հետամնաց էին ու սահմանափակ, այնպես որ առեւտրի ասպարեզում հյուպատոսը շատ քիչ անելիք ուներ¹²:

Պարբերդում էր գտնվում Արտասահմանյան առաքելությունների ամերիկյան լիազոր խորհրդի ամենահին ու կարելուրագույն հաստատություններից մեկը: Դեռևս վաթսուներորդի տարի առաջ Պարբերդը այն կենտրոնն էր դարձել, որտեղից պատվելիներ էին ուղարկվել մերձակա բնակավայրերը: 1876 թվականին ամերիկյան լիազոր խորհուրդը քաղաքում վարժարան էր հիմնել, որն սկզբում կոչվում էր Հայկական, հետո Եփրատ քոլեջ¹³ վերանվանվեց: Պարբերդում էին գտնվում նաև նահանգի միախոնեթական առաքելության մյուս հինգ՝ Սվազի, Բիթլիսի, Վանի, Մարդինի եւ Դիարբեքիի հաստատությունները, որոնցից ամենամոտը ձիով երեք օրվա, ամենահեռուն՝ երկու շաբաթվա հեռավորություն ուներ: Նժույզը նահանգի երթեւեկության միակ միջոցն էր:

Եւ Պարբերդ Հասա 1914 թվականի մայիսի 31-ին, 1914-ի Հունիսի 1-ին անցա իմ պարտականություններին: Այդ ժամանակ երկիրը խաղաղ էր, մարդիկ դեռևս հավատում էին առաջընթացին: Բոլորն սպասում էին երկաթուղու շահագործմանը, որը հնարավորություն կտար հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ: Երկաթգծի շինարարությունը, որը ֆինանսավորում էին ֆրանսիացիները, արդեն սկսվել էր Սամսունում, մեկ-երկու տարուց պիտի Պարբերդ հասներ: Դա տեղի ազգաբնակչությանը կօգներ կայսրության այլ տարածաշրջանները ցորեն արտահանել, մատչելի գներով ապրանք ներմուծել: Դրամը շրջանառության մեջ կմտներ, առեւտուրը կծաղկեր:

Իմ ժամանումից քիչ անց ես մասնակցեցի Եփրատ քոլեջի տարեվերջի քննություններին: Դասախոսներն ու աշակերտները մեծ մասամբ հայեր էին: Ներկա էին նաև վալի, այլ թուրք պաշտոնյաներ: Թվում էր, թե մահճականներն ու քրիստոնյաները իրար նկատմամբ բարյացակամ են, հայերի ու թուրքերի փոխհարաբերությունը բարեկամական է: Նման խաղաղ մթնոլորտում ո՞վ կարող էր կանխատեսել, որ մեկ տարի անց նույն տարածաշրջանում այնպիսի ահավոր իրադարձություններ տեղի կունենան, որոնք համալսարհային պատմության մեջ հազիվ թե պատահած լինեն որևէ ժողովրդի հետ: Երբ Սարբերդ հասա, իմ մտքով էլ չանցավ, որ այդպիսի ողբերգություններ պիտի պատահեն, եւ ես ականատես միակ արտասահմանյան պաշտոնյան պիտի լինեմ ու չնայած կանխելու հնարավորություն չեմ ունենալու, ոմանց գոնե փրկելու եմ մյուսների ծանր ճակատագրից: Աշխատանքի անցնելուց մի քանի շաբաթ անց, քանի որ արձակուրդ էի ստացել, ճամփա ընկա դեպի Ամերիկա, բայց հենց հասա Եգիպտոս, Ալեքսանդրիայում պետական ղեկարտամենտից հեռագիր ստացա, որն ինձ հրահանգում էր նոր հայտարարված պատերազմի պատճառով Սարբերդ վերադառնալ: Նման իրավիճակում, երբ ամեն ոք պարտավոր է պատրաստակամությամբ կատարել իր պարտականությունները, անձնական զգացումներին նախապատվություն տալու ժամանակը չէր, չնայած հուսախարությունս մեծ էր, նախ, որովհետեւ կինս դեռեւս Ամերիկայում էր եւ ցանկություն էր հայտնել ինձ հետ Սարբերդ գալ, բացի այդ հայրս էր հիվանդ: Դրանից քիչ անց նա մահացավ, ես այդպես էլ նրան վերջին անգամ տեսնելու հնարավորություն չունեցա, իսկ կնոջս հետ միացանք միայն երեք տարի անց: Հաջորդ երկու տարի ինը ամիսը ես մնացել եմ Սարբերդում, դիմագրավել ամեն տեսակ հոգս ու դժվարություն:

Սեպտեմբերի 4-ին, Սարբերդ վերադառնալուս պես, իմացա, որ հյուպատոսարանի երեք ղավազները¹⁴, գորակոչվել են, փոխարենը կառավարությունը մի զինվոր-ստիկան է հատկացրել, որը հերթապահում էր իմ դռան առջև, ապահովում անվտանգությունս: Բնականաբար փողոցում կանգնած մի ժամապահ չէր կարող երեք ղավազի փոխարինել, մանավանդ որ նրանց մի մասը խոսում էր անգլերեն, բոլորն էլ երկար տարիներ ծառայում էին հյուպատոսարանում: Նման կարգադրությունն անընդունելի էր, ինչ-ինչ քայլերի պետք էր դիմել, եւ ես հաջորդ երկու տարիներին ամեն ինչ արեցի, որպեսզի ղավազներին ազատեմ բանակից ու բռնագաղթից՝ նախ բարեխիղճ, ազնիվ ծառայություն եւ ապա այն բանի համար, որ արժանի փոխարինողներ չկային:

Ամեն դեպքում, հենց որ տեղ հասա, նախ եւ առաջ այցելեցի նոր վալիին՝ Սարիթ բեյին,¹⁵ որն իմ բացակայության ժամանակ էր նահանգապետ նշանակվել այն կուսակալի փոխարեն, որը պաշտոնավարում էր առաջին անգամ իմ Սարբերդ ժամանելու օրերին: Սարիթ բեյն ինձ փոքր ինչ ինքնահավան, կապիտուլյացիայի՝ արտասահմանյան քաղաքացիներին շնորհվող արտոնությունների վերացման կառավարական որոշումից ոգևորված թվաց¹⁶: Ձէր էլ փորձում թաքցնել հրճվանքը, իսկույն եւթ սկսեց հեզնել, հարցնել, թե ինչո՞վ եմ մտադիր զբաղվել, քանի որ ըստ իրեն հյուպատոսներն այլեւս անելիք չէին ունենալու: Պատասխանեցի, որ որքան քիչ գործ ունենամ, այնքան հեշտ կապրեմ:

Վալին չփոխադարձեց իմ այցելությունը, ի վերջո, ստիպված, ես այդ հանգամանքը նշեցի դեսպանատուն հղած իմ հերթական տեղեկագրում: Քիչ ժամանակ անց նա եկավ տեսակցության, շատ երկար մնաց, ջերմ, սիրալիր վերաբերմունք ցույց տվեց, բայց ավելի ուշ իմացա, որ Բարձր

դռնից¹⁷ էր խիստ հրահանգ ստացել, երբ մեր դեսպանը կառավարութեան ուշադրութիւնը հրավիրել էր նման անհարգալից վերաբերմունքի վրա:

Հարկ եմ համարում ավելացնել, որ Սարիթ բեյը չափազանց տգետ, անքաղաքավարի էր: Նա բոլի շարժուձեւեր ունեւր, անկրթութեան պատճառով հաճախ կոպիտ էր դառնում: Այդ խոշոր նահանգի ընդհանուր կառավարիչը ամբողջ կյանքն անցկացրել էր Դերսիմի քրդերի մեջ: Նույնիսկ ասում էին, որ մասամբ քուրդ է: Ինձ թվում է, Մամուրեթ-ու-Ազիզի վալիի պաշտոնին նշանակվելուց առաջ նա միայն մի հանրային աշխատանք էր կատարել՝ եղել էր իր հայրենի Դերսիմի մութասարիֆը: Կրթութիւնը էլ չուներ, միայն թուրքերեն էր խոսում, Պարբերգում հաստատվելուց առաջ վիլայեթի սահմաններից էլ չէր ելել: Նահանգապետը առաջին անգամ Կոստանդնուպոլիս գնաց 1917 թվականի գարնանը: Ծատ լավ հիշում եմ մանկական հրճվանքը, որով ինձ պատմում էր, թե ինչպես է 1914-1915 թվականների ձմռանը էրզրում գնալիս առաջին անգամ ինքնաշարժ նստել, ինչպես նաեւ ինքնագոհութիւնը, որով օգտվում էր իր սենյակում նոր տեղադրված հեռախոսից: Ամեն դեպքում, չնայած ուսում չէր ստացել ու բացարձակապես տգետ էր, օժտված էր զարմանալի խորաթափանց զգացողութեամբ ու զուտ արեւելյան նենգութեամբ: Նրա մասին ասում էին, որ բնավորութեամբ թույլ է, շատ հեշտ է ընկնում շրջապատի ազդեցութեան տակ, հաճախ չի կատարում խոստումը, դրժում է, երբ հանդիպում է այնպիսի մարդկանց, որոնք իրեն համոզում են իր որոշման կամ մտադրութեան ճիշտ հակառակն անել: Ահա թե ինչու հիմնականում պաշտպանում էր նրանց տեսակետը, ովքեր վերջինն էին իրեն տեսնում: Ինչպես արեւելքիների մեծ մասը, նա սովորութեամբ էր դարձրել ինչ խնդրանքով էլ իրեն դիմեին, խոստումներ էր տալիս, չնայած երբեմն խնդրի մեջ ըստ էութեան խորանալու ոչ

մի մտադրութիւն չէր ունենում: Հենց ինքս շատ անգամ ստիպված եմ եղել ջերմորեն շնորհակալութիւն հայտնել այս կամ այն խոստման համար՝ նախօրոք գրեթե վստահ լինելով, որ չի կատարելու: Բոլոր դեպքերում ինձ երբեք թույլ չեմ տվել զգացածս կասկածը որեւէ կերպ արտահայտել:

Այս ամենով հանդերձ Սարիթ բեյը զգայուն էր, երբեմն նույնիսկ բարեսիրտ, խղճամիտ էր թվում, չնայած իր կառավարութեան ծրագրած՝ մարդկութեան դեմ գործադրված մեծագույն ոճրագործութեան իրագործողներից մեկը եղավ: Բնական է, ես թուրքական նկարագիրը ընկալած լինելու հավակնութիւնը չուներ: Դժվար է համատեղել շատ-շատերի ակնհայտ բարեհոգութիւնն ու դաժանութիւնը, որ գործադրում էին հանուն իրենց կրոնի կամ իշխանութիւնների հրամաններն ի կատար ածելիս: Ես տեսել եմ, թե ինչպես են արցունքներ սահել վալիի աչքերից, երբ թուրքական Կարմիր Մահիկի¹⁸ ընկերակցութեանն ի նպաստ տրվող սիրողական ներկայացման ընթացքում այն երիտասարդի երեւակայական տառապանքներն է դիտել, որը վիրավոր զինվորի դեր էր խաղում: Միաժամանակ, ենթարկվելով ստացած հարմանին, նա հարյուր հազարավոր հոգու փողոց նետեց, որոնք ավելի ուշ բռնութիւնների ու կրած զրկանքների պատճառով մահացան: Որքան հնարավոր է, սակայն, որ ինքն անձամբ չէր ցանկանում տանջել մարդկանց, իր կամքին հակառակ հրամաններ էր կատարում: Հասկանալի է, նահանգապետը, քանի որ հավանաբար չէր ուզում զրկվել պաշտոնից, այս կամ այն կերպ ստիպված էր Կոստանդնուպոլսի¹⁹ հրահանգներին ենթարկվել, եւ ես հաճախ մտածում էի, որ այդ նույն ժամանակ, եթե մի ուրիշ թուրք պաշտոնավարեր նահանգում, դրութիւնը կարող էր անհամեմատ վատթար լինել: Ինձ հայտնի է, օրինակ, որ Սարիթ բեյը հազարավոր հայերի թույլ տվեց Ռուսաստան փախչել,

այդպիսով փրկեց նրանց կյանքը այն դեպքում, երբ նրա մեկնելուց հետո հաջորդը մեկընդմիջտ վերջ դրեց փախուստներին: Ես գիտեմ նաեւ, որ ամենադաժան միջոցները հայերի նկատմամբ գործադրվել են նրա բացակայութեան ընթացքում կամ երբ նրան պատահական պաշտոնյաներ են փոխարինել: Հնարավոր է նաեւ, որ նա կարճ ժամանակով մեկնել է, որպեսզի պատասխանատուութունից խուսափի, ուրիշը հրամանն իրագործի: Մի խոսքով, իմ տպավորութեամբ ընդհանուր կառավարիչը ավելի մարդկային էր, քան ուրիշ շատերը կարող էին լինել նրա փոխարեն: Բազմիցս թվացել է, թե նա պատրաստ է ընդառաջել իմ խնդրանքներին, փրկել առանձին անձանց, բայց երբ համոզում էի հանուն մարդկայնութեան մեղմ վարվել ամբողջ հայ ժողովրդի նկատմամբ, ինձ միշտ բացատրում էր, որ ստիպված է կատարել ստացած հրամանները, եւ դա, անկասկած, ճշմարիտ էր²⁰: Այդ ժամանակ թուրքական կառավարութեանը ոչ ոք չէր կարող արգելել կայացնել այն որոշումները, որոնք գործադրվեցին հայերի նկատմամբ:

Երկուսուկես տարվա ընթացքում, որ ես ու վալին անցկացրինք Սարբերդում, բավական մտերմացանք: Ինչ խոսք, նա հետաքրքիր զրուցակից չէր, բայց կարծես թե ցանկանում մարդամոտ թվալ եւ հաճախ ճաշի էր գալիս Հյուսիս-տոսարան: Ինքս էլ էի երբեմն փոխադարձաբար իրեն այցելում, բայց քանի որ Հյուսիս ընդունելու իմ հնարավորութունները չունեի, զգացվում էր, որ նեղվում է, նյարդայնանում, ուստի անհամեմատ քիչ էի իրեն այցելում, քան ինքն ինձ: Ավելի ուշ, երբ բրիջի ակումբ կազմակերպեցի, իրեն էլ խաղալ սովորեցրի, եւ այնքան հրապուրվեց, որ սկսեցինք ավելի հաճախ հանդիպել: Բայց նա չէր կարողանում առանց խարդախելու խաղալ, խաղընկերոջ հետ թուրքերեն էր խոսում, ուստի եւ մեծ մասամբ հաղթում էր, որը, ընականաբար, իրեն հաճույք էր պատճառում:

Վալին դիմելուց հետո իմ ղավազների կապակցութեամբ այցելեցի զինվորական իշխանութուններին: 11-րդ զորաբանակի հրամանատարը ոմն Սալիլ փաշան էր՝ համեմատաբար կիրթ, զարգացած անձնավորութուն, որը բավական ազատ խոսում էր ֆրանսերեն: Ինձ նրան ներկայացրել էին երեք ամիս առաջ, երբ նոր էի Սարբերդ հասել: Նա իմ մտահոգութեան նկատմամբ խիստ նրբանկատ գտնվեց, խոստացավ հնարավորն անել: Սակայն մի քանի շաբաթ անց, առանց իմ ղավազների համար ինչ որ բան ձեռնարկելու էր զորումի ճակատը մեկնեց: Այսինքն վստահ չեմ՝ եթե մնար, որեւէ քայլ պիտի անե՞ր: Ամեն դեպքում նա արտաքուստ գոնե բարեխղճութուն, սիրալիրութուն ցուցաբերեց՝ ոչ միայն մեկնելուց առաջ այցելեց ինձ, այլեւ առավոտ շուտ զինվոր ուղարկեց, որ տեղեկացնի ճամփա ընկնելու ժամը եւ շատ ուրախացավ, երբ ողջերթի գնացի:

Նրան փոխարինեց Հաքքի փաշան²¹, որը ճիշտ է թոշակի էր անցել, բայց նորից զորակոչել էին: Ես նախ պաշտոնապես այցելեցի նրան, մատուցեցի հարգանքներս, իսկ մի քանի օր անց նորից մոտը գնացի, որ միջնորդեմ ղավազներին բանակից ազատելու համար:

Նրանցից մեկը՝ Նեման էզաղօղլուն, նախքան Հյուսիս-տոսարանում աշխատանքի անցնելը, տասնվեց տարի թուրքական բանակի զինվոր էր եղել: Եթե այդքան երկար ժամանակ ծառայած չլինեի, թերեւս տարիքի բերումով, չզորակոչվեի, բայց քանի որ փորձ ունեի, անկախ ժամկետն անցած լինելուց, ստիպել էին որեւէ կերպ երկրին օգտակար լինել: Ի վերջո Նեմանը չավուշի կոչում ստացավ, սկսեց աշխատել տեղի ոստիկանութունում, որն ինչ խոսք բանակից լավ էր: Ավելին նրա համար անելն անհնար էր: Եվ քանի որ մնացել էր քաղաքում, կարող էր ամեն օր գոնե մի քանի ժամ Հյուսիստոսարան գալ: Ես, նկատի ունենալով նրա թուրք լինելը, որոշեցի նորից ղավազ դարձնել, չնայած առանձնա-

պես մեծ աշխատանք չէր կարող կատարել: Երբեմն լինում էին որոշ անկանխատեսելի պահեր, որ նա իրոք մեզ օգտակար էր լինում, այնպես որ մինչեւ իմ այդ տարվա մեկնումը պահեցի ինձ մոտ: Մյուս դավազը՝ Ահմեդ Թախիրօղլուն, փորձված ջրհոր փորող էր²², ես Հաքքի փաշայի հետ պայմանավորվեցի, որ նա Մամուրեթ-ուլ-Ազիզում տեղակայված զորարանակի շինարարական միավորումում ծառայի, որը նույնպես հնարավորություն տվեց քաղաքում մնալ: Նա կարող էր հյուպատոսարան գալ ամեն երեկո, ամբողջ ուրբաթ օրը, ինչպես նաև վատ եղանակներին, երբ հնարավոր չէր աշխատել, կամ երբ որեւէ պատճառով գործ չկար: Ահմեդը մոտ ութ ամիս այդպես շարունակեց, որից հետո վարակվեց շարունակական տենդով ու մինչ ապաքինվում էր, Մյուհիդդին բեյին՝ զորահավաքի գրասենյակի պետին, ում հետ արդեն մոտիկից ծանոթ էի, խնդրեցի թույլ տալ, որ վերջնականապես հյուպատոսարանում մնա: Դա այնքան էլ հեշտ չէր, իրար հետեւից դժվարություններ ի հայտ եկան, բայց թողեցին, որ քանի դեռ հյուպատոսարանում եմ, ինձ մոտ մնա: Նա, մանավանդ այն պատճառով, որ մահմեդական էր, շատ օգտակար ծառայող էր, բացի դրանից նախանձախնդրությամբ, պատրաստակամ մասնակցում էր այն ամենին, ինչ տեղի էր ունենում հյուպատոսարանում: Երբ վերադառնում էի Ամերիկա, զինվորական հրամանատարությունների ընձեռած հատուկ թույլտվության շնորհիվ, ինձ մինչեւ Կոստանդնուպոլիս ուղեկցեց: Հրամանատարությունը խոստացել էր նաև վերադառնալուց հետո նրան Ռարբերդում շինարարական միավորումում թողնել, որտեղ ծառայում էր մինչ այդ:

Իմ ամենամեծ հոգսը գլխավոր դավազն էր՝ Կարապետ Պետրոսյանը, որն արդեն տասը տարի աշխատել էր հյուպատոսարանում եւ չափազանց ընդունակ, վստահելի ծառայող էր: Նրա վիճակը մյուս երկուսից ծանր էր, քանի որ



«Հուլիսի 1-ի առավոտը բացվեց, եւ ես զարմանքով նկատեցի, որ Հայերը, որոնց այդ օրը պիտի տեղահանեին, ամենաչնչին դիմադրությունն իսկ ցույց չտվեցին»:

Լուսանկարը՝ Լեսլի Գեիսի

ամեն կերպ աշխատում էին ինձ ընդառաջել: Սարբերդից իմ վերջնական մեկնելուց քիչ առաջ այժմյան բանակային հրամանատարը հատուկ կարգադրությամբ թույլ տվեց, որ կարապետ Պետրոսյանը ակտիվ զինվորական ծառայութ-
յան փոխարեն որոշ պայմանական պարտականություններ կատարի:

Հյուպատոսարանի դրագոմանը²³, որը մոտ տասներկու տարի թարգման էր եղել, հիվանդ էր, այդ պատճառով էլ ազատվել էր զինվորական ծառայությունից: Հիվանդութ-
յունն ստիպեց, որ հրաժարվի նաեւ դրագոմանի պաշտոնից: Մի քանի շաբաթ փոխհյուպատոս Յունգը մնաց հետս, բայց նոյեմբերին նրան Դամասկոս ուղարկեցին, եւ ես ստիպված եղա այնպիսի մեկին գտնել, որը կարողանար եւ՝ քարտու-
ղար, եւ թարգման լինել: Ի վերջո իմ ընտրությունը կանգ առավ Թուրքական լիցեյի մի հայ ուսուցչի վրա: Նա հյուպա-
տոսարան՝ ծառայության էր գալիս հետճաշին, ամբողջ ուր-
բաթ օրը, եւ մենք այդ ձեւով, վեց ամիս շարունակ շատ լավ աշխատեցինք: Ղավազ կարապետը, ինչպես այդ ժամա-
նակ, այնպես էլ հետագայում, թարգմանին միշտ օգնում էր:

Կապիտուլյացիայի վերացման օրենքը գործադրության մեջ մտավ 1914 թվականի հոկտեմբերի 1-ից: Թուրքերը չա-
փազանց գոհ էին իրենց կառավարության որոշումից, մենք կարծում էինք, որ ամերիկացիները տհաճ անակնկալներ կունենան եւ նույնիսկ նախապատրաստվել էինք, բայց ոչ այդ, ոչ էլ հաջորդ օրերին Սարբերդում էական ոչինչ տեղի չունեցավ, որը նման որոշման ուղղակի հետեւանքը հա-
մարվեր:

Սարբերդի հյուպատոսության ենթատարածքում, բացի ամերիկյանից, մեծ թվով ֆրանսիական կաթոլիկական առաքելություններ կային: Կապուցինները Մամուրեթ-
ուլ-Ազիզ քաղաքում մի մեծ դպրոց ու որրանոց էին բացել, ֆրանցիսկյանները ունեին մի դպրոց Սարբերդում եւ կենտ-

րոններ՝ Մալաթիայում, Դիարբեքիրում, Մարդինում, նա-
հանգի այլ քաղաքներում: Անցյալում Սարբերդում ֆրան-
սիական փոխհյուպատոսություն է եղել, որը տարածաշր-
ջանում ներկայացրել է իր երկրի շահերը, բայց որոշ ժամա-
նակից ի վեր հաստատությունում միայն մի հայ դրագոման էր պաշտոնավարում, նա էլ պատերազմը հայտարարվելուն պես ինձ հանձնեց իր տրամադրության տակ եղած կնիք-
ներն ու զեկուցագրերը²⁴: Ֆրանսիացի հոգեւոր կույսերը Սարբերդից հեռացան Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնե-
լուց քիչ առաջ, այնպես որ մեկնելու ոչ մի դժվարություն չունեցան: Թուրքիայի պատերազմ հայտարարելուց հետո ֆրանսիացի կրոնականներն էլ վերադարձան հայրենիք, բայց մինչ այդ բազմաթիվ խոչընդոտներ հաղթահարեցին: Մի օր երկու կապուցին ինձ շտապ Սարբերդ կանչեցին, քա-
նի որ հոգեւոր քույրերը մեկնել, իսկ իրենք մնացել էին: Ես գնացի, հանդիպեցի տեղի ոստիկաններին ու ահաբեկված վանականներին: Նրանք ինձ խնդրեցին մինչեւ Մամու-
րեթ-ուլ-Ազիզ ուղեկցել իրենց, քանի որ վախենում էին մե-
նակ ճամփորդել: Մենք վերադարձանք ձիով, ու կապուցին-
ները միացան իրենց միաբանության մյուս անդամներին: Դրանից հետո էլ, մեկ-երկու շաբաթ, ես շատ բան արեցի ֆրանսիացի հոգեւորականների համար՝ իմ չհրկիզվող սն-
դուկում պահեցի նրանց դրամն ու փաստաթղթերը, պաշ-
տոնյաների մոտ բարեխոսեցի, օգնեցի, որ նախապատ-
րաստվեն մեկնելու: Մամուրեթ-ուլ-Ազիզի նրանց շենքերը բանակային իշխանությունները բռնագրավել, զինվորներն զբաղեցրել էին, ֆրանսիացի կրոնականների տրամադ-
րության տակ մինչեւ վերջնական մեկնելը, մի քանի փոքր սենյակ էին թողել²⁵: Մի անգամ մի թուրք երիտասարդ վի-
րավորել էր առաքելության գլխավորին՝ Հայր Ռաֆայելին: Այդ կապակցությամբ ես Հաքքի փաշայի մոտ գնացի: Նրա որդին ֆրանսիական վարժարան էր հաճախել, Հաքքի փա-

չան Հայր Ռաֆայելի նկատմամբ խոր հարգանք էր տածում: Նա անմիջապես կանչել տվեց սպային, իմ ներկայությունը շատ խիստ հանդիմանեց եւ հրամայեց գնալ, ներողություն խնդրել գլխավորից, որը եւ արվեց: Դրանից հետո նման միջադեպեր տեղի չունեցան: Կարճ ժամանակում բոլոր ֆրանցիսկյան հոգեւորականները մեկնեցին, կարծում եմ վաղուց իտալիայում են: Մամուրեթ-ուլ-Ազիզի նրանց շենքը այժմ թուրքական զինվորական հիվանդանոցն է զբաղեցրել:

1914 թվականի հոկտեմբերի 29-ից²⁶ Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուն պես, Հյուպատոսարանից ուղարկվող կնքամոմված թղթակցությունների²⁷ նկատմամբ սահմանափակումներ մտցվեցին: Դա իմ՝ Սարբերդի ծառայության ամբողջ ժամանակաշրջանի ամենամեծ դժվարություններից մեկն էր՝ իրավիճակ, որը հետզհետե վատթարացավ, խանգարեց գրասենյակի աշխատանքին:

Պատերազմը հայտարարվելուց հետո հատուկ հրամանով բոլորին արգելվեց զմուսված ծրարներ ուղարկելը²⁸: Հյուպատոսությունները բացառություն չէին կազմում, այնուամենայնիվ ես կարողացա Կոստանդնուպոլիս՝ մեր դեսպանատունը կնքամոմված նամակներ ուղարկելու մասնակի արտոնություններ ձեռք բերել: Սարբերդում գրաքննություն ներկայացնելուց հետո որոշ այլ թղթակցություններ էլ էր կարելի զմուսված ուղարկել: Մի քանի ամիս ամեն ինչ լավ էր ընթանում, բայց այնուհետեւ իմ՝ դեսպանատուն հղած ճեպագրերի ու ղեկուցագրերի մեծ մասը կամ կորում էր, կամ փոստն էր առգրավում: Այդպես անհետացան դեսպարտամենտի հրահանգներին տրված իմ պատասխաններից շատերը եւ նույնիսկ՝ Հյուպատոսարանի որոշ հաշիվների ու եռամսյա ծախսերի հաշվետվությունները: Մենք կրկնօրինակեցինք եւ ուղարկեցինք բազմաթիվ ճեպագրերի ոչ թե մեկ, այլ որոշ դեպքերում երկու օրինակ, բայց բոլորն էլ կորան: Ի վերջո, 1916-ի փետրվարին, դեսպանատուն՝

զմուսված թղթակցություններ ուղարկելու արտոնությունը վերացրին՝ ամեն ինչ, Կոստանդնուպոլսում գրաքննվելու համար, բաց պետք է ուղարկվեր: Իհարկե, բազմաթիվ չզմուսված թղթակցություններ նույնպես հասցեատերերին չէին հասնում, շատ ուրիշներ էլ, որոնք ամենայն հավանականությամբ Կոստանդնուպոլսի գրաքննությունը առգրավելու էր պատրաստվում, պահում էինք՝ հուսալով, որ կնքամոմված թղթակցություններ ուղարկելու սահմանափակումները վերջ կգտնեն: Սակայն, երբ Թուրքիայի ու Միացյալ Նահանգների ղիվանագիտական հարաբերությունները խզվեցին, դեսպանատան հրահանգի համաձայն, մենք, վերջիվերջո, այդ բոլորն այրեցինք:

1914-1915 թվականների ձմռանը ես հիմնականում զբաղված էի նահանգի վաճառականության եւ արդյունաբերության վերաբերյալ տարեկան՝ առեւտրական կամ սովորական հաշվետվություններ կազմելով: Ուսումնասիրությունները կատարելու համար օգտագործել էի բոլոր տվյալները, որ հնարավոր էր հայթայթել նման պայմաններում: Կարծում էի՝ ապագայում գոնե այդ ամենը օգտակար կլինի: Սակայն, դժբախտաբար, այն դեպքերից հետո, որ տեղի ունեցան կուսակալությունում, գրեթե հույս չի մնում, որ այդ աշխատանքը երբեւէ որեւէ օգտակարություն կունենա: Իմ ջանքերը ուղված էին նաեւ նահանգի միսիոներական ծառայությունների միջեւ կապ հաստատելուն: Այդ ժամանակ Սարբերդի տարբեր միսիոներական առաքելություններում, ընտանիքի անդամներն էլ հաշված, յոթանասուն ամերիկացի կար: Ես բոլորի անձնական տվյալները գրանցել, ուղարկել էի Վաշինգտոն: Ու ամեն ինչ անում էր, որ նրանց հասցենեմ դեսպարտամենտից ու դեսպանատնից ստացվող այն հաղորդագրությունները, որոնք կարող էին հետաքրքրություն ներկայացնել ամերիկյան քաղաքացիների համար: Դրանից բացի, որքան որ թույլատրում էր

փոստային կապը, տեղեկություններ էի հայթայթում իրենց հաստատված վայրերի ընդհանուր վիճակի մասին:

Այդ տարի ժանտատենդը հատկապես բանակում²⁹ մեծ ավերներ գործեց: Մի քանի օրում յոթանասունհինգ-ութսուն զինվոր մահացավ: Նրանց դիակները սայլերով տեղափոխեցին հյուպատոսարանից ոչ հեռու գտնվող շրջափակված մի տեղ, հետո տարան թաղեցին: Երկար ժամանակ ես դեպարտամենտ Պարբերդում մոլեզնող ժանտատենդի, մյուս վարակիչ հիվանդությունների մասին առողջապահական կանոնավոր հաշվետվություններ էի ուղարկում, հնարավոր բոլոր տվյալները հաղորդում էի, բայց, իհարկե, պաշտոնական ոչ մի վիճակագրություն հնարավոր չէր ձեռք բերել: Հենց արգելեցին զմուսված թղթակցությունների առաքումը, ստիպված եղա դադարեցնել առողջապահական զեկուցագրեր ուղարկելը:

Այդ աշնան ու այս գարնան ընթացքում, չնայած Կապիտուլյացիայի վերացմանը, իմ հարաբերությունները տեղական իշխանությունների հետ լավ էին, ես ամեն առիթ օգտագործում էի իրենց բարեկամությունը շահելու համար՝ հյուր էի հրավիրում, հաճախ, որքան որ պատշաճ էի գտնում, փոխադարձ այցելություններ էի տալիս: Դեկտեմբերին Մամուրեթ-ուլ-Ազիզի ամերիկյան հիվանդանոցը մոտ հարյուր մահճակալ տրամադրեց թուրքական կառավարությանը, ընդ որում ծախսերը պիտի հոգար մեր Կարմիր Նաչի ընկերությունը: Այդ մասին վալիին տեղեկացնելու հաճույքն ունեցա, եւ քիչ անց, թուրքական Կարմիր Մահիկի (որը համազոր է մեր Կարմիր Նաչին) ընկերակցությանն ի նպաստ տրված ներկայացման ժամանակ նրա դրվատանքին արժանացա:

Մի քանի շաբաթ անցավ, ու մի օր մենք փոքր ինչ անակնկալի եկանք, երբ իմացանք, որ թուրքական իշխանությունների հրամանով Պարբերդի ամերիկյան վարժա-

րանները փակվել են: Փորձեցի պատճառն իմանալ, ինձ բացատրեցին, որ դա արվել է ժանտատենդի տարածումը կանխարգելու համար: Բայց քանի որ բոլոր դեպքերում Պարբերդ քաղաքում համաճարակի համեմատաբար քիչ դեպք էր արձանագրված, իսկ իշխանությունները ռազմական նպատակներով պահանջում էին ամերիկյան որոշ շինություններ, պարզ դարձավ, որ դպրոցները փակելը պարզապես շենքին տիրանալու միջոց է: Ամերիկյան մի շաբաթ կառույցներ իրենք՝ միսիոներներն արդեն հանձնել էին կառավարությունը, այնպես որ համառու հետետղական պահանջներով միայն կարողացա դպրոցները վերաբացելու հրաման ստանալ: Մենք կարծում էինք խնդիր այլեւս չի ծագի, բայց մի քանի շաբաթ չանցած վարժարանները նորից փակվեցին, կառավարությունը մյուս շենքերն էլ պահանջեց: Իհարկե ես անմիջապես համապատասխան հեռագիր հղեցի դեսպանատուն եւ վալիին խնդրեցի մինչեւ պատասխան ստանալը, համբերել: Մեր հանդիպման ժամանակ, սակայն, նա ավելի քան երբեք ամբարտավան թվաց, ասաց, որ չնայած անձնապես միշտ ուրախ կլինի ինձ հետ տեսնվել, ի պաշտոնն այլեւս չի կարող ընդունել, որովհետեւ Կապիտուլյացիայի հրապարակումից հետո հյուպատոսները թուրքիայում պաշտոնական կարգավիճակ չունեն: Քանի որ տեղական իշխանությունները հրաժարվում էին Կոստանդնուպոլսից պատասխանի սպասել, ես մեր բռնագրավված շենքերի դռները կնքեցի ամերիկյան զմուռսով: Ոստիկանությունը, սակայն, նույն օրն իսկ բոլորը բռնություններով կեց, զինվորները լցվեցին շենքերը: Ինձ մեր վերադասները հետագայում էլ չտեղեկացրին՝ նման իրադրությունում իմ ձեռնարկած միջոցները ճիշտ էին, թե՞ սխալ: Վալիի՝ հյուպատոսի կարգավիճակի նկատմամբ դրսևորած արհամարհական վերաբերմունքն ինչ խոսք անհեթեթ էր, ամեն դեպքում այդ օրը դիվանագիտական լավ դաս ստացա, որը

Հետագայում, Նարբերդում ծառայելու ամբողջ ընթացքում, թուրքերի Հետ Հարարերվելիս, ինձ շատ պետք եկավ: Այդ պահից սկսած ես տեղական պաշտոնյաներից այնպիսի բան չեմ խնդրել, որը Հնարավորություն եմ ունեցել իրագործել իմ իրավասություն սահմաններում: Նշեմ նաև, որ դրանից Հետո իմ բոլոր պահանջներին ես սկսեցի անձնական բնույթ տալ, լիովին անտեսել պաշտոնական իրավունքների խնդիրը:

Այն թեթեւ սառնությունը, որը մեր բախումից ստեղծվել էր իմ ու վալիի միջեւ, երկար չտևեց: Այն շատ արագ վերացավ եւ Հաջորդ երկու տարիներին նման միջադեպ այլևս տեղի չունեցավ, ընդհակառակը, նահանգապետն ու ես, չնայած այն ամենին, ինչ պատահեց, լավ բարեկամներ մնացինք:

Ամերիկյան վարժարանների փակվելը 1915 թվականի մարտին այն ահավոր ողբերգություն նախերգը դարձավ, որը նույն տարվա Հետագա ամիսներին տեղի ունեցավ Նարբերդում եւ Թուրքիայի այլ շրջաններում: Քիչ ժամանակ անց Եփրատ քոլեջի ամենապատկառելի ու Հարգարժան դասախոսներից մեկին՝ պրոֆեսոր Թենեքեջյանին³⁰ ձերբակալեցին ու բանտ նետեցին: Ես վալիի մոտ գնացի, բայց պատճառը պարզել չկարողացա: Այն թյուրիմացություն, աննշան դեպք Համարվեց, դասախոսին կարճ ժամանակով ազատ արձակեցին, սակայն Հետո նորից կալանավորեցին, ենթարկեցին կտտանքների ու սպանեցին: Ապրիլին եւ մայիսին այլ բանտարկություններ տեղի ունեցան: Այդ օրերին դեռեւս անհնար էր իմանալ թուրքական կառավարություն մտադրությունն ու նպատակը, որը ձերբակալման հրահանգներ էր արձակում: Բացի այդ՝ օտարերկրյա Հյուպատոսի իրավասությունների մեջ չէր մտնում նման Հարցերով իշխանություններին դիմելը, մանավանդ որ բոլոր ձերբակալվածները թուրքահպատակ էին, որոնց մասին ասում

էին, որ կառավարություն դեմ նախապատրաստված դավադրություն մեջ են մեղադրվում: Սկզբնական շրջանում ես միջամտում էի միայն այն դեպքում, երբ խնդիրը ամերիկյան Հաստատություններին էր առնչվում:

Այդ ժամանակ շշուկներ տարածվեցին, որ որոշ անձանց մոտ, որոնց կասկածում էին, որ թուրքական կառավարության դեմ դավ նյութող Հայկական Հեղափոխական խմբերի են պատկանում, ռումբեր ու զենքեր են Հայտնաբերել: Նման լուրերը քննելով Հետագա իրադարձությունների լույսի ներքո եւ Համեմատելով այն ամենի Հետ, ինչ այդ նույն ժամանակ տեղի էր ունենում Թուրքիայի այլ շրջաններում, կարծում եմ, որ շատ դեպքերում մեղադրվող անձանց բալկերում գտնված ռումբերը ոստիկանությունն է նախօրոք թաղել, որպեսզի Հայերի դեմ Հանցանշաններ ունենա: Դրան Հետևեցին պարբերական խուզարկումները, որոնց նպատակը Նարբերդում, Մամուրեթ-ուլ-Ազիզում, տարածաշրջանի բոլոր քաղաքներում ու գյուղերում զենք գտնելն էր: Խուզարկումն սկսելուց առաջ ոստիկանները գյուղը կամ քաղաքը պաշարում էին, որ ոչ ոք չկարողանա փախուստի դիմել: Այնուհետև ուրիշ ոստիկաններ ներխուժում էին տներն ու բնակիչներին հրամայում զենքերը Հանձնել եւ եթե ոչինչ չէին Հանձնում, մանրակրկիտ խուզարկություն էին կատարում:

Ես բազմաթիվ տներ եմ տեսել, որոնց Հատակը զինվոր-ոստիկանները փորել, պատերը քանդել են՝ ջանալով գտնել այն զենքերը, որոնք իրենց կարծիքով թաքցված են եղել այդ տեղում: Խուզարկությունները այնպիսի բռնություններով էին ուղեկցվում, որ մարդիկ, որոնց հրամայում էին զենքերը Հանձնել, բայց ոչինչ էլ չէին ունենում, Հաճախ գնում, առնում էին, կամ ոստիկաններին խոչոր գումարներ վճարելով Հին հրացան, ատրճանակ էին գնում, որ Հետո իրենց վերադարձնեն³¹:

Մի առիթով բժիշկ Ատկինսոնը՝ ամերիկյան միսիոներներից մեկը, մեծ քանակությամբ փամփուշտ, ատրճանակներ էր գտել իր Հիվանդանոցում ծառայող Հայ պատանու իրերի մեջ, որին մի քանի օր առաջ ձերբակալել, բանտ էին տարել: Բժիշկը վախեցել էր, որ ոստիկանները Հիվանդանոց էլ կգան, կհայտնաբերեն այդ ամենը, եւ քանի որ նույն օրերին ինքը վատառողջ էր, մենակ ոչինչ չէր կարող անել, նման հոգսից ազատվելու համար իմ հետեւից մարդ էր ուղարկել: Հաջորդ առավոտ ես ձիով գնացի, աշխատելով աննկատ մնալ, թամբի երկու խուրջիները լցրի զինամթերքը: Հետո այդ տարօրինակ բեռով բեռնված անձայն հեռացա: Ինձ ուղեկցում էր միստր Էոնեստ Ռիցը՝ Եփրատ քոլեջի տնօրենը: Մենք նեղ կածանով լեռներում կորած, նախօրոք որոշված մի ամառի տեղ հասանք, փամփուշտներն այնպես թաղեցինք քարերի տակ, որ միեւնույն տեղում չափազանց շատ չլինի: Մեր գործը վերջացնելուց հետո, որն, ինչ խոսք, բավական արտասովոր էր հյուպատոսի ու քոլեջի տնօրենի համար, վատ արարք կատարած աշակերտի պես տուն դարձանք: Այժմ միջադեպը զվարճալի է թվում, բայց այն ժամանակ եթե մեզ տեսնեին կամ հայտնի դառնար թուրքական իշխանություններին, հետեւանքները խիստ ծանր կլինեին Նարբերդում հաստատված բոլոր ամերիկյան Հպատակների համար: Այնուամենայնիվ ես շարունակում եմ կարծել, որ նախընտրելի էր նման հանդգնություն զինել, քան վտանգի ենթարկվել՝ սպասել, որ իշխանությունները, եթե իհարկե խուզարկություն կատարեին, զինամթերք հայտնաբերեին ամերիկյան հաստատությունում:

Մոտավորապես այդ նույն ժամանակ Դիարբեքիից՝ քաղաք, որը Նարբերդից երեք օրվա հեռավորության վրա էր գտնվում, ամերիկյան միսիոներ բժիշկ Սմիթը, հեռաձայնել էր Նարբերդի ամերիկյան առաքելություն՝ միստր Հենրի Ռիցին, խնդրել անհապաղ Դիարբեքիի հասնել: Միստր



«Հուլիսյան այդ տոթ օրը աննվազն երեք հազար հոգի դուրս եկավ Մամուրեթ-ու-Ազիզից: Ոմանք եղան սայլերով, ջորիներով ու ավանակներով էին, ոմանք ունեցվածքը բեռցրել էին կովերին, բայց հիմնական մասը ստիպված եղավ գնալ ոտքով, իրերը շալակել, երեխաներին զրկել ու անապատի կիլիչ ավազի վրայով տաժանակիր ճամփորդություն կատարել: Սակայն ջորիներն ու ավանակները, որ կառավարությունն էր տրամադրել, քիչ ժամանակ անց հետ՝ քաղաք վերադարձան, այնպես որ պարզ դարձավ, թե ինչ է սպասում բռնազավթողներին»:

Լուսանկարը՝ Լեալի Դեւիսի կուլթյան են պատրաստվում: Ես իսկույն վայելի մտադրում եմ հանելի անկողնուց եւ զեպրի վայրում գտնվող քոլեջի ամրություն խնդրելի: Ես ոստիկաններին ուղղված չեմ կոտրի ամեն, որով հրահանվում էր ինձ իրեն, մտ ինք թողնել, ինձ ներկայությունը կատարել խուզարկություն: Ես հանձնարեցի իրենք գտնու արեւելյան պատրաստություն էր, որով համար ամենի ուղ պարզելու, որ նախ ես ինձ

է տվել երկտողը, ոստիկաններն արդեն իրենց գործը վերջացրած, մեկնած են եղել: Նրանք հետները տարել էին ոչ այնքան արժեքավոր կամ կարելի իրեր՝ հին թերթեր ու ամսագրեր, մանկական գրքույկներ, շնորհավորական բացիկներ, անձնական նամակներ, մի ծոցատետր ու փոքրիկ ատրճանակ, որը պատկանել է միսիս Սմիթին (նրա իրերը առանձին եռանդով էին քրքրել): Այդ ամենը նրանք փոխադրել էին Պարբերդի գայմագամի (քաղաքապետի թարգմ.) գրասենյակը: Ես մի միսիոնների հետ գրասենյակ գնացի, որպեսզի բացատրեմ, որ մեր քաղաքացիներն անմեղ են, իրերն անվնաս են ու խնդրեմ, որ վերադարձնի: Գայմագամը թարգման հրավիրեց, որը փորձեց որոշ նյութեր թարգմանել, բայց չկարողացավ: Գայմագամն ինձ հասկացրեց, որ միսիս Սմիթի՝ նման ատրճանակ ունենալու մեջ անպատեհություն չի տեսնում, բայց պարտավոր է որոշ ժամանակ իր մոտ պահել: Հասկանալի է, հետագայում չվերադարձրեց: Ինչ վերաբերում էր նամակներին ու թղթերին, հայտնեց, որ քննություն են ուղարկելու վալիին, ավելի ուշ տերերին կհանձնեն: Հետագայում, սակայն, վալին ինձ ասաց, որ առգրաված նյութերը Դիարբեքիի վալիի պահանջով իրեն են ուղարկվել, որովհետև քաղաքից հեռանալիս միսիս Սմիթի մոտից գտնված գաղտնագիրը կասկածներ է հարուցել: Քանի որ միսիոններները շատ էին ուղում հետ ստանալ հատկապես հասցեների տետրակն ու անձնական նամակները, ես մի քանի անգամ վալիին փոխանցեցի նրանց խնդրանքը եւ ամեն անգամ նա ինձ խոստացավ Դիարբեքի գրել, պահանջել, բայց ի վերջո ոչինչ էլ հետ չստացանք: Բարեբախտաբար առգրաված իրերից ոչ մեկը որեւէ միսիոնների չէր կարող վնասել:

Երկու կամ երեք օր հետո, ուշ երեկոյան, ինձ տեղեկացրին, որ բժիշկ Սմիթին վտարում են, նա ցանկանում է, որ կհին ու զավակը անմիջապես Դիարբեքի վերադառնան:

Նույն գիշերը ձիով, իմ դավազի՝ Ահմեդի հետ Պարբերդ գնացի, որպեսզի միսիս Սմիթին հայտնեմ լուրը:

Զինվորները շրջապատել էին ամբողջ քաղաքը: Ճանապարհի մեծ մասն անցնում էր մի մեկուսի լեռան կողքով եւ գրեթե ամեն քայլափոխի հրացանը ձեռքին զինվոր էր հայտնվում, հարցնում, թե ովքե՞ր ենք, գիշերվա կեսին ո՞ւր ենք գնում: Ոչ ոքի չէին թողնում քաղաք մտնել կամ ելնել, սակայն, երբ իմ դավազն ասաց, որ կողքինը ամերիկյան հյուպատոսն է, թույլ տվեցին: Հաջորդ օրը միսիս Սմիթն արդեն պատրաստ էր մեկնելու, ես Ահմեդին հետը Դիարբեքի ուղարկեցի եւ խիստ հանձնարարեցի մինչեւ ամուսնուն հանդիպելը ոչ մի պարագայում մենակ չթողնել: Նրանք ողջ-առողջ տեղ էին հասել, եւ բժշկին, միսիս Սմիթի հետ խկույն եւեթ վտարել էին երկրից: Ավելի ուշ Դիարբեքիից ժամանողները հայտնեցին, որ կառավարությունը սկզբում որոշած է եղել բժիշկ Սմիթին սպանել: Ես ամենուին չեմ կասկածում՝ նման մտադրություն, իրոք, եղել է, այնպես որ նա շատ բախտավոր էր, որ կարողացավ կնոջ հետ կենդանի դուրս գալ Թուրքիայից՝ մանավանդ, եթե հիշենք, թե երկու ամիս անց ինչ տեղի ունեցավ միսսոր կնապի հետ: Երբ Ահմեդը Պարբերդ վերադարձավ, հիվանդ էր, պարզվեց, որ տառապում է շարունակական տենդով, որի պատճառով մի քանի շաբաթ հիվանդանոցում պառկեց, հետո էլ երկար ամիսներ թույլ, տկար մնաց:

Բժիշկ Սմիթի մեկնելուց մի քանի շաբաթ առաջ պետական դեպարտամենտից հրահանգ ստացա, որը տեղեկացնում էր, որ որոշվել է հյուպատոսարանը Պարբերդից Դիարբեքի փոխադրել: Ինձ հանձնարարվում էր, հենց որ հնարավոր լինի, տեղափոխվել: Այդ ժամանակ սակայն իրադրությունն այնքան էր վատացել, որ անհնար էր հրահանգն իրագործել: Անհնար էր կահույքը, պետական մյուս ունեցվածքը տեղափոխելու համար սալ կամ անասուններ

գտնել, ճանապարհներին վխտում էին ելուզակները, բացի դրանից, Հյուպատոսարանի աշխատակիցները չէին կարող Դիարբեքիրում բնակվել, քանի որ Մամուրեթ-ուլ-Ազիզում զինվորական ծառայություն մեջ էին, եթե ուրիշ տեղ գնային, դասալիք կհամարվեին: Էլ չեմ խոսում այն մասին, որ ամերիկացիները Պարբերդում ավելի էական շահագրգռություններ ունեին, քան Դիարբեքիրում: Պետական դեպարտամենտում շատ շուտ գլխի ընկան նման տեղափոխություն աննպատակայնությունն ու վերջնականապես Հյուպատոսությունը Պարբերդում մնաց³³: Իմ կարծիքով Հյուպատոսարանի հետագա գործունեությունը ի նպաստ Պարբերդի ամերիկյան միսիոներների եւ կուսակալություն չայերի՝ արդարացրեց նման որոշումը:

Մայիս ամսին ծայր առած բռնությունները Հունիսին սաստկացան: Բազմաթիվ Հայ տղամարդկանց, որոնց ձերբակալել, հետո ազատ էին արձակել, Հարյուրավոր ուրիշների հետ նորից բանտարկեցին: Հետագա մի քանի շաբաթվա ընթացքում բոլոր նրանց, ովքեր այս կամ այն չափով կարելու էին գրավում, գոնե ժամանակավորապես կալանավորեցին, բանտ նետեցին: Գրեթե ամենքին էլ դաժան կտտանքների էին ենթարկել:

Պրոֆեսոր Լյուլեջյանը՝ Եփրատ քոլեջի դասախոսներից մեկը, ում հետագայում մի քանի շաբաթ թաքցրի Հյուպատոսարանի ձեղնահարկում, ինձ պատմում էր, որ իրեն անձամբ գանակոծել է Պարբերդի գայմագամը: Նա նկարագրում էր նաեւ մյուսների տառապանքները, որոնց այս կամ այն ձևով խոչտանգել էին: Ոմանց բրածեծ էին արել, ոմանց կոնակները մերկացրել էին ու խարազանել, ոմանց եղունգները քաշել, ոմանց էլ (այդ թվում պրոֆեսոր Թենեքեջյանի) մազերը, բեղերն ու մորուքն էին պոկել, ժամերով ձեռքերից կախել, սոված թողել: Մի խոսքով, անլուր չարչարանքների էին ենթարկել: Նույնիսկ նրանք, ում ազատ արձակեցին,

կարճ ժամանակով միայն կարողացան խույս տալ իրենց դառը ճակատագրից:

1915 թվականի Հունիսի 23-ի գիշերը տեղական բանտում գտնվող Հարյուրավոր ամենաերեսելի Հայերին եզան սայլերով քաղաքից հանեցին, տարան անհայտ ուղղությամբ: Նրանց թվում էին հայկական գրիգորյանական եկեղեցու եպիսկոպոսը, Եփրատ քոլեջի դասախոսներից, դասուսուցույցներից շատերը, Պարբերդի եւ Մամուրեթ-ուլ-Ազիզի մեծ թվով վաճառականներ, տարբեր մասնագետներ³⁴: Իմ ղավազը, որը միսիս Սմիթին Դիարբեքիր ուղեկցեց, վերադարձի ճանապարհին տեսել էր սայլերից մի քանիսը, բայց նրան թույլ չէին տվել բավականաչափ մոտենալ, իմանալ, թե ի՞նչ են տեղափոխում: Այդ Հայերից ոչ մեկին չէր հաջողվել փախչել, երկար ժամանակ բոլորի ճակատագիրն էլ անհայտ էր: Նրանց մասին ես գաղտնագրով իսկույն տեղյակ պահեցի դեսպանատանը՝ ձերբակալումներն այնպիսի չափերի էին հասել, որ անտարբեր մնալ անհնար էր, մանավանդ որ ամերիկյան Հաստատություններն էլ էին լրջորեն տուժում: Քանի որ հաղորդագրություն պատասխանը չստացա, կարծում եմ, տեղ չի հասել³⁵: Ավելի ուշ Հայտնի դարձավ, որ գրեթե բոլոր բռնադատված տղամարդկանց կտտորել են Արխանա Մադենի մոտերքում, Պարբերդից Դիարբեքիր տանող ճանապարհի մոտավորապես միջին մասում:

Հունվարի 26-ին, շաբաթ օրը, ճաշից հետո մենք ցնցվեցինք, երբ Հայտարարվեց, որ թուրքական կառավարությունը հրամայել է տեղահանել Մամուրեթ-ուլ-Ազիզի, Պարբերդի, հարեան գյուղերի բոլոր Հայերին՝ տղամարդկանց, կանանց ու երեխաներին (տղամարդ համարյա չէր մնացել): Հայտարարությունը տարածում էր մունեստիկը՝ Մահմուդ չավուչը, որը թմբուկը խփող մի տղայի ուղեկցությամբ փողոցից փողոց էր անցնում, այդ սարսափելի լուրը ճշում:

Հրամանի Համաձայն Մամուրեթ-ուլ-Ազիզի մի թաղի Հայերը ճամփա պիտի ընկնեին Հինգշաբթի օրը՝ Հուլիսի 1-ին, մնացածը շաբաթ՝ Հուլիսի 3-ին, խարբերոցիները՝ երկուշաբթի՝ Հուլիսի 5-ին, մոտակա Հուսեյնիկի, Քեսիրիկի, Եղեգիի գյուղացիները մի քանի օր անց:

Հայերի Հավանական Հանգրվանը Ուրֆա քաղաքն էր, որը Նարբերդից սայլակառքով մի շաբաթվա հեռավորության վրա էր գտնվում: Սակայն ես երբեք չեմ Հավատացել, որ, իրոք, իշխանությունները Ուրֆան են նկատի ունեցել, եւ Հայերին, եթե անգամ տեղ Հասնեին, թույլ կտային քաղաքում մնալ: Ես դա տեղեկացրի 1915 թվականի Հունիսի 30-ի՝ դեսպանատուն Հղած իմ զեկուցագրում, որի պատճենը նույն օրվա ամսաթիվը կրող ճեպագրով պետական դեպարտամենտ ուղարկեցի: Տեղեկագրում ես կարծիք էի Հայտնել, որ եթե մինչեւ իսկ ոմանք նման ճանապարհորդությունը դիմանան, շատ Հավանական է, որ Ուրֆայից անապատ քշվեն: Այդպես էլ եղավ: Քանի որ ինքս անձամբ, սեփական փորձով զգացել էի այդ ճանապարհի տառապանքներն ու դժվարությունները³⁶, որոնք ամենեւին արհամարհելի չէին նույնիսկ այնպիսի փոքրաթիվ խմբի Համար, որն ուղեւորվում էր Հարմարավետ սայլակառքով եւ բավականաչափ սնունդ տեղափոխելու Հնարավորություն ունեւր, կարող էի ենթադրել, որ շատ քիչ մարդ Ուրֆա կՀասնի, ենթադրություն, որի չափազանց ճիշտ լինելը ժամանակը ցույց տվեց: Ճանապարհի մեծ մասը ձգվում էր անապատով, ուր դժվար էր ջուր, ուտելիք Հայթայթելը: Ծոզ ամառ էր, Միջագետքի Հարթավայրում անհնար էր կիզիչ արեւից պատսպարվելը: Այդ կանայք ու երեխաները, որոնց մեծ մասը ոտքով էր ամբողջ Միջագետքը կտրելու, մեկ ամսում Հազիվ տեղ կՀասնեւր, ու քանի որ բոլորը չէին կարող բավականաչափ ուտելիք վերցնել հետները, օրերով ջուր չէին գտնի, ապա պարզ է, ճանապարհին կմնային:

Ես շատ լավ էի պատկերացնում նման ձեւով բռնազաղթողների ճակատագիրը, զգում էի, որ մարդասիրությունից դրդված պարտավոր եմ, եթե նույնիսկ իմ ջանքերը չոչափելի արդյունք չտային, միջամտել (պաշտոնապես նման քայլի դիմելու իրավունք էլ չունեի): Իհարկե, ես իրավասու էի Հովանավորել նրանց, ովքեր ամերիկահպատակ էին՝ ինձ Հաջողվեց շատերին փրկել, բայց իրավիճակն այնքան ահավոր էր, բացառիկ, որ ձգտում էի որքան Հնարավոր է շատ մարդ աղատել, անկախ այն բանից, իմ պաշտպանությունից օգտվել կարո՞ղ էին, թե՞ ոչ:

Այդ օրը դեսպանատուն հեռագրելու Համար շատ ուշ էր, փորձեցի վալիին Հանդիպել, չգտա: Թույլ եմ տալիս ինձ ենթադրել, որ նա ընդունելու ցանկություն ամենեւին չունեւր, բայց, բոլոր դեպքերում, Հաջորդ առավոտ կարողացա ունկնդրություն խնդրել:

Հանդիպման ընթացքում նախ խոսեցի ամերիկյան Հպատակների, Հատկապես նրանց մասին, որոնց անձամբ ծանոթ էի: Այդպիսիների թվում էին Նյու Յորք սիտիում Հաստատված միստր Տիգրան Մեծիկյանի կինն ու երկու զավակները, Կոնստանտնուպոլիսում (Հարդֆորդ) գտնվող միստր Պոլ Նասլինի կինն ու ղուստրը: Երկու պարոններն էլ պետական դեպարտամենտի միջոցով բազմիցս հետաքրքրվել էին իրենց ընտանիքներով: Մի քանի ուրիշն էլ տարբեր ժամանակ Հյուպատոսարան էին եկել, մոտիկից գիտեի: Ճիշտ է նրանց ամերիկյան քաղաքացիությունը չեղտելով անհնար էր որեւէ բան անել, քանի որ թուրքական իշխանությունները սկզբունքորեն չէին ընդունում օսմանյան ծագում ունեցողների ամերիկյան Հպատակությունը (ովքեր Միացյալ Նահանգներում էին ընդունել), առավել եւս նրանց կանանցն ու երեխաներինը, եթե մինչեւ անգամ վերջինները Ամերիկայում էին ծնվել, Հայրերը այնտեղ էին մնացել, կանայք զավակների հետ կարճ ժամանակով էին թուրքիա՝

Հյուր եկել: Ամեն դեպքում կուսակալը, որպես անձնական շնորհ, խոստացավ հետաձգել այն անձանց տեղահանութ-
յունը, որոնց անունները ներկայացրել էի իրեն, նրանց հա-
մար վեսիկա՝ հատուկ փաստաթուղթ պատրաստել տվեց,
որը իրավունք էր տալիս որոշ ժամանակ իրենց տեղերում
մնալ: Ճիշտ է, դա ժամանակավոր ապահովություն էր, բայց
վալին ասաց, որ ավելին անել ի վիճակի չէ: Ես վեսիկաները
հանձնեցի տերերին, ոստիկանությունը համապատասխան
հրահանգ ստացավ, եւ երբ մյուսներին տներից բռնի հանե-
լով դեպի ստույգ մահն ուղարկեցին, վերոհիշյալ անձիք
չտեղահանվեցին:

Հենց որ վալիի մոտից դուրս եկա, Կոստանդնուպոլիս՝
ամերիկյան դեսպանատուն կայծակ հեռագիր ուղարկեցի,
տեղեկացրի տարածաշրջանի ամբողջ քրիստոնյա ազգա-
բնակչությանը տարագրելու հրամանի մասին, ավելացրի,
որ վերապրողներին օգնելու համար, որտեղ էլ որ նրանք
գտնվեն, խոշոր գումարներ անհրաժեշտ կլինեն: Հեռագիրը
տեղ էր հասել, այդ օրվանից մինչեւ հիմա անընդհատ մի-
ջոցներ են հատկացվում, ահավոր ողբերգությունից փրկ-
վածներին սատարելու համար:

Երկու օր անց իրավիճակը պարզելու համար Մամու-
րեթ-ուլ-Ազիզի եւ Խարբերդի օտարերկրյա հաստատութ-
յունների ներկայացուցիչների հետ վալիի մոտ գնացինք:
Ինձ հետ էին Մամուրեթ-ուլ-Ազիզի գերմանական առաքե-
լությունից տնօրեն, գերապատիվ Յոհաննես Էհմանը, ավստ-
րահպատակ, օսմանյան կայսերական դրամատան տեղա-
կան բաժանմունքի փոխտնօրեն, միստր Շաուլ Պիչիտոն,
երեք ամերիկացի միսիոներ:

Ինչպես արդեն նշել եմ, նահանգում արտասահմանյան
ուրիշ պաշտոնական ներկայացուցիչներ չկային, վիլայեթի
օտարերկրացիների համայնքում այդքան տղամարդ էր
մնացել:

Միստր Էհմանն արդեն քսան տարի Թուրքիայում էր
ապրում, ղեկավարում էր մի որբանոց ու դպրոց, ուր մոտ
հինգ հարյուր հայ երեխա էր հաճախում: Նա, երբ կառավա-
րությունը պահանջել էր, հայերին շատ էր համոզել, որ
հանձնեն զենքերը:

Մենք նահանգապետին նկատել տվինք, այդքան կարճ
ժամանակում անհնար է տուն-տեղ թողնել, նման դժվարին
ճամփորդություն պատրաստվել եւ պնդեցինք, որ նախա-
պատրաստվելու համար լրացուցիչ օրեր հատկացվեն:
Հույս ունեինք, որ եթե ժամանակ չաչեինք եւ, իհարկե, եթե
դեսպանատունը իմ հեռագրերը ստացած լիներ, կարողա-
նար ինչ որ բան անել, Կոստանդնուպոլսից նախկին հրա-
մանները չեղյալ համարող, կամ գոնե մեղմացնող նոր հրա-
հանգներ կհասնեին: Ավելի ուշ իմացա, որ Խարբերդի իրա-
վիճակի մասին իմ առաջին հաղորդագրություններն այն-
քան ահավոր են թվացել, որ դեսպանատանը նախ չեն ուղել
հավատալ, հաստատման են սպասել:

Վալին մեզ ասաց, որ շատ լավ պատկերացնում է բոլոր
դժվարությունները, բայց հրամանները վերջնական են, ին-
քը միայն կարող է թույլ տալ, որ այն կանայք ու երեխանե-
րը, որոնք առանց տղամարդու են մնացել, վերջին քարա-
վանով մեկնեն: Ամեն դեպքում առաջինը հուլիսի 1-ին ան-
պայման պիտի ճամփա ընկնի: Հարցրեցի, թե արդյո՞ք մի-
սիոներները, հիվանդությունից դեպքում օգնելու, փոքրիկնե-
րին հոգ տանելու համար կարող են տարագրիչների հետ
գնալ, քանի որ մի քանի ամերիկացի պատրաստ են դրան եւ
ուզում են, որ ես նրանց համար թույլտվություն ձեռք բե-
րեմ: Վալին կտրուկ ու վերջնական մերժեց ինձ, բայց հավա-
տացրեց, որ «անհրաժեշտ խնամք կտարվի» յուրաքանչյու-
րի նկատմամբ:

Այն ամենը, ինչ տեղի ունեցավ այդ շարաթվա ընթաց-
քում, ահավոր էր:

Մարդիկ պատրաստվում էին իրենց տները, հողը, ամբողջ ունեցվածքը թողնել, մեկնել: Քանի որ հետները քիչ բան կարող էին տանել, աշխատում էին ձերբազատվել կահույքից, տնային մյուս իրերից, սննդի պաշարից եւ անգամ հագուստից: Այս ամենը նրանք վաճառում էին այն գնով, որ իրենց առաջարկում էին: Փողոցները լցված էին թուրք կանանցով, նույնիսկ տղամարդկանցով, որոնք տարբեր գործարքների մեջ էին մտնում, չնչին գնով ձեռք բերում երգեհոնակներ, կարի մեքենաներ, կահույք, գորգեր, այլ արժեքավոր իրեր: Ես ճանաչում եմ մի կնոջ, որն իր թուրք հարեւանին հինգ դոլարով զիջեց երկու հարյուրից պակաս չարժեցող երգեհոնակը: Հիսուն սենթով վաճառվում էին այնպիսի կարի մեքենաներ, որոնք առնվազն քսանհինգ դոլար կարժեին: Թանկարժեք գորգերին մեկ դոլարից պակաս էին տալիս: Շատ իրեր ձրի էին տանում, որովհետեւ տերերը չէին կարողանում վաճառել, ստիպված էին լինում թողնել: Տեսարանն ինձ հիշեցնում էր գիշանդղների հետամտումը իրենց որսին: Թուրքերի համար իսկական տոն էր, նրանք զուգված-զարդարված ելնում էին փողոց, ցնծում էին, հրճվում ուրիշի դժբախտություններ:

Վաճառականներն ստիպված էին մի քանի օրում գործերն ավարտել, խանութները, ապրանքները՝ ամբողջ կյանքի աշխատանքի արդյունքը թողնել, հեռանալ, առանց իմանալու, թե ի՞նչ է սպասում իրենց: Ոմանք ունեցած դրամները հետներն էին վերցնում, բայց շատերը չէին համարձակվում, վախենում էին ճանապարհին թալանվելուց: Մի մասն էլ փորձում էր փոստով ուղարկել այնտեղ, ուր կարծում էր, հասնելու է եւ որտեղ հավատում էր, որ կկարողանա գանձել: Մյուս մասն էլ խնայողությունները դրամատանն էր թողնում: Կային նաեւ այնպիսիները, որոնք վստահեցին ամերիկյան կամ գերմանական միսիոներներին, եղան ղեպքեր, երբ ես հանձն առա պահել: Ավելորդ է ասել,



«1915-ի ամբողջ ամռան ընթացքում, մերթնդմերթ, Սարբերդ էին հասնում տարագիրների նորանոր քարավաններ, որոնք հաճախ կազմված էին լինում մի քանի հազար հոգուց: Առաջիններից մեկը, որը տեղ հասավ Հուլիսին, կանգ առավ քաղաքի ծայրամասի ընդարձակ դաշտավայրում, բարկ արեւի տակ»:

Լուսանկարը՝ Լեւի Դեւիսի

որ չնչին բացառությամբ նրանք, ովքեր գումարները Հետ-
ները տարան, ճամփա ընկնելուն պես կողոպտվեցին: Փոս-
տով ուղարկված փոխանցումները բռնագրավեց թուրքա-
կան կառավարությունը, որը ավելի ուշ տիրացավ նաև Հա-
յերի՝ դրամատներում եղած ավանդներին, անգամ այն ամե-
նին, ինչ նրանք թողել էին խանութներում կամ տներում:
Այդ ամենը առգրավեց Kuvale Metruké-ն՝ լքված կայքի Հա-
տուկ Հանձնախումբը³⁷, որն իբր ստեղծված էր տարագիր
Հայերի ունեցվածքը պահպանելու, տերերի բացակայութ-
յան ժամանակ հսկելու եւ Հավանական պարտքերը մարե-
լուց Հետո մնացածը նոր բնակավայրերն առաքելու նպա-
տակով: Սակայն բռնագաղթածների մեծամասնությունը,
որի գումարները Հանձնախմբի ձեռքն էին անցել, սպանվեց,
որին, ինչ խոսք, Հենց կառավարությունն էր ձգտում, իսկ
վերապրողները ոչինչ էլ չստացան:

Մի անգամ ես շատ ջանք թափեցի, որ լքված կայքի
Հանձնախմբից մի խեղճ կնոջ, երեխաների Համար փող ձեռք
բերեմ: Տիկնոջ ամուսինը՝ Կարապետ Ուրֆալյանը, ամե-
րիկյան Հպատակ էր, ապրել էր Պերիի³⁸ չարսանջակում,
1915 թվականի ամռանը, տեղի մյուս տղամարդկանց Հետ,
նրան էլ էին սպանել: Նրա այրին՝ Ուրֆալյան Հանրմը³⁹ եր-
կու փոքրիկ զավակներով կարողացել էր փախչել, Մամու-
րեթ-ուլ-Ազիզ Հասնել: Ես իմ տրամադրության տակ եղած
նպաստի միջոցներով մեկ տարուց ավելի օգնում էի նրանց,
իսկ երբ Սարբերդից Հեռացա, այնքան գումար թողեցի, որ
մեկ տարի եւս կարող էին ապրել: Մի օր նա ինձ ամուսնու
խնայդրամարկղի գրքույկը ցույց տվեց, որտեղ նշված էր, որ
օսմանյան կայսերական դրամատան Մամուրեթ-ուլ-Ազիզի
բաժանմունքում մոտավորապես Հարյուր Հիսուն թուրքա-
կան փաունդ ունի: Դրամատանը Հետաքրքրվեցի եւ իմա-
ցա, որ ամբողջ գումարը Հանձնվել է լքված կայքի Հանձ-
նախմբին: Դիմեցի նախագահին, այդ Հարցով երկու անգամ

նույնիսկ նահանգապետի մոտ գնացի: Ինձ Հայտնեցին, որ ստուգումներ էին կատարում, որպեսզի իմանան, թե արդյո՞ք ավանդատուն չմարված պարտք չունի, որը պիտի գանձվի այդ գումարից եւ եթե, իրոք, չունենա, Հանձնախումբը թույլ կտա, որ միսիս Ուրֆայանը Հինգից տասը փաունդ ստանա: Սակայն Պերրի շրջանը գտնվում էր ռազմական գոտում, ամբողջ ազգաբնակչությունը տեղահանված էր, լիովին համոզված եմ, որ ստուգում ոչ ոք չկատարեց: Այդպես էլ չիմացա, թե Հանձնախումբը ի՞նչ էր մտադիր անել մնացած ավանդը, ինչո՞ւ էր առաջարկել այդքան փոքր գումար վճարել: Իրականում այդպես էլ ոչինչ չտվեցին ու մոտ վեց ամիս չարչարվելուց հետո ես այդ գործից, որն, իրոք, անհույս էր, հրաժարվեցի: Լքված կայքի Հանձնախմբի գործունեությունն ավարտը, վերջնահաշվարկ կատարելու ձեւերը հիանալի են բացահայտում թուրքական աշխատակերպը: Հարյուր հազարավոր դուարների տիրանալուց հետո Հանձնախումբը ճիշտ ժամանակին կորցրեց Հաշվեգրքերը, բացատրեց, որ ամբողջ գանձված գումարը տրվել է Հայերի պարտքերը փակելուն ու քանի որ դրամարկղում ոչինչ չի մնացել, Հաշվետվություն ներկայացնելու հարկ չկա:

Երբ Հայերն իմացան, որ տեղահանվելու են, խումբ-խումբ Հյուպատոսարան լցվեցին, շատերն սկսեցին վկայակոչել իրենց ամերիկյան Հպատակ լինելը, չնայած մենք որեւէ մեկին ոչ տեսել էինք, ոչ էլ որեւէ մեկի մասին լսել: Բացի իհարկե նրանցից, ում անուն-ազգանունները մինչ այդ Հանձնել էի նահանգապետին, ներկայացողներից քչերը որպես Միացյալ Նահանգների քաղաքացի կարող էին հովանավորություն իրավունք ունենալ: Սակավաթիվ Հայեր անձնագիր կամ Հպատակություն վկայագիր ունեին, որոնք հիմնականում չափազանց հին էին, քանի որ տերերը, մեծ մասամբ, երկար տարիներ ի վեր թուրքիայում էին ապ-

րում: Ավելին, ոմանք գործարարական կամ այլ նպատակներով երկիր մտնել կարողանալու համար թաքցրել էին ամերիկյան քաղաքացի լինելը, թուրքահպատակ ներկայացել: Հետեւաբար նման Հայերից շատերը տեսականորեն կորցրել էին իրենց ամերիկյան քաղաքացու իրավունքները: Ամեն դեպքում փորձեցի բոլորին օգտակար լինել եւ ովքեր քիչ թե շատ կանոնավոր փաստաթուղթ ունեին, կուսակալություն թարգմանին ուղղված մի երկտող տվեցի, որով հավաստիացնում էի, որ վկայականները ինքս ստուգել եմ ու վավերական եմ համարում: Ես, իհարկե, թարգմանին մինչ այդ հանդիպել էի, նա ինձ խոստացել էր նահանգապետին հանձնել իմ ներկայացրած անուն-ազգանունների ցանկը, որպեսզի այդ անձիք վեսիկա ստանան, բռնագաղթից ազատվեն: Անձամբ եղա նաեւ վալիի մոտ, բոլորի համար էլ միջնորդեցի, բայց, չնայած թափած ջանքերիս, մի քանիսին հազիվ կարողացա փրկել, մնացածը գաղթեց: Երկու թե երեք՝ արտոնագիր ունեցող գյուղացի կնոջ էլ ուստիկանները, ընդհանուր խառնաշփոթի, իրարանցման մեջ ուզել էին աքսորել, բայց նրանք փախել էին, մի կերպ Հյուպատոսարան հասել ու քանի որ որեւէ այլ տեղ անհնար էր նրանց հովանավորել, ինձ մոտ պահեցի:

Գյուղերում շատ կանայք կային, որոնց ամուսինները Միացյալ Նահանգներում էին, ոմանք Հպատակություն էլ էին ընդունել, բայց ցավոք կանանցից քչերն էին Ամերիկայում եղել, մի մասը որեւէ փաստաթուղթ, տեղեկություն էլ չունեի, որոնցից պարզ դառնար՝ ամուսինը քաղաքացիություն ընդունել է, թե՞ ոչ:

Այդքան ժամանակ նման կանանցից ոչ մեկի մտքով չէր անցել Հյուպատոսարան գալ, ներկայանալ: Այդ Հայուհիներից շատերն ապրում էին հեռավոր գյուղերում, նրանց մեծամասնությունն մասին Հյուպատոսարանը ոչինչ չգիտեր, տեղեկություն չունեի, իմացավ միայն բռնագաղթի հրամա-

նից Հետո, երբ ոմանք եկան օգնութիւն խնդրելու կամ երբ Միացյալ Նահանգներից Համապատասխան տեղեկութիւններ ստացվեցին: Այդ տարածաշրջանում վերջին տարիներին ընդունված էր, որ Ամերիկա մեկնող Հայ երիտասարդներին նախքան պանդխտելը ամուսնացնեն: Հաճախ ծնողներն էին ստիպում նման ջահելներին ամուսնանալ, երկրում թողնել դեռահաս կնոջը, որպեսզի Միացյալ Նահանգներից իրենց փող ուղարկեն: Այդ դրամը, սակայն, ուղարկվում էր ընտանիքի գլխավորին ու շատ Հազվագեպ կնոջը, որովհետեւ ըստ Հայկական սովորութեան վերջինս քիչ իրավունքներ ուներ, սոսկ տան ծառան էր: Երբ տղամարդը ծնողների փոխարեն կնոջն էր գումար ուղարկում, ընտանիքում սուր վեճ էր առաջանում, ինչպես պատահեց մի անգամ, երբ Հեռագրով Հարսի Համար գումար ուղեցի:

Մեկնած տղամարդկանց ճշող մեծամասնութիւնը վաղուց էր ամուսնացել, երկրում երեխաներ թողել, ուրիշները Հարսանիքից մի քանի շաբաթ անց էին պանդխտել, երկար տարիներ Միացյալ Նահանգներում մնացել: Ես մի կնոջ եմ ճանաչում, որի ամուսինը քսանյոթ տարի Ամերիկայում էր եղել, այդ ընթացքում նրանք ոչ մի անգամ չէին տեսնվել: Ընտանիքի միակ զավակը ծնվել էր Հոր մեկնելուց Հետո, 1915-ի ամռանը սպանվել: Ամուսինը վերջերս նամակ էր գրել, խնդրել, որ Հենց Հնարավոր լինի, կնոջը Հետեւից ուղարկենք: Եթե նա այդ մասին մի քանի տարի առաջ մտածեր, ամեն ինչ շատ Հեշտ կլիներ:

Հայերի բնավորութեան այս գիծը շատ դեպքերում բացատրվում է Հույզերի սահմանափակութեամբ, ինչպես նաեւ նրանց անտարբերութեամբ, ովքեր Միացյալ Նահանգներում են եւ իրենց նեղութիւն չեն տալիս, որ ընտանիքի մասին տեղեկութիւն ստանան: Չնայած Ամերիկայում շատերին եմ Հանդիպել, ովքեր անկեղծ կարոտ եւ նուրբ զգացմունքներ ունեն:

Հնարավոր չէր անտարբեր նայել, թե ինչպես են Հայերն իրենց դրամը, զարգեղենը, արժեթղթերը, տարբեր իրեր Հյուպատոսարան բերում կամ միսիոներներին Հանձնում, խնդրում պահել: Ես ընդունում էի կյանքի ապահովագրութեան վկայագրերը, այլ փաստաթղթեր, երբեմն էլ դրամ, ընդ որում խնայողութիւններն ինձ վստահող յուրաքանչյուրից պահանջում էի Ամերիկայում գտնվող որեւէ բարեկամի անուն-ազգանունն ու Հասցեն, որպեսզի եթե երկրում մնացած ազգականներից որոշ ժամանակ լուր չունենամ, գումարը Միացյալ Նահանգներ ուղարկեմ⁴⁰: Քանի որ ես շատ էի վախենում, որ աքսորվողների մեծ մասը կենդանի չի մնա, որ վերադարձնեմ գումարը ու քանի որ այդ ժամանակ դեռեւս չէի զբաղվում մտքովս էլ չէր անցնում, որ Հյուպատոսարանը նաեւ բարեգործութիւն կկատարի, նրանց, ովքեր ցանկութիւն էին Հայտնում ինձ գումար Հանձնել, ուղարկում էի միսիոներների մոտ: Նրանք Հնարավորութիւն ունեին տեղում օգտագործել կամ փոխարժեքը Ամերիկայի Հարազատներին վճարել: Չնայած միսիոներներն ապահով անկյուն չունեին, Հավաքված դրամների մեծ մասը բերում էին, որ իմ չհրկիզվող սնդուկում պահեմ: Եղավ չըջան, որ այդ ձեւով ինձ մոտ ոսկով երկու Հարյուր Հազար դոլար գոյացավ, ու քանի որ դավաղները մեծ մասամբ բացակայում էին, ինքս ինձ մտածում էի, թե ինչ կկատարվեր, եթե իմ մեռնակ եղած ժամանակ Հյուպատոսարանի վրա Հարձակում գործեին: Ի վերջո, միսիոներներն իրենց վստահված ոսկու Հիմնական մասը Կոստանդնուպոլիս ուղարկեցին, բայց այնուամենայնիվ այդ ժամանակվանից մինչեւ իմ մեկնումը Հյուպատոսարանն այն ամենաապահով վայրն էր Համարվում, որտեղ մարդիկ կարող էին պահ տալ իրենց խնայողութիւններն ու թանկարժեք իրերը: Բացի այն ամենից, ինչ ինձ մոտ թողել էին բռնագաղթի ժամանակ, Հետո էլ տարբեր բաներ էին բերում, որ չհրկիզվող սնդուկում պահեմ:

Բոլոր նրանց, ում փրկել էի տարագրությունից, նաև նրանք, ովքեր ծանոթ էին, իմ սնդուկին էին վստահում իրենց արժեքավոր իրերը՝ ինչպես կվստահեին դրամատանը: Այն մարդիկ, ովքեր Միացյալ Նահանգներից օգնություն էին ստանում, թողնում էին ինձ մոտ, քանի որ պահելու տեղ, հաճախ տուն էլ չունեին ու գալիս, վերցնում էին քիչ-քիչ՝ այնքան, որքան պետք էր լինում: Այս ձևով, մեկից ավելի դժբախտ կանանց հաջողվեց չկորցնել այն, ինչ ունեին կամ ստացել էին, բայց իմ գործը շատ դժվարացավ, որովհետև համարյա ամեն օր խեղճերի համար ստիպված էի լինում մի քանի անգամ սնդուկ բացել, ինչ-որ բան դնել կամ հանել:

Եվ չնայած այս ամենը արվում էր հնարավորին չափ գաղտնի, թուրքական իշխանություններն ամենայն հավանականությամբ կռահում էին, որ Հյուսիսատոսարանում դրամ է պահվում: 1915 թվականի աշնանը ես վալիից գրություն ստացա, որով պահանջում էր կառավարությունը հանձնել հայերի՝ ինձ վստահված ամբողջ գումարն ու մյուս արժեքները: Ես այդ պահանջը բանի տեղ չդրեցի, իշխանություններին ոչինչ չհանձնեցի: Այն սենյակում, որտեղ չհրկիզվող սնդուկն էր գտնվում, վալիի հետ բազմաթիվ երեկոներ եմ անցկացնել ու ինքս ինձ հարցրել եմ՝ գլխի չի՞ ընկնում, թե ինչեր եմ թաքցնում: Բարեբախտաբար անցած մայիսին, նախքան Սարբերդից հեռանալս, ես գրեթե բոլորը կարողացա վերադարձնել օրինական տերերին: Մնացած մանր-մունր իրերը դանիացի միսիոներներին, իսկ ապահովագրության վկայականները միստր Էճմանին հանձնեցի: Մոտս եղած ոչ մեծ գումարները, Ամերիկա հասնելուս պես, տերերի բարեկամներին եմ բաժանել:

Ճիշտ է, տեղահանությունը դժվարությունները մենք այս կամ այն չափով գիտակցում էինք, բայց այդ ժամանակ ոչ ոք լիովին չէր պատկերացնում, թե իրականում «վերաբնակե-

ցում» ինչ է նշանակում: Իշխանությունները հայտարարել էին, որ տղամարդկանց բանտերից պիտի ազատեն, որպեսզի ընտանիքների հետ ճամփա ընկնեն: Վստահեցրել էին նաև, որ ցանկացողները կապահովվեն էջերով ու սայլերով, եւ չնայած վիլայեթում եղած անասունը գաղթողների հինգ տոկոսին հազիվ բավականացներ, բոլորին ապահովեցրել էին, որ ողջ-առողջ տեղ պիտի հասնեն⁴¹: Ծատերն այնքան միամիտ էին, որ հավատում էին դրան, կարծում էին, որ գաղթավայրերում իրենց թույլ կտան հաստատվել, նոր կյանք սկսել: Այդպիսիները մեկնում էին ժպիտով, հուսերով լի: Բայց հայերի մեծ մասը համակված էր տազնապով եւ դրա համար լուրջ պատճառներ ուներ: Տարբեր լուրեր էին պտտվում այն մարդկանց հետ պատահածի մասին, որոնց հանել էին բանտից՝ չնայած դեռևս որոշակի ոչինչ հայտնի չէր: Ամենահիմնավոր տեղեկությունները Իչնե գյուղից մեկ-երկու շաբաթ առաջ փախած կանայք հաղորդեցին: Նրանք ասացին, որ գյուղի բոլոր տղամարդկանց զինվոր-ոստիկանները լեռ են տարել, կոտորել: Երբ այդ զինվոր-ոստիկանները գյուղ են վերադարձել, կանայք տեսել են, թե ինչպես են լվանում ձեռքերի ու գենքերի արյունը եւ հենց հարցրել են, թե ինչ եղան իրենց ամուսինները, նրանց ասել են, որ սպանել են: Հետագայում այս տեղեկությունները նույնությամբ հաստատվեցին: Ավելին, ինչքան էլ իշխանությունները խոստանային մեկնող քարավանները հովանավորել, բավարար քանակությամբ պահակախմբերով տեղ հասցնել, հայտնի էր, թե որքան վտանգավոր են քրդերով եւ չեթեներով լեցուն ճանապարհները: Վերջիններին արձակել էին բանտերից, որպեսզի թալանեն ու կոտորեն: Այս առումով քրդերը պատրաստակամ էին եւ ամեն անգամ, երբ առիթը ներկայանում էր, աշխատում էին բաց չթողնել: Իսկ չեթեն կալանավոր է, որին բաց են թողնում, ձեռքը գենք տալիս: Ահա այսպիսի մարդկանց պիտի

Հանդիպելին Հայերն իրենց ճանապարհին, եւ քանի որ կառավարութիւնը դա գիտեր, անկասկած Հենց դրան էլ ձգտել էր, պարզ էր, թե աքսորը որոշակի ինչ նպատակ է Հետապնդում⁴²:

Քանի որ Թուրքիայի գործարարները, արհեստավորների, որակյալ բանվորների ճնշող մասը Հայեր էին, Հասկանալի է, նրանց բացակայութիւնից երկիրը շատ կտուժեր: Տարածաշրջանի առեւտուրը Հիմնականում Հայերի ձեռքում էր, դրամատների ավանդների իննսունհինգ տոկոսը նրանց էր պատկանում: Ըստ էութեան Հայեր էին նաեւ բոլոր վաճառականները, դրամատների տերերը, բժիշկները, ատամնաբույժները, փաստաբանները, ուսուցիչները, Հյուանները, որմնադիրները, բրուտները, թիթեղագործները, Հացթուխները, դերձակները, կոշկակարները, կենցաղում խիստ անհրաժեշտ մյուս արհեստավորները: Ճիշտ է, տարածաշրջանը Հետամնաց էր, բայց այն ոչ մեծ զարգացմանը, որին Հասել էր, Հասել էր Հայերի շնորհիվ: Մի Հարվածով երկիրը մեկ դար Հետ պիտի գնար: Խարբերում գյուղատնտեսութեամբ նույնպէս Հիմնականում Հայերն էին զբաղվում, ընդ որում այդ աշխատանքը մեծ մասամբ կատարում էին կանայք: Քանի որ բռնագաղթի Հրամանը կանանց, երեխաներին էլ էր վերաբերում, Հարյուրավոր գյուղեր Հողագործներից պիտի զրկվելին: Բառացիորեն դա նշանակում էր մորթել ոսկե ձու ածող Հավը: Ու քանի որ այլեւս Հող մշակող չէր լինելու, իշխանութիւնները պետք է որ կարողանային կանխատեսել սովը, որը վրա Հասավ մեկ տարի անց:

Տեղահանութեան ամենալարված պահին իրենք՝ Թուրքերն էլ գլխի ընկան, որ չեն կարող ապրել առանց որոշ արհեստավորների, եւ քանի որ նրանց կարիքն ունեին, մի մասին տեղերում թողեցին:

Հուլիսի 1-ի առավոտը բացվեց, եւ ես զարմանքով նկատեցի, որ Հայերը, որոնց այդ օրը պիտի տեղահանեին, ամե-

նաչնչին դիմադրութիւնն իսկ ցույց չտվեցին: Ճիշտ է, տղամարդկանց մեծ մասն արդեն աքսորված էր, մնացածները Հուսահատված ու ընկճված էին, բայց ես կարծում էի, որ ամեն դեպքում ոմանք կընդդիմանան, աքսորի Հրամանն ի կատար ածելուց առաջ արյուն կհոսի: Սակայն այդպէս էլ չլսեցի որեւէ ընդվզման կամ այնպիսի մեկի մասին, որը բռնագաղթի Հրամանին չենթարկվեր, չնայած ոմանք Հայտարարել էին, որ իրենց օջախները չեն լքի, կնախընտրեն, որ զինվոր-ոստիկանները տեղում սպանեն:

Մի խոսքով գրեթե բոլորը, ինչպէս կարողացել, պատրաստվել էին աքսորին ու առանց դիմադրութեան ճամփա ընկան: Հուլիսյան այդ տոթ օրը առնվազն երեք Հազար Հոգի դուրս եկավ Մամուրեթ-ու-Ազիզից: Ոմանք եղան սայլերով, ջորիներով ու ավանակներով էին, ոմանք՝ ունեցվածքը բեռքերէլ էին կովերին, բայց Հիմնական մասը ստիպված եղավ գնալ ոտքով, իրերը շալակել, երեխաներին զրկել ու անապատի կիզիչ ավազի վրայով տաժանակիր ճամփորդութիւն կատարել: Սակայն ջորիներն ու ավանակները, որ կառավարութիւնն էր տրամադրել, քիչ ժամանակ անց Հետ վերադարձան, այնպէս որ պարզ դարձավ, թե ինչ է սպասում բռնագաղթողներին⁴³:

Դրանից մի օր անց Մամուրեթ-ու-Ազիզ Հասան էրզրումից տարագրված Հայերի խմբեր: Նրանք մի քանի Հարյուր Հոգի էին, շատերը մեծահարուստ ու նշանավոր ընտանիքների էին պատկանում, բայց գտնվում էին ահավոր վիճակում: Էրզրումցիները Հանգրվանեցին քաղաքի ծայրամասում, լքված դպրոցական շէնքում, որտեղ եւ նրանց, տեղ Հասնելուց մոտ մեկ ժամ անց, Հանդիպեցի: Ես չէի կարծում, որ Թույլ կտան տարագիրներին մոտենալ, բայց ինձ Հաջողվեց մի քանիսի Հետ խոսքի բռնվել փողոցի մյուս կողմում գտնվող աղբյուրի մոտ, որտեղից նրանց թողել էին ջուր վերցնել: Գաղթականները պատմեցին, թե ինչ տառա-

պանքներ են կրել: Նրանք ձիերով, ջորիներով, դրամով ու անձնական իրերով էրգրումից ելել են մոտ մի ամիս առաջ: Ճանապարհին հենց իրենց աչքի առաջ քրդերը տղամարդկանց կոտորել էին, կանանց թալանել, մեծ մասի հազուատն անգամ խլել: Կանայք նկարագրում էին, որ քրդերը իրենցից շատերին լրիվ մերկ էին թողել, բայց ուղեկցող զինվոր-ուստիկանները, որոնք ձեւացրել էին, թե անզոր են հրոսակներից պաշտպանել, օգնել էին, որ ճանապարհի թուրքական գյուղերից հնոտիք հայթայթեն, այնպես որ շատերը գեղջկական զգեստով էին: Բոլոր տարագիրներն էլ իրենց կրած տառապանքներից հիվանդացել, ծայր աստիճան հյուծվել էին, ուզում էին Մամուրեթ-ուլ-Ազիզում մնալ: Քարավանում էին նաև Կոստանդնուպոլսի մեր զեսպանատան աշխատակից միստր Շմավոնյանի հարազատները⁴⁴: Ես միջնորդեցի ոստիկանապետին, խնդրեցի, որ քաղաքում թողնի: Նա սկզբում պատճառաբանեց, որ նրանք ուրիշ նահանգից են, ինքը նրանց նկատմամբ որեւէ իրավասութուն չունի, բայց վերջիվերջո համաձայնեց, այնպես որ Շմավոնյանի հարազատները մինչև հիմա էլ Մամուրեթ-ուլ-Ազիզում են: Այդ քարավանից շատերին, այնքան ժամանակ, որ Սարբերդում էի, հիմնադրամի միջոցներով օժանդակեցի, մի մասին էլ, հենց ռուսները գրավեցին էրզրումը, օգնեցի ես՝ տուն վերադառնալ:

Սկզբում բոլոր տարագիրներին դպրոցում էին պահում, նրանք ասես բանտում լինեին: Զինվոր-ուստիկանները շատ խիստ հսկում էին, որեւէ մեկի ելումուտն արգելում, այդպիսի դեպքերում գաղթականներին շատ խիստ պատժում էին: Ավելի ուշ թույլ տվեցին տեղավորվել թափուր տներում, ապրել, ուր ուզում են:

Հուլիսի 3-ին, շաբաթ օրը, Մամուրեթ-ուլ-Ազիզից դուրս եկավ երկրորդ քարավանը: Այն առաջինից, որը մեկնել էր հինգչաբթի, Դիարբեքիրով Ուրֆա գնացել, անհամե-



«Ամռան վերջին հասած քարավանները տարան հայկական մեծ գերեզմանոցը, որը գրեթե Մամուրեթ-ուլ-Ազիզ քաղաքի տարածքում էր գտնվում: Աքսորականները խիստ հսկողության տակ էին, բայց ես առանց դժվարության այցելության գնացի: Այդ դժբախտների համար շատ հարմար տեղ էին ընտրել, ինքս ինձ հարցնում էի, թե ինչպես իշխանությունները չեն մտածել ավելի շուտ նույնն անել»:

Լուսանկարը՝ Լեսլի Դեյսի

Ավելույց է ելել, որ ոչ ոք այնչափ շատացավ ու երկար մամանակ պոչակի հարսեի չէր, թե ինչ եղան հայ երկրատարները: Այդ վերջին պարզվեց որ ուղեկցող զինվոր-ուստիկանները բարոյին կոտորել են: Այդ մամուրեթ ու մի տարբերություն չէր՝ լրվում նրանց միջև, ովքեր վերջին էին գնեմատարությունը բղառվելու տարբեր ու նրանց միջև, ովքեր չէին վճարել:

Երբ ես 1915 թվականի Հուլիսի 4-ի առավոտյան դարձ-
նեցի, Հյուպատոսարանում ոչ մի դավազ չէր մնացել: Մինչ-
դեռ այդ օրը մենք սովորաբար պաշտոնական ընդունելու թ-
յուն էինք կազմակերպում⁴⁵: Ահմեդը չէր ապաքինվել շա-
րունակական տենդից, որով վարակվել էր միսիս Սմիթին
Դիարբեքիր ուղեկցելիս, դեռևս Հիվանդանոցում էր, նե-
մանը զինվորական պարտականությունները կատարելու
պատճառով էր բացակայում, իսկ Կարապետը բանտից
դուրս չէր եկել: Այն երիտասարդը, որը միաժամանակ
թարգմանի ու քարտուղարի պարտականություններն էր
կատարում, նույնպես Հայ էր, սակայն, քանի որ չէին տարել
առաջին քարավանով, Հնարավորություն էր ստացել Կոս-
տանդնուպոլիս մեկնել մի քանի թուրք պաշտոնյաների
հետ, ուստի աշխատանքից ազատվել, ուղեւորութանն էր
պատրաստվում:

Ահա այդ պատճառով գիշերը ես մենակ էի մնացել, Հա-
յերի՝ ինձ վստահված ունեցվածքի միակ պահապանն էի
դարձել ու ինքս ինձ մտածում էի, թե առանց ծառայողների
ինչպես պիտի կատարեմ Հյուպատոսի իմ պարտականու-
թյունները, ավելին, ինչպես պիտի ապրեմ: Աշխարհի այդ հե-
ռավոր ու չքաղաքակրթված անկյունում, առանձին ու
օտարոտի, ես ինձ բարոյալքված ու հուսահատված էի
զգում, որովհետև ամեն օր ահավոր դեպքերի էի ականա-
տես լինում, ոչ մի կերպ չկարողանալով կանխատեսել, թե
ինչ է տեղի ունենալու Հաջորդ օրը:

Ես ուստիկանատուն գնացի եւ իմացա, որ Կարապետին
Կարմիր կոնակ են փոխադրել: Շտապեցի տեղի զինվորա-
կան պաշտոնյաներից մեկի՝ Մեհմեդ Ալի բեյի մոտ, խնդրե-
ցի, որ ինձ անձնական ծառայություն մատուցի, հրամայի,
որ իմ դավազ Կարապետին թույլ տան Հյուպատոսարան
վերադառնալ: Նա խոստացավ, ես տուն վերադարձա: Մեհ-
մեդ Ալի բեյը կատարեց խոստումը, մեկ ժամ անց Կարապե-

տին ազատ արձակեցին: Պետք է ասեմ, որ այդ իրավիճա-
կում իմ թուրք դավազ Նեմանն էլ ինձ շատ օգնեց:

Այդ օրվա ընդունելությունը չկայացավ, մենք հրավի-
րագրեր չէինք ուղարկել, չնայած, միեւնույն է, Հազիվ թե
որևէ մեկը գալու միտք ունենար: Թուրք պաշտոնյաները
չափազանց շատ էին զրաղված Հայերի բնաջնջման իրա-
գործմամբ, իսկ այն մի քանի Հայերը, ովքեր դեռևս մնացել
էին, բնականաբար խուսափում էին տներից ելնել, քանի որ
եթե փողոցում բռնեին, հաստատ կաքսորեին: Ինչ վերաբե-
րում է ամերիկյան միսիոներներին, նրանք ամեն կերպ ջա-
նում էին օգնել անձանց, որոնք որևէ ձևով առնչվում էին
իրենց դպրոցներին ու առաքելութանը: Քաղաքում այնպի-
սի քառս էր, որ թվում էր, թե աշխարհի վերջն է:

Դա անսովոր Հուլիսի չորս էր:

Երկուշաբթի եւ այդ շաբաթվա Հաջորդ օրերին տեղա-
Հանեցին Սարբերդի ու Հարեւան գյուղերի Հայերին: Մի քա-
նի օրը մեկ նոր քարավան էր ճամփա ընկնում, ընդ որում
մեկը մի, մյուսը՝ բոլորովին այլ ուղղութամբ: Իշխանութ-
յունները ջանում էին Հնարավորին չափ արագ գործել, Հա-
ջողություններ իրականացնում էին իրենց Հղացած ծրագիրը:

Շաբաթվա վերջում, մի երեկո, Հյուպատոսարան եկավ
բժիշկ Ատկինսոնը եւ Հարցրեց, թե կուզեի՞ արդյոք զրուցել
սպանդից ազատված Հայի հետ: Ես հետը տուն գնացի, նա
ինձ աստիճաններով վեր՝ ձեռնահարկ բարձրացրեց, մտց-
րեց մի մուտ խուց, որտեղ թաքնված էր այդ անձնավորու-
թյունը: Նա այն դեղատան աշխատողն էր, որը Ատկինսոնը
բացել էր Սարբերդում: Դեղագործը հրաշքով էր փրկվել
մահից ու կրած տառապանքներից ուժասպառ, հասել էր
Հիվանդանոց: Մենք տեղավորվեցինք ձեռնահարկում ու
մինչ զինվոր-ոստիկանները խուզարկում էին փողոցները,
թաքնված Հայեր որոնում, լսեցինք փախստականի պատ-
մությունը:

Նրան, առանց պատճառն ասելու, հուլիսի 5-ին ձերբակալել էին Պարբերդում, Մամուրեթ-ուլ-Ազիզի բանտը բերել: Նույն օրը այդ երկու բնակավայրերում, շրջակա գյուղերում մոտ ութ հարյուր տղամարդու էին հավաքել, որուէ մեղադրանք չներկայացնելով, բանտ լցրել: Բոլորին խուզարկել էին, խլել դրամները, արժեքավոր իրերն ու անգամ հագուստների մի մասը: Ոմանք մինչ այդ էլ էին ձերբակալված եղել, բայց վալին ազատ էր արձակել, հայտարարել, որ պիտի ընտանիքների հետ աքսոր գնան: Երեքշաբթի օրը, գիշերվա ժամը 3-ին, մյուզիրը՝ ոստիկանապետը, բանտ է մտնում, եւ բոլորին հանում, բակում, նրա դիմաց շարք են կանգնեցնում: Նորից հերթով խուզարկում, մյուզիրի թելադրանքով տասնչորս հոգիանոց խմբերով կապկպում են իրար ու, որպեսզի բնակիչները չտեսնեն, լույսը չբացված տանում են քաղաքից: Զինվոր-ոստիկանների խիստ հսկողութան տակ կալանավորներին քրդական ինչ-որ գյուղ են քշում, ուր հասնում են կեսօրից հետո: Նրանց ամբողջ գիշերը փակում են մզկիթում, հարեւան շինութուններում, թողնում առանց հաց ու ջրի: Մի քանի քրդեր որոշակի գումարով ուտելիք ու խմելիք են առաջարկում, որն ինքնին ծաղր է թվում, քանի որ բոլորի դրամներն էլ խլել էին: Բանտարկյալներն այդպես անցկացնում են գիշերը, լուսադեմին տանում են մի քանի ժամ հեռու գտնվող մի հովիտ, հրամայում նստել: Նույն օրը՝ չորեքշաբթի, հուլիսի 7-ին, կեսօրին գիշվոր-ոստիկանները սկսում են գնդակահարել նրանց: Երկու-երեք կրակահերթից, տղամարդկանց մեծ մասին կոտորելուց հետո, զինվոր-ոստիկաններին հրամայում են փամփուշտը խնայել, մնացածին սվիններով վերացնել:

Երիտասարդը, որը մեզ նկարագրում էր նախճիրը, պատմեց, որ ինքը շարքի ծայրին կանգնած է եղել եւ երբ այդ հրամանը լսել է, խելագարի նման գոռացել է, որ իրեն գնդակով մեռցնեն, որովհետեւ ոչ մի կերպ չի կարողացել

հաշտվել սվինով խոցոտվելու հեռանկարի հետ: Սարսափը կրկնապատկել է ուժերը, կտրել է պարանն ու զգալով, որ ազատ է, դիմել է փախուստի: Նրա հետեւից անընդհատ կրակել են, բայց չեն դիպել: Տիրած խառնաշփոթի, տեղանքի ընձեռած հնարավորութայան շնորհիվ, դեղագործը շատ շուտ մի փոքրիկ ձորակ է իջնում, որի մյուս ափը մազլցելով կարողանում է բավականաչափ հեռանալ, ապա, ուժերը ներածին չափ արագ, փախչել բաց դաշտով: Երիտասարդը վազում է մի ամբողջ օր ու գիշեր, սովից ու ծարավից, հաղթահարած տարածութունից ու ժասպառ է լինում, բայց վախը մղում է առաջ: Ի վերջո Մամուրեթ-ուլ-Ազիզ է մտնում ու չի ճանաչում քաղաքը, ուր ապրել է ամբողջ կյանքը: Նա ուզում է ուղղակի ամերիկյան հիվանդանոց գնալ, բայց սխալվում, հայտնվում է հակառակ ծայրամասում: Հետ է շրջվում դեպի դաշտերը եւ վերջապես, մի այլ արահետով, հիվանդանոց է հասնում ու ուշ երեկոյան առանց ուշադրութուն գրավելու կարողանում է սպրդնել ներս: Բժիշկ Ատկինսոնը հենց նրան տեսնում, տանում է տուն: Ավելի ուշ դեղագործ երիտասարդին կնոջ հագուստներ հագցրին, փախցրին եւ հիմա ողջ-առողջ Ռուսաստանում է:

Այդ ժամանակ ձերբակալված 800-900 տղամարդկանցից 15-20 հոգի կարողացել էին փախչել, եւ շատերը հաստատեցին այն, ինչ ես առաջին անգամ լսել էի դեղագործից: Զոհերի թվում էին Եփրատ քոլեջի գանձապահը, ուրիշ շատ հարգարժան, նշանավոր հայեր, որոնք ոչ մի հանցանքի, կառավարութայան նկատմամբ անհավատարիմ լինելու համար չէին մեղադրվել:

Ես պետական դեպարտամենտից վերոհիշյալ անձանց մասին տեղեկութուններ պահանջող բազմաթիվ հարցապնդումներ ստացա եւ որպես պատասխան իմ ուղարկած հեռագրերում ու զեկուցագրերում անընդհատ հղում կատարեցի 1915 թվականի հուլիսի 11-ին Կոստանդնուպոլիս՝

դեսպանատուն ուղարկած Հաղորդագրութեանս Համապատասխան էջին, որի պատճենը նույն ամիս-ամսաթիվը կրող ճեպագրով պետդեսպարտամենտ էի առաքել: Այդ էջում, ջարդից չորս օր անց, նկարագրել էի, թե ինչ է տեղի ունեցել իրականում:

Բազմաթիվ անգամներ վալիին միջնորդելուց հետո, երբ ընտանիքների մեծ մասին աքսորեցին, մեզ թվաց, թե վատթարագույնն արդեն անցավ, մնացած կանանց ու երեխաներին չեն արտաքսի: Մենք նույնիսկ սկսեցինք նրանց օգնելու ծրագրեր կազմել, եւ քանի որ ոչ մեկը գոյութիւնը պահպանելու միջոց չունեւ, մտածեցինք որբանոց բացել, ստանձնել երեխաների մի մասի խնամակալութիւնը: Միսիոներները հետաքրքրվում էին հատկապես այն փոքրիկներով, որոնց հարազատները կապված էին եղել իրենց առաքելութեան հետ, եւ իմ հերթին մտածում էի, թե ինչպես միջոցներ գտնեմ, որպեսզի հովանավորեմ նրանց, ովքեր Ամերիկայում էին ծնվել, ծնողները, հնարավոր է, որ ամերիկյան քաղաքացիներ լինեին: Ծատ Հայ փոքրիկներ էին Միացյալ Նահանգներում աշխարհ եկել, ծնողները հետո էին Թուրքիա բերել: Այժմ այդ Հայերի ու մայրերի մի մասն արդեն սպանվել կամ տեղահանվել էր, ուստի երեխաներն անսպաշտպան էին մնացել, դատապարտվել սովամահութեան: Կային նաեւ հարյուրավոր մանուկներ, որոնք պարբերաբար հասնում էին տարբեր վայրերից, որոնց ծնողները ճանապարհին մահացել էին կամ սպանվել:

Միսիոներներից մեկի հետ ես նույնիսկ սկսեցի Հյուսիսատոսարանի մոտակայքում հարմար չենք որոնել, որպեսզի, եթե իհարկե մեզ թույլ տային, որբանոց բացեինք: Հուլիսի 10-ին շաբաթ օրը այդ խնդրով վալիի մոտ գնացի, բայց կտրուկ մերժում ստացա: Նա ասաց, որ կառավարութիւնը պատրաստվում է մանկատներ հիմնել, մենք իրավունք չունենք նույնը անելու եւ եթե շատ ենք ուղում, մարդկանց այլ

կերպ պիտի օգնենք: Մեկ ժամ էլ չկար, որ դուրս էի եկել վալիի մոտից, հայտարարեցին, որ տեղերում մնացած բոլոր Հայերը, այդ թիւում կանայք ու երեխաները, երեքշաբթի, Հուլիսի 13-ին, պիտի ճամփա ընկնեն:

Թուրքական կառավարութիւնը, իրոք, Հայ երեխաների համար մի շարք որբանոցներ հիմնեց, նրանց որոշ ժամանակ պատսպարեց: Բայց հետո բոլորն էլ անհետացան եւ լուր տարածվեց, որ տարել են Սարբերդից քսան մղոն հեռու գտնվող մի լիճ, խեղդամահ արել: Ուրիշ մանրամասներ ինձ հայտնի չեն, բայց մանկական ոսկրակույտեր ճանապարհին եւ անձամբ եմ տեսել, այնպես որ հաստատ կարող եմ վկայել՝ նրանց որեւէ կերպ վերացրել են:

Երբ զգացի, որ ոչ մի Հայ՝ նույնիսկ նրանք, ովքեր վեսիկա՝ արտոնագրեր ունեն, ապահովված չեն, ինչպես արդեն նշել եմ, որոշեցի Հյուսիսատոսարանը ապաստարանի վերածել եւ հաջորդ երկու տարիներին շատ-շատերի տեղ տվի⁴⁶:

Հյուսիսատոսարանում առաջինը պատսպարվեց Մորենիկ գյուղից մի կին, ում ամերիկահայտակ ամուսինը նախորդ ձմռանը որովայնախտից էր մահացել: Սոսքը միսիս Վարթեր Ջորջի մասին է, որն ավելի ուշ պետդեսպարտամենտից անձնագիր ստացավ, ում ճակատագիրը պետական դեսպարտամենտի հետ զրազրութեան նյութ դարձավ: Նա այդ նույն շաբաթ, մի օր, չորս փոքր երեխաներով, Հյուսիսատոսարան եկավ, որոնցից երեքը Միացյալ Նահանգներում էին ծնվել, ինքն էլ էր Ամերիկայում երկար ապրել: Ներկայացավ ու հարցրեց, թե կարո՞ղ եմ իրենց պատսպարել: Ես նրա համար վեսիկա արդեն ձեռք բերել էի, բայց միսիս Վարթերն ասաց, որ Մորենիկի Հայերին աքսորող զինվոր-ոստիկանները դրան ոչ մի նշանակութիւն չեն տվել, մյուս համազրուղացիների հետ տեղահանել են: Նա զինվոր-ոստիկանի ամբողջում է սահեցրել, որը եւ թույլ է տվել քարավանից հետ մնալ: Այնուհետեւ դաշտերի միջով, մինչեւ

Մամուրեթ-ուլ-Ազիզ մոտ երկու մղոն վազել է ու կողմնակի ճանապարհով, սարսափից դողահար, ուժասպառ Հյուպատոսարան հասել: Ես ասացի, որ կարող է ապաստանել ինձ մոտ ու ավելի ուշ կուսակալից Մամուրեթ-ուլ-Ազիզում վերջնականապես մնալու թույլտվություն ձեռք բերեցի: Միսիս Վարթերը շուրջ երեք ամիս Հյուպատոսարանում պատասպարվեց, ապա մոտակայքում իր համար տուն վարձեցի, ուր եւ ապրում է մինչեւ հիմա: Միաժամանակ, քանի որ ամբողջ դրամը կորցրել էր, հիմնադրամից կանխավճար տվեցի, մինչեւ որ կարողացա տեղեկացնել Ամերիկայում ապրող հորը, դատեր համար գումար խնդրել, որը տեղ հասավ մոտ վեց ամիս անց:

Այդպես սկսվեց ամեն ինչ: Այդ պահից, անընդհատ ձգտելով ոստիկանների ուշադրությունը չգրավել, Հյուպատոսարանում օգնում, պատասպարում էի հնարավորին չափ մեծ թվով տղամարդկանց, կանանց ու երեխաների:

Մի երկու օր անց, քանի որ ամբողջ Քեսիրիկ գյուղը բռնազաղթեցրել էին, մի ուրիշ կին՝ միսիս Վարդեր Հարությունյանը, երկու երեխաներով Հյուպատոսարան՝ ապաստանելու եկավ: Նրա ամուսինը՝ ամերիկահպատակ է, Բոստոնում է բնակվում: Վարդերն էլ էր Միացյալ Նահանգներում ապրել, այնտեղ են ծնվել երկու զավակները: Ես նրա համար նույնպես վեսիկա հայթայթեցի, իրեն, երեխաներին մոտ երեք ամիս Հյուպատոսարանում պահեցի ու մինչեւ ամուսնու դրամ ուղարկելը նյութական օգնություն ցույց տվեցի: Հետագայում, Պարբերդում գտնվելուս ամբողջ ընթացքում, նա իմ հովանավորությունը ապրում էր Հյուպատոսարանից ոչ հեռու:

Նույն օրը, ճաշից հետո, թոռան հետ մի ծեր կին հայտնվեց: Թոռը՝ Ջավեն Մուշեղյանը, Միացյալ Նահանգներում էր ծնվել, Թուրքիա էր եկել տատին տեսնելու: Թուրք պաշտոնյաների մոտ նման գործերով դեռ ծառայող չունեի ու-

ղարկելու, ինքս կոնակ՝ կառավարչատուն գնացի ու երկուսի համար էլ վեսիկա ձեռք բերեցի: Քանի որ դրսում ապահով չէին կարող լինել, նրանք ամառը Հյուպատոսարանում անցկացրին, հետո տատը թույլտվություն ստացավ, տուն վերադարձավ, մինչեւ Պարբերդից իմ մեկնելն այնտեղ էր ապրում: Ջավենը ընդհուպ այս տարվա փետրվարի վերջը մնաց Հյուպատոսարանում, որից հետո Ռուսաստան ուղարկեցի, որտեղ եւ գտնվում է այժմ: Նրա մեկնելու դրդապատճառները հետո կրացատրեմ: Ինձ մոտ եղած ժամանակ Ջավենը դասավանդեց այն դպրոցում, որը կազմակերպել էինք մեր խնամակալած երեխաների համար:

Հյուպատոսարանում որոշ ժամանակ ապաստանեց նաեւ միսիս Եսթեր (էսթեր) Մկրտչյանը, որի ամուսինը՝ պատվելի Թոմաս Կ. Մկրտչյանը երկար տարիներ եղել էր Դիարբեքի ըրիտանական փոխհյուպատոսի թարգմանը: Մի տարի առաջ նա, ինձ վստահելով կնոջն ու վեց երեխային, կարողացավ փոխհյուպատոսի՝ միստր Մոնկ-Մեյսոնի հետ Եգիպտոս փախչել: Պատվելին հաճախ ինձ նամակ էր գրում, խնդրում էր իր ընտանիքին այնպես հոգ տանել, ինչպես իմին կտանեի, ավելացնում էր, որ եթե ինչ-որ բան պատահի, ինձ պատասխանատու կհամարի: «Փոմփիչ» Եսթերը (այդպես էին կոչում կանանց, ովքեր կարդալ գիտեին) ապրել էր Պարբերդում, երեխաների մի մասը Եփրատ քոլեջ էր հաճախել: Երբ քաղաքի հայությունն սկսում են աքսորել, գնում, գտնում է գայմագամին եւ 50 թուրքական ֆունտ (220 դոլար) է տալիս, որ իրեն հովանավորի: Գայմագամը վերցնում է գումարն ու ասում է, որ Մամուրեթ-ուլ-Ազիզում բռնազաղթը ավարտվել է, ավելի լավ կանի գնա, այդ քաղաքում հաստատվի: Պատմում էին, որ գայմագամն այդ ժամանակ նույն ձեռով 10000 ֆունտ (44000 դոլար) կաշառք է հայերից վերցրել, բայց օգնել է չատ քչերին: Փոմփիչ Եսթերն, ուրեմն, ամբողջ ընտանիքով

տեղափոխվում է Մամուրեթ-ուլ-Ազիզ ու իմանում, որ տեղի հայերին մի քանի օր անց են տարագրելու: Նա որոշ ժամանակ մնում է ամերիկյան հիվանդանոցում, որը միսիոնե-րական մյուս հաստատությունների նման ոչ թե Պարբեր-դում, այլ Մամուրեթ-ուլ-Ազիզում էր գտնվում: Բժիշկ Ատ-կինսոնը շատ հայերի ընդառաջեց, որքան հնարավոր է եր-կար հիվանդանոցում պահեց, բայց հետո հայտարարեցին, որ ով քաղաքում մնացել է, պիտի բռնազաղթի, ու ոստի-կաններն իսկույն հիվանդանոց խուժեցին, որպեսզի, եթե թաքնվածներ լինեն, ձերբակալեն: Հասկանալի է, նման պարագայում բժիշկը միսիս Եսթերի ու երեխաների համար ոչինչ չէր կարող անել: Նրանք հիվանդանոցից ինձ մոտ եկան, ավելանալով փախստականների իմ ընտանիքին, որի թիվը շատ արագ աճում էր:

Մի քանի օր անց դանիացի միսիոներուհի միսս Կարեն Պետերսոնը երկու երեխայով մի կնոջ ընկերաց, խնդրեց միայն մի գիշեր հյուրընկալել, խոստանալով, որ հաջորդ առավոտ կփորձի այլ ապաստան գտնել: Մայրն ու երեխաները, սա-կայն, հյուպատոսարանում ոչ թե մի գիշեր, գրեթե երկու տարի մնացին: Միսիս Հայկանուչ Ղազանչյանը երկար տա-րիներ Ամերիկայում էր ապրել, երեխաներից մեկն այնտեղ էր ծնվել: Ամուսինը՝ միստր Մարտիրոս Ղազանչյանը,⁴⁷ Մի-ացյալ Նահանգներում էր, բազմիցս պետական դեպարտա-մենտ էր դիմել, որպեսզի ընտանիքի մասին տեղեկություն-ներ ստանա: Միսիս Ղազանչյանը Պարբերդում գտնվելուս ամբողջ ժամանակամիջոցում հնարավոր ամեն ինչ արեց, որ օգնի իմ պատսպարած փոքրիկներին:

Իմ հարեւաններից մեկը խոհարարիս հարսն էր, նրա ամուսինը մեկն էր այն 700 տղամարդկանցից, որոնց հուլի-սի 7-ին լեռներում կոտորեցին: Հարսը ապրել էր Միացյալ Նահանգներում, հինգ երեխաներից չորսին այնտեղ ծնել: Ես իմ պարտքն համարեցի ամեն կերպ նրանց հովանավորել,



«Բոլորը ցնցոտիներով էին, ոմանք գրեթե մերկ: Գաղթականները հյուժ-ված էին, տանջված, հիվանդ, կեղտոտ, ամբողջովին ոջլոտ, ավելի շատ վայրի գազանի, քան մարդկային հակների էին նման»:

Լուսանկարը՝ Լեսլի Դեխտեր

իրոք, նա ավելի քան մեկ տարի մնաց ինձ մոտ, Համառ որո-
նումներ կատարեց իմանալու Համար, թե արդյո՞ք Հարա-
զատներից որեւէ մեկը կենդանի մնացել է ու վերջապես
գտավ նրանց, որոնք մինչեւ այժմ ապրում են Կոստանդնու-
պոլսում:

Էրզրումից Հասած առաջին քարավանում, որի մասին
արդեն պատմել եմ, գտնվում էր միսիս Աղելինա Մազման-
յանը՝ այդ քաղաքի բողոքական պատվելիի դուստրը: Նրա
ամուսնուն ճանապարհին սպանել էին քրդերը: Միսիս Աղե-
լինան իր երկու երեխաների, սկեսրոջ ու տալոջ Հետ որոշ
ժամանակ մնաց Մամուրեթ-ուլ-Ազիզի դատարկված տնե-
րից մեկում, Հետո, քանի որ նրանց նորից սպառնաց բռնա-
գաղթի վտանգը, տեղափոխվեցին Հյուպատոսարան, երկու
ամիս ապրեցին: Ավելի ուշ, երբ թվում էր, թե արհավիրքն
արդեն անցել է, մի ուրիշ տուն գտան եւ, վերջիվերջո, իմ
տրամադրած դրամով կարողացան վերադառնալ Էրզրում:

Հյուպատոսարանում ընդունեցի նաեւ մի ծերունու, որը
մեզնից երկու ժամ Հետո գտնվող Բազմաշեն գյուղում էր
ապրում⁴⁸: Նա երկար տարիներ եղել էր Ամերիկայում, ուս-
տի ճակատագիրն ինձ շատ էր մտահոգում: Երբ իմացա, որ
Բազմաշենը պիտի տեղահանվի, տղամարդկանց մեծ մասին
արդեն ձերբակալել են, որոշեցի գնալ, գտնել նրան եւ, եթե
հնարավոր լինի, ինձ մոտ բերել: Ես ճամփա ընկա մենակ,
ձիով, որովհետեւ ոչ ուղեկցորդ ունեի, ոչ էլ այնպիսի մեկը,
որ Հետեւից ուղարկեի:

Երբեք չեմ մոռանա այդ օրվա ուղեւորութունը:

Սովորաբար գյուղի ճանապարհը բանուկ էր լինում,
բայց այդ օրը, Մամուրեթ-ուլ-Ազիզից մինչեւ Բազմաշեն
Հասնելս, միայն Հրացանն ուսերին մի քանի զինվոր-նոստի-
կանի Հանդիպեցի, որոնք ակնհայտորեն Հավաքել էին չը-
ջակայքում մնացած Հայերին եւ այժմ, իրենց պարտակա-
նութունը կատարած, տուն էին դառնում: Ճանապարհի եզ-

րին նույնիսկ դիակ տեսա, շուրջս զինվոր-նոստիկաններից
բացի կենդանի չունչ չկար: Բազմաշեն Հասնելուս պես, տա-
նը, գտա ծերունուն, նա սարսափելի վախեցած էր: Նախօ-
րեին, աքսորից խույս տալու Համար ողջ օրը թաքնվել էր իր
տան խուլ անկյունում: Գյուղը, արդեն գրեթե դատարկ էր,
միայն մի զինվոր-նոստիկան մնացել ու Հսկում էր, որպեսզի
աքսորից խույս տալ ոչ ոք չփորձի: Ես մոտեցա նրան, սիրա-
լիր խոսքերից, որոշ գումարից Հետո կարողացա ծերունուն
Հետս տանելու թույլտվութուն ստանալ: Զինվոր-նոստիկա-
նը, որն այդ պահից իմ լավագույն բարեկամը դարձավ, մի
շատ դժվարին պահի ինձ օգնեց, մեզ Հետ գյուղից դուրս էլ
եկավ, որպեսզի ուրիշ զինվոր-նոստիկաններ, որոնք կարող
էին անսպասելի Հայտնվել, մեզ չհանհանգստացնեն:

Ծերունկն ու ես աշխատում էինք որքան կարելի է արագ
անցնել ճանապարհը: Ես ձիով էի, նա ոտքով, ճգնում էինք
Հնարավորին չափ ուշադրութուն չգրավել: Մենք նկատե-
ցինք մի զինվոր-նոստիկանի, որը Հեռվից էր նայում մեզ, չէր
կարող գլխի ընկնել, թե ո՞վ է կողքինս, ուստի բարեհաջող
Հաղթահարեցինք այդ վտանգը, զարտուղի ճանապարհ
ընտրեցինք, գիշերադեմին Հազիվ Հասանք Հյուպատոսա-
րան: Այդ մարդը Գրիգոր Մաղաքյանն էր, Հետագայում ես
նրան դավադ նշանակեցի: Նա այժմ էլ փակված Հյուպատո-
սարանում պահակութուն է անում, գիշերում է այնտեղ:

Ահա նման մարդիկ ամառն անցկացրին ինձ մոտ:
ԻՀարկե այդ ժամանակ դեռ շատերը կային, որոնց կարող էի
հիշատակել եւ ուրիշները, որոնք ավելի ուշ եկան: Բնակա-
նաբար առաջին Հերթին ես աշխատում էի օգնել նրանց, ով-
քեր ամերիկահայտակ լինելու պատճառով դրա իրա-
վունքն ունեին, չնայած շատ քեզի մոտ քաղաքացիութուն-
ը Հաստատող փաստաթուղթ կամ որեւէ այլ վկայագիր
կար, եւ մինչ այդ Հանգամանքը պարզվում էր, ամիսներ էին
անցնում: Բացի նրանցից, ինչպես արդեն տեսանք, կային

նաեւ այնպիսները, որոնք տարբեր Հնարանքներով էին հասնում Հյուպատոսարան, որոնց չընդունելը դժվար էր: Ինձ մոտ ապաստանած շատ հայեր հարազատներ ունեին Միացյալ Նահանգներում, ես վերջերս մեծ մասին հանդիպելու, տեղեկացնելու գոհունակութունն ունեցա, որ ընտանիքները փրկվել են:

Իհարկե, բոլոր փախստականներին սնելը լուրջ հոգս էր, ու քանի որ ես այլեւս այնպիսի ծառայողներ չունեի, որոնք կարողանային փողոց ելնել, երբեմն ինքս էի ստիպված լինում, մեծագույն զգուշութամբ՝ ձգտելով ուշադրություն չգրավել, շուկա գնալ, գնումներ կատարել: Բավական երկար ժամանակ ես իմ հայ դավազներին թույլ չէի տալիս առանց ինձ փողոց դուրս գալ, այսինքն դերերը փոխվել էին, փոխանակ իրենք ինձ պահպանեին, ես էի իրենց պահպանում: Որոշ ժամանակ ես մի երիտասարդ թուրքի ծառայության վերցրի, որպեսզի, եթե վստահություն ներշնչի, դավազ նշանակեմ: Բայց, այնպիսի մի շրջանում, երբ հայերն օրվա ու գիշերվա բոլոր ժամերին գաղտնի ինձ մոտ էին գալիս, պարտեզս լեցուն էր փախստականներով, նա այնքան հետաքրքրասեր, աներես թվաց, որ ստիպված եղա որքան հնարավոր է շուտ ազատվել նրանից:

Բարեբախտաբար Հյուպատոսարանում չափազանց շատ տեղ կար: Ծենքը, որ լավագույններից էր ամբողջ Փոքր Ասիայի խորքերում, երեքհարկանի ու չափազանց ընդարձակ էր: Մեծ էր նաեւ պարտեզը, որը մոտ քառասուն խոշոր ծառ ուներ եւ շրջափակված էր բարձր պարսպապատով, այսինքն հարեւան թուրքերին թույլ չէր տալիս տեսնելու, թե ով կա ներսում: Քանի որ ամռանը խորքերում չի անձրելում, փախստականների մեծ մասը պարտեզում, թթենիների տակ էր գիշերում: Մոտ քառասուն հոգի ամբողջ ամառը այդպես անցկացրեց: Պետք է ասել, որ նույնիսկ բնականոն պայմաններում քիչ թվով հայեր են անկողին, մահճա-

կալ օգտագործում: Նրանք սովորել են քնել գետնին փոված բարակ խսիրի վրա, թեթեւ վերմակով ծածկվել: Հետեւաբար դժվար չեղավ իմ Հյուրերի համար գիշերելու պայմաններ ստեղծելը: Կանայք, երեխաները ցերեկներն անցկացնում էին այգու հեռավոր խորքերում, հնարավորին չափ լուռ մնում՝ նույնիսկ ամենափոքրերին արգելում էին աղմկելը: Տղամարդիկ մինչեւ մութն ընկնելը թաքնվում էին խորդանոցում, գիշերը միայն, օդ չնչելու համար, այգի էին գալիս:

Ու մինչ այդքան հայ ապաստանում էին Հյուպատոսարանում, թուրքերն ամեն երեկո դիմացի հրապարակում նամազի էին հավաքվում եւ լսվում էր, թե ինչպիսի մոլեռանդութամբ են Ալլահին խնդրում ատելի քրիստոնյաներին բնաջնջելու ջանքերը օրհնել: Գիշերները թուրքերը երկինք աղոթք էին հղում, իսկ ցերեկները իրականացնում էին իրենց արյունոտ գործը:

Այդ ամբողջ ժամանակ ես հեռագրեր էի առաքում դեսպանատուն, նկարագրում իրավիճակը, տեղեկացնում, թե նահանգում ինչ է կատարվում: Հեռագիր հեռագրի, ճեպագիր ճեպագրի հետեւից էր Հյուպատոսարանից թռչում, դեսպանատանն ու պետական դեպարտամենտին ահազանգում այն ահավոր ողբերգության մասին, որ տեղի էր ունենում մեր շուրջը, որը սակայն չէինք կարողանում կանխել: Բոլոր դեպքերում հույսներս չէինք կորցնում, որ վերջիվերջո այդ ամենի դեմ ազդեցիկ բողոք կբարձրանա, որեւէ կերպ նախճիրը կդիմագրավվի, եւ քաղաքակիրթ աշխարհը կտեղեկանա, թե վերապրողներն ինչի կարիք ունեն: Ես երբեք չէի իմանում, թե իմ ճեպագրերից որոնք է գրաքննիչը ընդունում, որոնք՝ ոչ:

Ավելի ուշ պարզ դարձավ, որ իմ կարեւորագույն գեկուցագրերից շատերը թուրքական իշխանութունները առգրավել ու կարդացել են, որի պատճառով էլ, մանրամասն-

րը հետագայում կրացատրեմ, լուրջ անախորժություններ ունեցա: Ամեն դեպքում իմ նամակների որոշ մասը հասնում էր դեսպանատուն, արժանանում դեսպանի գործնական պատասխանին:

Անշուշտ, արտոնությունների մեծ մասը, որ ձեռք էինք բերում, քողարկված էին լինում զուտ արեւելյան խորամանկություններ, չնչին արդյունք էին ունենում: Ի վերջո, գրեթե ամբողջ Հայությունն աքսորելուց հետո թուրքական կառավարությունը հայտարարեց, որ որոշ խավերի համար բացառություն պիտի արվի: Սակայն ամենեւին անհավանական է, որ նման հրահանգները տեղական իշխանություններին գաղտնի ցուցմունքով էին ուղարկում, որը թելադրում էր արտոնությունների որոշումը հրապարակել այն բանից հետո միայն, երբ բոլոր օգտվելու իրավունք ունեցողները արդեն տեղահանված կլինեն: Դրա առաջին օրինակը կաթոլիկներն էին, որոնց չտարագրելու հրամանը Հայտնի դարձավ այն ժամանակ միայն, երբ մեզ մոտ կաթոլիկ գրեթե չէր մնացել: Ավելի ուշ նույն կերպ բողոքականների հետ վարվեցին: Այնուամենայնիվ, հենց որ նրանց տրված արտոնության մասին իմացա, վերցրեցի մեր տարածաշրջանից տեղահանվածների ցանկն ու քանի որ մեծամասնությունը ճամփա էր ընկել ընդամենը մի քանի օր առաջ, մոտավորապես Հայտնի էր, թե ուր էր հասել, շտապեցի նահանգապետի մոտ, որ միջնորդեմ, խնդրեմ հետ վերադարձնել: Ցավոք, իմ ջանքերն այդ ուղղությամբ արդյունք չտվին, ոչ մեկը աքսորից տուն դառնալու պաշտոնական թույլտվություն չստացավ:

Հետագա տեղահանությունների ժամանակ էլ զինվոր-նոստիկաններին գրեթե չէր հետաքրքրում խավերի տարբերությունը, բոլորին հավաքում, անխտիր անապատ էին քշում: Հուլիսի կեսերին դեսպանատնից հեռագիր ստացա, որը պահանջում էր ինձնից հասնել այն բանին, որ ամե-

րիկյան քաղաքացիների հպատակությունը անպայման հաշվի առնեն, տեղերում թողնեն: Նույն ամսվա վերջերին, երբ Մամուրեթ-ուլ-Ազիզի ու Նարբերդի գրեթե բոլոր հայերին աքսորել էին, քառասուն հոգիանոց մի խումբ կուսակալի հատուկ արտոնագրերով ճամփա ընկավ: Ումբում այնպիսի մարդիկ կային, որոնց նահանգապետն անձամբ ճանաչում էր, ձեւացնում էր, թե մտահոգված է նրանց ճակատագրով: Նրանք մի քանի անգամ մեկնելու որոշում կայացրել էին, բայց վալին կանխել, նախազգուշացրել էր, որ ճանապարհները վտանգավոր են, ինքն ուզում է ամեն ինչ անել, որ ապահով տեղ հասնեն: Մեկնողների թվում էին կաթոլիկ հայերի արքեպիսկոպոսը՝ գերապայծառ Խարայեյանը, միաբանության անդամները, ինչպես նաեւ մի դեռատի ֆրանսուհի օրիորդ, մաղմաղել Մարգարիտ Գաման: Նա հրաժարվել էր նախորդ տարվա նոյեմբերին ֆրանսիացի արբանների հետ մեկնել, ասել էր, որ ընտանիք չունի, նախընտրում է կիսել հայերի ճակատագիրը, որոնց միջավայրում երկար տարիներ է ապրում: Այս անգամ էլ, երբ ցանկացավ գնալ, ես բացատրեցի սպառնացող վտանգները, բայց քանի որ իր կարծիքով Նարբերդում այլեւս անելիք չունեն, որոշեց հոգեւորականների հետ ճամփա ընկնել:

Ումբը Հալեպ ուղեւորվեց կառքերով, զինվոր-նոստիկանների առաջնորդությամբ, կյանքի ապահովություն երաշխիքներով: Բայց հենց Գյազիմ խան են հասնում, իջեւանատանը բազմաթիվ զինվոր-նոստիկանների են տեսնում, որոնք հավատացնում են, որ տվյալ ճանապարհը վտանգավոր է, պետք է այլ ուղի ընտրել: Ամեն ինչ ըստ երեւույթին նախօրոք մտածված է եղել: Ումբն, ուրեմն, շեղում է ուղղությունը, բայց փոքր-ինչ առաջանալուց հետո ճամփան փակում են դարան մտած քրդերն ու զինվոր-նոստիկանները, հրամայում կառքերից իջնել: Նրանք կապում են բոլորի թելերը, խճուղուց հեռացնում: Արքեպիսկոպոսն ու իր ուղե-

կիցները փորձում են սաղմոս երգել, բայց նրանց ձեռքից հայհոյանքներով աղոթագրքերը խլում են: Բացառությամբ երեք կնոջ ու երկու-երեք երեխայի, բոլորին սպանել էին: Ջոհերի թվում էր օրիորդ Գաման:

Երեք հայուհիներին ոճրագործները թողել էին իրենց հարեմների համար, ընդ որում ամենազեղեցիկին վերցրել էր քուրդ ավազակապետը՝ Հաջի Ղայան: Նա գեղեցկուհու ամուսնուն իր ձեռքերով էր սպանել, որովհետև կինը նետվել էր, որ փրկի նրան: Ի միջի այլոց այդ հայուհին երկար ժամանակ ապրել էր Անգլիայում, բոլորովին վերջերս էր ամուսնու հետ Թուրքիա վերադարձել: Աքսոր ելնելուց առաջ նրանք չափազանց շատ հաց էին թխել տվել, մեջը մի քանի հարյուր ֆունտ ոսկեղրամ պահել: Հասկանալի է, բոլորն էլ ձեռքներից խլել էին: Հաջի Ղայան գեղեցկուհուն ու փոքրիկ դստերը տարավ հարեմ, տարի ու կես պահեց: Հայուհին նրանից էլ զավակ ունեցավ, որից հետո գիտակցությունը գրեթե կորցրեց: Վերջիվերջո կարողացել էր դանիացի միսիոներուհի միսս Պետերսոնի հետ, ում արդեն հիշատակել են, հանդիպելու թույլտվություն ստանալ ու անցյալ գարնանը, իմ Պարբերդից հեռանալուց քիչ անց, Ռուսաստան փախչելու փորձ անել: Ես իմացա, որ նրան բռնել, հետ էին բերել, թե հետո ինչ եղավ, ճշգրիտ չգիտեմ: Հաջի Ղայան դարձել էր քաղաքի ամենաազդեցիկ ղեմքերից մեկը, բայց ի վերջո հեղինակազրկեց իրեն, վալին որոշ ժամանակով բանտ նետեց: Երկրորդ տիկինը միսիս Թագուհի Տիգրան Մեծիկյանի քույրն էր: Ինչ-որ թուրք նրան զավակներից մեկի հետ տարել էր Գեղվանք գյուղը, մի քանի օր պահել:

Մենք այդ մասին տեղեկացրինք նահանգապետին, խնդրեցինք միջամտել, եւ նա կնոջը ետ՝ Մամուրեթ-ուլ-Ազիզ բերել տվեց: Տիկինն ինձ իմ գրասենյակը այցի եկավ, ջարդերի մասին մանրամասն պատմեց այն, ինչ արդեն

նկարագրել են:

Բռնագաղթածների թվում էր Ջինգեր կարի մեքենաների ընկերության տեղական բաժանմունքի գործակալը, որը խանութի բանալիներն ինձ էր թողել: Հուլիսյան մի օր մյուզիկը մարդ էր ուղարկել, բանալիներն ուզել: Նա նոր պաշտոնյա էր, ըստ երեւութին նշանակել էին, որ լիովին իրագործի հայերի տեղահանության ծրագիրը, քանի որ նախորդը համեմատաբար մեղմ անձնավորություն էր, աքսորի հրամաններն ստանալուն պես, պաշտոնից հրաժարվեց, հեռացավ: Այնպես որ նոր մյուզիկը ճիշտ այն ժամանակ տեղ հասավ, երբ պետք էր հրաման կատարել: Նրա անունը Ռեչիդ բեյ էր, ծնվել էր Մամուրեթ-ուլ-Ազիզի ամենամոտ եւ ամենամեծ գյուղերից մեկում՝ Քեսիրիկում, երկար տարիներ Բաղդադում ինչ-որ պաշտոն էր զբաղեցրել: Նրա հայրը Քեսիրիկում էր ապրում, եղբայրը՝ Ֆիքրին, Հալեպում մյուզիկ էր: Ռեչիդ բեյը նահանգը շատ լավ գիտեր, այնպես որ նրանից բռնագաղթի ծրագրի իրագործումն ակնկալողները ճիշտ ընտրություն էին կատարել:

Բանալին ինքս տարա ու առաջին անգամ տեսա նրան: Նուրը, գրեթե մանկական ղեմքով երիտասարդ էր, լիբը-լիբը, գեր կազմվածք ուներ: Այդ դեռահասի անմեղ տեսքով պաշտոնյան ամառվա ողբերգություն ամենաարյունոտ դերերից մեկը խաղաց: Ռեչիդ բեյի գլխավոր նպատակը դեռուս մանկուց իրեն ծանոթ բոլոր հայ հարեւաններին վերացնելն էր, որն իրագործեց մեծ վարպետություն: Եռանդը, նպատակամղվածությունը, հետեւողականությունը, որ մոլեռանդորեն ներդնում էր սկսած գործը ավարտին հասցնելու համար, արժանի էին բոլորովին այլ նպատակի: Ի տարբերություն իր հայրենակիցների մեծ մասի, ինձ թվում է, որ բռնագաղթի ամբողջ ընթացքում Ռեչիդ բեյը հայերից կաշառք չվերցրեց, այլ միջոցներով ոչ մի ֆունտ չվաստակեց: Ասես իր միակ խնդիրը լավ անելն էր այն, ինչ հանձնա-

րարել էին իրեն: Ես նրան հաճախ էի հանդիպում հետագա տասնութ ամիսներին ու միշտ էլ խիստ բարեկիրթ վերաբերմունքի արժանանում եւ եթե որեւէ հարցով դիմում էի, մեծ մասամբ ընդառաջում էր: Հաճախ էլ այցի էի գնում Քեսիրիկի հիասքանչ տունն ու այգին կամ էլ իր առաջարկով ձի էինք հեծնում, զրոսնում: Ոստիկանապետը ջանում էր բարեհամբույր լինել իմ նկատմամբ, չնայած վատահ էի՝ հիմնականում տեղյակ էր, թե ինչեր եմ անում հայերի համար, մի բան, որ չէր կարող նրան դուր գալ:

Առաջին հանդիպման ժամանակ մեր զրույցը չէր ստացվում, որովհետեւ ընդհանուր լեզու չգիտեինք, մեզնից ոչ մեկը թարգման չուներ: Վերջապես գտանք ինչ-որ մեկին, եւ ինձ պարզ դարձավ, որ տեղական կառավարությունը շտապ կարի երեք Զինգեր մեքենա է պետք: Իշխանություններն իմացել էին, որ ընկերություն խանութի բանալին ինձ մոտ է, մարդ էին ուղարկել, որ վերցնի, մեքենաները տանի: Ես, իհարկեւ, դեմ չէի, պայմանով, որ խնամքով գործածեն: Քիչ ժամանակ անց որոշեցի հյուպատոսարան տեղափոխել ընկերության ունեցվածքը՝ մոտ հարյուր հիսուն կարի մեքենա, տարբեր գործիքներ ու պահեստամասեր, ամբողջ շարժական գույքը: Այդ ամենը պահեցի ամիսներ՝ այնքան, մինչեւ ընկերությունը հնարավորություն ունենար ուղարկել իր ներկայացուցչին, որը եւ տնօրիններ եղած-չեղածը: Ես խանութի բոլոր ապրանքները վերադարձրի նրան, որոնց նկատմամբ, եթե ուշադիր չլինեի, հաստատ կկորչեին:

Այդ տարի որոշեցի օգտագործել նաեւ թուրքական գլխավոր տոներից մեկի առիթը եւ տեղական իշխանություններից դեռեւս չաքսորված սակավաթիվ հայերի համար տեղերում մնալու արտոնություն ձեռք բերել: Անձամբ այցելեցի կուսակալին, տոնը շնորհավորեցի, բացատրեցի, թե ինչ հիանալի նախաձեռնություն կլինեի, եթե նման մի օր վերջ տրվեր հայերի աքսորին եւ հատուկնստ չտարագրվածները,



«Նրանց չարաթններով հոտի պես քշում էին, շատերը, բացի ուսերի խուրջինից, ոչինչ չունեին»:

Լուսանկարը՝ Լեւոն Գևորգի

երբ քառասուն Հայեր քնած էին իմ այգում կամ թաքնված էին Հյուպատոսարանի տարբեր անկյուններում, իսկ տեղերում մնացած Հազարավոր ուրիշներ, տարբեր գաղտնարաններում դողում էին վախից, մտածում, թե ե՞րբ իրենց կգտնեն, դեպի աքսոր, դեպի մահ կուղարկեն, ոստիկանապետն ու ես, իմ աշխատասենյակում նստած, մինչեւ գիշերվա ժամը 2-ը բանակցեցինք: Նա նախ եւ առաջ ուզում էր, որ իմ նամակում խոսեմ ումբերի ու զենքի մասին, որոնք ոստիկանությունը Հայտարարում էր, թե գտել է Հայերի մոտ, Հիշատակեմ մի քանի դեպքեր, որոնց ընթացքում Հայերը փորձել էին դիմադրել կամ վնասել թուրք սպաներին, որից հետո կարող էի ավելացնել, որ դեռեւս չաքսորվածները խոռվությունների չեն մասնակցել:

Ես պատասխանեցի, որ իմ խնդրանքը գրավոր ներկայացնելը անպատեհ չեմ համարում, բայց չեմ կարծում, որ իրավասու եմ կարծիք Հայտնել այնպիսի իրադարձությունների կապակցությունը, որոնց վերաբերյալ անձնական տվյալներ չունեմ: Երբ բանը դրան հասավ, ոստիկանապետը հրաժարվեց մյուս ասածներից, բայց պնդեց անպայման նշել, որ հանցագործ Հայերն աքսորված են, մնացողները անմեղ են: Նա երկար համառում էր՝ խոստանալով, որ եթե համաձայնեմ հանդես գալ նման Հայտարարությունը, իսկույն կկասեցնի առաջիկա տեղահանությունը, չնայած, իր ասելով, Հայերի դեմ ավելի քան երբեք խիստ պատժամիջոցներ գործադրելու նոր հրաման էր ստացվել, եւ ինքն արդեն կարգադրել էր բռնագաղթը հաջորդ օրն իսկ վերսկսել:

Մյուզիլը շեշտում էր, որ իրենց ուզածը եթե գրեմ, բազմաթիվ կյանքեր կփրկեմ: Նա այնքան կրկնեց իր պահանջի կարեւորությունը, այնպիսի համառությունը պնդեց, որ բացահայտեց ապաշնորհ դիվանագետ լինելը: Ակնհայտ դարձավ, որ ինձնից նման Հայտարարությունն ամեն զնով ձեռք բերելու խիստ հանձնարարություն է ստացել, ընդ որում

դիտավորությունն այնքան թափանցիկ էր, որ ես իսկույն եւեթ հասկացա, թե ինչպիսի անխոհեմություն կլինեք նման Հայտարարություն անելը, թուրքերին չահարկումների առիթ տալը: Ի հեճուկս ոստիկանապետի՝ մնացած Հայերին տեղերում թողնելու խոստումներին, որոնց չէի հավատում, ես ստիպված էի ստանձնել նրան մերժելու պատասխանատվությունը եւ վստահ եմ, որ եթե մինչեւ անգամ գիշերի, հետեւանքը նույնն էր լինելու:

Մի քանի շաբաթ ավելի ուշ մյուզիլը ինձ առաջարկեց պետական դեպարտամենտ Հաղորդագրություն ուղարկել, նկարագրել Հայերի օրինազանցությունները, որոնցից մի քանիսը ցանկացել էր, որ Հիշատակեմ վալիին հղվելիք նամակում: Ես ասացի, որ դա կարող եմ անել: Նա խոստացավ նման փաստերի ցանկ պատրաստել տալ ու տրամադրել ինձ եւ, իրոք, չնայած որոշ ուշացումով, նյութեր ուղարկեց, որպեսզի վերջին մի քանի դեպքերին էլ անդրադառնամ, փաստաթուղթը հնարավորին չափ ազդեցիկ դարձնեմ: Իհարկե, եթե խոսքն ավելի անլուրջ խնդրի վերաբերել, Հայերի տառապանքի պատասխանատվությունը Հայերի վրա բարդելու նման ճիգերը ծիծաղելի կթվային: Իսկապես, նահանգի 150000 Հայ ազգաբնակչությանը արտաքսելու, մեծ մասին բնաջնջելու փաստին Հայերի՝ թուրք սպանելու կամ վիրավորելու չորս թե հինգ դեպք, դիմադրություն տասը-տասներկու փորձ էր Հիշատակված⁴⁹: Նշված էր, օրինակ, մի երիտասարդի՝ Սեդրակ Զուլումյանի մասին, ում Հապուսի գյուղի մոտ, փախչելու ժամանակ զինվոր-ոստիկանները չըջապատել էին, մեկին ամերիկյան միսիոներուհու տված ատրճանակով սպանել էր: Մյուս զինվոր-ոստիկանները տեղնուտեղը գնդակահարել էին նրան: Երիտասարդը աշխատում էր մեր Հիվանդանոցում, բայց իշխանություններին չեմ կարծում Հայտնի դարձած լինել, թե որտեղից էր զենք ձեռք բերել: Ներկայացված էր նաեւ թուրք ոստիկան-

ներին մարմնական վնասվածք հասցնելու երկու-երեք փաստ, իսկ սպանվածների թիվը հազիվ թե մեկ-երկուսից անցներ: Դիմադրություն առանձին փորձեր էլ էին եղել: Մորենիկի հարեւան գյուղում մի խումբ տղամարդիկ թաքնվել էին նկուղներում, չէին ուզել հանձնվել զինվոր-նստիկաններին: Այդ պատճառով վերջիններս գյուղը հրդեհել էին, ու ծուխը տղամարդկանց ստիպել էր թաքստոցներից դուրս գալ: Ամենանշանակալին, ինչ խոսք, բանտի հրկիզումն էր, որը օգոստոսի 5-ին, առավոտյան տեղի ունեցավ: Ջերբակաված հայերը, քանի որ գրեթե վստահ էին, որ իրենց սպանելու են, հրդեհել էին բանտը, փախչելու փորձ կատարել: Նրանց մի մասը ողջակիզվեց բանտախցերում, մնացածին հակիչ-պահապանները ներքին բակում գնդակահարեցին: Ոչ ոք չկարողացավ ազատվել: Ես մյուզիկի ինձ հանձնած նյութերի թարգմանությունն ուղարկեցի դեսպանատուն եւ պետական դեպարտամենտ, ձեպագրերում բացատրեցի, որ նրա պահանջով եմ դա անում: Կարծում եմ այդ ձեպագրերը տեղ հասել են:

Օգոստոսի սկզբին իմացանք, որ Դիարբեքիրում վախճանվել է պատվելի Ջորջ Պ. Կնապը: Նա Թուրքիայում ծնված ամերիկյան միսիոներ էր, վերջերս ծառայություն էր անցել Բիթլիսում: Տեղի իշխանությունները նրան հայերին առնչվող մի շարք մեղադրանքներ էին ներկայացրել, հունիսի վերջերին, մի կեսգիշեր զինվոր-նստիկանների խիստ հսկողությամբ փոխադրել էին Դիարբեքիր: Միստր Կնապը տեղ էր հասել, մի քանի օր անց մահացել, որի պատճառը ժանտատենդին վերագրվեց: Ես երկար ժամանակ զբաղվեցի այդ գործով, անձամբ զրուցեցի այնպիսի մարդկանց հետ, որոնք կարող էին մանրամասներ հայտնել: Նման անձանցից էին Կնապին Բիթլիսից Դիարբեքիր փոխադրած սպան, ճանապարհորդությունը մասնակցած Գեղամ անունով մի հայ երիտասարդ եւ թուրք բժիշկ Ալի Քեմալ բեյը, որն

զբաղվել էր հիվանդով: Հարկ եմ համարում հիշատակել նաեւ մի դեռատի հայուհու՝ Մարիամ Բաղդասարյանին, որը եփրատ քոլեջն էր ավարտել եւ դոկտոր Սմիթի հետ Դիարբեքիրում աշխատանքի անցնելուց առաջ, որոշ ժամանակ, բուժքույր էր եղել Մամուրեթ-ու-Ազիզի ամերիկյան հիվանդանոցում: Նա բոլորովին վերջերս ամուսնացել էր դոկտոր Ալի Քեմալ բեյի հետ՝ պատվելի Կնապի մահից մի քանի շաբաթ անց ամուսնու ուղեկցությամբ Ռարբերդ եկավ: Այս տարրեր անձանց հետ իմ ունեցած զրույցների եզրակացությունը շարադրել եմ մեր միսիոների մահվանն առնչվող իմ զեկուցագրում, ուղարկել պետական դեպարտամենտ: Բոլորն ասում էին, որ պարոն Կնապը, իրոք, հիվանդ է եղել, ըստ բժշկի վախճանվել է ժանտատենդից, բայց ինչպես նշել եմ իմ զեկուցագրում, վերջինիս բացատրությունները խիստ հակասական էին: Չափազանց կասկածելի է թվում, որ մահվան պատճառը հիվանդությունը լինի, չնայած ըստ երեւույթին իրականությունը բացահայտելու ոչ մի միջոց չկա, եթե, իհարկե, պատերազմից հետո դոկտոր Ալի Քեմալ բեյը չցանկանա ճշմարտությունը խոստովանել (հասկանալի է, խոստովանելու բան ունենալու դեպքում): Հնարավոր է նաեւ, որ որոշ ժամանակ անց բժշկի կինը կարողանա տեղեկություններ հայթայթել: Հակառակ դեպքում հավանաբար երբեք էլ չի պարզաբանվի՝ պատվելին ժանտատենդից է մահացել, թե՞ նրան թունավորել են⁶⁰: Ավելի ուշ ես կարողացա ձեռք բերել միստր Կնապի այն իրերը, որոնք հետո Դիարբեքիր էր տարել եւ պահեցի, մինչեւ միսիս Կնապը, որը Միացյալ Նահանգներում էր գտնվում, թելադրեց Ռարբերդի ամերիկյան միսիոներներին հանձնել: Ես, զրամեքենայից բացի, մնացածը փոխանցեցի, որովհետեւ տիկինը խնդրել էր մինչեւ իրենից լրացուցիչ հանձնարարություն ստանալը ինձ մոտ պահել: Քանի որ դրանից հետո ոչ մի հանձնարարություն էլ չստացա, երբ ինձ Ռարբերդից հե-

ուանալու հրահանգ տրվեց գրամեքենան նույնպես այն մի-
սիոներներին ուղարկեցի, ովքեր մնալու մտադրություն ու-
նեին: Վերադառնալու ժամանակ նրանք գրամեքենան
իրենց մյուս իրերի հետ բերեցին:

1915-ի ամբողջ ամռան ընթացքում, մերթընդմերթ,
Պարբերդ էին հասնում տարազիրների նորանոր քարավան-
ներ, որոնք հաճախ կազմված էին լինում մի քանի հազար
հոգուց: Առաջիններից մեկը, որը տեղ հասավ հուլիսին,
կանգ առավ քաղաքի ծայրամասի ընդարձակ դաշտավայ-
րում, բարկ արելի տակ: Բոլորը ցնցոտիներով էին, ոմանք
գրեթե մերկ: Գաղթականները հյուծված էին, տանջված,
հիվանդ, կեղտոտ, ամբողջովին ոջլոտ, ավելի շատ վայրի
զազանի, քան մարդկային էակների էին նման: Ծաբաթներ
չարունակ նրանց հոտի պես քշել էին, գրեթե չէին սնել, մեծ
մասը, բացի մերկությունը ծածկող քուրջերից, ոչինչ չուներ:
Երբ իշխանությունների հատկացրած խղճուկ ուտելիքը
բաշխվեց, պահապաններն ստիպված եղան թշվառ սովալ-
լուկներին մահակներով հետ վանել: Նրանց մեջ տղամարդ
քիչ կար, մեծ մասին ղեռուս Պարբերդ հասնելուց առաջ քր-
ղերը կոտորել էին: Կին ու երեխա էլ էր շատ սպանվել,
ոմանք հիվանդություններից ու անտանելի տանջանքներից
էին ճանապարհին մահացել: Չնչին մասն էր Պարբերդ հա-
սել, նրանք էլ շուտով մահացան: Հենց որեւէ այցելու էր մտ-
նում ճամբար, մայրերը մեկնում էին զավակներին, խնդրում
տանել, տիրություն անել կամ փորձում էին վաճառել մի
քանի պիաստրով (պիաստրը մոտավորապես 4 սենթի է
հավասար): Բազմաթիվ սպաներ, այլեւայլ թուրքեր իրենց
բժիշկների ուղեկցությամբ շրջում էին գաղթականում,
որպեսզի ամենագեղեցիկ աղջիկներին նախքան ընտրելը
քննել տան:

Ավելի ուշ ես Սիրանույշ Հողկրոդյան անունով մոտ
տասներկու-տասներեք տարեկան մի ղեռատի աղջկա օգ-

նելու առիթ ունեցա, որը Երզնկայի քարավանով էր եկել:
Նրա հորեղբայրը՝ միստր Հրահատ Հողկրոդյանը, Նյու Յորք-
քում էր գտնվում, պետական ղեպարտամենտի ու ղեսպա-
նատան միջոցով ինձ ուղարկված նամակով խնդրել էր հո-
վանավորել աղջնակին, խոստացել նրա անունով գումար
առաքել: Երկար որոնումներից հետո իմ դավազները գտան
նրան: Սիրանույշը կենակցում էր մի թուրք սպայի հետ: Նա
եկավ հյուպատոսարան, խնդրեց հորեղբորը տեղեկացնել,
որ շատ լավ է զգում իրեն, դրամի կարիք չունի: Սիրանույշը
տարիքից մեծ էր թվում, բավական գեղեցիկ էր, բայց ղեմ-
քին արդեն նկատվում էին ապրած կյանքի հետքերը: Չնա-
յած փոքր տարիքին, մեզ թվաց նույնիսկ, որ հղի է եւ, իրոք,
մեկ-երկու ամիս անց ծննդաբերեց: Ես նրա մասին հորեղբո-
րը Նյու Յորք տեղեկություններ հաղորդեցի, բայց կարծում
եմ իմ նամակը տեղ չի հասել, եւ լավը, ըստ երեւույթին, հենց
դա էր: Սա մեկն էր այն հազարավոր ղեպերից, որ տեղի
էին ունենում նման իրավիճակներում, ու միսիոները կամ
այլազգի ներկայացուցիչը այդ դժբախտներին օգնելու հա-
մար որեւէ բան անել չէր կարող:

Պարբերդ հասած քարավանները մի քանի օր մնում, հե-
տո ստիպված էին լինում անհայտ ուղղությամբ շարունակել
ճանապարհը: Ու ամեն անգամ, երբ հեռանում էին, բազմա-
թիվ բռնագաղթածներ մնում էին տեղում, որովհետեւ
մյուսների հետ ճամփա ընկնելու համար չափազանց հի-
վանդ կամ թույլ էին լինում: Ամենասահմակեցուցիչը, որին
ականատես եմ եղել երբեւէ, որը գերազանցում է նույնիսկ
Դանթեի նկարագրած դժոխքը,⁵¹ նրանց վիճակն էր, ովքեր
քարավանի մեծ մասի շարժելուց հետո մնացել էին առա-
ջին մեծ ճամբարում: Ես այդ մարդկանց առաջին անգամ
երեկոյան, մթնշաղին տեսա: Գաղթականը լցված էր
հարյուրավոր մեռյալներով ու մեռնողներով, մեծ մասը ծա-
ռերի տակ կամ հենց հողին էր պառկած: Հսկողությունն

ապահովում էին մեկ թե երկու զինվոր-ուստիկան, որոնք ինձ չարգելեցին ներս մտնել: Ճիշտ ճանապարհի մեջտեղում, մեջքի վրա ընկած էր միջին տարիքի տղամարդու դիակ, որը նոր էր մեռել, թերեւս՝ սպանվել: Այստեղ-այնտեղ կանանց, երեխաների բազմաթիվ դիակներ, ամեն քայլափոխի հիվանդներ ու մահամերձներ կային: Մերունինները տեղներից չէին շարժվում, անհասկանալի ինչ-որ բան էին մրմնջում: Գզգզված մազերով, փոս ընկած աչքերով կանայք նստել-քարացել էին, ցավագարների պես, պաղ Հայացքներով, պարապուծյանն էին նայում: Նրանցից մեկը, որի Հուշն անգամ մինչեւ Հիմա ինձ Հանգիստ չի տալիս, այնքան էր նիհար, մաշկն այնպես էր դեմքին ձգված, որ գլուխը գանգ էր թվում: Մյուսները Համակվել էին մահամերձի ջղազարուծյամբ: Ուռած փորով երեխաները ընկղմվել էին աղտեղության մեջ, ոմանք ներքին ջղակծկումներից ցնցվում էին:

Այդ թշվառներին այլեւս անհնար էր որեւէ կերպ օգնել: Մի քանի քայլ հեռու մի երկար փոս էր փորված, ուր զինվոր-ուստիկաններն ամեն օր նետում էին մահացածներին կամ ում մահացած էին Համարում: Իսկ նրանց, ովքեր դեռեւս ի վիճակի էին աշխատել, ստիպում էին շարունակել փոսը: 1915-ի ամռանն այդ դաշտում Հարյուրավոր Հայեր թաղվեցին: Այժմ ըստ երեւույթին այդ ամենի հետքն էլ չկա, բայց ամեն անգամ, երբ ես հիշում եմ անցյալը, Հայացքիս առջև վերակենդանանում են դժոխային տեսարանները, որոնց ականատես եղա Հայերի «վերաբնակեցման» ժամանակ:

Որոշ քարավաններ, որոնք այդ ամառ, ավելի ուշ Պարբերդ Հասան, կանգ առան Պուլազյուղի մերձակայքում, Մամուրեթ-ուլ-Ազիզից մոտ ժամուկես հեռավորության վրա: Ես երկու թե երեք անգամ գնացի, զրուցեցի որոշ աքսորականների հետ: Շատերը տարագրվել էին էրզրումից, բայց իրենց նախորդների նման ճանապարհին ոչ թալանվել

էին, ոչ հարձակման ենթարկվել: Քարավանում նույնիսկ մեծ քանակությամբ տղամարդիկ կային: Նրանք ինձ պատմեցին, որ զինվոր-ուստիկանները լավ են վերաբերվել իրենց, եւ չնայած ոմանք ճանապարհին մահացել, ոմանք էլ հիվանդացել, հյուծվել են, Հույս ունեն խույս տալ մյուս տարագիրների ճակատագրից: Բայց չէ՞ որ նրանք արդեն Թուրքիայի «Սպանդի նահանգում» էին, մի քանի շաբաթ էլ անցավ, ես քսան մղոն հեռու տեսա նրանց՝ մեկը մյուսի վրա դարսված դիակները: Պուլազյուղից դուրս գալուց մեկ թե երկու օր անց բոլորին կոտորել էին: Նրանք, ովքեր չափազանց թույլ էին եղել, չէին կարողացել քարավանի հետ ճամփա ընկնել, մահացել էին ճամբարում, ոսկորները երեւում էին փոսերը հազիվ ծածկող հողի բարակ շերտի տակից:


Ամռան վերջին Հասած քարավանները տարան Հայկական մեծ գերեզմանոցը, որը գրեթե Մամուրեթ-ուլ-Ազիզ քաղաքի տարածքում էր գտնվում: Աքսորականները խիստ հսկողութան տակ էին, բայց ես առանց դժվարութան այցելութան գնացի:

Այդ դժբախտների Համար շատ հարմար տեղ էին ընտրել՝ ինքս ինձ անընդհատ հարցնում էի, թե ինչպես իշխանութուններն ավելի շուտ չեն մտածել նույնն անել: Գերեզմանոցը շրջապատված էր բարձր պարսպապատով, միջից առու էր անցնում, այնպես որ ներսում գտնվողները ծարավից չէին մեռի: Ամեն օր սայլերով վատորակ հաց էին բերում, չպրտում նրանց: Գերեզմանոցի ծայրամասում մի խոր փոս էր փորված, ուր մերթընդմերթ նետում էին մեռածներին: Տեսարանը ոչնչով չէր տարբերվում ամառվա ընթացքում Պարբերդ Հասած մյուս տարագիրների մասին իմ պատմածներից: Յուրաքանչյուր քարավան մնում էր մի քանի օր, ապա մահամերձներին լքելով, ճանապարհը շարունակում: Հեռացողները տասը-տասներկու դիակ անպայ-

ման թողնում էին: Հանրային փոսը նրանց էր սպասում, ինչպես սպասում էր նրանց, ովքեր դեռևս ողջ էին: Չնայած ես բոլոր գաղթականները պարբերաբար այցելում էի, բայց ամբողջ ամառվա ընթացքում աշխատում էի քաղաքից շատ չհեռանալ, ամիսներ շարունակ հյուպատոսարանից ելնելիս գրպանս ատրճանակ էի դնում: Ոստիկանութ- յունից հաճախ խորհուրդ էին տալիս փողոց դուրս չգալ, մանավանդ՝ սկզբնական շրջանում ոչ մի դավազ չունեի, որ ինձ ուղեկցեր: Ամենուր զինվոր-ոստիկաններ, չեթեններ, քր- դեր էին վիստում: Քաղաքում շրջելիս ես հաճախ էի հանդի- պում նրանց: Քրդերը գրեթե միշտ տապարով էին, որը նրանց սովորական զենքն էր: Ժամանակ առ ժամանակ քա- ղաքի շուրջը քրդերի ու չեթենների վրաններ էլ էի տեսնում, մի պահ մեզ նույնիսկ թվաց, թե ուր որ է նրանց բաց կթող- նեն մնացած հայերի վրա, որ բոլորին կոտորեն: Բարեբախ- տաբար նման բան տեղի չունեցավ:

Երբ իրավիճակը փոքր-ինչ հանդարտվեց, Գրիգոր Մա- ղաքյանը, ում մասին արդեն պատմել եմ, ցանկություն հայտնեց ձիով հայրենի Բաղմաչեն գնալ, վիճակը տեսնել: Քանի որ մենակ չէր կարող ճանապարհորդել, բացի գրանից ես ու բժիշկ Ատկինսոնն էլ էինք ուզում այդ գյուղն այցելել, միացանք նրան: Մենք ընտրեցինք այն ուղին, որը Գրիգորի հետ անցել էինք երկու ամիս առաջ: Մի մղոն կտրելուց հե- տո մի մարդու նկատեցինք, որը ճանապարհից ոչ հեռու, թփի տակ, աղբյուրի եզրի հողն էր քանդում: Մոտեցանք: Զինվոր-ոստիկան էր, երկու ոչ խոր գերեզման էր փորում: Նրա մոտ քիչ ավելի հեռու մի ուրիշ կնոջ դիակ կար: Զրի մոտ, երեսան կողքին, երրորդ կինն էր մահանում: Գրիգորը մտածել էր, որ կարող է քաղցած մարդու հանդիպել, հետը հաց էր վերցրել: Մեկնեց կնոջը, բայց նա դրա կարիքն այ- լևես չունեւ, ճչաց, որ մեռնել է ուզում: Հետո ես շատ անգամ եմ անցել այդտեղից, ավազի վրա տեսել կանանց գանգերը:

... Թողնալով սովորական իր փոքր-փոքր բնակարանը և հայրենի տունը, ունեցող Հայկական գյուղ էր, տեսն տեղից դու- րս մեկը գտնվում էր Ամերիկայում: Այժմ Բաղմաչեում էր- կա ընտանիք էր մնացել, որոնց մտայն էին, որպեսզի այժմ...



«Ճիշտ ճանապարհի մեջտեղում, մեջքի վրա ընկած էր միջին տարիքի տղամարդու դիակ, որը նոր էր մեռել, թերևս՝ սպանվել»: Լուսանկարը՝ Լեսլի Գեիսի

Տե՛ս ինչպե՛ս էին ձանձուրումն փոստը նրանց էր ստանում
ինչպե՛ս ստանում էր նրանց, ո՛րքե՛ր դեռե՛ւս ոչ էին Մայան
եւ բոլոր գաղթականները ստորերտարտ սպանում էին
բոլոր ամբողջ ամառնա ընթացքում աշխատում էր բողոս

Մի փոքր զրուցեցինք նրանց հետ, բռնեցինք վերադարձի ու
դին: Բայց կես ճանապարհին որոշեցինք հարեւան Սուլազ-
յուղն էլ այցելել, որը հիմնական ուղուց մի մղոն էր հեռու:
Այն նույնպես ժամանակին միմիայն հայերով էր բնակեց-
ված, մոտավորապես Բազմաշենի մեծութունն ուներ: Մենք
անցանք անմարդ փողոցներով, որոնք լցված էին աղտե-
ղությամբ, պատուհաններից շարտված հնոտիքով: Այդ
գյուղն էլ էին քարուքանդ արել՝ բացի հինգ-վեց հոգուց,
մնացածին արտոնել էին, նրանցից էլ շատ քչերի մասին հե-
տագայում լուր եկավ: Ես հաջորդ շաբաթ դարձյալ գնացի
Սուլազյուղ եւ ինչպես արդեն նշել եմ, այլ տեղերից բերված
գաղթականների տեսա: Մի երկու շաբաթ անց էլ դոկտոր
Ատկինսոնի հետ Սուլազյուղ հասանք, որպեսզի փնտրենք
երեք կույր ծերունու: Բժիշկը լսել էր, որ նրանց ընտանիքնե-
րին տարագրել են, իրենք ավերակների մեջ են մնացել:
Երեքն էլ ժամանակին եղել էին հարգված անձնավորութ-
յուններ, այժմ մուրացիկի վիճակի էին հասել: Կույրերին
մենք ավանակներով Մամուրեթ-ուլ-Ազիզ բերեցինք, որ-

Տե՛ս ինչպե՛ս էին ձանձուրումն փոստը նրանց էր ստանում
ինչպե՛ս ստանում էր նրանց, ո՛րքե՛ր դեռե՛ւս ոչ էին Մայան
եւ բոլոր գաղթականները ստորերտարտ սպանում էին
բոլոր ամբողջ ամառնա ընթացքում աշխատում էր բողոս

Մի փոքր զրուցեցինք նրանց հետ, բռնեցինք վերադարձի ու
դին: Բայց կես ճանապարհին որոշեցինք հարեւան Սուլազ-
յուղն էլ այցելել, որը հիմնական ուղուց մի մղոն էր հեռու:
Այն նույնպես ժամանակին միմիայն հայերով էր բնակեց-
ված, մոտավորապես Բազմաշենի մեծութունն ուներ: Մենք
անցանք անմարդ փողոցներով, որոնք լցված էին աղտե-
ղությամբ, պատուհաններից շարտված հնոտիքով: Այդ
գյուղն էլ էին քարուքանդ արել՝ բացի հինգ-վեց հոգուց,
մնացածին արտոնել էին, նրանցից էլ շատ քչերի մասին հե-
տագայում լուր եկավ: Ես հաջորդ շաբաթ դարձյալ գնացի
Սուլազյուղ եւ ինչպես արդեն նշել եմ, այլ տեղերից բերված
գաղթականների տեսա: Մի երկու շաբաթ անց էլ դոկտոր
Ատկինսոնի հետ Սուլազյուղ հասանք, որպեսզի փնտրենք
երեք կույր ծերունու: Բժիշկը լսել էր, որ նրանց ընտանիքնե-
րին տարագրել են, իրենք ավերակների մեջ են մնացել:
Երեքն էլ ժամանակին եղել էին հարգված անձնավորութ-
յուններ, այժմ մուրացիկի վիճակի էին հասել: Կույրերին
մենք ավանակներով Մամուրեթ-ուլ-Ազիզ բերեցինք, որ-

տեղ ամերիկյան միսիոներները մինչեւ այժմ խնամում են նրանց:

Հաջորդ շաբաթների ընթացքում ես այնպիսի գյուղեր այցելեցի, որոնց բոլոր բնակիչները Հայեր էին եղել, նաև այնպիսի գյուղեր, որոնք մասամբ էին Հայերով բնակեցվել: Բոլոր գուտ Հայկական գյուղերը, ինչպես Բազմաշենն ու Խուլագյուղը, անմարդաբնակ ու ավերակ էին, խառը գյուղերում միայն Հայերի տներն էին դատարկ: Ամենուր հուսահատեցնող ամայություն էր, տները փլուզվում եւ նույնիսկ քրիստոնեական եկեղեցիները, որոնք կառուցվել էին խոշոր գումարներով, զգալի զոհողություններով, ավերակույտերի էին վերածվում: Եղեգիի մոտակա գյուղի եկեղեցու մեծ զանգակը, որը Միացյալ Նահանգներից Խարբերդի ամերիկյան Հյուպատոսության ջանքերով էր ձեռք բերվել, թաղվել էր գավիթի փլատակների տակ: Կրոնական մուլագարությամբ համակված մահմեդականները, թվում էր որոշել են բնաջնջել ոչ միայն քրիստոնյա աղագրնակչությունը, այլև վերացնել հավատի հետքերը, այն ամենը, ինչ քաղաքակրթությամբ էր ստեղծվել: Տխուր էր ավերների ու ավերակների այս ընդհանուր պատկերը: Նման տեսարանների ես անընդհատ ականատես եմ եղել Հաջորդ տասնութ ամիսների ընթացքում, երբ այցելել եմ մարդաթափ եղած, դատարկված տներով գյուղերը, որտեղից ժամանակին որքան շատ ամուսիններ ու որդիներ էին մեկնել Ամերիկա եւ այժմ այնտեղ տեղյակ էլ չէին, թե ինչ ճակատագիր է բաժին ընկել իրենց հարազատներին:

Իմ շրջագայած գյուղերից կարելի է հիշատակել Հուսեյնիկը, Մորենիկը, Խարպուտ սերայը, Վերին Մեզիրեն, Քեսիրիկը, Եղեգին, Սուրսուրին, Սուրսուրիի վանքը, Թաղեմը, Խուլուս, Շենթիլը, Կարմրին, Գեղվանքը, Գայլուն, Վարդաթիլը, Փերչենճը, Երզնանկը, Մորեյը, Գոմքը, Հողը, Հապուսին, Հնձվորը, Հին Ագարակը, Չորգեղը, Վիզիանը, Քե-

որեն, Հակոբ Մեզիրեն, Ծառուկը, Հարսեկը եւ Բերդակը: Կրկնություն կլինեի Հանգամանորեն նկարագրել յուրաքանչյուրը, իրավիճակը գրեթե ամենուր նույնն էր: Գյուղերի մեծ մասում ես մի քանի անգամ եմ եղել՝ պետական դեպարտամենտը եւ դեսպանատունն ինձնից հազարավոր բնակիչների վերաբերյալ տեղեկություններ էին պահանջում: Իհարկե, բոլորն էլ գիտեին ձեռք տարածաշրջանում շրջագայելու իմ սովորությունը, աշնանային մի օր մյուզիկը իր գրասենյակն էր կանչել հաճախ ինձ ուղեկցող մի երիտասարդի ու հանդիմանել Հյուպատոսի հետ Հայկական բնակավայրեր այցելելու համար, պահանջել էր նման բան այլևս չանել, քանի որ ըստ իրեն, չէր կարելի անել: Ուղեկիցս ինձ իսկույն ելեթ տեղեկացրեց այդ նախազգուշացման մասին, բայց ես հաշվի չառա:

Իմ ուղեւորություններից ամենահետաքրքիրները նրանք էին, որոնք ինձ մինչեւ Գյուլջուկ լիճը հասցրին, որը Մամուրեթ-ուլ-Ազիզ քաղաքից մոտ հինգ ժամ է հեռու: Ես ուզում էի պարզել տարագրվողների հետագա ճակատագիրը, քանի որ ոմանք ասում էին, որ մեծ մասին կոտորել են քաղաքից ոչ շատ հեռու, սակայն ինքս ձեռքով բազմաթիվ անգամներ շրջագայել, որեւէ հետք չէի գտել: Ի վերջո մի թուրք գաղտնի Հայտնեց, որ ինքը Գյուլջուկ լճի շուրջը հազարավոր դիակներ է տեսել, առաջարկեց տանել այդ տեղերը, ցույց տալ: Սեպտեմբերի վերջերին, մի առավոտ ժամը 4-ին մենք ճամփա ընկանք ու, ձգտելով աննկատ մնալ, շարժվեցինք Դիարբեքի ուղղությամբ: Դիակներ կային նույնիսկ քաղաքի շրջակայքում՝ ճանապարհի ամբողջ երկարությամբ, ընդ որում ոչ թե թաղված, այլ ուղղակի ծածկված էին հողի բարակ շերտով՝ զինվոր-ոստիկանները դա ավելի հեշտ էին համարել, քան գերեզման փորելը: Ահա թե ինչու հաճախ գետնի տակից ցցված թեւեր, ոտքեր ու գլուխներ էին նշմարվում: Որոշ դիակներ չներ մասամբ հողոտել էին: Մու-

լաքեոյում մենք թողեցինք ճանապարհն ու մի դաշտի միջով դեպի լիճ թեքվեցինք: Դաշտը լցված էր հարյուրավոր՝ հիմնականում կանանց, երեխաների դիակներով: Ակնհայտ էր, որ նրանց սպանել էին՝ այդքան տարագիր հազիվ թե հիվանդութունից կամ հյուծվածութունից մահացած լինեք: Մեռելները Քյուրդեմլիք անունով հայտնի քրդական գյուղի մոտ էին, ավելի ուշ ես իմացա, որ այդ հայերի մեծ մասին տեղի քրդերն են կոտորել: Խույլուցի մի կին նկարագրեց սպանողը: Նրան համազուգահեռների հետ Քյուրդեմլիք էին քչել, որտեղ եւ աչքով տեսել էր ամեն ինչ, քանի որ քրդերն իրեն խփել ու մահացած կարծելով, թողել-գնացել էին: Կինը մի քանի ժամ մնացել էր մեռելների մեջ, գիշերը վեր էր կացել, փախել: Հետագայում ես նրան մի քիչ փող տվի, որ գաղտնի Ռուսաստան անցնի, այժմ նա այնտեղ է, անվտանգ ապրում է: Այդ նախնիների մասին տրապիզոնցի մի դեռատի կին էլ ինձ պատմեց: Նրա մորն ու եղբորը քրդերը սպանել էին, իրեն Մեհմեդ աղա անունով մեկը վերցրել, ամիսներ շարունակ պահել էր Քյուրդեմլիքում: Ի վերջո հայ կինը կարողացել էր փախչել, հասնել Մամուրեթ-ուլ-Ազիզ:

Մեր տեսած դիակների որոշ մասը ողջակիզված էր: Սկզբում ես կարծում էի, որ առողջապահական նպատակներով է դա արվել, չնայած քրդերը նման բաների մասին հազվադեպ են մտածում, բայց հետո ինձ բացատրեցին, որ նրանք զոհին այրում են, որպեսզի եթե ոսկի կուլ տված լինի, գտնեն⁵²: Հետագայում նույն պատճառով ողջակիզված շատ դիակներ տեսա եւ իմացա, որ, տարագիրները, իրոք, հաճախ են իրենց ոսկեղրամները կուլ տալիս, թաքցնում, հուսալով, որ հարձակման ենթարկվելու դեպքում կփրկեն:

Քրդական գյուղը թողնելուց հետո մենք մի քարքարոտ լեռ մագլցեցինք, հետո մինչեւ Գյոլջուկ ձգվող հովիտն իջանք: Լճի ափին իմ նախորդներն ու ամերիկյան միսիոներները սովորություն են ունեցել ամեն ամառ վրան խփել:

Ավելորդ է ասել, որ Խարբերդում անցկացրած երեք տարիների ընթացքում ես նման հանգստի հնարավորություն չունեցա: Ճիշտ լճափին՝ այնտեղ, որտեղ ամռանը վրաններ էին խփել, երկու դիակ էր ընկած:

Մենք թեքվեցինք դեպի հյուսիս եւ մոտ երկու ժամ քայլեցինք լճի ափով: Մեր անցած ճանապարհին Գյոլջուկը հիմնականում եզերված էր ուղղաձիգ քարաժայռերով, որոնք հաճախ խորունկ հովիտներով էին ընդմիջվում: Շատ-շատերի հատակին դիակներ նկատեցինք: Խարակներ ըր բարձունքից լճի մեջ նույնիսկ հարյուրավոր աճյուններ ու ոսկրակույտներ էին երևում: Լուրեր էին պտտվում, որ բազմաթիվ աքսորյալների գինվոր-ոստիկանները հասցրել են այս նույն տեղը, ժայռերի բարձունքից ցած նետել, ջախջախել: Մեր տեսածները հաստատում էին այդ խոսակցությունները: Որոշ հովիտներում հազիվ երկու-երեք, մյուսներում հազարից ավելի աճյուն էր երևում: Առաջին իսկ զոհերից մեկը, ում մոտեցանք, սպիտակամորուս ծերունի էր, որի գանգը քարով փշրել, քարը թողել էին վերքի մեջ: Քիչ այն կողմ վեց թե ութ՝ ածխացած դիակներ տեսանք, որոնց որոշ ոսկորներն ու հագուստի ծվենները միայն չէին այրվել, ինչ-որ ֆես կարմիր բծի նման ընկել էր մի կողմ: Երևում էին նաեւ ջարդված գլուխներ, կմախքի ոսկորներ, որոնք ամենաերկարն են դիմանում: Այն ծառից քսան քայլ հեռու, որի տակ մոխրակույտներ կային, հողը մզացել էր: Մենք ավելի ուշադիր նայեցինք եւ պարզեցինք, որ արյուն է, ըստ երևույթին երկու-երեք շաբաթ առաջ է հոսել: Ծառի բնին փամփուշտի բազմաթիվ հետքեր էին մնացել, որը նշանակում է, որ մարդկանց, ում այրված աճյունները մենք տեսել էինք, ամենայն հավանականությամբ նախ կանգնեցրել էին ծառի տակ, գնդակահարել:

Քիչ անց մտանք մի ուրիշ հովիտ, որտեղ նույնպես հարյուրավոր դիակներ կային: Նրանց առկայությունը դեռեւս

տեսնելուց առաջ զգացինք: Ժայռոտ բարձունքից ցած իջ-
նելիս առաջինը մեր աչքին՝ Հենց լճափին, ավազի տակից
ցցված քսան, թե երեսուն գլուխների շարքն ընկավ: Այո,
դիակների միայն գլուխներն էին երեւում՝ զարհուրելի տե-
սարան էր: Ամենայն հավանականութեամբ նրանք պետք է,
որ թաղված լինեին, եւ ավելի ուշ ես իմացա, որ դա իրոք
այդպես էր: Բայց զինվոր-նաստիկանները զուտ թուրքական
անփութութեամբ զոհերին լճին շատ մոտ էին հողին հանձ-
նել, որովհետեւ ավազը փորելն անհամեմատ հեշտ է: Հե-
տագայում սակայն այլքները, քամին ավազը քշել, տարել
էին, մարդկային գլուխները ասպարեզ հանել: Ուրիշ շատ
դիակներ էլ կուտակել էին խարակների տակ, ժայռերի շուր-
ջը, որոնք հետագայում տարտղնվել էին լճի վրա կամ ցա-
մաքում: Հովիտով բարձրանալիս անգամ մեր երկու կողմե-
րում բազմաթիվ մեռելներ նշմարեցինք: Հովիտի մեջտեղում
զաճած ծառեր, մացառներ եւ վայրի խաղողի մի որթա-
տունկ կար: Իմ թուրք ուղեկիցն ինձ կանչեց, խնդրեց ուշա-
դիր նայել: Ծառերի տակ տասը-տասնհինգ դիակներ էին,
չատերը նստած էլ մահացել էին: Ուղեկիցս բացատրեց, որ
բոլորն էլ վիրավոր կամ հիվանդ են եղել, թողել են, որ այս-
տեղ մեռնեն: Ինքը, երբ մի շաբաթ առաջ անցել է այստեղից,
ոմանք դեռեւս ողջ են եղել, նա նույնիսկ նրանց հաց է տվել:

Մյուս հովիտների մեծ մասում, որոնք մենք անցանք,
ափամերձ ավազից ցցված գլուխներ, այստեղ-այնտեղ աճ-
յուններ տեսանք, որոնք թաղված չէին: Ուռած դիակ, ճիշտ է
պատահում էր, բայց մեծ մասն արդեն սկսել էր չորանալ:
Դիակներ կային համարյա բոլոր հովիտներում, որոշ տեղե-
րում չափազանց շատ՝ մեկում առնվազն հազար, մյուսում,
իմ կարծիքով, ավելի քան հազար հինգ հարյուր: Այնպիսի
մեռելահոտ էր տարածված, որ չնայած որոշել էի հովիտը
ծայրեծայր անցնել, այդ օրը չկարողացա: Նույն վայրերը ես
ավելի հանգամանորեն ուումնասիրեցի մի ամիս անց: Ինչ-

պես մյուսները, այս հովիտն էլ եռանկյունաձեւ էր, երկու
կողմից շրջափակված էր այնպիսի ուղղաձիգ զառիթափե-
րով, որ մարդիկ, որոնց վրա հարձակվել էին, չէին կարողա-
ցել վեր մազլցել: Յուրաքանչյուր կողմում կանգնած եր-
կու-երեք ուստիկան ի վիճակի էր փախուստի ամեն փորձ
կանխել: Զառիթափի լանջերին, քարերի արանքում, դեռեւս
նշմարվում էին նրանց մարմինները, ովքեր ըստ երեւույթին
ձգտել էին վեր մազլցել, փախչել, բայց տեղնուտեղը գն-
դակահարվել էին: Կիրճի երրորդ կողմը փակում էր լիճը՝
այն էլ այնպես, որ տասնհինգ-քսան զինվոր-նաստիկան եթե
կողք-կողքի կանգնեին, ոչ մեկին թույլ չէին տա ջուրը նետ-
վելով կամ լճափի նեղ կածանով փախչել: Զոհերին, ուրեմն,
բառացիորեն ծուղակն էին նետել, սառնասրտորեն կոտո-
րել: Դիակներն ըստ երեւույթին արդեն երկու-երեք շաբաթ
ընկած էին իրար վրա: Նույնը հաստատեց մի ծեր քուրդ, որն
աշխատում էր հովիտում տարածվող քրդական գյուղի մոտ:
Երբ հարցրինք, թե ի՞նչ է տեղի ունեցել, պատմեց, որ զին-
վոր-նաստիկանները մոտ երեք շաբաթ առաջ երկու հազար
հայ են բերել ու հարեւան գյուղերի քրդերին կոտորել տվել:
Ծերունու ասածը համընկնում էր իմ տեսածի հետ, Մամու-
րեթ-ուլ-Ազիզից, իրոք, երեք շաբաթ առաջ մի մեծ քարա-
վան անցավ: Մեր քուրդ զրուցակիցը շատ վրդովված էր
թվում, ասում էր, որ դիակների հոտը տհաճ է ոչ միայն իր,
այլեւ մյուս համագյուղացիների համար: Իրոք, այդ ամռանն
ու աշնանը հակառողջական պայմանների պատճառով,
մոտակայքում բնակվող բազմաթիվ քրդեր հիվանդացան ու
մեռան: Նույնիսկ զարմանալի է, որ ոմանք ողջ մնացին⁵³:

Հետագայում ինձ ավելի հանգամանորեն տեղեկացրին
հայերի քարավանները վերացնելու մշակված համակարգի
մանրամասները: Նախ նրանց թույլ են տվել որեւէ հովտում
կամ այլ հարմար վայրում երկու-երեք օրով վրան խփել: Այդ
ընթացքում զինվոր-նաստիկանները քրդեր են բերել եւ, ինչ-

պես ծերունին մեզ պատմեց, Հրամայել են կոտորել Հայերին: Ասել են, որ այդ ձեռով կարող են փող աշխատել, բայց եթե Հրաժարվեն, գլխացավանքի մեջ կընկնեն: Դրանից Հետո պայմանավորվածություն են կայացրել, ըստ որի նայած իրավիճակին, քրդերը զինվոր-ոստիկաններին նախօրոք որոշակի գումար՝ մի քանի Հարյուր ֆունտ եւ նույնիսկ ավելի պիտի վճարեին եւ դրանից Հետո թալանեին այն ամենը, ինչ կգտնեին Հայերի վրա: Քանի որ բնաջնջման այս ձևի մասին ես չատանգամ եմ լսել, կարծում եմ լայն կիրառում է գտել մեր տարածաշրջանում, թերեւս նաեւ Թուրքիայի այլ մասերում⁵⁴:

Աչքի էր զարնում այն հանգամանքը, որ մեր տեսած գրեթե բոլոր դիակները մերկ էին: Ես իմացա, որ զոհերին սպանելուց առաջ ստիպում են հանվել, որովհետեւ մահմեդականները պղծված են համարում դիակներից հափշտակված հագուստները: Բացի դրանից շատ աճյունների վրա սվինների սպիներ կային, հիմնականում խոցված էր նրանց որովայնը, կուրծքը, երբեմն նաեւ՝ կոկորդը: Քչերին էին փամփուշտով սպանել, քանի որ թանկ արժեք: Սվինով կամ դաշույնով մեռցնելն ավելի էժան էր թվացել: Ուշադրութուն էր գրավում նաեւ այն, որ գրեթե բոլոր կանանց դիակները տարածված էին մեջքի վրա, պարզ երեւում էր, որ զինվոր-ոստիկանները սվիններով անմարդկային կտտանքների էին ենթարկել, հաճախ անչնչանալուց Հետո էին ծակծակել մարմինները⁵⁵: Միաժամանակ նկատեցինք, որ սպանված Հայերը առնվազն մեկ-երկու ամսվա ճանապարհ էին կտրել՝ այսինքն ոչ թե խարբերողի էին, այլ հեռավոր գավառների բնակիչներ:

Մենք թողեցինք լիճը, լեռներն անցանք ու մի նեղ կածանով Հասանք Գեղվանք գյուղը: Ճանապարհը ծածկված էր դիակներով, մեծ մասն ընկած էր բանուկ մասի վրա, այնպես որ անխուսափելիորեն ձիերի սմբակների տակ պիտի

մնար: Մի ժամանակ տեղական փոստը այդ նույն կածանով էր կանոնավոր Նարբերդ հասնում, բայց հիմա, հասկանալի է, Թուրքերն էին միայն գալիս-գնում: Իմ Թուրք ուղեկիցն անսպասելի կանգ առավ, ցույց տվեց ճանապարհի կողքից ձգվող, ցած գահավիճող հովիտը, ասաց, որ մեր գտնված տեղից ընդամենը երկու Հարյուր քայլ այն կողմ բազմաթիվ Հայերի են ոչնչացրել: Մենք նույնիսկ դիակների հոտն էինք առնում, բայց քանի որ արդեն ուշ էր, բացի այդ չափազանց շատ աճյուն էինք տեսել, այդ կարճ տարածությունը հաղթահարելու, ավելին տեսնելու ուժ չունեցանք: Տարի ու կես անց, սակայն, ես եղա նույն վայրում եւ հովտում հարյուրավոր զոհերի ոսկորներ տեսա: Լեռան ու Գեղվանք գյուղի միջև տարածվող դաշտում մենք մի տեղ Հասանք, ուր հազարավոր գաղթականների էին կոտորել: Շատերին թաղել էին ոչ խոր փոսերում, այնպես որ որոշակի քանակությամբ ոսկորակույտեր երեւում էին: Մենք Մամուրեթ-ուլ-Ազիզից ընդամենը տասը մղոն էինք հեռու, բայց թվում էր, թե նահանգի ամենասոսկալի սպանող Հենց այդտեղ է կատարվել: Ինձ ասացին, որ մեծ թվով տղամարդկանց, որոնց զանգվածային տարագրությունից առաջ ձերբակալել էին Մամուրեթ-ուլ-Ազիզից, Նարբերդից, Հարեւան գյուղերից ու բանտարկել՝ բերել, այստեղ էին ոչնչացրել: Գեղվանքի շրջակայքում դեռեւս մնում էին ընդարձակ գաղթականների Հետքերը, որտեղ բռնագաղթածների քարավանները հանգրվանել էին ամառվա ընթացքում: Շատ-շատերին Հենց այս դաշտում էլ սպանել էին:

Մենք երեկոյան ժամը 9-ին տուն վերադարձանք, եւ ես զգացի, որ սկսեցի անհամեմատ լավ հասկանալ, թե իրականում ինչ է նշանակում Հայերի տեղահանությունը, համոզվեցի, որ չեմ սխալվել, երբ իմ որոշ զեկուցագրերում Մամուրեթ-ուլ-Ազիզը կոչել եմ Թուրքիայի «Սպանդի նահանգ»:

Մի քանի շաբաթ անց ամերիկյան հիվանդանոցի բժիշկը՝ դոկտոր Ատկինսոնը⁵⁶, ցանկություն հայտնեց ինձ հետ անցնել նույն ճանապարհը: Այս անգամ մենք որոշեցինք լրիվ պտույտ կատարել լճի շուրջը, որպեսզի բացի իմ այցելածից, մյուս ասիներն էլ տեսնենք: Մենք ճանապարհ ընկանք հոկտեմբերի վերջին, առավոտյան ժամը 3-ին, անցանք անմարդաբնակ դարձած հայկական Ուուլու գյուղով, որից հետո արահետը մեզ հասցրեց լճի հարավային ափը: Այնտեղ դարձյալ մարդկային կմախքների ու ոսկրակույտների հանդիպեցինք, ամենայն հավանականությամբ ջարդը տեղի էր ունեցել ամռան սկզբին: Արեւելյան ափին, ընդհակառակը, որոշ քանակությամբ դիակներ կային, որոնք ոչ այնքան վաղուց էին նախճիրի զոհ դարձել: Մենք եզրակացրինք, որ ամենայն հավանականությամբ հայկական Գյուլջուկի բնակիչներն էին, փորձել էին խույս տալ զինվոր-ոստիկաններից: Գյուղը գտնվում էր լիճ տանող ճանապարհին, առափնյա ամենակարեւոր բնակավայրն էր: Այն փոխած էր դաշտի ճիշտ հակառակ կողմում, որտեղ վրան էին խփել իմ նախորդներն ու ամերիկացի միսիոներները, որտեղ արդեն եղել էի իմ նախորդ շրջագայության ընթացքում: Հենց գյուղ մտանք, համոզվեցինք, որ կենդանի չունչ չի մնացել: Գյուլջուկն ամբողջովին ամայի էր, միայն մի քանի քաղցած կատուներ էին թրեւ գալիս տների ավերակների մեջ:

Գյուղին դեմ-հանդիման մի փոքրիկ կղզի կա: Ինձ պատմեցին, որ ժամանակին այն կապված է եղել ցամաքի հետ, բայց քանի որ վերջին հիսուն տարում ջրի մակարդակը բարձրացել է, երկու հարյուր ոտնաչափ հեռացել է ափից: Կղզում միայն մի քանի խոշոր քարեր՝ հայկական հինավուրց վանքի հիմքերն էին մնացել՝ ընդհանուր երկարությունը՝ հազիվ հարյուր, լայնությունը քսան-երեսուն մղոն կլիններ: Աչնան սկզբում որոշ հայեր պատասպարվել էին այնտեղ: Մի օր, երբ ես վալիի աշխատասենյակում էի, արյան

մարտի ցուրտը տեսա, որոնք գրեթե էին քայքայված...
 վայրն ինձ հասցրեց, որ գտնվում են կղզում ստորաշերտում...
 քայքայված վերջիններս մեկայն քանի որ վերջիններս պետք է
 էին եղել մարտի ամռան զինվոր-ոստիկանների կողմից...
 ինձ ասեցին, որ մի քանի կրակելով մտանք: Այս օր...
 արդեն մեծ մասամբ մերթափայտված են շուրջում...
 մենք Գյուլջուկ գյուղից ելանք, մոտ մի ժամ քայլում
 մի քիմով, բայց ասիք հետո շարունակեցինք դեպի...
 հայկական հողերում էր հասնում:



«Քրդական գյուղը թողնելուց հետո մենք մի քարքարոտ լեռ մագլցեցինք, հետո մինչև Գյուլջուկ ձգվող հովիտն իջանք: Լճի ափին իմ նախորդներն ու ամերիկյան միսիոներները սովորություն են ունեցել ամեն ամառ վրան խփել: Ավելորդ է ասել, որ թարբերվում անցկացրած երեք տարիների ընթացքում ես նման հանգստի հնարավորություն չունեցա: Ճիշտ ափին, այնտեղ, որտեղ ամռանը վրաններ էին խփել, երկու դիակ էր ընկած»:

Լուսանկարը՝ Լեալի Գեիսի

կու-երեք հարյուր ոտնաչափ երկարությամբ, հյուսիս-արևմտյան տանաչափ լայնությամբ տարածք էին գրավեցրել: Մոտ քիչ քան ջրով վրձն հակվող մի նեղ հովիտի ղեկավարում էր որի կողմը ոչ մի արահետ չէր ասեղան: Մենք իջանք, որպեսզի մեղապարհներն մտնե՞լից տեսնենք: Տարբերակ էլին համարում, որ մարդկանց կարողացել են արանել նման մի վայրում: Լճի վրա մակույթ չկան ջրի կար, եղանակներ լայնազանց փողոց էին: Առհերթ մտնեալով պարզեցինք, որ գրեթե բո-

լորը վերջերս նահատակված կանայք ու երեխաներ են: Շատերի մարմինների վրա դեռ մնում էին սվինների սպիները: Ինչպե՞ս էին նրանց այդքան մոտ-մոտ խողխողել: Դա առեղծված էր: Ըստ երեւույթին բավական մեծ թվով զինվոր-ուստիկաններ ու քրդեր գաղթականներին շրջապատել, վրա էին տվել, ոչնչացրել: Դիակների կույտի մոտ բերանքսիվայր մի կին էր ընկած, նրա մարմնի տակից նորածին երեխան հանել էր գլուխը: Բոլոր զոհերը մերկ էին, շատ-շատերը մեղկ կտտանքների հետքեր էին կրում, որ զինվոր-ուստիկաններն էին թողնում իրենց ձեռքն ընկած կանանց, աղջիկների վրա: Մենք լճի ժայռոտ ափով նորից վեր մագլցեցինք, որ ճանապարհ գտնենք: Ժամանակն արդեն ուշ էր, տարվա այդ եղանակին, եթե ստիպված լինեինք նման վայրում գիշերել, թե՛ մեզ եւ թե նժույզներին անցանկալի վտանգների կենթարկեինք: Որոշ ժամանակ էլ թափառեցինք, չնայած առաջ չարժվելն հետզհետե դժվար էր դառնում: Շրջակայքում արահետ փնտրելով մագլցեցինք այդ կողմից լիճը եզերող լեռան գագաթը եւ վերջապես կածանը, որ այդքան երկար որոնում էինք, գտանք: Արդեն մթնշաղ էր, աննկատ ցրտում էր: Մենք հեծանք ու խթանեցինք ձիերին, որովհետեւ մինչեւ խանը, որտեղ մտադիր էինք գիշերել, բավական ճանապարհ կար: Անցանք բազմաթիվ քրդական գյուղերով, դարձյալ անհամար դիակներ տեսանք, որոնց մի մասը հենց փողոցներում էր ընկած: Մեռելների տեսքը, հանդիպող քրդերը աղջամուղջում, խոշոր, արյունարբու գամփռները, որոնք գյուղից դուրս էին նետվում, որ հարձակվեն ձիերի վրա, ստիպեցին արագացնել մեր ընթացքն ու ձեռքներս ատրճանակի վրա պահել:

Մութը վաղուց էր ընկել, երբ Դիարբեքիրի ճանապարհը հասանք ու վերջապես Քյազիմ խանը մտանք, որը գտնվում էր լճի հյուսիսային ծայրամասում: Նման ծանր օրը, որ մեզ համար սկսվել էր առավոտվա ժամը 3-ին, բոլորիս էլ ու-

ժասպառ էր արել: Տեղավորվեցինք խանի տանիքին, հանեցինք ուտելիքի պաշարը, որ ընթրենք: Այդտեղ էլ գիշերն անցկացրինք՝ փաթաթվելով հետներս բերած ծածկոցի մեջ, որը մեր միակ անկողնային պարագան էր: Գիշերը շատ ցուրտ էր, եւ չնայած նախապատրաստված չէինք, նախընտրեցինք տանիքին քնել, քան կենթարկվել ոջիլների հարձակման վտանգին, որոնք ժանտատենդի վարակ էին տարածում, ու գրեթե համոզված էինք, լեցուն էին ներքեւի սենյակներում: Հաջորդ առավոտ զարթնեցինք սառած, տանջված, շարունակեցինք պտտվել լճի շուրջը: Մենք շատ կարճ տարածություն անցանք լայն ճանապարհով, որտեղ նույնպես բազմաթիվ դիակներ տեսանք, հետո թեքվեցինք Գյոլջուկի ափը տանող արահետը: Մամուրեթ-ուլ-Ազիզի փոստը ձիերով այդտեղից էին բերում: Մեր շուրջն ամենուր մեռյալներ, կմախքներ, ճերմակ, չորացած ոսկորներ էին, որոնք վկայում էին, որ ամռան սկզբից են ընկած մնացել:

Մոտ երկու ժամ հետո հասանք մի ընդարձակ հովիտ, որը քիչ հեռու էր լճի այն ափից, ուր ես հասել էի իմ նախորդ ճանապարհորդության ժամանակ ու բռնել վերադարձի ուղին: Հենց այդտեղ էլ ես ավելի շատ դիակ տեսա, քան տեսել էի որեւէ այլ վայրում, իմ նախկին բոլոր ուղեւորությունների ընթացքում: Մեր հաշվարկներով, միայն այդ կիրճում, երկու հազարից պակաս զոհ չէր լինի: Շատերը հենց լճի ափին էին, գանգերը, որի պատճառն արդեն բացատրել եմ, դուրս էին ցցվել ավազից: Մենք նկատեցինք մի կնոջ, գլխի մոտ նորածնի դիակ, որն ըստ երեւույթին մի քանի օրվա կյանք էր ունեցել: Այդ հովիտը, որը չափազանց տարածված էր, ամբողջովին անյուններով էր ծածկված: Մեծ մասը թաղված էր, բայց քամին սրբել էր ծածկող ավազը, մարմինները մասամբ բացել: Երեւում էին նաեւ ճամբարային խարույկի հետքեր ու անձնական իրեր, որոնք պատկանել էին բռնազաղթածներին՝ մի քանի կոտրված սափոր, կավե

քարեղան, փայտե գդալ, մեծ թվով ինքնության վկայականներ, որոնք թերթեցինք ու իմացանք, որ քարավանները բերել էին էրզրումից, այլ վայրերից: Բացի Հատուկենտ գուպայից ոչ մի Հագուստ, արժեքավոր իր չէր մնացել, ամեն ինչ, Հասկանալի է, թալանել էին զինվոր-ոստիկաններն ու քրդերը: Բոլոր մարմիններն էլ մերկ էին, աքսորականներին կոտորելուց առաջ Հավանաբար ստիպել էին Հանվել: Ես այդ Հովտում 1917 թվականի մարտին նորից եղա եւ Համոզվեցի, որ վերին լանջերին Հարյուրավոր մեռյալներ են եղել, որոնք նախորդ անգամ չեմ նկատել: Ըստ երեւույթին թաղվելուց Հետո են ի Հայտ եկել: Այդ տարածքը, որը Հավանաբար մի քանի ակր էր զբաղեցնում, ոսկրանոց էր դարձել: Կարծում եմ առաջին վայրերից մեկն էր, որտեղ Հայեր էին բերել, ջարդել: Դատելով դիակներից ու ոսկրակույտներից, զոհերին տեղափոխել էին փոքր խմբերով ու մինչեւ Հաջորդի Հասնելը, նախորդին կոտորել էին, թաղել: Հովիտը լիճը շրջապատողներից ամենամատչելին էր, բայց այդ ամառ բռնագաղթածների քարավաններն այնքան շատ էին, որ բոլորին նույն տեղում կոտորել Հնարավոր չէր եղել: Հետեւաբար, որպեսզի զոհերը չիմանան մյուսների ճակատագիրը, տարբեր խմբերի տարբեր Հովիտներ էին քշել: Բավական շատ բռնագաղթածներ բնաջնջվել էին այն սարի լանջերին, որը կոչվում է Ծապկահան, Հովիտից մի քանի մղոն հեռու՝ քրդական գյուղի մոտ է: Ես թուրքերից ու սպանդից ազատված Հայերից իմացա, թե ինչ է այդտեղ կատարվել, բազմաթիվ անգամներ անձամբ անցա գյուղով, բայց Հասկանալի է, տարածքի բոլոր Հովիտները չէի կարող մտնել:

Մենք շարունակեցինք պտտվել լճի շուրջը, անցանք իմ նկարագրած Հովիտներն ու միսիոներների արդեն Հիշատակված վրանավայրը Հասանք: Այս անգամ շուրջս ավելի Հանգամանորեն նայելու Հնարավորություն ունեի: Նախորդ այցելությունից Հետո շատ դիակներ, ըստ երեւույթին

ոսկի գտնելու Հույսով, այրել էին: Մեր Հաշվումներով լճի շուրջը կատարած մեկ պտույտի ընթացքում, ընդամենը քսանչորս ժամում, միայն ավերին ավելի քան տասը Հազար սպանված Հայի աճյուն էինք տեսել: Իհարկե սա մոտավոր Հաշվարկ է, որովհետեւ մեծ թվով զոհեր արդեն ոսկրակույտի էին վերածվել, քանի որ խողխողվել էին ամիսներ առաջ, մարմիններն ամբողջովին քայքայվել էին, մինչդեռ երբեմն Հանդիպում էին նաեւ թարմ դիակներ, որոնք ուռած էին, որոնց Հոտը մատնում էր, որ ընդամենը մի քանի օր առաջ են սպանվել: Ամեն դեպքում ես Համոզված եմ, որ նահատակների թիվը ոչ թե մեր Հաշվածից քիչ, անհամեմատ շատ էր, եւ այն ամենը, ինչ մենք կարողացանք տեսնել, կազմում էր նահանգում կոտորված Հայերի չնչին մասը: Հետագայում նույնպես, Գյուլուկ լճի ուղղությունը կատարած իմ տարբեր ճամփորդությունների ժամանակ՝ այն վայրերում, որտեղ դեռեւս չէի եղել, մեծ թվով կմախքների ու ոսկրակույտների էի Հանդիպում: Նույնն ինձ Հետ վերջերս, Խարբերդից Հեռանալուց մի քանի շաբաթ առաջ տեղի ունեցավ:

Թուրքերի՝ ամբողջ Հայ ժողովրդին բնաջնջելու, վերացնելու դժոխային ծրագրին թերեւս ոչ մի վայր այդքան չհամապատասխաներ, որքան Ասիական Թուրքիայի խորքում գտնվող զառիթափ ավերով ու անելանելի Հովիտներով այս խաղաղ լիճը, որը շրջապատված էր վայրենաբարո քրդերի գյուղերով ու հեռու էր քաղաքակիրթ մարդու Հայացքից: Թերեւս դրա Համար ամենահեռավոր վիլայեթների բնակիչներին քարավաններով Հանգիստ կարողացան մինչեւ Մամուրեթ-ու-Ազիզ Հասցնել, Թուրքիայի «Սպանդի նահանգում» բնաջնջել: Այն, ինչ 1915 թվականի ամռանը տեղի է ունեցել Գյուլուկ գեղեցիկ լճի ավին, վեր է երեւակայությունից: Տասնյակ Հազարավոր Հայեր՝ մեծ մասամբ անմեղ ու անպաշտպան կանայք, երեխաներ, ամենաբարբարոս ձեւերով կտտանքների ենթարկվեցին նրա ավազնե-

րի վրա ու կոտորվեցին: Ով քաղաքակիրթ աշխարհում է ապրում, դժվարութեամբ կհավատա, որ նման նախնիներ հնարավոր են: Ինչպես նշում է լորդ Բրայսը, «Բաներ, որոնք մենք դժվարութեամբ ենք հավանական համարում, Թուրքիայում հազիվ զարմանք են հարուցում»⁵⁷:

Գյոլջուկ լճի շուրջը 1915-ի աշնանը ձեռնարկած իմ երկու ուղևորությունները հաստատեցին այդ ուղղութեամբ քշված Հայերի ճակատագրի մասին պտտվող շուկները, հավաստեցին, որ մեր վատթարագույն մտավախությունները անհիմն չեն եղել:

Մենք անվտանգ տուն վերադարձանք եւ որքան ինձ Հայտնի է, Թուրք պաշտոնյաներն այդ չրջագայությունների մասին այդպես էլ ոչինչ չիմացան:

Հոկտեմբերի կեսերին, մի օր, միսիոներները, երկար տարիներ Մարդինում աշխատած ամերիկացի միսիոներ, բժիշկ Թոմից բացիկ էին ստացել, որով տեղեկացրել էր, որ ինքը, եւս մի քանի հոգի Սարբերդի ճանապարհին են: Քանի որ բացիկը օրեր առաջ, Դիարբեքիում էր գրված, կարելի էր եզրակացնել, որ նրանք ամեն բոպե կարող են տեղ հասնել: Ես դիմավորելու համար անմիջապես դավազ ուղարկեցի Դիարբեքի: Նա ընդամենը կես ժամ անց վերադարձավ, Հայտնեց, որ խմբին, քաղաք մտնելուն պես, ձերբակալել են: Իսկույն ոստիկանատուն գնացի, հանդիպեցի Դանիել Մ.Բ. Թոմին, պատվելի Ալֆեուս Մ. Անդրյուսին եւ միսս Ազնես Ֆենեգային, որոնք, երեքն էլ, Մարդինում ամերիկյան միսիոներներ էին: Ես հետները նամակագրություն ունեի, բայց առաջին անգամ էի տեսնում: Բժիշկ Թոմն ու միստր Անդրյուսը քառասուն տարի ծառայել էին Մարդինում, իրենց կյանքը տեղի ազգաբնակչությանը նվիրել: Բժիշկը մեծ ջանքեր էր ներդրել Թուրք զինվորներին ապաքինելու համար: Կինը ընդամենը մի քանի ամիս առաջ էր մահացել, իսկ Անդրյուսը ստիպված էր եղել Մարդինում թողնել հաշ-

մանդամ կնոջը, որն առանց ամուսնու ոչնչի ընդունակ չէր, մի քանի ամսից վախճանվեց: Այս երկու հարգարժան միսիոներներին ու միսս Ֆենեգային հրամայել էին քսանչորս ժամվա ընթացքում հեռանալ Մարդինից: Որքան ինձ Հայտնի է, նրանց ոչ մի մեղադրանք չէր ներկայացվել, բացի այն բանից, որ պահել էին աքսորվող Հայերի՝ իրենց վստահված ոչ մեծ գումարը:

Ես փորձեցի անմիջապես մոտենալ միսիոներների կառքին, բայց հսկող ոստիկանություն սպան խիստ կոպիտ ձեռով արգելեց: Բացատրեցի, որ նրանք ամերիկյան քաղաքացիներ են, ես որպես Հյուսիսատոս եմ ցանկանում զրուցել հետները: Նա պատասխանեց, որ կարելու չէ, Թե ով եմ, միսիոներները ձերբակալված էին, մինչեւ ինքը չճշտեր, Թե որտեղ պիտի գիշերեն, չէի կարող բառ փոխանակել: Սպան ավելացրեց, որ տեղյակ չէ նույնիսկ նրանց խա՞ն, Թե՞ բանտ են ուղարկելու: Իսկույն շտապեցի վալիի մոտ, որպեսզի փորձեմ պարզել, Թե ինչո՞ւ են ամերիկացիներին այդ ձեռով Սարբերդ հասցրել, ի՞նչ են մտադիր նրանց անել: Կուսակալը խոստովանեց, որ ոչնչից տեղյակ չէ, բայց ընդունեց, որ պահապաններին տրված ամեն հրաման նախ պիտի իրեն տեղեկացվի, այնպես որ եթե մի քիչ համբերի, ինքն ամեն ինչ կիմանար ու ինձ կհայտներ: Վալին իսկույն եւեթ զանգահարեց, պահանջեց համապատասխան հրամանները: Մինչ այդ ես խնդրեցի, որ փոխանակ խան ուղարկելու, նրանց, իմ պատասխանատվությամբ, Թույլ տան Հյուսիսատոսարանում գիշերել: Նահանգապետն առանց դժվարություն համաձայնվեց: Հետո, երբ հրամաններն ստացավ, պարզեց, որ երեքին էլ պետք է Սվազ ուղարկել, հարցրի, Թե հնարավոր չէ՞ Սարբերդում թողնելու արտոնություն ձեռք բերել: Վալին բացատրեց, որ որոշումը Մարդինի մութասարիֆն է կայացրել, ուրիշ վիլայեթի պաշտոնյա իրավասություն չունի փոփոխելու: Համոզեցի, որ գոնե

մեկ-երկու օր թույլ տա մնան, որպեսզի Հեռագրով ղեսպանին դիմեմ: Նահանգապետը դեմ չեղավ: Այնուհետև խոսեցի ոստիկանութան սպայի կոպիտ վերաբերմունքի մասին ու օրեր անց իմացա, որ վալին նրան շատ խիստ հանդիմանել է: Դա սպան անձամբ ինձ խոստովանեց, ընդունեց սխալը եւ հույս հայտնեց, որ հիշաչար չեմ լինի:

Հենց նահանգապետարանից ելա, ասացին, որ միսիոներներին գիշերելու համար խան են տարել: Քիչ անց, սակայն, նրանք մի ոստիկանի ուղեկցութեամբ ընթրելու եկան հյուպատոսարան ու էլ հետ չդարձան: Այդ գիշեր ոստիկանն էլ մնաց հյուպատոսարանում, բայց հաջորդ օրը, ճաշից հետո ինձ մոտեցավ ու մեղմ ձայնով հարցրեց, թե դեմ չե՞մ լինի, որ գնա, տանը գիշերի, առավոտ շուտ հետ գա: Ես խոստացա ստանձնել կալանավորների ապահովությունը, ասացի, որ կարող է մնալ իր հարկի տակ, հանգիստ քնել: Այդ օրվանից նա ամեն գիշեր տուն էր վերադառնում, բայց ցերեկները աչքը չէր հեռացնում միսիոներներից:

Նրանց ժամանման հենց հաջորդ առավոտը ղեսպանատուն շտապ հեռագիր ուղարկեցի: Հետո միստր Անդրյուսի Հետ գնացինք մյուզիքի մոտ, բացատրեցինք իրավիճակը, հայտնեցինք, որ վալին մինչեւ իմ հեռագրի պատասխանն ստացվելը, նրանց թույլ է տվել մեկ-երկու օր Ռարբերում մնալ: Մյուզիքը մեզ պատասխանեց, որ անհանգստանալու պատճառ չի գտնում, չնայած իրեն հրամայել են միսիոներներին անմիջապես Սվազ ճանապարհել: Նկատի ունենալով Հեռագրերի առաքման անապահովությունն ու անկանոնությունը, ես առաջինից հետո երկուսն էլ ուղարկեցի, բայց ոչ մեկի պատասխանը չստացա: Իմ խնդրանքով մյուզիքն անընդհատ հետաձգում էր միսիոներների մեկնումը: Ի վերջո հասկացրեց, որ չնայած ցավում է, բայց հաջորդ առավոտ ստիպված է ճանապարհել նրանց: Ես խնդրեցի եւս մեկ օր, նա չառարկեց, սակայն քանի որ Հեռագրերի պատաս-

խանն այդպես էլ չստացվեց, մյուս օրը, ճաշին, միսիոներները մեկնեցին: Մի քանի շաբաթ անց Սվազում բժիշկ Թոմը ժանտատենդից մահացավ: Նա արդեն յոթանասուն տարեկան էր, առողջությունն էլ լավ չէր, վստահ եմ, որ մահվան անուղղակի պատճառը բռնությունները Մարդինից հեռացվելն էր: Կարծում եմ, որ ամերիկացիների վտարման մանրամասներին, ինչպես նաեւ բժիշկ Թոմի վախճանին առնչվող իմ զեկուցագրերը հասել են պետական ղեկարտամենտ⁵⁸:

Ուարբերդ մտնելու պահին Մարդինի միսիոներներն ինձ տեղեկացրին, որ ճանապարհին բազմաթիվ աճյուններ են տեսել, միայն վերջին օրը հաշվել են ավելի քան երկու հարյուր դիակ: Սվազից նույնպես գրեցին, որ մինչեւ տեղ հասնելը շատ «սեւ կեռնեխներ» (մեռած մարմիններ) են նկատել:

Ամբողջ աշնան ընթացքում ես միսս Շեյնի եւ միսս Մակ-Լորենի մասին, որոնք առանձին էին մնացել Բիթլիսում, անընդհատ նամակներ գրեցի ինչպես պետական ղեկարտամենտ, այնպես էլ ղեսպանատուն: Կարծեմ միսս Շեյնի ծնողները դիմել էին Արտասահմանյան առաքելությունների ամերիկյան լիազոր խորհրդին, պետական ղեկարտամենտ, համառորեն պահանջել, որ երկուսին էլ Բիթլիսից փոխադրեն⁵⁹: Այդ խնդրով ղեսպանատան ու անձամբ միսս Շեյնի Հետ կապվելուց հետո իմ դավազ ԱՀմեդին 1915-ի նոյեմբերի 1-ին Բիթլիս ուղարկեցի, որպեսզի, իհարկե, եթե միսիոներուհիները ցանկանան, բերի Ռարբերդ: Միսս Շեյնը սկզբում տատանվել էր, բայց ղեսպանն ուղղակի Հեռագրել էր նրան, կարգադրել անմիջապես ճամփա ընկնել: Նրանք ղեկտեմբերի 12-ին ողջ-առողջ տեղ հասան, մինչեւ մայիս մնացին: Հետո ԱՀմեդն ու ես, մյուս միսիոներների Հետ, բերեցինք կոստանդնուպոլիս:

Քանի որ թե՛ դասավանդողների եւ թե՛ աշակերտների հիմնական մասը հայեր էին, բռնազաղթից հետո ամերիկյան վարժարանների գործունեությունն այնպես կազմա-

լուծվեց, որ որոշ միսիոներներ որոշեցին հայրենիք վերադառնալ: Դեսպանատունը նրանց խորհուրդ տվեց հասնել Բեյրութ, որտեղ հույս կար, որ հնարավոր կլիներ Ամերիկա ուղևորվող նավ նստել: Նոյեմբեր 15-ին տասը հոգի՝ վեց չափահաս եւ չորս երեխա, ուղևորվեցին Բեյրութ:

1915 թվականի Ծննդյան տոնի օրը բժիշկ Ատկինսոնը, որը ամերիկյան հիվանդանոցում բուժվող թուրք զինվորներից ժանտատենդով էր վարակվել, վախճանվեց: Նա դեկտեմբեր ամսին Փոքր Ասիայում ժանտատենդին զոհ գնացած ամերիկյան երրորդ միսիոներ-բժիշկն էր: Ընդհանուր առմամբ 1915 թվականին Սարբերդի հյուպատոսական ենթատարածքում ութ միսիոներ մահացավ:

Տեղահանությունը շարունակվեց 1915 թվականի ամբողջ ամառվա ու աշնան ընթացքում: Բազմաթիվ անգամներ մունետիկը հայտարարել էր, որ բռնագաղթն ավարտվել է, մնացածները կարող են ելնել թաքստոցներից, եւ գտնվեցին միամիտներ, որ հավատացին: Հետեւանքը ոչ թե միայն մեկ, մի քանի անգամ այն եղավ, որ Հենց մեծ քանակությամբ հայեր էին հայտնվում փողոցում, ձերբակալում էին, բանտ նետում, Հետո աքսորում: Մինչդեռ իշխանությունները բավական երկար ժամանակ ձեւացնում էին, որ միայն դասալիքների են փնտրում: Իհարկե, բազմաթիվ հայեր էին թաքնվելով խուսափել բռնագաղթից, շատերն էլ աքսորվել էին, բայց ճանապարհին քրդերին կաշառել էին, որ իրենց ետ բերեն: Ահա այդպիսի հայերին էին վիրավորական արտահայտությունները «ֆուրար» (դասալիք) կոչում, համարում մեղսագործ: Մինչդեռ նրանցից ոչ մեկը հանցանք չէր գործել, պարզապես փորձել էր, որը խիստ բնական է, փախչելով նախճիրից խույս տալ: Մինչդեռ ոստիկանությունը ամիսներ շարունակ «դասալիքներին» Հետամտում էր, անզթորեն որսում ոչ միայն տղամարդկանց, այլեւ կանանց ու երեխաներին:



«Մյուս հովիտների մեծ մասում, որոնք մենք անցանք, ափամերձ ավազից ցցված գլուխներ, այստեղ-այնտեղ աճյուններ տեսանք, որոնք թաղված չէին: Ուռած դիակ, ճիշտ է, պատահում էր, բայց մեծ մասն արդեն սկսել էր չորանալ»:

Լուսանկարը՝ Լեսլի Դեխի

Ջանգվածային վերջին ձերբակալումները տեղի ունեցան նոյեմբերի 4-ին և 5-ին: Նախորդ մի քանի շաբաթվա ընթացքում շատ քիչ մարդ էր բանտ նետվել, ոմանք կարծել էին նույնիսկ, որ տեղահանությունը վերջապես ավարտվել է: Նոյեմբերի 4-ին, Հինգշաբթի օրը, ճաշից հետո ինչ-որ մեկն իմ գրասենյակը ներխուժեց և հայտնեց, որ հայերին նորից հավաքում են: Մի քանի օր առաջ վալին մեկնել էր էրզրում, և մենք մտավախություն ունեինք, որ նրա բացակայության ընթացքում անկարգություններ կարող են լինել: Նրան ժամանակավորապես փոխարինել, պարտականություններն ստանձնել էր 11-րդ գորարանակի հրամանատար Սուլեյման Ֆաիկ փաշան: Վերջինս հասուն տարիքի, տպավորիչ տեսքով, խիստ բարեհամբույր ու բարեկիրթ, չափազանց դյուրահաղորդ անձնավորություն էր, բայց իր մահմեդականությունը մոլեռանդություն էր հասցնում: Մեր հարաբերությունները բարյացակամ էին, չնայած շատ-շատերը ասում էին, որ արտաքին մեղմությունը ձեւական է, ներքուստ դաժան է ու չար: Մի անգամ, չեմ հիշում ինչ հարցով, նրան հանդիպելուց հետո դուրս եկա կոնակից ու զգացի, որ կատարյալ խաղաղություն է տիրում: Հրաշալի օր էր, թվում էր քաղաքում մնացած բոլոր հայերը լցվել են շուկայի հրապարակն ու փողոցները: Մինչդեռ այդ նույն օրը ոստիկանությունը շատ-շատերին ձերբակալեց: Քանի որ մենք գրեթե համոզված էինք, որ վտանգն ընդմիջտ անցել է, հյուլատոսարանում ապաստանած հայերի ճնշող մեծամասնությունը տեղափոխվել էր հարեւան տները: Ես իմացա, որ նրանց մեծ մասին բռնել, տարել են քաղաքի մյուս ծայրում գտնվող ոստիկանության բաժանմունքը: Իմ դավազ կարապետի հետ իսկույն գնացի, տեսա, որ բաժանմունքում բոլորի համար տեղ չի եղել, շատերը կուչ են եկել պատի տակ: Նրանց մեջ էին հենց այդ թաղում բնակվող կարապետի կիներ, զավակները, մայրը, ինչպես նաև փոմփիչ Եսթերը, երե-

խաներից մի քանիսը: Տեղում ոչինչ Հնարավոր չէր անել, շտապեցի նահանգապետարան, Ֆաիկ փաշան չկար: Նետվեցի մյուզիքի մոտ, նա նույնպես, ձերբակալութունների ընթացքը վերահսկելու համար, դուրս էր ելել: Պտտվեցի բոլոր տները, որտեղ իմ հովանավորյալներն էին ապրում, համոզվեցի, որ ոստիկանութունը նրանց չէր անհանգստացրել: Միայն մի քանի հոգու բռնել էին փողոցում, ուստի մնացածին խորհուրդ տվեցի տներից չեկնել: Վերադարձա հյուպատոսարան ու դռան առաջ մի ոստիկան տեսա, ում հանձնարարել էին ոչ մի հայի ներս չթողնել: Ես պատրաստեցի ամբրիկահպատակների ու բոլոր այն անձանց ցուցակը, որոնց իմ միջնորդութամբ ազատել էին աքսորից: Նրանց անունները, ովքեր գիտեի՝ ապահովության մեջ են, չնչեցի: Ցուցակը տարա մյուզիքին, նա տեղում էր, բայց խնդրեց երկու ժամից անցնել: Երբ երկու ժամ անց վերադարձա, հինգ հարյուրից ավելի հայեր խմբվել էին բակում, խավարի մեջ վախից դողդողում ու մտմտում էին, թե ի՞նչ է լինելու իրենց վերջը: Ես ցանկը ներկայացրի ոստիկանապետին, իր ենթակայի միջոցով բոլորին կանչել տվեց: Ձերբակալվածների մեջ իմ պաշտպանյալներից մի տասներկու հոգի կային: Նրանց ներս բերեցին, ասացին, որ կարող են ինձ հետ հյուպատոսարան վերադառնալ: Մենք ետ եկանք, բայց դռան մոտ հերթապահող ոստիկանը թույլ չտվեց ներս մտնել, ասաց հրաման է ստացել ոչ ոքի հյուպատոսարան չթողնել: Ես վիճեցի, բացատրեցի, որ մյուզիքն արտոնել է այդ անձանց հետս բերել, բայց նա անդրդվելի մնաց, ասաց, որ հրամանը վերջնական է: Վերջիվերջո ես հյուրերիս հետ մնացի, իսկ կարապետը ոստիկանապետի մոտ վերադարձավ, կարճ ժամանակ անց հետ եկավ մի զինվոր-ոստիկանի ուղեկցութամբ, որը եւ ժամապահին տեղեկացրեց, որ մյուզիքը թույլ է տվել այդ հայերին հյուպատոսարան թողնել: Նրանք բոլորին հաշվեցին, որպեսզի համոզվեն, որ հայերի

թիվը նախօրոք որոշվածին չի գերազանցում: Այդ գիշեր հյուպատոսարանը դարձյալ լեփ-լեցուն էր, ընդ որում հայերի մի մասը մնաց ընդհուպ մայիս՝ իմ վերջնական մեկնումը այնու դուրս չեկավ: Մեր հովանավորյալներին հյուպատոսարանում տեղավորելուց հետո կարապետն ու ես փողոց ելանք: Ուրիշ շատերը կային, որոնցով պետք էր զբաղվել, այնպես որ ամբողջ երեկո այս ու այն կողմ վազվզեցինք, մինչեւ համոզվեցինք, որ բոլորի վիճակն ապահով է:

Դա սարսափի վեց ամիսների վերջին, կարելու իրադարձութունն էր, եւ եթե նկատի ունենանք այն ամենը, ինչն արդեն հայտնի էր Մամուրեթ-ու-Ազիզից, մյուս բնակավայրերից բռնագաղթածների մասին, չենք կարող չընդունել, որ իրավիճակը չափազանց ծանր էր: Մարդիկ, որոնց այդ երեկո հավաքել էին մյուզիքի գրասենյակի մոտ, բոլոր Հիմքերն ունեին ենթադրելու, որ իրենց ղեպի մահն են տանում: Նրանք այլայլված ու ահաբեկված էին: Ամենուր մեռելային լուծյուն էր տիրում: Քաղաքում բացարձակ անդորր էր, փողոցներում միայն հատուկենտ ոստիկաններ ժամապահում էին: Քայլելով խավարում ինքս ինձ հարցնում էի, թե տեղահանումները երբեք վերջ կգտնեն: Թվում էր իշխանութունները իրագործելու են այն, ինչ սկզբից էին հայտարարում՝ բռնագաղթը շարունակել այնքան, մինչեւ ոչ մի հայ չմնա:

Հաջորդ օրը ոստիկանութունը ձերբակալեց Ուարբերդում մնացած հայերին: Միստր Ռիցը եկավ հյուպատոսարան, մենք երկուսով գնացինք Սուլեյման Ֆաիկ փաշային գտնելու, որպեսզի բարեխոսենք դասավանդողների եւ այն դեռատի աղջիկների համար, որոնք դեռեւս մնում էին իրենց դպրոցում: Այդ տարի արական վարժարանը չբացվեց, իզականում հազիվ հարյուր հիսուն աշակերտուհի էր մնացել: Նրանց մոտ կեսը գիշերօթիկի սան էր, մենք կարողացել էինք նախկին տեղահանութուններից ազատել: Սուլեյման

Ֆաիկ փաշան մեզ հավատացրեց, որ այս անգամ իշխանությունները միայն «Ֆուրարների» են որոնում, նրանց, ովքեր մնալու օրինական արտոնություն ունեն, ոչ մի վտանգ չի սպառնում: Նա դասալիքների մասին շատ խիստ արտահայտվեց: Օրվա ընթացքում էլ ինձ հայտնեց, որ ըստ իրեն հասած տեղեկությունների, Նարբերդի միսիոներները փախստականների են թաքցնում, խնդրեց նրանց գրել, խորհուրդ տալ, որ նման քայլերից ձեռնպահ մնան: Հասկանալի է, ես կատարեցի այդ հանձնարարությունը, սակայն միսիոներներն ինձ վստահեցրին, որ փախստական չպատուպարելու վերջնական որոշում են կայացել, իրենց մոտ ոչ ոք չկա:

«Ֆուրարների» որոնումը միայն Մամուրեթ-ուլ-Ազիզով ու Նարբերդով չէր սահմանափակվում, հասնում էր ընդհուպ գյուղերը, որոնցից մի քանիսում դեռևս զգալի քանակությամբ հայ կար: Օրինակ, Հողում, որը Մամուրեթ-ուլ-Ազիզից երկու ժամվա հեռավորություն ուներ, մոտ հազար հայերից դեռևս երեք-չորս հարյուր կին ու երեսա մնացել էին: Ուրբաթ օրը ոստիկանությունն անսպասելի ներխուժեց, մեծ մասին ձերբակալեց: Գյուղացիներին կտրել էին գործից, ինչ վիճակում որ եղել էին, թույլ չտալով անգամ նախապատրաստվել, բերել էին Մամուրեթ-ուլ-Ազիզ: Ես տեսա, թե ինչպես էին նրանց, անասունների նման քշելով, քաղաք մտցնում: Ոմանց, որոնք շատ թույլ էին, չէին կարողանում քայլել, շալակած բերում էին համազյուղացիները: Նման տեսարաններ մենք շատ էինք տեսել ու միշտ հույս էինք ունեցել, որ այլևս չեն կրկնվելու: Ձերբակալվածներին ես հետևում էի օսմանյան դրամատան շենքից: Հայերին կուտակել էին մյուզիքի գրասենյակի առջև, որտեղ նրանց ինքնությունը պիտի ճշտեին եւ տաններին հայկական գերեզմանատուն, որն արդեն նկարագրել եմ: Այդտեղից հողգյուղացիներին, տարբեր տեղերից ձերբակալ-

վածների հետ, որոնց ընդհանուր թիվը հազարի կհասնե, միաժամանակ պիտի աքսորեին:

Նրանց հետագա ճակատագրի մասին տարբեր շուկներ պատվեցին: Ասում էին, որ մի մասին քաղաքից հանելուն պես ողջ-ողջ այրել են: Լսել եմ նաև, որ ոմանք մինչև Դիարբեքիր են հասել, բայց դա ինձ հավանական չի թվում: Անկասկած, նրանք, ովքեր ուղղակի չեն սպանվել, ճանապարհին տանջամահ են եղել: Անհնար է երեւակայել անգամ, որ կանայք ու աղջիկները, որոնք տարվա այդ եղանակին, առանց ուտելիքի, միմիայն վրանների խղճուկ հագուստներով ճանապարհ ընկան, կկարողանան դիմագրավել նման երկար ուղեւորության փորձությունները: Բոլորին քաջ ծանոթ երեք երիտասարդի ճակատագիրը գոնե ոչ մի կասկած չի հարուցում: Նրանց, չնայած վերջերս համաձայնել էին անգամ մահանկանություն ընդունել, բոլորի հետ զինվոր-ոստիկանները ձերբակալել ու քաղաքի մատույցներում սպանել էին:

Որոշակիորեն հայտնի է նաև, թե ինչ եղան Մամուրեթ-ուլ-Ազիզ վիլայեթից նախորդ չորս ամիսներին տարագրվածները: Դա դժվար չէ պատկերացնել ելնելով անգամ նախորդ էջերի նկարագրություններից: Ինչ որ նրանց հետ տեղի է ունեցել, ինձ հիմնականում պատմել են, բայց քանի որ ինքս անձնապես ականատես չեմ եղել եւ միշտ ձգտել եմ հնարավորին չափ սահմանափակվել այն ամենը ներկայացնելով, ինչին ուղղակի եմ տեղյակ եղել, ինչը հուպատոսարանի գործունեությունն առնչվել է, հարկ չեմ համարում մանրամասնորեն շարադրել ուրիշներից լսածներս: Բացի դրանից, կան վերապրողներ, որոնց մի մասն այժմ Ամերիկայում է, նրանք պատմել են իրենց կրած տառապանքների մասին, դա այժմ հայտնի է աշխարհին: Մենք գիտենք, որ հուլիսի 3-ին, շաբաթ օրը, Մամուրեթ-ուլ-Ազիզից ելած ամենարագամարդ քարավանը տարել են Մալաթիա,

նախքան քաղաք մտցնելը զինվոր-ոստիկանները տղա-
մարդկանց բաժանել են կանանցից, բոլորին դաժանորեն
կոտորել: Գիտենք, որ զինվոր-ոստիկանները որոշ տղա-
մարդկանց ասել են, թե իբր վալին իրենց ուղարկել է, որ բո-
լորին հետ՝ Մամուրեթ-ուլ-Ազիզ տանեն ու ճանապարհից
փոքր-ինչ հեռացնելով, մեկ-մեկ սպանել են: Գիտենք, որ
այդ տղաներին, կանանց, աղջիկներին բռնաբարել են նույն
զինվոր-ոստիկանները, ինչպես նաև ճանապարհին հան-
դիպող քրդերը, արաբները: Մենք գիտենք, որ ամառվա կի-
զիչ տոթին անապատ քշված կանանց, երեխաներին լվել,
ունեցած-չունեցածները թալանել են, ինչպես գիտենք, որ
վրաների հագուստն էլ են հանել տվել: Գիտենք նմանապես,
որ չնայած անվերջանալի բռնություններին ու փորձութ-
յուններին, որոշ մասը հասել է Ուրֆա, Նիզրին, Հալեպ,
Ռաքքա, Դեյր-էլ-Ձոր, Միջագետքի տոթ հարթավայրի
մյուս վայրերը: Մենք գիտենք, որ մեծ մասին թույլ չեն տվել
երկար մնալ այդ քաղաքներում ու գյուղաքաղաքներում, մի
տեղից մյուսն են քշել: Վերջապես գիտենք, որ կայսրություն
բոլոր անկյուններից տեղահանված հազարավոր հայերի
կենտրոնացրել են Դեյր-էլ-Ձորում, որտեղ նրանք ծայրա-
հեղ թշվառություն մի տարի դիմացել են, որից հետո բոլոր-
ին, ովքեր տանջամահ չեն եղել, կոտորել են քաղաքի մա-
տույցներում: Տարագիր հայերի կտտանքների վերաբերյալ,
վերապրողների հավաստի վկայությունների վրա հիմնվե-
լով, բազմաթիվ հատորներ կարելի է գրել: Ես այդ տառա-
պանքների մասին շատ եմ լսել հենց նրանցից, ովքեր հետա-
գայում մի կերպ փրկվել, վերադարձել էին Մամու-
րեթ-ուլ-Ազիզ, բայց նախընտրում եմ չերկարաձգել:

Աչնանը տեղ հասան տարբեր վայրերում ապաստանած
աքսորականների առաջին նամակները: Նրանցից մի մասը
գումարը վստահել էր միսիոներներին, մյուսը՝ բռնագաղ-
թից ազատված հայերին, ոմանք նույնիսկ թուրքերին, մի

երկուսն էլ ինձ: Վերապրողներն այժմ պահանջում էին պահ-
տված դրամը՝ ամբողջ հաջորդ տարվա ընթացքում մենք
նման բովանդակություններ բազմաթիվ նամակներ, հեռագ-
րեր էինք ստանում: Այս թղթակցությունների գերակշռող
մասն ինձ հասնում էր Հալեպում Միացյալ Նահանգների
Հյուպատոսի միջոցով, չնայած միսիոներներն էլ զանազան
վայրերում գտնվող հայերից ուղղակի՝ թուրքերեն գրութ-
յուններ էին ստանում: Նման հեռագրեր, որոշ ժամանակ
ամեն օր, առնվազն երկու օրը մեկ էին ստացվում, շատերը
պահանջում էին իրենց ամբողջ՝ տասից տասնհինգ տարբեր
անձանց վստահած գումարը: Ինչ խոսք, բոլորս էլ շատ ու-
րախ էինք, որ լուրեր են հասնում վերապրող հայերից, ուս-
տի հնարավոր ամեն ինչ անում էինք, որպեսզի շուտ պա-
տասխանենք: Դա խլում էր իմ զավազներից մեկի գրեթե
ամբողջ ժամանակը, քանի որ ավանդների մի մասը հաճախ
հեռավոր գյուղերում, մյուս մասն էլ Պարբերդի ամերիկյան
միսիոներների մոտ էր լինում, գնալ-գալը ժամեր էր պա-
հանջում: Պատահել է, որ դրամ հետ ստանալու համար ինքս
եմ ձի նստել, գյուղ հասնել: Մեզ հաջողվեց բավարարել
Հյուպատոսարան հասած գրեթե բոլոր խնդրանքները:
Դրան հակառակ թուրքերը, որոնց որոշ հայեր վստահել էին
իրենց խնայողություններն ու ունեցվածքը, մեծ մասամբ
հրաժարվում էին որեւէ բան վերադարձնել: Հաջորդ մի քա-
նի ամիսներին ես իմ օրվա հիմնական մասը հատկացրել եմ
այդ ավանդները գտնելուն ու Հալեպ փոխանցելուն: Սա մի
աշխատանք է, որի մասին պետական դեպարտամենտը,
դեսպանատունը չէին տեղեկանում, եթե անգամ տեղեկա-
նում էին, ապա խիստ անուղղակի: Իհարկե, դա, ինչպես
նաև մի շարք այլ խնդիրներ, որոնք ինձ զբաղեցնում էին
Պարբերդում, Հյուպատոսի անմիջական պարտականութ-
յունների մեջ չէին մտնում, ամեն դեպքում որոշ ժամանակ
իրենց վրա էին կենտրոնացնում իմ համարյա բոլոր ջանքե-

րը: Իմ եւ վերապրողների միջեւ կանոնավոր նամակագրութիւն էր հաստատուել, ու քանի դեռ Սարբերդում էի, նրանց իրենց դրամներն ուղարկում էին: Սակայն, ցավոք, մի քանի ամիս անց այս ասպարեղում մեր գործունեութիւնը դադարեց, որովհետեւ թուրքական իշխանութիւնները, որոնք սկզբում առանց դժվարութեան արտոնում էին նման թղթակցութիւններ ստանալ ու առաքել, շատ շուտով արգելեցին: Դրանից հետո ես ստիպված էի նամակները ֆրանսերեն գրել, որոնք ուղարկվելուց առաջ խիստ գրաքննութեան էին ենթարկվում: Ամեն դեպքում միսիոներները շարունակում էին որոշ ժամանակ տարբեր վայրերից, մասնավորապես Դեյր-էլ-Ջորից թուրքերեն նամակ, բացիկ ստանալ, մինչեւ որ այդ գրագրութիւնը եւս վերջնականապես դադարեց, որը եւ հաստատեց մեզ հասած այն շուկները, որ այնտեղ նոր ջարդեր էին տեղի ունեցել⁶⁰:

1915-1916 թվականների ձմռան ընթացքում հայ զինվորների ջոկատները, որոնց որոշ մասը մոտ մի տարի տեղակայված էր էրզրումում, մյուսը, բանակին այլուր մատակարարելու համար, Մուշում ու Բիթլիսում, տեղափոխեցին Մամուրեթ-ուլ-Ազիզ: Այդ երիտասարդներից շատերը չգիտեին նույնիսկ, որ հայ ազգարնակչութեանը աքսորել են, տեղ հասնելուց հետո միայն իմացան, որ հարազատներին կորցրել են: Նրանց ազատ չարձակեցին, մեկ-երկու օր պահեցին բանտում, հետո քաղաքից դուրս տարան: Ոմանք դիմադրել էին, մյուսները փախուստի դիմել, բայց հիմնական մասը կոտորվեց: Ես նրանց դիակները քաղաքից ոչ հեռու, ճանապարհի կողքին տեսել եմ: Մեկը Մննդյան տոների հենց հաջորդ օրը՝ զորանոցների մոտ հանդիպեց, եւ երբ այդ նույն տեղով երկու ժամ հետո քաղաք վերադարձա, դիակն անհետացել էր: Անհասկանալի էր, թե ինչու էին հայ զինվորներին հեռուներից բերում միմիայն այն բանի համար, որ անպատճառ իրենց ծննդավայրում կոտորեն:

Նույն ձմեռվա ընթացքում ճակատից հիվանդ ու վիրավոր թուրք զինվորներ էլ եկան Մամուրեթ-ուլ-Ազիզ: Չնայած մենք գիտեինք, թե թուրքերն ինչպես են վերաբերվում հայերին, անհավատալի էր թվում, որ իրենց սեփական զինվորների նկատմամբ էլ գրեթե նույն մոտեցումը կցուցաբերեն: Նրանց էրզրումից, նույնքան հեռու վայրերից ձմռան ցրտին, առանց ուտելիքի, տաք հագուստի թիկունք էին ուղարկել, հրամայել ինքնուրույն Մամուրեթ-ուլ-Ազիզի հիվանդանոցները հասնել, քանի որ համեմատաբար մոտ էին: Հիվանդ, վիրավոր մարտիկները իրենց տրամադրութեան տակ ոչ մի փոխադրամիջոց չէին ունեցել, շարաթներ շարունակ քայլել էին, ճանապարհի գյուղերում ուտելիք մուրացել կամ թոցրել, վերջապես առիթ լինելու դեպքում էլ էին գողացել, որ հեծնեն: Երբ նրանք արդեն քաղաքին էին մոտենում, հաճախ տեսնում էի: Հասկանալի է, բոլորը, բացի ամենատոկուններից, ճանապարհին մահացել էին, որովհետեւ հիվանդը կամ վիրավորը չի կարող նման տարածութիւն կտրել: Նրանք, ովքեր տեղ էին հասնում, այնքան հյուծված էին, որ գրեթե անհնար էր օգնելը: Մի թուրք զինվոր, որը մոտեցել էր ամերիկյան հիվանդանոցին, չկարողացավ աստիճաններով բարձրանալ, չեմին մահացավ: Մյուսները հասնելուց մի քանի ժամ անց ավանդեցին հոգիները: Բժիշկ Ատկինսոնը մինչեւ վերջին շունչը ամեն կերպ, ինչով կարողանում, օգնում էր, մահից հետո կինը փոխարինեց նրան եւ այնքան ժամանակ, որ աշխատեց Մամուրեթ-ուլ-Ազիզում, ոչինչ չխնայեց թուրք մարտիկների համար: Առանց սխալվելու վախի կարելի է պնդել, որ ամերիկյան հիվանդանոցում շատ ավելի հոգատար էին նրանց վերաբերվում, քան, ինչպես կարելի էր հուսալ, թուրքականում:

1915 թվականի ամռան, աշնան աքսորներից հետո նախ մեզ թվաց, թե տեղերում քիչ հայեր են մնացել: Այդ թվում,

իհարկե, նրանք, ովքեր իմ հովանավորությունը ասպաստանել էին հյուպատոսարանում, մոտակա տներում, ապա Եփրատ քոլեջի աղջիկները, որոնց մեզ հաջողվել էր փրկել, ժամանակավոր արտոնություն ստացած ամերիկյան հիվանդանոցի բուժքույրերը, ծառայողները, վերջապես գերմանական ու դանիական որբանոցների սաներն ու դաստիարակները, որոնց նույնպես թույլատրված էր մնալ: Կարելու թույլությունը նկատի ունենալով իշխանությունները չէին աքսորել նաև մի շարք արհեստավորների: Սրանցից բացի մյուսների մասին մեզ ոչինչ հայտնի չէր: Ելնելով ստեղծված իրավիճակից որոշեցինք, որ թե՛ միսիոներները եւ թե՛ հյուպատոսարանը այլևս անելիք չունեն: Ես այդ մասին հարկ համարեցի տեղեկացնել դեսպանատանն ու պետական դպարտամենտին: Եվ, իրոք, տեղի ամբողջ առեւտուրը հայերի ձեռքին էր, միսիոներները հիմնականում հայկական միջավայրում էին գործում: Ու քանի վաճառականներ արդեն չկային, վերացել էին առեւտրական գործունեության բոլոր հնարավորությունները: Քրիստոնյա ազգաբնակչությունը նույնպես գոյություն չունեին՝ կրոնական, ուսումնադաստիարակչական ասպարեզներում առավել եւս ոչինչ հնարավոր չէր անել: Ամերիկյան միսիոնարական վարժարանների համարյա բոլոր պրոֆեսորները, տարբեր ուսուցիչների կեսը եւ աշակերտների երեք քառորդը տարագրված էին: Բացի այդ, զինվորական իշխանությունները մեր դպրոցական շենքերի յոթ-ութերորդը բռնագրավել էին: Սուլեյման Ֆաիկ փաշան մի օր այնքան բարեհաճ գտնվեց, որ ինձ վերադարձրեց այդ շենքերը, ասելով, որ կառավարությունն այլևս կարիք չունի: Ցավոք, մի շարքի հետո նրան այլ վայր տեղափոխեցին ու նորից, շատ չանցած, շենքերը բռնագրավեցին, եւ մենք այդպես էլ չկարողացանք հետ ստանալ: Միսիոներների կրոնական, ուսումնադաստիարակչական գործունեությունն ըստ էության դադարել էր եւ, նկատի ու-

նկատվում էր միայն հայերի շնչին քանակը: Հետագայում էլ վերականգնելու չէր չէր հայր կորույց էր լինել: 1916-ից ստեղծված հաշվարկով 130000 հայ էր հայրվում, ստորիս վերջին յուրաքանչյուր արտավանների թիվը մեծ էր նախորդածից ավելի էր թե՛



«Քիչ այն կողմ վեց, թե ութ ածխացած դիակներ տեսանք, որոնց որոշ ոսկորներն ու հազուստի ծվենները միայն չէին այրվել»:

Լուսանկարը՝ Լեսլի Դեյվիսի էֆո, անհետանկարի պետության կարիք էին գրում: Երանք մեկը մյուսի հետո ինչ էլիս աչքերում, խնդրում իրենց մասին Միացյալ Նահանգներում որևէ մեկին անգնակացել: Երբ մի քանիսին ընդատաջում էր, գնում, որիչնեքնե պատժում էին ու կույնխնայակամ ու բիչնեքնե էլ էին ինձ պնտում: Պատահում էր, օրտկանք քանակներում հայր էր ընդունում: Այդ անոնց միջին մեկնում, իմ ժամանակի, քանիքի մեծ մասը հատկացրել էր Միացյալ Նահանգների հայերին իրենց Քուրդիստան դրանք ըջ ազգաբանների մասին տեղեկացնելուն եւ հորդորելուն, որ երանց անհասարակ դրամ ազգաբանները Ալեքան, մեծանք ընթացքում, ոչխամ որտեղիս պետական

դեպարտամենտի միջոցով, այդ բովանդակությունը Հարյուրավոր նամակներ են հղել, նույնիսկ թելադրել են փոխանցումները Արտասահմանյան առաքելությունների Ամերիկայի լիազոր խորհրդի միջոցով կատարել, քանի որ այդ ժամանակ պետական դեպարտամենտը դեռևս նման գործերով չէր զբաղվում, նշածս կազմակերպությունն էր հանձն առնում Թուրքիա դրամ Հասցնել: 1915 թվականի սեպտեմբերի 30-ի իմ ճեպագրում այդպիսի երկու Հարյուր երեսուն նամակ կար, չնայած պատահել է նաև, որ այլ թղթատարերով միաժամանակ տասը, քսան, հիսուն ծրար են ուղարկել: Մի մասը Հասել է Հասցեատերերին, մյուսը՝ առգրավվել կամ կորել է: Ի վերջո, 1916-ի փետրվարից, ինչպես արդեն նշել եմ, ինձ արգելեցին նույնիսկ դեսպանատուն կնքված ծրարներ առաքելը: Հավատացնում էին, որ դա սոսկ ժամանակավոր միջոցառում է, սակայն սահմանափակումներն այդպես էլ չվերացան: Դրանից հետո Հայերին առնչվող շատ նամակներ հնարավոր չէր ուղարկել: Ես նախ փորձեցի մի քանիսը սովորական փոստով առաքել եւ, իրոք, առաջին երկու-երեքը Ամերիկա Հասել էին, սակայն, երբ էլի շարունակեցի նույն ձևով, իմ բոլոր թղթակցությունները կոստանդնուպոլսից հետ եկան, որոնց կցված ծանուցագիրը նախազգուշացնում էր, որ նման նամակներ չի կարելի ուղարկել: Իմ քարտուղարը, իր հերթին, մի քանի հոգու թուրքերեն բացիկներ ուղարկեց, որոնք, հույս ունեինք, արգելքի չէին հանդիպի, բայց ի վերջո պարզվեց, որ Ամերիկա շատ քիչ մասն է Հասել: Թերեւս ոչ մեկը չի Հասել: Ես տարբեր միջոցների էի դիմում Միացյալ Նահանգների Հայերին Թուրքիայում մնացած Հարազատների մասին տեղեկություններ հաղորդելու համար: Որոշ դեպքերում հեռագրում էի դեսպանատուն, խնդրում այս կամ այն լուրը տեղ հասցնել, որովհետեւ, ի տարբերություն նամակների, հեռագրեր երբեմն հասցեատերերն ստանում էին: Բավական ժամանակ

ես շարունակում էի այդ մարդկանց համար նամակներ գրել, որովհետեւ հույս ունեի, որ կնքված թղթակցություններ ուղարկելու արգելքը շուտով կվերանա, ես կկարողանամ փակ ծրարներ ուղարկել դեսպանատուն, որպեսզի այնտեղից էլ Միացյալ Նահանգներ առաքեն: Սակայն, քանի որ սահմանափակումները չվերացան, ի վերջո փորձեցի Միացյալ Նահանգներում հաստատված այն Հայերի անուն-ազգանուններն ու հասցեներն առաքել, որոնց ուզում էի Հայտնել, որ Թուրքիայի իրենց Հարազատները դրամի կարիք ունեն: Վաթսուն անուն-ազգանունից ու հասցեից կազմված մի ցանկ ես ստիպված եղա չորս անգամ ուղարկել, մինչեւ որ վերջապես Հասավ Հասցեատիրոջը: Կարծում եմ Հարկ չկա բացատրելու, թե ինչպես ինձ հաջողվեց փակ ծրարը բարեհաջող անցկացնել բոլոր արգելքներով:

Բարեբախտաբար 1915 թվականի ամռանն ու աշնանն իմ Հարյուրավոր փակ նամակները, ինչպես նաև թղթակցությունների որոշ մասը, Հասել էին Ամերիկա՝ ամուսիններին, Հայրերին, որդիներին տեղեկացրել, որ իրենց ընտանիքները կամ ընտանիքի որոշ անդամները փրկվել են ու դրամի կարիք ունեն: Իհարկե, շատ ժամանակ, մեծ համբերություն էր պետք այդքան վերապրողի հետ զրուցելու, այդքան նամակ գրելու համար, բայց ի վերջո պարզվեց, որ դա ամենաօգտակար գործերից մեկն է, որ ես Խարբերում գտնվելու ամբողջ ընթացքում արել եմ Հայերի համար՝ մանավանդ որ շատ շուտով, ոչ քիչ՝ երբեմն բավական շոշափելի միջոցներ ստացվեցին: Դրանց նշանակալի մասը Հասցեագրված էր Հյուպատոսարանում ապաստանած անձանց, որովհետեւ, եւ դա բնական է, ամենից առաջ նրանց համար էի նամակներ գրել: Ես իմ հովանավորյալներին, ինչպես նաև ուրիշների, կարողացա ոսկեդրամով վճարել: Հայերի մեծամասնությունը այդ գումարները պահում էր իմ չհրկիզվող սնդուկում, վերցնում այնքան, որքան տվյալ

պահին կարիք էր ունենում: Այդ ձևով խնայված ոսկեղրամը հետագայում մանավանդ, նրանց խիստ օգտակար եղավ, որովհետեւ աշնանը Թուրքիայում շրջանառութեան մեջ մտած թղթաղրամն արագ, այն աստիճանի արժեզրկվեց, որ 1917 թվականի մայիսին, երբ ես մեկնեցի Սարբերդից, ոսկեղրամի քառորդ արժեքն էր չուներ:

Հայերի բռնագաղթի, կոտորածի լուրերը Ամերիկա Հասնելուն պես, ովքեր նահանգներում էին, բայց Թուրքիայում հարազատներ ունեին, պետական դեպարտամենտի միջոցով սկսեցին նրանց ճակատագրով հետաքրքրվել: Հաջորդ տասնութ ամիսների ընթացքում ես պետական դեպարտամենտից երկու հարյուր յոթանասունյոթ, դեսպանատնից բազմաթիվ այլ հարցապնդումներ ստացա, որոնք հրահանգում էին պարզել այդ հայերի տեղն ու վիճակը: Եթե ես ժամանակին նամակներն ուղարկած չլինեի, նման հարցումներն անտարակույս անհամեմատ շատ կլինեին: Միայն պետական դեպարտամենտի հրահանգներում՝ հիմնականում Սարբերդում, Մամուրեթ-ուլ-Ազիզում, ինչպես նաև հարեւան գյուղերում գտնվող հազար երկու հարյուր հայի տվյալ էր հիշատակված, ընդ որում այդ բնակավայրերը հասնելու համար ոտքով երկուսից տասը օրվա ճամփա պետք էր կտրել: Հանձնարարականներն ստանալուն պես իմ դավազներին ուղարկում էի, որպեսզի հիշատակված անձանց կամ գոնե այնպիսի մարդկանց գտնեն, որոնք նրանց մասին տեղեկություն կունենան: Նման որոնումների ամենից հաճախ իմ դավազ Կարապետն էր գնում, նա հիանալի ծառայություն մատուցեց: Կարապետը, հիմնականում, փնտրված հայերին հյուպատոսարան էր բերում, որպեսզի ինքս զրուցեմ հետները, իսկ եթե հնարավոր չէր լինում, անհրաժեշտ տվյալները հայթայթում, հասցնում էր ինձ: Որքան երկար շարունակվեց այս ամենը, որքան շատ մարդու հետ շփվեցինք, այնքան հեշտ դարձավ բոլոր այն ան-

ձանց գտնելը, որոնց մասին մեզնից լուրեր էին սպասում: Բացի դրանից, ժամանակի հետ ավելի ու ավելի շատ հայեր վիլայեթի տարբեր գյուղերից ու գյուղաքաղաքներից հետզհետե գալիս, հաստատվում էին Մամուրեթ-ուլ-Ազիզում կամ Սարբերդում, որովհետեւ նախկին բնակավայրերում ապրելն անհնար էր դառնում: Ծատ շուտով մենք զբեթե յուրաքանչյուր գյուղաքաղաքում ու գյուղում գտանք մեկին, որը կարողանում էր մյուս բնակիչների մասին տեղեկություններ հայտնել կամ մեզ տրված հարցերին պատասխանել: Իհարկե հիշատակված անձիք մեծ մասամբ արդեն գոյություն չունեին, բայց որպես կանոն նրանց ընտանիքից կամ հարազատներից մեկնումեկը փրկված էր լինում եւ ցանկանում էր այդ մասին Ամերիկայում որեւէ մեկին հայտնել:

Անհամեմատ դժվար էր տեղեկություններ ձեռք բերել այնպիսի մարդկանց վերաբերյալ, ովքեր բնակվում էին այլ նահանգներում կամ Մամուրեթ-ուլ-Ազիզի հեռավոր ծայրամասերում: Սվազի կուսակալությունում գտնվողների մասին, օրինակ, այնքան ժամանակ, որքան հնարավոր էր, գրում էի տեղի ամերիկյան միսիոներներին, բայց նրանք հազվադեպ էին ի վիճակի լինում սպառօր պատասխան տալ: Ավելի ուշ մեր կապը ընդհանրապես խզվեց: Ինչ վերաբերում է Մալաթիայի, Արարկիի հայերին, քանի որ այդ քաղաքները գտնվում էին նույն վիլայեթում, բայց Մամուրեթ-ուլ-Ազիզից երկու օրվա հեռավորություն ունեին, նամակներն ուղարկում էի Թուրք քաթուրջիների միջոցով (այսպես էին կոչվում քարավանապետերը, իսկ քարավանը, ինչպես հայտնի է, Թուրքիայում ապրանք փոխադրելու հարմարագույն միջոցն է):

Քաթուրջիները, ճիշտ է, նամակները հաճախ տեղ հասցնում էին, բայց չափազանց անկանոն, Մալաթիայից կամ Արարկիից պատասխան ստանալու համար հարկ էր

լինում մեկ ամիս սպասել: Դա նաև կապի անապահով միջոց էր, քանի որ ոստիկանությունը ստեպ-ստեպ խուզարկում էր նրանց եւ չէր բացառվում, որ թղթակցություններն առգրավեր: Ամեն դեպքում մի որոշ շրջան ինձ Հաջողվեց անհրաժեշտ տվյալներ ստանալ վերոհիշյալ երկու քաղաքներում բնակվող Հայերի մասին:

Թաքնված Հայեր շատ կային նաև Դերսիմի լեռներում՝ Նարբերդի Հյուսիսում: Քանի որ նրանց որոշ մասի վերաբերյալ նույնպես ինձից տեղեկություններ էին խնդրել, ես հետները կանոնավոր կապ հաստատեցի այն քրդերի միջոցով, որոնք տանում-բերում էին նամակները: Հաճախ նրանք ծրարները կոչիկների մեջ էին թաքցնում, ինձ Հասցնում քրքրված վիճակում: Նամակների մի տրցակ էլ ավելի քան տարօրինակ ձեռով ձեռքս անցավ: Դերսիմից այն բերող քրդին ոստիկանությունը ձերբակալել ու խուզարկել էր: Տրցակը առգրավել, իրեն բանտ էին նետել: Սակայն, մյուզիրը, գրաքննությունն ավարտվելուց, ծրարները դրոշմակնքելուց հետո, բոլորն էլ, Հաճոյախոսություններով, ուղարկեց Հյուպատոսարան: Ընդհանուր Հաշվով նամակները տասներկուսն էին՝ ուղղված էին կամ ինձ, կամ միսիոներներին, կամ էլ ուրիշների, մեկը նույնիսկ՝ իմ միջոցով Հյուպատոսարանում թաքնված Հայի: Բարեբախտաբար բոլորն էլ անվտանգ բովանդակություն ունեին, մի մասը դրամի խնդրանք էր, մյուսը՝ անդորրագրեր՝ իմ, որպես օգնություն Դերսիմ առաքած գումարները ստանալու վերաբերյալ: Մյուզիրը, այն մարդու միջոցով, որը բերեց տրցակը, տեղեկացրել էր, որ եթե ուզեմ Հայերին էլի դրամ ուղարկել, կարող եմ դիմել ոստիկանության ծառայությունը:

Սովորաբար, երբ հեռվում գտնվող որևէ մեկի վերաբերյալ տեղեկություն ստանալու ոչ մի այլ միջոց չէր մնում, թուրքերեն նամակ էի գրում, Հանձնում փոստին: Բայց Հազվադեպ էի պատասխան ստանում: Որոշ դեպքերում էլ թղ-

թակցությունները, Հասցեատիրոջ բացակա լինելու մասին Հակիրճ մակագրությունը, հետ էին գալիս: Մի խոսքով մերթընդմերթ էի կարողանում որևէ նորություն իմանալ: Երբեմն թուրքերեն հեռագրում էլ էի, բայց գոհացուցիչ պատասխան միայն մի անգամ եմ ստացել: Փնտրվող անձնավորությունը թուրքահպատակ Հայի հետ ամուսնացած ամերիկուհի էր, ապրում էր Դիարբեքի քաղաքում: Պատասխանից Հայտնի դարձավ, որ ամուսինն էլ, ինքն էլ, երեսխան էլ լավ են: Ի վերջո, ես մի նոր ձեռք որդեգրեցի: Որպեսզի իմանամ, թե Սվազի կամ Դիարբեքի այն Հայերը, որոնցով հետաքրքրվում էին, տեղում են, թե ոչ, դրամատան միջոցով, որն այդ երկու քաղաքներում բաժանմունքներ ունեն, փոքրիկ գումարներ էի փոխանցում: Եթե նրանք այնտեղ էին լինում, դրամը վերցնում, ընկալագիրն ինձ էին ուղարկում: Հակառակ դեպքում փոխանցումն էր հետ գալիս: Դրանից հետո կարողանում էի հարցապնդմանը պատասխանել, պարզարանում էի, որ փնտրված անձնավորությունը տեղում է եւ կամ էլ՝ գտնել հնարավոր չէ:

Պետական ղեկարտամենտի, Հյուպատոսարանի հրահանգներում հիշատակված Հայերի վերաբերյալ բոլոր տվյալները ձեռք բերելուց հետո, ես ճեպագրերով Հանգամանորեն պատասխանում էի, որոնցից շատերը Հասնում էին տասը-տասներկու էջի: Առիթն օգտագործում, փորձում էի լուրեր Հաղորդել նաև նույն ընտանիքի մյուս ազգականների ու բարեկամների մասին, անկախ այն բանից նրանց վերաբերյալ տեղեկություններ պահանջում էին, թե ոչ, այնպես որ Նարբերդից մեկնելուց առաջ ես տեղի բազմաթիվ Հայկական ընտանիքներ ներկայացնող զեկուցագիր էի պատրաստել: Սակայն, սկզբում, իմ ճեպագրերի մի մասը առգրավվեց կամ կորավ, 1916-ի փետրվարից հետո էլ, ինչպես հիշատակել եմ, ի վիճակի չեղա ուղարկել: Ամեն պարագայի ճեպագրերը շարունակում էի կազմել՝ Հուսալով, որ

Հետագայում առաքելու Հնարավորություն կունենամ: Մի-
աժամանակ ես իմ քարտուղարին պատճենել էի տալիս այն
բոլոր թղթակցությունները, որոնք պետական ղեպարտա-
մենտ կամ ղեսպանատուն ուղարկվել, բայց տեղ չէին հա-
սել:

Թուրքիայի եւ Միացյալ Նահանգների դիվանագիտա-
կան հարաբերությունները խզվելուց որոշ ժամանակ
առաջ, մեր ղեսպանատունը կառավարության հետ համա-
ձայնություն կայացրեց, ըստ որի զինվորական իշխանութ-
յունների միջոցով մենք կարող էինք ամիսը մեկ անգամ
զմուսված ծրար առաքել: Հյուպատոսարանները այդ ձևով
պիտի տեղ հասցնեին կուտակված փոստը: Ես մեծ թվով
թղթակցություններ այդպես ուղարկեցի, բայց ոչ մեկն էլ
ղեսպանատուն չհասավ:

Չեմ կարող նկարագրել ցավն ու հուսահատությունը, որ
ապրեցի, երբ ստիպված եղա այրել իմ մի տարի վեց ամսվա
տքնանքի արդյունքը: Ես յուրաքանչյուր ղեպք հանգամա-
նորեն ուսումնասիրել էի, ամեն մի թղթակցություն
բժախնդրությամբ խմբագրել, օրերով չարչարվել, համար-
յա բոլոր գիշերները գրելով էի անցկացրել, հուսալով, որ եր-
բեւէ այդ բոլորը կհասցնեմ, տեղեկություններ կհաղորդեմ
նրանց, ովքեր Ամերիկայում անհամբեր սպասում են, իսկ
Թուրքիայում մնացած դժբախտ վերապրողներին կապա-
հովեմ այն օգնությունը, որի կարիքն այդքան շատ են զգում:
Սակայն, երբ արդեն հայրենիք էի մեկնում, խելամիտ չէր
այդ բոլորը հետս տեղափոխելու փորձ անելը, ինչպես նաեւ
տեղում թողնելը, քանի որ թուրքերի ձեռքը ընկնելու
վտանգին կենթարկվեր: Բացի դրանից որոշ ժամանակ անց
իմ զեկուցագրերը կկորցնեին իրենց օգտակարությունը,
քանի որ գրված էին շուտափույթ օգնության ակնկալիքով:

Բարեբախտաբար խնդրո առարկա անձանց մասին
անհրաժեշտ տվյալներ հաղորդելու այլ միջոց էլ գտա: Քա-

նի որ այլեւս անկարելի էր զմուսված ծրարներ ուղարկելը,
հասկանալի է, անիմաստ դարձավ նաեւ տեղեկությունները
սովորական փոստով առաքելու փորձ անելը, մանավանդ
որ հայերին վերաբերող նամակներն իսկույն առգրավվում,
նրանց ճակատագրին առնչվող մանրամասներ պարունա-
կող ճեպագրերը երբեք ղեսպանատուն կամ պետական ղե-
պարտամենտ չէին հասնում: Ուստի սովորություն դարձրի
բոլոր հարցումների պատասխանները կարճ հեռագրով
կոստանդնուպոլիս՝ ղեսպանատուն ուղարկել, խնդրել, որ
կարեւորները պետական ղեպարտամենտ հասցնեն: Քանի
որ պետական ղեպարտամենտի եւ ղեսպանատան հրա-
հանգները համարակալված էին, իմ պատասխանում նշում
էի համարը, ամիս-ամսաթիվը, որքան Հնարավոր է խուսա-
փում անուններ տալուց, իսկ եթե շատ էր անհրաժեշտ, հի-
շատակում էի հայկական անվան անգլիական տարբերակը
եւ տվյալ անձնավորությանն առնչվող կարեւորագույն
փաստերը: Օրինակ՝ «Պետական ղեպարտամենտի փետր-
վարի 15-ի թիվ 101 հրահանգ. ձեզ հետաքրքրող կինը ողջ
չէ, աղջիկը Դեյր-էլ-Ձորում է, դրամի կարիք ունի»: «Պե-
տական ղեպարտամենտի հունիսի 7-ի թիվ 142 հրահանգ.
հիշատակված առաջին անձնավորությունը դատեր եւ կրտ-
սեր որդու հետ այստեղ է: Դրամի կարիք ունի: Մյուսներն
այստեղ չեն»: «Պետական ղեպարտամենտի հունիսի 12-ի
թիվ 145 հրահանգ. առաջինի այրին եւ, բացի ավագից, բո-
լոր երեխաները Մալաթիայում են, ամենայն հավանակա-
նությամբ դրամի կարիք ունեն»: «Պետական ղեպարտա-
մենտի հունիսի 21-ի թիվ 150 հրահանգ. Սարբերդում, բացի
ձեզ հետաքրքրող էլիզաբեթի (էլիզաբեթը Եղիսաբեթի
անգլերենն է) քրոջ երկու զավակներից, ոչ ոք չկա: Դրամի
կարիք ունեն»: «Պետական ղեպարտամենտի օգոստոսի
11-ի թիվ 165 հրահանգ. Գարրիելի Հավաս աղջիկն այստեղ
մենակ է: Դրամի կարիք ունի»: «Պետական ղեպարտամեն-

Հետագայում առաքելու Հնարավորություն կունենամ: Մի-
աժամանակ ես իմ քարտուղարին պատճենել էի տալիս այն
բոլոր թղթակցությունները, որոնք պետական ղեպարտա-
մենտ կամ ղեսպանատուն ուղարկվել, բայց տեղ չէին հա-
սել:

Թուրքիայի եւ Միացյալ Նահանգների դիվանագիտա-
կան Հարաբերությունները խզվելուց որոշ ժամանակ
առաջ, մեր ղեսպանատունը կառավարության հետ համա-
ձայնություն կայացրեց, ըստ որի զինվորական իշխանութ-
յունների միջոցով մենք կարող էինք ամիսը մեկ անգամ
զմուսված ծրար առաքել: Հյուպատոսարանները այդ ձևով
պիտի տեղ հասցնեին կուտակված փոստը: Ես մեծ թվով
թղթակցություններ այդպես ուղարկեցի, բայց ոչ մեկն էլ
ղեսպանատուն չհասավ:

Չեմ կարող նկարագրել ցամախ ու հուսահատությունը, որ
ապրեցի, երբ ստիպված եղա այրել իմ մի տարի վեց ամսվա
տքնանքի արդյունքը: Ես յուրաքանչյուր ղեպք հանգամա-
նորեն ուսումնասիրել էի, ամեն մի թղթակցություն
բժախնդրությամբ խմբագրել, օրերով չարչարվել, համար-
յա բոլոր գիշերները գրելով էի անցկացրել, հուսալով, որ եր-
բեւէ այդ բոլորը կհասցնեմ, տեղեկություններ կհաղորդեմ
նրանց, ովքեր Ամերիկայում անհամբեր սպասում են, իսկ
Թուրքիայում մնացած դժբախտ վերապրողներին կապա-
հովեմ այն օգնությունը, որի կարիքն այդքան շատ են զգում:
Սակայն, երբ արդեն հայրենիք էի մեկնում, խելամիտ չէր
այդ բոլորը հետս տեղափոխելու փորձ անելը, ինչպես նաեւ
տեղում թողնելը, քանի որ Թուրքերի ձեռքը ընկնելու
վտանգին կենթարկվեր: Բացի դրանից որոշ ժամանակ անց
իմ զեկուցագրերը կկորցնեին իրենց օգտակարությունը,
քանի որ գրված էին շուտափույթ օգնության ակնկալիքով:

Բարեբախտաբար խնդրո առարկա անձանց մասին
անհրաժեշտ տվյալներ հաղորդելու այլ միջոց էլ գտա: Քա-

նի որ այլեւս անկարելի էր զմուսված ծրարներ ուղարկելը,
հասկանալի է, անիմաստ դարձավ նաեւ տեղեկությունները
սովորական փոստով առաքելու փորձ անելը, մանավանդ
որ հայերին վերաբերող նամակներն իսկույն առգրավվում,
նրանց ճակատագրին առնչվող մանրամասներ պարունա-
կող ճեպագրերը երբեք ղեսպանատուն կամ պետական ղե-
պարտամենտ չէին հասնում: Ուստի սովորություն դարձրի
բոլոր հարցումների պատասխանները կարճ հեռագրով
կոստանդնուպոլիս՝ ղեսպանատուն ուղարկել, խնդրել, որ
կարեւորները պետական ղեպարտամենտ հասցնեն: Քանի
որ պետական ղեպարտամենտի եւ ղեսպանատան հրա-
հանգները համարակալված էին, իմ պատասխանում նշում
էի համարը, ամիս-ամսաթիվը, որքան Հնարավոր է խուսա-
փում անուններ տալուց, իսկ եթե շատ էր անհրաժեշտ, հի-
շատակում էի հայկական անվան անգլիական տարբերակը
եւ տվյալ անձնավորությանն առնչվող կարեւորագույն
փաստերը: Օրինակ՝ «Պետական ղեպարտամենտի փետր-
վարի 15-ի թիվ 101 հրահանգ. ձեզ հետաքրքրող կինը ողջ
չէ, աղջիկը Դեյր-էլ-Չորում է, դրամի կարիք ունի»: «Պե-
տական ղեպարտամենտի հունիսի 7-ի թիվ 142 հրահանգ.
հիշատակված առաջին անձնավորությունը դստեր եւ կրտ-
սեր որդու հետ այստեղ է: Դրամի կարիք ունի: Մյուսներն
այստեղ չեն»: «Պետական ղեպարտամենտի հունիսի 12-ի
թիվ 145 հրահանգ. առաջինի այրին եւ, բացի ավազից, բո-
լոր երեխաները Մալաթիայում են, ամենայն հավանակա-
նությամբ դրամի կարիք ունեն»: «Պետական ղեպարտա-
մենտի հունիսի 21-ի թիվ 150 հրահանգ. Սարբերդում, բացի
ձեզ հետաքրքրող էլիզաբեթի (էլիզաբեթը Եղիսաբեթի
անգլերենն է) քրոջ երկու զավակներից, ոչ ոք չկա: Դրամի
կարիք ունեն»: «Պետական ղեպարտամենտի օգոստոսի
11-ի թիվ 165 հրահանգ. Գարրիելի Հավաս աղջիկն այստեղ
մենակ է: Դրամի կարիք ունի»: «Պետական ղեպարտամեն-

տի նույններին 13-ի թիվ 22 հրահանգ. միայն ութերորդ եւ տասնհինգերորդ անձնավորութիւններն են այստեղ»:
«Դեսպանատան ղեկտնման 2-ի թիվ 92 հրահանգ. ընտանիքի անդամներից ոչ ոք չկա: Ձեզ հետաքրքրողի դուստրը թերեւս Հալեպում է»:

Նման հեռագրերը, հասկանալի է, մեծ ջանքեր էին պահանջում, քանի որ հարկ էր լինում պատճենները փոստով ուղարկել Կոստանդնուպոլիս՝ գլխավոր հյուպատոսարան, եռամսյա հաշվարկի համար առանձնացնել երկուական օրինակ, յուրաքանչյուրի ծախսը ներկայացնել ամերիկյան արժեզրամով, եռամսյակի վերջում հաշվարկել ընդհանուր գումարը՝ չխոսելով արդեն այդ հեռագրերը կազմելու, թղթակցութիւնների մատչանում գրանցելու մասին: Այս ամենը, նաեւ, հավելյալ աշխատանք էր դառնում, քանի որ պարտադիր էր ամեն հրահանգի ճեպագրով պատասխանելը: Մեկ տարի ես ի վիճակի եղա նման հեռագրեր ուղարկել, որոնց մեծ մասը հասավ ղեսպանատուն: Հաճախ, նայած թե հրահանգների ինչպիսի փաթեթ էր ստացվում, միաժամանակ տասը-տասնհինգ պատասխան էի հղում: Իհարկե, նույնիսկ զարմանալի է, որ ես այդքան երկար կարողացա նման հեռագրեր ուղարկել, որոնք հիմնականում հասցեատերերին հասան, քանի որ հայերին վերաբերվող նամակները եւ որպես կանոն այն հեռագրերը, որտեղ հայկական անուններ էին հիշատակվում, գրաքննութիւնը առգրավում էր:

1917-ի փետրվարին, Միացյալ Նահանգների եւ Գերմանիայի դիվանագիտական հարաբերութիւնները խզվելուց հետո, իշխանութիւնների խստութիւնը ծայրահեղութիւն հասավ: Ինձ հայտնեցին, որ իմ նամակներն ու հեռագրերը տեղ չեն հասնի, եթե վրան պարզորեն չնշեմ, թե ում է ուղարկվում: Արգելվեց նաեւ օսմանյան հպատակներին առնչվող որեւէ տեղեկութիւն հաղորդելը: Դա լրացուցիչ

փոխադրանք էր ոչ միայն հայերի համար, ինչպէս էր ինքուրեզմբեկ կարգաւարտ մեծ ընկալ: քանի որ սրբապետ ղեկաւորութեանը ու ղեկաւորութեանը շարունակում էի հրահանգներ տալու, բայց պատասխանել չէի կարողանում: Ինչպէս ես համարեցի ստանալով էին ոչ միայն ինչպէս հայերը



Քրդերի՝ այծերի փչված տիկերով պարզագույն լաստերը, որոնցով նրանք հայերին անցկացնում էին Եփրատը, փոխադրում Գերսիմ, այնտեղից բարեհաջող ուսական սահմանը հասցնում:

Լուսանկարը՝ Լ. Մակ-Դանիելի

ղեկավարութեան միջոցով՝ ինչպէս ղեկաւորութեանը սրբապետութեանը փոխադրում էր ստանում, ինչպէս անցնում էր կամակով, համեմատաբար ու շարունակելով: Եւ մտնումները կատարում էի, կոր հարստութիւնը լինում էր, բայց անկախ այն քանից վնասում էր, թե ոչ, ամեն զեպր մտնի ստանալին հետապնում էի ղեկաւորութեան, այդ կերպ տուած ասիլին տարագործում, այդ մեծով հարստութիւն էր այն բոլոր տեղեկները, որ կարողանում էի հայերայինք եմի հասցեատերը մարտերում էր չլինում եւ որտեղ կարիք էր տեսնում, մի քանի ոչ ինչպէս համար էր պատահում, հետապնող ղեկաւորութեանը լինում էի ստապորին հարստութիւն: Միայն Հեռ մեկտեղ, համարի ստանալ ստիպված լինելու ստանալ

Հիշատակել, Հնարավոր էր դառնում միջոցներ Հայցել նաև ուղարկողի կամ ստացողի այլ Հարազատների Համար: Մեծ թվով գումարներ էլ Հասցեագրվում էին անձանց, որոնց Համար ես խնդրում էի, բայց որոնք այդ ընթացքում փախած էին լինում Ռուսաստան: Այդ դեպքում Հայտնում էի, որ ստացողը տեղում չէ, ենթադրում էի, որ վճարումը կարելի է կատարել Վիլոգրայ Սմիթի միջոցով: Գրաքննիչը ամենայն Հավանականությամբ զլխի չէր ընկնում, որ ես Թիֆլիսի ամերիկյան Հյուպատոսին եմ ակնարկում, բայց դեսպանատանը Հասկանում էին, որ անձնավորությունը, ում Հասցեագրված է դրամը, Ռուսաստանում է: Դեսպանատունը դրանից Հետո կարող էր գումարը Թիֆլիս ուղարկել, միաժամանակ առաքողին Հայտնել, թե որտեղ է Հարազատը: Այլ կերպ ասած, Հեռագրերը, որ Հղում էի դրամական փոխանցումների կապակցությամբ, երկար ժամանակ տարածաչրջանի Հայերի մասին տեղեկություններ Հաղորդելու մի նոր ձև, ինչպես նաև նրանց Համար լրացուցիչ նպաստ խնդրելու միջոց դարձան: Այսպես օրինակ. «Սեպտեմբերի 21-ի թիվ 30 վճարման կարգադրարի Համաձայն, առաջին, երկրորդ, չորրորդ, Հինգերորդ եւ յոթերորդ մուծումները կատարված են: Բոլոր Հասցեատերերը լավ են, նորից են օգնություն խնդրում: Երկրորդ Հասցեատիրոջ կրտսեր քույրը երեխաների Հետ այստեղ է եւ ցանկանում է, որ ամուսինն էլ դրամ ուղարկի: Երրորդ Հասցեատերը մեկնել է, Հայտնի չէ, թե ուր: Վեցերորդ Հասցեատերն էլ քաղաքում չէ, Վիլոգրայ Սմիթը թերեւս կարողանա վճարումը կատարել»:

Այսպիսով, դրամաբաշխումն ու դրան Հաջորդող նամակագրությունը բազմաթիվ առումներով Հյուպատոսարանի գործունեության թերեւս ամենակարեւոր ու էական մասը դարձան: Բոլորն էլ խոր Հուսահատություն ապրեցին, երբ դրամական փոխանցումները սկսեցին արգելքների Հանդիպել եւ, ի վերջո, Թուրքիայի ու Միացյալ Նահանգների Հա-

րաբերությունների խզումից Հետո վերջնականապես դադարեցին:

Իմ կատարած յուրաքանչյուր վճարման Համար ես երեք օրինակից ստացական էի պահանջում եւ չնայած ինքս Հնարավորություն չունեի անձամբ փոստով առաքել, Սարբերդից Հեռանալուց առաջ օսմանյան դրամատան Հետ պայմանավորվեցի մի շարք այլ Հաշվեթղթերի կապոցով Հասցնել դեսպանատուն: Ես ստացականների նախօրինակներն ու պատճենները, որոնք մոտ մեկ տարվա ընթացքում կուտակվել էին գրասենյակում, Հանձնեցի տեղական բաժանմունքին, որը եւ վերադիր վճարով, այլ առեւտրական փաստաթղթերի Հետ ուղարկեց Կոստանդնուպոլիս՝ օսմանյան դրամատուն: Բոլորն էլ ապահով տեղ էին Հասել, Հանձնվել դեսպանատուն, որտեղ եւ գտնվում են այժմ: Ստացականների պատճենները (երեք օրինակից) թողել եմ Սարբերդի Հյուպատոսարանի չՀրկիզվող սնդուկում:

Քանի որ ամենանպաստավոր պայմաններում անգամ ամիսներ էին անցնում, մինչեւ ի պատասխան ուղարկված նամակների ու Հեռագրերի՝ վերապրող Հայերի Համար դրամ էր ստացվում, այդ ընթացքում նրանց գոյությունը պահպանելը կենսական խնդիր դարձավ: Հայերի մեծ մասն անօթեւան էր, գտնվում էր ծայրաստիճան թշվառ վիճակում, օգնելու ունակ բարեկամ կամ օրվա Հացը վաստակելու Հնարավորություն չունեի: Շուտով, մինչեւ գումարների տեղ Հասնելը, նրանք սկսեցին ինձնից կանխավճար խնդրել: Մենք Հույս ունեինք, որ որպես պատասխան իմ՝ աշնանը Հղած նամակների, դեկտեմբերին կամ Հունվարին Արտասահմանյան առաքելության ամերիկյան լիազոր խորհրդից բազմաթիվ փոխանցումներ կստացվեն, բայց Հատկացումների ցուցակը առգրավվել, թերեւս կորել էր Կոստանդնուպոլիս ու Սարբերդի միջեւ, պատճենի մի օրինակը 1916-ի Հուլիսի վերջին Հազիվ ունեցանք: Մինչ այդ մարդկանց

կյանքը փրկելու համար դրամ էր անհրաժեշտ, որոշ ժամանակ ինքս՝ անձամբ սկսեցի կանխավճարներ տրամադրել: Բայց քանի որ ժամանակն անցնում, առաքումներն ուշանում էին, իսկ ինձնից ավելի ու ավելի հաճախ էին պարտք ուզում, հասկանալի է, այդպես երկար չէր կարող շարունակվել: Գրեցի դեսպանատուն, բացատրեցի իրավիճակը, ու դեսպանն անմիջապես արձագանքեց՝ այդ նպատակի համար միջոցներ ուղարկեց, հատկապես նշեց, որ չի ուզում, որ անձուկ պայմաններում հայտնված հայերը մինչև Ամերիկայից դրամ ստանալը տառապեն: Այդ ձևով ես սկսեցի կանոնավոր հատկացումներ կատարել, որն ավելացել էր իմ մյուս պարտականություններին, Պարբերդում մնալու ամբողջ ընթացքում խլում էր ժամանակիս զգալի մասը: Ամերիկյան միսիոներները նույնպես այդ ժամանակ միեւնույն գործին լծվեցին, տարածաշրջանի կարիքավորներին օգնելու ուղղությամբ մեծ աշխատանք կատարեցին: Նրանք պարբերաբար հաց, հագուստ էին բաշխում հազարավոր այնպիսի անձանց, որոնց կյանքն այդ տարրական միջոցներից էր կախված, որոնք առանց նման նպաստի չէին կարողանա մահից փրկվել: Այդ ընթացքում բազմաթիվ վերապրողներ, որոնց համար նամակով դրամ էի ուզել, կանխավճար տվել, շարունակում էին ինձնից նպաստ խնդրել: Նույն կերպ էր վարվում հայերի մեծ մասը՝ նրանք, որոնց մասին տեղեկություններ էին ինձնից պահանջել, որոնց համար գումար էի ուզել, մինչև փոխանցումների տեղ հասնելը խնդրում էին իրենց պարտք տալ: Ընդհանուր առմամբ մոտ հազար հոգու գոյությունը պայմանավորված էր իմ հատկացումներով: Կային նաև այնպիսիները, որոնց ես այս կամ այն չափով էի օգնում, ոմանց էլ հովանավորում էին միսիոներները: Չնայած այս ամենին, պահանջը խիստ մեծ էր, միջոցներն ու ծառայողների թիվը սահմանափակ, բոլոր կարիքավորներին հնարավոր չէր հասնել:

Դրամաբաշխության աշխատանքները ձեռնարկելուց որոշ ժամանակ անց ես անհրաժեշտ համարեցի շարաթվա մեջ միայն մի՝ ամբողջական օր դրան հատկացնել, քանի որ ամեն ակնթարթ կարիքավորները գալիս, իրենց խնդրանքներով ինձ խանգարում էին: Բացի դրանից, այդ ձևով իմ ջանքերն ավելի որոշակի արդյունք կտային, քանի որ բոլորին կկարողանայի միաժամանակ ընդունել: Ուստի տեղեկացրի, որ նպաստի հարցերով միայն երեքշաբթի եմ զբաղվելու, եւ, իրոք, հաջորդ տասնութ ամիսների բոլոր երեքշաբթիները բացառապես դրան նվիրեցի: Այդ օրերին ընդհանրապես երեք-չորս հարյուր հոգի էր գալիս հյուպատոսարան, հաճախ էլ խնդրարկուների թիվը հինգ հարյուրի էր հասնում: Սովորաբար հայերը հավաքվում էին առավոտյան ժամը 6-ին, 7-ից սկսում էի ընդունելությունը ու, յուրաքանչյուրի հետ անձամբ ծանոթանալով, շարաթվական մոտ հարյուր ընտանիքի կարողանում էի նեցուկ լինել: Սկզբում ձգտում էի այդ ամենը գաղտնի անել, հենց որ մարդիկ մոտենում էին հյուպատոսարանի դարպասին, հրահանգում էի բակ հրավիրել, որպեսզի ոստիկանները նրանց փողոցում սպասելիս չտեսնեն: Բայց ժամանակի ընթացքում համոզվեցի, որ իշխանությունները ոչ ոքի չեն արգելում ինձ հետ չփվել, ուստի դավաղներին թելադրեցի մի մասին փողոցում սպասեցնել, մյուսներին փոքր խմբերով ներս առաջնորդել: Այդպես կարգուկանոն պահպանելը հեշտանում էր: Շուտով իմ աշխատանքը ամենքին հայտնի դարձավ, եւ հաճախ պատահում էր, որ թուրք ոստիկանները իրենք էին օգնություն կարիք ունեցող հայերին հյուպատոսարան բերում: Ես նրանց հերթով ընդունում էի առաջին հարկի գրասենյակում, քարտուղարի, դավաղների օգնությամբ յուրաքանչյուրի վիճակը մանրամասն քննում: Ըստ էության, գրեթե բոլորի մասին էլ որոշ տեղեկություն ունեի, քանի որ շատ-շատերի վերաբերյալ նամակներ էի գրել կամ ստացել:

Ամեն դեպքում անընդհատ նոր մարդիկ էին հայտնվում, որոնցով հարկ էր լինում հանգամանորեն հետաքրքրվել: Որքան ժամանակ անցավ, այնքան ավելի լավ ճանաչեցի իմ խնդրարկուներին, այս կամ այն չափով ամեն մեկի վիճակին ծանոթացա: Ոոսքը, հասկանալի է, մեծ մասամբ կանանց ու երեխաներին է վերաբերում, տղամարդ շատ քիչ էր փրկվել: Ես նույնիսկ քարտադարան կազմեցի, առանձին թերթիկների վրա արձանագրեցի ամեն մեկի անուն-ազգանունը, բնակավայրը, ընտանիքի անդամների թիվը, յուրաքանչյուր վճարման ամիս-ամսաթիվն ու գումարը, մի շարք այլ տվյալներ, որոնք, թվում էր, անհրաժեշտ է գրանցել: Այս ամենից հետո, ելնելով ընտանիքի անդամների ընդհանուր թվից, եկամտի հավանական, այլ աղբյուրներից, մոտավորապես մեկ ամսվա համար նախատեսվող գումար էի տալիս, հայտնում, թե ով, երբ կարող է դարձյալ գալ: Տրամադրվող դրամը խիստ համեստ էր, հազիվ սովից չմեռնելու համար հաց գնելուն կրավականացներ, բայց միջոցները սահմանափակ էին, խնդրարկուները չափազանց շատ: Երբ նրանք, որոնց ես այս ձևով օգնում էի, իմ միջոցով փոխանցում էին ստանում, կանխավճարները գանձում, օգնության համար նախատեսված ընդհանուր գումարին էի ավելացնում: Հետո գրանցում էի անձնական թերթիկում, տարբերությունը վճարում: Եվ չնայած ես մտադրվել էի հայերին սոսկ ժամանակավորապես օգնել, հուսալով, որ երբ նպաստները տեղ հասնեն, ի վիճակի կլինեն հոգալ իրենց կարիքները, առաքված դրամը երբեմն այնքան քիչ էր լինում, որ իսկույն սպառվում էր եւ հարկ էր լինում նույն մարդկանց նոր միջոցներ հատկացնել, չնայած մեծ մասը փոխանցում այլեւս չէր ստանում:

Միսիոներներին եւ իմ՝ վերապրողներին սատարելու ջանքերը շուտով հայտնի դարձան ամբողջ վիլայեթում՝ այն աստիճանի, որ մեր նպաստից օգտվելու ակնկալիքով շա-

տերը թողեցին իրենց գյուղերն ու տեղափոխվեցին Սարբերդ կամ Մամուրեթ-ուլ-Ազիզ: Ոմանք մինչեւ անգամ Բալուից եկան, որովհետեւ կովկասյան ճակատում կովող թուրքական բանակի ռազմակայանը 1916 թվականի սկզբից տեղակայվել էր այնտեղ, ու ինչպես թուրք, այնպես էլ հայ ամբողջ քաղաքացիական ազգաբնակչությունը արտաքսված էր: Ընչազուրկ հայերի թվաքանակի կտրուկ աճը, որոնց գոյությունը բարեսիրություններ էր պայմանավորված, ավելի բարդացրեց մեր խնդիրները: Միսիոներները, որքան կարողանում, օգնում էին, բայց քանի որ անընդհատ նոր մարդիկ էին հայտնվում, բոլորին չէին հասցնում ընդառաջել: Ծատերը ուղղակի ինձ էին դիմում, եւ չնայած ես նրանց հատկացնելու ոչ ժամանակ, ոչ էլ միջոցներ ունեի, անհնար էր առանց սովամահությունից փրկելու համար ինչ-որ բան անելու հետ ուղարկելը: Նրանք մի պատառ հաց գտնելու հույսով գալիս էին հեռու-հեռուներից, գալիս էին ցնցոտիներով, քաղցած, պատսպարվելու տեղ չէին ունենում, մնում էին փողոցում եւ մահվանն էին սպասում, որն անխուսափելի կլիներ, եթե ուտելիք չգտնվեր: Միսիոներները, բացի Սարբերդից, հաց ու հագնելիք էին բաժանում Մամուրեթ-ուլ-Ազիզում, շատ-շատերին էին օգնության ձեռք մեկնում, բայց էլի մնում էին մարդիկ, որոնց համար իսկույն եւեթ ոչինչ չէին կարողանում անել: Մամուրեթ-ուլ-Ազիզում վերապրողների օգնությունն իրականացնում էին բողոքական քահանա՝ պատվելի Տրդատ Թամզարյանն ու կինը: Ի վերջո, ես սկսեցի նրանց մոտ ուղարկել Հյուսիսատոսարան օգնության խնդրանքով նոր դիմողներին, բաժանելու համար շաբաթական որոշակի գումար հատկացրի:

Ինչ խոսք, հայերին սատարելու մեր գործունեությունը բարդություններից զերծ չէր: Ճիշտ է, համարյա բոլորն էլ խիստ աղքատ էին, բայց մենք չէինք կարող հավասարա-

չափ օգնել, քանի որ ոմանց երբեմն հաջողվում էր աշխատանք, ուրիշներին ապրելու այլ հնարավորություններ գտնել, մինչդեռ մենք չենք հասցնում սատարել անգամ բոլոր նրանց, ովքեր ընդհանրապես զուրկ էին գոյություն միջոցներից: Պետք էր հետեւել նաեւ, որ ոմանք հասանելիքից ավելի չստանան: Կային այնպիսիները, որոնք փորձում էին միաժամանակ նպաստ ստանալ Պարբերդում՝ միսիոներներից, Մամուրեթ-ուլ-Ազիզում՝ պատվելի Տրդատից եւ ինձնից: Մենք շատ շուտ կարողացանք բացահայտել նման երեւույթները: Որոշ դեպքերում էլ նույն ընտանիքից երկու-երեք հոգի էին ներկայանում, եւ յուրաքանչյուրը բոլորի համար օգնություն էր խնդրում: Լինում էին նաեւ այնպիսիները, ովքեր ընդհանրապես օգնություն կարիք չէին ունենում: Ոմանք, օրինակ, իրենց գումարները պահ էին տալիս միսիոներներին, գալիս, նպաստի համար ինձ էին դիմում: Պատահում էին անգամ թուրքերի հետ ամուսնացած կամ կենակցող հայուհիներ, որոնք երեքշաբթի օրերին մյուսների հետ մոտենում, դրամ էին ուզում: Մենք պետք է միշտ աչալուրջ լինեինք նման կանանց նկատմամբ: Եղել են դեպքեր, երբ թուրք տղամարդն է հայ կնոջն ուղեկցել ու սպասել է փողոցում, որ նա ներս գա, փող խնդրի: Բարեբախտաբար դավազները ժամանակին կանխում էին ինչպես այս, այնպես էլ նման այլ փորձերը: Հասկանալի է, այդքան շատ մարդու սատարելիս վրիպումներից հնարավոր չէր խուսափել, բայց ես կարող եմ վստահեցնել, որ դրանք աննշան թիվ էին կազմում եւ թե՛ ինձնից, թե՛ միսիոներներից շատ քիչ մարդ է նպաստ ստացել, որ իսկապես դրա կարիքը չի ունեցել, որի տվյալները չեն ճշտվել:

Այն հայուհիները, ովքեր ապրում էին թուրքերի հետ, իրենց հայրենակիցների համար լուրջ վտանգ էին ներկայացնում, դժվարություններ հարուցում: Նրանց մեծ մասը պատրաստի լրտես էր: Երբ նման կին էր այցելում հյուպա-

տոսարան կամ միսիոներներին, հաճախ գնում, տեսածը պատմում էր թուրք մտերիմներին, նրանք էլ իրենց հերթին՝ իշխանություններին: Մի կին, որն ապրել էր Ամերիկայում, այնտեղ երեք երեխա ծնել, վերադարձել ու թուրք ուստիկանի՝ վալիի անձնական համհարզի սիրուհին էր դարձել, նրանից զավակ ուներ: Նա հաճախ էր գալիս հյուպատոսարան, եւ վստահ եմ, որ այդ ուստիկանին մանրամասն տեղեկություններ էր հաղորդում: Ամեն դեպքում իշխանությունները չարգելեցին իմ՝ ոչ դրամաբաշխական, ոչ էլ այլ բնույթի գործունեությունը, չնայած վստահ եմ, որ հաճախ շատ լավ գիտեին, թե ինչով եմ զբաղվում: Մի ուրիշ հայուհի, որը դարձյալ թուրքի հետ էր ապրում, զգալի նեղություն պատճառեց պատվելի Տրդատի կնոջը, որն սկզբում նրան հաց տվել էր, բայց հետո իմանալով, թե ում հետ է կենակցում, հրաժարվել էր օգնել: Այդ հայուհին սպառնացել էր վրեժ լուծել եւ, իրոք, կարողացավ շարաթներով բանտարկել տալ պատվելիի կնոջը, որը հղի էր, երեխայի ծնվելուց քիչ առաջ ազատվեց:

Հայերին սատարելու ընթացքում այլ կարգի խոչընդոտներ էլ էին պատահում: Նպաստ ստացողների մեծ մասը բացարձակապես անզրագետ էր, շատերը ընդունակ չէին անգամ ճշգրիտ հայտնել իրենց ազգանունը: Սա, պետք է ասել, մասամբ տվյալ շրջանի հայերի յուրահատուկ սովորույթի պատճառով էր: Նրանք, սովորաբար, որպես ազգանուն վերցնում էին իրենց հոր կնունքի ավագանի անունը եւ ավելացնում «յան» մասնիկը, որը նշանակում է այսինչի տղա կամ աղջիկ: Այս կարգը որոշ գեղջկուհիներ առանձնահատուկ ձևով էին զարգացրել՝ ամուսնանալուց հետո, փոխանակ իրենց ամուսնու ազգանվան, անունն էին վերցնում, ոմանք էլ ընդհանրապես ամուսնու անուն-ազգանունն անտեսում, հարս գնալուց հետո անգամ օրիորդական ազգանունով էին գրվում: Այսպիսով, ասենք Շուշանը՝ Գրիգոր

Կարապետյանի դուստրը եւ Գեւորգի՝ Արթին Պետրոսյանի որդու կինը կարող էր Հինգ տարբեր ձեւերով անվանվել: Ակնհայտ է, որ նա պետք է ասեր՝ ինքը Շուշան Գրիգորյան է կոչվում, որը նշանակում է, որ Շուշանը Գրիգորի աղջիկն է կամ էլ անտեսեր ամուսնացած լինելու Հանգամանքն ու օգտագործեր օրիորդական ճիշտ անուն-ազգանունը՝ Շուշան Կարապետյան: Մյուս կողմից էլ, եթե ընտանիքին մեծ կարեւորութիւն տար, պիտի ասեր, որ ինքը Շուշան Գեւորգյանն է՝ այսինքն Գեւորգի կինն է կամ էլ, քանի որ ամուսինն ամենայն հավանականութեամբ Հայտնի էր որպէս Գեւորգ Արթինյան (Գեւորգը Արթինի որդին է), դառնար Շուշան Արթինյան: Այլ Հանգամանք էլ կարող էր ծագել: Եթե ամուսինը Ամերիկայում գտնվեր, Հնարավոր է, որ որդեգրեր տեղական բարքերը, անվանվեր Գեւորգ Պետրոսյան, կինը՝ Շուշան Պետրոսյան: Ձի բացառվում նաեւ, որ բոլոր այս հայկական անունները փոխարինվեին ամերիկյան համարժեքներով՝ Գեւորգը դառնար Ջորջ, Պետրոսը՝ Փիթըր, Շուշանը՝ Լիլի: Այս դեպքում, եթե ամուսինը դիմեր պետական դեպարտամենտին, որպեսզի Ռարբերդի ամերիկյան Հյուպատոսի միջոցով կնոջ, երեխաների մասին տեղեկութիւն ստանար, ամենայն հաջողութեամբ կողակցին կարող էր կոչել Լիլի Փիթըրս, զավակներին՝ Համապատասխան ամերիկյան տարբերակներով, իրեն էլ Ջորջ Փիթըրս: Հասկանալի է, այս անվանումներից եւ ոչ մեկը ենթատարածքում Հայտնի չէր լինի: Ավելին, Հնարավոր էր, որ տվյալ անձնավորութիւնը մոռանար նույնիսկ գյուղի անունը Հիշատակել, որտեղ թողել էր ընտանիքը, եւ եթե այն Ռարբերդից մի քանի մղոն հեռու գտնվեր, փնտրվող անձին Հայտնաբերելը խիստ կղժվարանար, երբեմն նույնիսկ անհնարին կդառնար: Անուն-ազգանունների նման անճշտութիւնը ոչ միայն բարդացնում էր այն մարդկանց որոնելը, որոնց մասին ինձնից տեղեկութիւններ էին պահանջում,



Ռարբերդի Հովտի ավերակի վերածված Հայկական գյուղ, 1919 թ.:
Լուսանկարը՝ Լ. Մակ-Դանիելի

Սարբերդում իմ պարտականություններից մեկն էլ, անշուշտ, պատերազմող երկրների հպատակներին ամսավճար հատկացնելն էր: Ինչ խոսք, նրանց թիվը Թուրքիայի այդ շրջանում մեծ չէր, ամեն դեպքում կային մի քանի անգլիացիներ, ֆրանսիացիներ, ռուսներ, որոնք օգտվում էին այդ հատկացումներից, որոնց բաշխված գումարների վերաբերյալ հարկ էր լինում ամեն ամիս հաշվետվություն ներկայացնել:

Քրդերը մեր տարածաշրջանում մեծ թիվ էին կազմում, ցանկացած իրադարձությունում էական դեր խաղում: Թուրքական կառավարությունը երբեք չի կարողացել նրանց նկատմամբ վերահսկողություն սահմանել: Դա վերաբերում է մասնավորապես Դերսիմի քրդերին, որոնք գրեթե կիսանկախ կյանք են վարում: Ճիշտ է, իշխանությունների դրդմամբ քրդերը շատ հայ են կոտորել, բայց դրա հետ մեկտեղ, մեծ թիվ էին կազմում այնպիսիները, ովքեր իրենց գյուղերում ապաստան էին տալիս տարագիրներին, տարբեր ձևերով օգնում: Դերսիմի քրդերը շատ բան են արել հայերի համար: Ես բազմաթիվ այդպիսի մարդկանց էի ճանաչում, նրանց չափազանց բարեհոգի համարում: Ոմանք, այդ թվում՝ երեք երկար մորուքներով պատկառելի աղաներ, հաճախ այցելում էին ինձ: Այդ ծերունիներն ապրում էին Աղունիկ գյուղում, որը Ռուսաստան փախչող հայերի տարանցիկ կենտրոնը դարձավ: Ես երեքին էլ, ավելի մոտիկից ծանոթանալու համար, ճաշի հրավիրեցի, որը թվաց թե նրանց շատ շոյեց: Բայց նահանգապետը տեղեկացել էր, նախորդ երեկոյան, ինչ-որ պատրվակով նրանց տեղ էր ուղարկել, որի բուն պատճառը ավելի ուշ իմացա: Նա չէր ցանկացել, որ ես չափազանց մտերմանամ քիչ թե շատ թշնամաբար տրամադրված քրդերի հետ: Հետագայում պատահաբար հանդիպեցի նրանց, երեքն էլ ասացին, որ շատ կուզեին ինձ հետ ավելի հաճախակի տեսակցել, բայց

տվյալ իրավիճակում հյուպատոսարան այցելելը խլամիտ չեն համարում:

Այդ ժամանակ բոլորը, ինչպես հայերը, այնպես էլ քրդերը մեծ հույսեր էին կապում ռուսների գալու հետ եւ ակնհայտորեն ցանկանում էին նրանց հետ համագործակցել: Ամեն դեպքում ինձ բազմաթիվ անգամներ վստահեցրին, որ նահանգում ինչ էլ տեղի ունենա, ամերիկյան հյուպատոսարանը կմնա ամենաապահով տեղը: 1916-ի փետրվարին մենք կարծում էինք, որ ռուսները մի քանի շաբաթից Սարբերդ կհասնեն եւ քանի որ քաղաքից ոտքով երկու օրվա հեռավորության վրա էին գտնվում, շատ թուրքեր իրենց ընտանիքներն արդեն փախցրել էին: Նույն գարնանը Դերսիմի քրդերը կառավարության դեմ լուրջ ապստամբություն բարձրացրին, մի պահ նույնիսկ թվաց, թե Սարբերդ կմտնեն, թուրքերին կբռնեն, բայց զինվորական խոշոր միավորումներ տեղ հասան, նրանց հնազանդեցրին: Այնուհետեւ ձերբակալեցին հազարավոր քուրդ կանանց ու երեխաների եւ, ինչպես հայերին, աքսորեցին: Բայց իշխանությունները շատ շուտ հասկացան, որ քրդերի հետ չի կարելի նույն կերպ վարվել: Բռնագաղթը դադարեց:

1916-ի ամռանը, այն բոլոր հայերը, ովքեր թաքնվել էին Դերսիմում, կարողացան Ռուսաստան անցնել, նույն հուլիսով Սարբերդից ու Մամուրեթ-ուլ-Ազիզից շատերը Դերսիմ փախան: Սկզբում դա հուսալի միջոց չէր համարվում, բայց աշնանը պարզ դարձավ, որ ըստ էության բավական վստահելի է, այնպես որ շատ-շատերը դիմեցին այդ քայլին: Քրդերը լեռներից իջնում՝ երբեմն խոշոր, երբեմն համեմատաբար համեստ գումար պահանջելով, հայերին մեծ խմբերով Դերսիմ էին տանում: Փախստականներից ոմանց ոստիկանությունը հայտնաբերեց, որոշ ժամանակով բանտ նետեց, մի քանիսն էլ ձերբակալվելու ժամանակ սպանվեցին: Ամեն դեպքում շատերը փախան, ողջ-ատոջ տեղ հասան: Չնա-

յած որոշակի վտանգավորութեանը, Հայերի փրկութեան այս միջոցն այնքան գործնական էր, որ բոլորին գրեթե ապահով էր թվում: Պարզ է, որ թե՛ միսիոներների եւ թե՛ ինձ համար Հանդգնություն էր փախստականներին օգնելը: Ես իհարկե չգիտեմ, թե ուրիշներն ինչ կարողացան անել, բայց ինքս շատերին աջակցեցի, շատ-շատերին փող տվեցի, որոշ դեպքերում էլ անձամբ տարա, քրդերին հանձնեցի: Անշուշտ, եթե բռնվեի, հետեւանքները ծանր կլինեին: Սակայն, նման բան չպատահեց, եւ որոշ անձիք, որոնք այլ կերպ հաջողութեան ոչ մի հույս չէին կարող ունենալ, այնուամենայնիվ փրկվեցին⁶¹: Պարզ է, Հայերին ընդառաջելը առանձնահատուկ մտեցում պահանջող խնդիր էր, անհրաժեշտ էր մեծագույն խոհեմութեամբ գործել: Շատ-շատերը նրանցից, ովքեր ապաստանել էին Հյուսիսատոսարանում, նպաստ ստացել, որոնցով Ամերիկայի հարազատները հետաքրքրվել էին, ի վերջո անցան Ռուսաստան: Նրանց զգալի մասը քրդերի միջոցով նամակ էր ուղարկում, մնացածներին էլ շտապեցնում:

Ես արդեն հիշատակել եմ որոշ Հայերի, որոնք բռնագաղթի հենց սկզբում Հյուսիսատոսարանում էին պատսպարվել: Հետագայում, երբեմն-երբեմն ուրիշներ էլ էին միանում նրանց, բայց պարզ է, սահմանափակ թվով վերապրողների կարող էի այդպես օգնել: Համենայն դեպս, մոտ երկու տարվա ընթացքում Հյուսիսատոսարանում քսանից-երեսուն Հայ ապրել է: Երբ դա անվտանգ էր թվում, ես որքան հնարավոր է արագ, այդ ընտանիքներին տեղավորում էի մոտակա տներում, որտեղ շարունակում էին օգտվել իմ հովանավորությունից: Իհարկե, բոլորի համար նման պայմաններ չէի կարող ապահովել եւ խոհեմություն էլ չէր, որ տղամարդիկ դրսում ապրեին: Ահա թե ինչու նախ ջանում էի նրանց աջակցել, մինչեւ որ հնարավորություն ստեղծվեր, մեկնեին Թուրքիայից: Եթե դա անհնարին էր դառնում, ամեն ինչ

անում էի, որ հնարավորին չափ շուտ Ռուսաստան փախչեն:

Հյուսիսատոսարանում ապաստանած տղամարդկանցից մեկը Սեդրակ Դանիբեյան (Սամուել Դանիել) էր կոչվում, իբր ամերիկյան քաղաքացի էր, ինչ-որ թուրք բարեկամ ամբողջ ամառը թաքցրել էր հայրենի Քեսիրիկ գյուղում: Հետո նրան դոկտոր Ատկինսոնի հսկողությամբ պառկեցրել էին ամերիկյան հիվանդանոցում, որտեղից էլ 1915 թվականի հոկտեմբերին բժիշկն անձամբ ինձ մոտ բերեց, խնդրեց պատսպարել: Ես միտոր Սեդրակին մոտ մի տարի հաջողությամբ պահեցի, որից հետո կարողացավ փախչել Ռուսաստան եւ ի վերջո Միացյալ Նահանգներ հասնել: Մի քանի շաբաթ առաջ Բոստոնում հանդիպել եմ նրան:

Մեկ ուրիշը՝ Առաքել Մ. Արթինյանը, երկար տարիներ Միացյալ Նահանգներում վարսավիր էր եղել, ամերիկյան հպատակություն ընդունել: Հետագայում վերադարձել էր իր հեռավոր գյուղն ու մի օր, ամեն ինչ կորցրած, Հյուսիսատոսարան մտավ: Ես նրան նույնպես մի ամբողջ տարի պատսպարեցի, մինչեւ Միացյալ Նահանգներից՝ եղբոր օգնությամբ ուղարկելը ապրելու միջոցներ հատկացրի: Նա նույնպես Ռուսաստան փախավ: Իմ քարտուղարը՝ Հարություն Բեքմեդյանը, չնայած փորձ արեց, բայց չկարողացավ փախչել եւ ճարահատ Հյուսիսատոսարան վերադարձավ: Ես նրան մինչեւ նահանգապետից՝ Հյուսիսատոսարանում մշտապես բնակվելու արտոնություն ձեռք բերելս, թաքցրի: Հարություն Բեքմեդյանը, քանի դեռ Սարբերդում էի, մնաց ինձ մոտ, չնայած ուրիշների նման Դերսիմով Ռուսաստան հասնելու շատ առիթներ ունեցավ: Միացյալ Նահանգներ վերադառնալուց հետո ես պարբերաբար լուր եմ ստանում նրանից եւ ուրախությամբ պիտի վկայեմ, որ ողջ-առողջ է: Իմ մեկնելու օրը տեղի զինվորական հրամանատարը խոստացավ հովանավորել նրան:

Միսիս էթել Մարստոն-Աղազարյանը, որն ամերիկուհի էր, ընտանիք էր կազմել Հպատակություն ընդունած մի Հայի Հետ, նրա Հետ էլ պատերազմը սկսվելուց մի քանի տարի առաջ եկել էր Թուրքիա: Նա երկու երեխաների Հետ 1915-ի աշնանը Պարբերդ Հասավ: Ընտանիքը բնակվել էր Հեռավոր մի գյուղում, որտեղ ամուսնուն սպանել էին: Ես միսիս էթելին որոշ ժամանակ Հյուպատոսարանում պահեցի, Հետո մոտակայքում տուն վարձեցի, տեղավորեցի: 1916 թվականի Հուլիսի 25-ին, նրան եւ Վարթեր Նազլինին իրենց երեխաների Հետ կարողացա կոստանդնուպոլիս ուղարկել: Ինձ Հաջողվեց միայն այդ երկու ընտանիքին մայրաքաղաք փոխադրել, չնայած շատերի Համար էի փորձել Թույլտվություն ստանալ: Միսիս Մարստոն-Աղազարյանին նաեւ խորհուրդ տվեցի Թաքցնել ամուսնու ազգանունը, նա ճանապարհորդեց օրիորդական՝ Մարստոն ազգանվամբ, որն այդ ժամանակ շատ հեշտացրեց գործը: Հասկանալի է, նրա, ինչպես նաեւ այս Հաշվետվությունում Հիշատակված բազմաթիվ անձանց կապակցություններ ես պետական դեպարտամենտի Հետ Հանգամանալից նամակագրություն եմ ունեցել: Ավելացնեմ, որ միսիս էթելի՝ Պարբերդում բնակվելու, ինչպես նաեւ կոստանդնուպոլիս ուղեւորվելու բոլոր ծախսերը օգնության Հիմնադրամից ինքս եմ Հատկացրել, քանի որ ոչ մի Հարազատից ոչ մի սենթ չեմ ստացել: Ամերիկուհին ի վերջո կարողացավ Միացյալ Նահանգներ վերադառնալ, բայց Վարթեր Նազլինը, դուստրը մինչեւ Հիմա կոստանդնուպոլսում են, նրանց Թույլ չեն տալիս երկիրը թողնել:

Հյուպատոսարանում Հաստատված տղամարդկանց թվում էր միստր էլիա Ղասարյանը, որն ամերիկահպատակ էր, մոտ քսանյոթ տարի ապրել էր Միացյալ Նահանգներում, պատերազմն սկսվելուց քիչ առաջ, Հարազատներին տեսնելու Համար, Պարբերդ էր վերադարձել: Սեպտեմբեր-

յան մի օր կանացի Հագուստներով, Թրքուհու նման քողով ծպտված, Հյուպատոսարան մտավ: Նա պատմեց, իսկ այնուհետեւ, իմ խնդրանքով մանրամասն գրեց այն ամենը, ինչ իր Հետ պատահել էր: Բռնագաղթի ժամանակ քրդերը նրան նախ Թաքցրել էին մոտակա Սուլլու գյուղում, ավելի ուշ՝ լեռներում, կյանքը փրկելու Համար անընդհատ տեղից տեղ էին փախցրել: Նա, որպեսզի չբռնվի, օրեր շարունակ ցելսոտ փոսում էր մնացել, գիշերներն էին միայն ուտելիք բերել: Շատ գիշերներ էլ լեռներում, Չարխափանի լանջերին, որի մասին արդեն պատմել եմ, բաց երկնքի տակ էր անցկացրել, Հազարավոր դիակներ տեսել: Նա Հյուծված էր, Ֆիզիկապես ու Հոգեպես տանջված, մտավ իմ աշխատասենյակը, ասաց, որ գնալու տեղ չունի, մնալու Թույլտվություն խնդրեց: ԻՀարկե, ես Համաձայնեցի, տարի ու կես պահեցի:

Հյուպատոսարանում երկար ժամանակ ապաստանել է նաեւ միստր Ռուբեն Ճանճիկյանը, ում Բոստոնում Հաստատված եղբորորդին բազմաթիվ անգամներ՝ պետական դեպարտամենտի եւ Արտասահմանյան առաքելությունների ամերիկյան լիազոր խորհրդի միջոցով Հետաքրքրվել է նրա, ընտանիքի մյուս անդամների ճակատագրով: Նա 1916-ի փետրվարին Հյուպատոսարան եկավ, մի տարի մնաց: Այդ ընթացքում միայն մի անգամ՝ Հաջորդ տարվա Հոկտեմբերին շենքից դուրս եկավ, շատ-շատերի Հետ փորձեց Դերսիմ անցնել: Նա ճամփա էր ընկել գիշերով, բայց ոստիկանները, որոնց տեղեկացրել էին, որ քրդերը գալու են փախստական Հայերի տանեն, քաղաքից մի քանի մղոն հեռու դարան էին մտել: Շատերը, որոնց թվում եւ միստր Ճանճիկյանը, ձերբակալվեցին: Նա տվել էր մոտը եղած ամբողջ ոսկին, ոսկե ժամացույցը, եւ ոստիկանը նրան արվարձանային ինչ-որ տուն էր տարել, ասել էր, որ գիշերը կարող է այդտեղ անցկացնել: Առավոտյան միստր Ճանճիկյանն

ինձ լուր ուղարկեց, Հայտնեց գտնվելու վայրը: Ես գնացի, նրան Հյուպատոսարան բերեցի, որտեղից մինչև փետրվարի վերջն այլևս դուրս չեկավ: Մի օր պատուհանից ցույց տվեց իրեն ձերբակալած ոստիկանին, ասաց, որ բախտը բերել է, խզով մարդու է Հանդիպել: Արդեն Հիշատակված Զավեն Մուշեղյանը նույնպես նրանցից էր, ովքեր այդ գիշեր ուզել էին Դերսիմ Հասնել, բայց երբ ոստիկաններն սկսել էին ձերբակալությունը, փախել, Հյուպատոսարան էր վերադարձել:

1917 թվականի փետրվարին Սարիթ բեյին այլ աշխատանքի նշանակեցին, Մամուրեթ-ուլ-Ազիզ նոր նահանգապետ պիտի գար: Սարիթ բեյը Հայերի Դերսիմ փախչելը կանխելու համար առանձնապես ջանք չէր թափում: Ինչպես արդեն նշել եմ, ինքն էլ էր նույն շրջանից, ըստ երեւույթին ճիշտ էր համարում այն քրդերին չխանգարելը, ովքեր Հայերին Ռուսաստան հասցնելով, փող էին աշխատում: Դժվար է ասել՝ նրան այդ գումարներից բաժին հասնում էր, թե՞ ոչ: Հավանաբար քրդերի հետ բարեկամական հարաբերությունները պահպանելու մղումով պետք է բացատրել այն հանգամանքը, որ նրա՝ Հայերի փախուստը կանխելու ջանքերը ո՛չ համառ էին, ոչ հետեւողական: Երբ ես համոզվեցի, որ Սարիթ բեյը հեռանալու է Պարբերդից, մտածեցի, որ բոլոր նրանք, ովքեր ուզում են, քանի դեռ հնարավոր է, պետք է փախչեն, մանավանդ որ Միացյալ Նահանգները Գերմանիայի հետ դիվանագիտական հարաբերությունները խզել էր, որոշ ժամանակ անց Ամերիկայի ներկայացուցիչը Թուրքիայում թերեւս մարդկանց հովանավորելու հնարավորություն չունենար: Անշուշտ, մեծ թիվ էին կազմում այն Հայերը, որոնց ես նախորդ տասնութ ամիսներին պատուպարել էի Հյուպատոսարանում, որոնք կարողացել էին Դերսիմ, այնտեղից էլ Ռուսաստան անցնել, բայց դեռեւս մնում էին իմ հիշատակած երեք անձնավորությունները՝

էլիա Ղասարյանը, Ռուբեն ճանճիկյանը, Զավեն Մուշեղյանը: Ես գիտեի, որ հենց մեկնեի, նրանց կյանքը կվտանգվեր: Նրանք ժամանակին չէին կարողացել փախչել, այնպես որ եթե ուզում էի ինչ-որ բան անել, չպետք է հապաղեի: Ուստի երեքին էլ որոշեցի ինքս ուղեկցել:


Փետրվարի 25-ի առավոտյան նրանց տարա Մամուրեթ-ուլ-Ազիզից չորս ժամ հեռու գտնվող քրդական մի գյուղ: Մենք, չնկատվելու համար, առավոտ շուտ ճամփա ընկանք: Զմռան ամենացուրտ օրերից էր, ջերմաստիճանը քսանից ցածր կլիներ, մրրկահողմ էր փչում: Կարծում եմ ոչ ոք քաղաքից մեր դուրս գալը չնկատեց: Մեզ հետ էին նաեւ իմ երկու դավազները, մենք երկու ձի, մի ավանակ ունեինք: Քանի որ վեց հոգի էինք, որոշել էինք հերթով հեծնել, բայց այնքան ցուրտ էր, որ չստոչելու համար նախընտրեցինք քայլել: Մենք ոտքով հաղթահարեցինք ամբողջ ճանապարհն ու լույսը բացվելուց քիչ անց հասանք Հիշատակածս գյուղը:

Ինքս մի շարաթ առաջ արդեն եղել էի այնտեղ, քրդերից մեկի հետ պայմանավորվել, որ երեք տղամարդուն էլ փախցնի: Մեր խումբը գյուղ չմտած կանգ առավ, ու մինչ դավազներիցս մեկը կզնար, քրդին կկանչեր, ճանապարհի եզրին նախաճաշեցինք: Իմ դավազը շատ շուտ, քրդի հետ վերադարձավ: Վերջինս ասաց, որ լավ կլինի երեք փախուտականները հնարավորին չափ արագ գյուղ մտնեն, որովհետեւ, երբ մոտ մի ժամ առաջ անցել էինք Թուրքական բնակավայրից, որի բնակիչները շատ մոլեռանդ էին եւ որտեղ հնարավոր է, որ զինվոր-ոստիկաններ լինեին, մեզ նկատել էին: Երեք Հայերը, առանց ժամանակ կորցնելու, քրդի հետ շարունակեցին իրենց ճանապարհը եւ այն պահին, երբ գյուղ էին մտնում, մեր ետեւի բարձունքին մի զինվոր-ոստիկան հայտնվեց: Նա արագ անցավ մեր կողքից ու առանց բառ փոխանակելու, ուղիղ գյուղ գնաց: Քուրդը,

սակայն, հասցրել էր հայերին ուրիշ տեղ թաքցնել, իսկ երբ զինվոր-նաստիկանը գյուղ էր մտել, ընդունել էր իր տանը: Ըստ երեւույթին ուրիշ զինվոր-նաստիկանների էլ էին հայտնել այդ փախուստի մասին, որովհետեւ ինձ հետո տեղեկացրին, որ օրվա ընթացքում վեց հոգի են գյուղ եկել, բայց քրդերը բարյացակամ են գտնվել, ոչ ոք չի մատնել հայերի տեղը: Զինվոր-նաստիկաններն, ի վերջո, հեռացել էին, եւ նույն երեկոյան քրդի տղան երեքին էլ լաստով անցկացրել էր Եփրատը: Ես դավազներիս հետ տուն վերադարձա, բայց հաջորդ առավոտյան մեկին ուղարկեցի, որպեսզի իմանամ, թե ինչպե՞ս է ավարտվել փախուստը: Իմ դավազը, վերադառնալով, բոլոր մանրամասները պատմեց, իսկ մի քանի օր անց երեք հոգուց էլ, իրենց ձեռքով զրկած նամակներ ստացա, որոնք տեղեկացնում էին, որ ողջ-առողջ Ազունիկ են հասել: Հետո Ռուսաստան անցան: Ամենայն հավանականությամբ իշխանություններն այս ամենն իմացել էին, որովհետեւ մի քանի շաբաթ անց փախուստը կազմակերպած քրդին ու նրա ամբողջ ընտանիքին աքսորեցին: Չգիտեմ, կառավարությունը տեղյակ դարձա՞վ իմ մասնակցությունը: Ճիշտ է, ինձ ոչ ոք ոչինչ չակնարկեց, բայց հակված եմ կարծելու, որ նրանց ամեն ինչ հայտնի էր:

Որոշ ժամանակով հյուպատոսարանում հաստատված հայերի թվում էր Աղավնի Տեր-Հակոբյանը՝ մի դեռատի կին, որի եղբայրն ու քույրը ապրում էին Մասաչուսեթսում՝ Նյուրեքիպորտում: Նրանք պետական դեպարտամենտի միջոցով բազմաթիվ անգամ տեղեկություններ էին պահանջել իրենց քրոջ, Թուրքիայում մնացած մյուս հարազատների մասին, ինձ խնդրել էին նրանց համար հնարավոր ամեն ինչ անել: Աղավնին Սարբերդում երկու քույր ուներ, որոնցից Մարիցա Յաղջյանը հեռու գյուղում էր ապրում, երեխաներից մեկը նրա մոտ էր թողել: Մյուսը՝ Բրաբիոնը, որը կրտսերն էր, Նուրի բեյ կոչվող մի թուրքի հետ էր

ամուսնացել հասարակել հայերին կողքի դնելու մի քանի օր քայլն ընկել էր անհաշու թյան ժամանակ, որոնով փրկել էր իր եւ քրոջ՝ Աղավնի կյանքը: Նրա համար, թվում էր, այնու ոչինչ չէր հարկի տեղ: Աղավնի



Սարբերդի՝ մասնակիորեն ավերված հայկական թաղը 1919-ին:
Լուսանկարը՝ Լ. Մակ-Դանիելսի

կանց անհաշու թյան մեկով եւ շուտով քայլեր էին արվում հայերի կան երեխա ունեք, որոնց քայլերն ուսուցանելու, Ես սովորեցնեմ: Զենուցին մի գիշեր կեղծաբանություններ քի խոսեց համար էր բնակչի հետեւ ընտրույ, նորամիտք գրկին քայլեր էր բռնույցն առանձնապես, հարկույն մարտնեթով ժամկետ համարույց:

Նրանք հաջորդ ամբողջ հասել էին երբևէ, որտեղ մի քայլը պիտի զինավորեք, գրանտ անկեղծներ: Բայց նա չէր երեւուցել: Հայերն սպասեց էին մի ամբողջ օր ու դիմեր: Ի վերջո, թուրքերը թնայեց էին նրանց ժամին, մատնել: Տիրույթ-նաստիկանները քայլերն զայցած ու տեղեկված, հարկուցնին, Մամուրի՝ ուղի-Աղից քնքեցին, շատերին բանտ ներ տեղին: Երբ Բրաբիոնը հայտնեց էր, որ նուրի քեյի կինն է չէին մերթադարյոց, ամուսնու հետեւից մարդ էին ուղարկել:

տեղադրելու հասցրել էր հայերին ուրիշ տեղ թաքցնել, իսկ երբ
գնեվոր-ուստիկաներ չգրոց էր մտել, ընդունել էր իր տանը:
Շատ երևալիքն ուրիշ գնեվոր-ուստիկանների էլ էին հայա-
նեց ապ փախուստի մասին, որովհետև ինձ հետո տեղե-
կացրին, որ որպես ընթացքում գեց հայերին դուրս եկելու: Ես
քրտերը բարձրացնեմ ևն գտնվեց, ոչ որ չի մարտնել հայերի
տեղը: Ձինգոր-ուստիկաններն, ի վերջո, հետացել էին, և
տեղն երեկոյան քրտի տղան երեքին էլ բառաւով անդկացրել
էր նեմուսար: Ես գաւխալեւեղիս հետ տուն վերադարձաւ, բայց
հայերու ստաւառայան միջոցով ինձ հարցաւ, որպէս ինչպէս
ինն ինչպէս էի աւտուստ:



Ես որ բարձրացնեմ անց փախուստի փախուստից
գրոց էր ինձ վրէժնաւոր հայերին միջոցով ձերեւա՞
հարցաւ, ինձ չի գրոց հարցաւ: Գ իմ մասնակցութեա-
լը մեղա է, ինձ ոչ ոք ոչինչ չանկարելեց, բայց համբաւ եմ
կարծեցու, որ նրանց սկիւն ինչ հայտնի էր:

Որոշ ժամանակով հիւսուստուսարանում հաստատուած
հայերի թիւում էր Աղաւթի Տեր-Հակոբյանը՝ մի գետաւոր
կին, որի եղբայրն ու քույրը սպրում էին Մարաշուստիկանում՝
նշուրիբիւզարտում: Նրանց պետական գեղաբարձունենուր
միջոցով շաղմարիով անդամ անդեկտիլուններ էին սպա-
հանելու իրենց քրոջ, Քուրքիայում մնացած մյուս հարա-
զատներին մասին, ինձ խնայել էին նրանց համար հետադարձ
տանն ինչ անելու Աղաւթին խորհրդում երկու քույր տանը,
որոնցից Մարիցա Յաղջանը հետո գյուղում էր սպրում,
երկուսուկից մեկը նրա մաս էր թողել: Մյուսը՝ Բրարիանը,
որը կրտսերն էր, նուրի թե կաշիով մի թուրքի հետ էր

ամուսնացել, հաստատուել Հուսեյնիկի կողքի գյուղում:
Բրարիոնը այդ քայլին դիմել էր տեղահանութեան ժամա-
նակ, դրանով փրկել էր իր եւ քրոջ՝ Աղաւթիի կյանքը: Նրա
համար, թվում էր, այլևս ոչինչ չի կարելի անել: Աղաւթիի՝
հյուպատոսարանում տեղավորվելուց մի քանի ամիս անց
ավագ քույրը՝ Մարիցան, մյուս երեխայի հետ եկավ: Նրա
ամուսնուն սպանել էին, մի քուրդ, որն ուզում էր Մարիցա-
յին կնութեան վերցնել, հետը երկու օրով Մամու-
րեթ-ուլ-Ազիզ էր բերել: Հասկանալի է, այրին ձգտում էր
ազատվել քրդի ձեռքից, հարմար առիթ էր փնտրում: Նա
քաղաքում որոշ ժամանակ մնաց ու հենց քուրդը գործով
տեղ էր գնում, շտապում էր քրոջը տեսնելու: Վերջում, երբ
քուրդը ուզեց հետը գյուղ վերադարձնել, հյուպատոսարան
եկավ, ինձնից մնալու թույլտվութիւն խնդրեց: Ես, իհարկե,
համաձայնեցի: Քուրդն ամեն տեսակ սպառնալիք տեղում
էր, հետո գնաց եւ այլևս մեզ չանհանգստացրեց:

Մի քանի ամիս անց քույրերը հյուպատոսարանին կից
տուն ընտրեցին, տեղափոխվեցին: Բրարիոնը գյուղից
նրանց տեսութեան եկավ եւ չնայած գրկին մի քանի ամսա-
կան երեխա ուներ, որոշեց առիթն օգտագործել, Դերսիմ
անցնել: Ձմեռային մի գիշեր, երեսուն այլ փախստականնե-
րի հետ նա ճամփա էր ընկել, մինչեւ լուսաբաց, նորածինը
գրկին քայլել էր լեռնային արահետներով, հրաբխային ժայ-
ռերով ծածկված հովիտներով:

Նրանք հաջորդ առավոտ հասել էին Եփրատ, որտեղ մի
քուրդ պիտի դիմավորեր, գետն անցկացնեք: Բայց նա չէր
երեւացել: Հայերն սպասել էին մի ամբողջ օր ու գիշեր: Ի
վերջո, թուրքերը իմացել էին նրանց մասին, մատնել: Ձին-
վոր-ուստիկանները բոլորին՝ քաղցած ու տանջված, հավա-
քեցին, Մամուրեթ-ուլ-Ազիզ բերեցին, շատերին բանտ նե-
տեցին: Երբ Բրարիոնը հայտնել էր, որ Նուրի բնյի կինն է,
չէին ձերբակալել, ամուսնու հետեւից մարդ էին ուղարկել:

Նուրի բեյը, Իհարկե, խիստ վրդովվել էր, որ կինը նման քայլի է դիմել: Նա ինձ մոտ եկավ, խորհուրդ հարցրեց: Ես ասայի, որ եթե Բրաբրիոնը չի ուզում հետն ապրել, թող թույլ տա մեկնել: Նա դավազներին հետ էլ էր խորհրդակցել, նույնն էին ասել: Բայց թուրքը տատանվում, անընդհատ որոշում էր փոխում: Նախ վճռեց բաժանվել, հետո հետեւից գնաց: Այդ գիշեր նա քնել էր այն տանը, որտեղ Բրաբրիոնն ապրում էր քույրերի հետ, որպեսզի առավոտ շուտ վերցնի, տանի: Սակայն երբ դարձնել էր, տեսել էր, որ կինը չկա: Իմ դավազները տարել, ուրիշ տեղ էին թաքցրել: Բեյը վերջնականապես որոշել էր բաժանվել, հոջայի՝ թուրք քահանայի հետեւից մարդ էր ուղարկել: Ամուսնալուծութունը փոխադարձ համաձայնությամբ, կարգ ու կանոնով տեղի ունեցավ՝ Բրաբրիոնն ազատ էր: Նա մի երկու ամիս քույրերի հետ մնաց, հետո կարողացավ Ռուսաստան անցնել: Ես նրան՝ Թիֆլիսի ամերիկյան հյուպատոսին ուղղված երկտող էի տվել, որով խնդրում էի ամեն կերպ տիկնոջն օգտակար լինել:

Տարբեր ժամանակ բազմաթիվ երեխաներ էլ էի գտել, հյուպատոսարանում պատսպարել՝ չհաշված նրանց, ովքեր մայրերի հետ էին ինձ մոտ ապրում: Առաջինը, ում ապաստան տվեցի՝ Ներսես Տեր-Վարապետյանն էր, ինը տարեկան մի տղա, որը ծնվել էր Հեյվերհիլում՝ Մասաչուսեթսում, ում ծնողները, պատերազմը սկսվելուց քիչ առաջ էին բերել Թուրքիա: Հետո հորը, մորը, բոլոր քույրերին ու եղբայրներին կոտորել էին, ինքը մնացել, շուկայի հրապարակում մուրացկանություն էր անում: Նա ցնցոտիներով, ցրտից կապտած էր, ավելի շուտ կմախք էր հիշեցնում՝ գրեթե մոռացել էր անգլերենը: Ես նրան հագցրի, լողացրի, քանի դեռ Պարբերդում էի, պահեցի մոտս: Մեկնելու պահին միայն հանձնեցի գերմանական որբանոց՝ հատուկ նրա համար որոշ գումար թողեցի:

Երկու կամ երեք ամիս անց իմ մանկական ընտանիքին երկու քույր՝ Գոհարիկը, Նվարդը ավելացան, որոնք համապատասխանաբար ինը, վեց տարեկան կլինեին: Նրանց ընտանիքը էրզրումից էին բռնագաղթեցրել, հայրն սպանվել էր ճանապարհին: Հետո աղջնակները կորցրել էին իրենց մորը, որին նույնպես մեռած էին համարում: Ես նրանց մոտ մեկ տարի պահեցի, միսիս Հայկանուշ Ղազանչյանը ստանձնեց խնամքը: Որոշ ժամանակ անց, ի մեծ զարմանս բոլորի, աղջիկների մայրը հյուպատոսարան եկավ: Նա այնքան էր փոխվել, որ նույնիսկ հարազատ դավակները չճանաչեցին: Երբ քարավանի վրա հարձակում էին գործել, ամուսնուն սպանել, մի քուրդ նրան փախցրել, իրենց գյուղում պահել էր: Ոնեղճ կինն առաջին անգամ Մամուրեթ-ու-Ազիզ էր եկել, էրզրումի հայրենակիցներից իմացել, որ դուստրերը ողջ են, ամերիկյան հյուպատոսարանում են գտնվում: Քանի որ այրին բացարձակապես ոչինչ չուներ, ես երեխաներին որոշ ժամանակ էլ պահեցի, մեկնելուցս առաջ, երբ եկավ, որ տանի, որպեսզի կարողանան գոյութուն պահպանել, մի փոքր դրամ թողեցի:

Բավական ժամանակ հյուպատոսարանում ապրել է նաև տասներեքամյա Նոյեմզար Հազգելոյանը, որն ահավոր տեսարանների էր ականատես եղել:

1916 թվականի հոկտեմբերին նրա ամուսնացած քույրը՝ միսիս Էլմաս Տեր-Պողոսյանը, ինձ ներկայացավ, ասաց, որ ինքն ու իր ընտանիքի փրկված անդամները Ադիսից եկել, ուզում են Դերսիմ անցնել: Նա ինձ ոչ մեծ գումար, ինչպես նաև անձնական իրեր հանձնեց, խնդրեց պահել: Մի քանի շաբաթ անց իմացա, որ քրդերը Դերսիմ մտած հայերի վերջին խմբին սառնասրտորեն կոտորել են, միայն մի փոքրիկ աղջիկ է փրկվել, Պարբերդ վերադարձել: Ըստ նկարագրությունից՝ խոսքն իմ իմացած ընտանիքի մասին պիտի լիներ, մարդ ուղարկեցի, որ երեխային գտնեն, բերեն: Նոյեմզարը

Հյուպատոսարան եկավ, հեծկլտալով պատմեց տեսածները: Ասլան բեյի քրդերը նրանց անցկացրել էին Եփրատի մյուս ափը, որ գյուղ տանեն, բայց հետո առանձնացրել, բոլորին անգլիորեն հրացանազարկ էին արել: Այնուհետև թալանել էին դիակները: Աղջնակը մյուսների հետ ընկել, մեռած էր ձեռացել: Այդպես, մինչև գիշեր մնացել էր մոր, քույրերի, հարազատների մարմինների արանքում: Ի վերջո գտել էր գետ տանող ճանապարհը, միացել քրդերի մի խմբի, հետևեց Սարբերդ հասել: Քաղաք մտնելուն պես, առաջին իսկ պատահած տան մոտ կանգ էր առել, հարցրել Մամուրեթ-ու-Ազիզի ճանապարհը: Մարդիկ, որոնց գիմել էր, չնայած ոչինչ չէին իմացել իր մասին, ապաստան էին տվել: Նոյեմզարը չէր ասել կրած փորձությունների մասին, որոշ ժամանակ անց էր ամեն ինչ Հայտնի դարձել: Աղջնակի պատմությունն իմանալուց հետո ասացի, որ եթե որևէ բանի կարիք ունենա, անպայման ինձ դիմի: Թվում էր, թե նա գոհ է իրեն Հյուրընկալած ընտանիքից, բայց որոշ ժամանակ անց դարձյալ եկավ, ցանկություն հայտնեց ամերիկյան դպրոցում սովորել: Քանի որ դա անհնար էր, ուզեց Հյուպատոսարանում մնալ: Ես համաձայնեցի: Երկու-երեք շաբաթ հետո Ասլան բեյի ծառաներից մեկը հայտնվեց, ասաց՝ իմացվել է, որ Նոյեմզարն ինձ մոտ է: Բեյը չափազանց ցավել էր այն ամենի համար, ինչ արել էին իր գյուղի քրդերը, հենց լսել, բոլորին պատժել, հրամայել էր թալանը հետ տալ: Մառան ավելացրեց, որ ինքն ուզում է Նոյեմզարի ունեցվածքը վերադարձնել: Աղջնակն իմ դավազներից մեկի հետ գնաց, բերեց հագուստներ, այլ իրեր, որ քրդերը գողացել էին մորից ու քույրերից: Հարկ եմ համարում նշել, որ քրդական այդ ցեղը բոլորովին տարբեր էր դերսիմցիներից, որոնց մասին արդեն պատմել եմ: Դրանից հետո բազմաթիվ անգամ լուր ստացանք Նոյեմզարի մի եղբորից, որը մի քանի շաբաթ գետի մյուս կողմում հարազատներին էր սպասել, երկար ժա-

մանակ չէր իմացել, թե ինչ է նրանց պատահել: Հենց քրոջ հետագա ճակատագիրը Հայտնի էր դարձել, նա ծանոթ քրդերի էր ուղարկել, որ տանեն, իրեն հանձնեն: Բայց երբ նրանք ներկայացան, իրավիճակն այնպիսին էր, որ ես նպատակահարմար չգտա աղջնակին հետներն ուղարկել եւ միայն մայրսին, Միացյալ Նահանգներ վերադառնալուց առաջ, դանիական որբանոց՝ միսս Պետերսոնին հանձնեցի:

Հյուպատոսարանում եւ շրջակայքում այնքան շատ երեխաներ կային, որ անհրաժեշտ եղավ դպրոց բացել, մանավանդ որ նրանք չէին կարող այլ ուսումնական հաստատություն հաճախել: Նույնիսկ համեմատաբար մեծերը ուզում էին անգլերեն սովորել, ուստի հաճախում էին մեր վարժարանը: Միստր Բեքմեյյանը, որը թուրքական դպրոցում անգլերեն էր դասավանդել, ստանձնեց պարապելու պարտականությունը՝ առավոտները մեկ ժամ հատկացրեց: Հյուպատոսարանում ապաստանած Հայերից շատերը լավ անգլերեն գիտեին, սովորեցնում էին մյուսներին: Կային նաեւ Հայերենի դասաժամեր: Մեր վարժարանը, որը տեղավորված էր Հյուպատոսարանի երրորդ հարկում, քսան-քսանհինգ աշակերտ ուներ, գործեց մոտ մեկ տարի: Ինձ թվում է, դպրոց ստեղծած Հյուպատոսարանները համեմատաբար քիչ են, ընդ որում Սարբերդի դրությունը շատ առումով առանձնահատուկ էր:

1915 թվականի Սուրբ Մնունդին ես ճաշկերույթ կազմակերպեցի մոտ վաթսուն հոգու՝ նրանց համար, ովքեր ապրում կամ ինչ-որ ժամանակ Հյուպատոսարանում ապրել էին: Մասնակիցների կեսը երեխա էր: Պարոն Պիչիտոնն՝ օսմանյան դրամատան ներկայացուցիչը, ում մասին արդեն պատմել եմ, հարցրեց, թե կարո՞ղ է հանդիսությունը ներկա գտնվել ու, սրահ մտնելով, բոլոր փոքրիկներին նվերներ բաշխեց: Նրանց բացարձակ մեծամասնությունը առաջին անգամ էր նման տոնակատարություն տեսնում: 1916 թվա-

կանին նույնպես, այն հայերի համար, ովքեր դեռևս հյուստոսարանում էին, Մենդյան տոները ճաշկերույթ տեղի ունեցավ:

Ինչպես արդեն նշել եմ՝ Թուրք պաշտոնյաների հետ մտերմանալու համար ամեն առիթ օգտագործում էի: Իմ նկատմամբ առանձնապես սիրալիր էր 11-րդ զորաբանակի հրամանատար, գնդապետ Մեհմեդ Վեհիբ բեյը⁶², որը փոխարինել էր Սուլեյման Ֆաիկ փաշային: Նա Սարբերդ հասավ 1915 թվականի նոյեմբերին կամ դեկտեմբերին եւ ըստ իմ ունեցած վերջին տեղեկությունների, դեռևս այնտեղ է: Քաղաքավարական փոխայցերից քիչ ժամանակ անց փաշան լուր ուղարկեց, որ կուզենար երեկոն հետս անցկացնել: Նա չափազանց բարեհամբույր էր եւ քանի որ ֆրանսերեն գիտեր, մեր շփումը հեշտացավ: Նման մեկ-երկու հանդիպումներից հետո ինձ թվաց, թե հետաքրքիր կլինեք հետը բրիջ խաղալ: Առաջարկը հրամանատարին դուր եկավ, ցանկացավ սովորել: Մենք էլի մի երկու հոգի գտանք, խումբ կազմեցինք եւ այդ ձևով, հենց գալիս էր հյուստոսարան, այսինքն՝ երկու-երեք շաբաթը մի անգամ, խաղում էինք: Մի երեկո, երբ Վեհիբ բեյն ու նահանգապետը ընթրում էին ինձ մոտ, վերջինս էլ բրիջ սովորելու ցանկություն հայտնեց: Նա շատ շուտ յուրացրեց խաղը, մենք որոշեցինք չորեքշաբթի օրերը հերթով ամեն մեկիս հյուրասրահում հավաքվել: Ավելի ուշ ուրիշ պաշտոնյաներ էլ միացան մեզ, այնպես որ շատերին ավելի մոտիկից ճանաչելու հնարավորություն ունեցա:

1917 թվականի փետրվարին նորին գերագանցություն Ահմեդ Իզեթ փաշան⁶³ կովկասի Թուրքական բանակի գլխավոր զորահրամանատարն ու նախկին ռազմական նախարարը, որոշեց իր ռազմակայանը Սարբերդում հաստատել: Մինչ այդ, երբ նա անցել էր քաղաքով, հետը հաճախ հանդիպել, մի անգամ հյուստոսարան էլ էի հրավիրել:

Նորին գերագանցությունը նույնպես հրաշալի բրիջ էր խաղում, շատ էլ սիրում էր: Ինքն ու սպայակույտի որոշ զինվորականներ սկսեցին մասնակցել չորեքշաբթի օրվա մեր երեկոներին: Ցավոք, հենց այդ ժամանակ, երբ Իզեթ փաշան Սարբերդ տեղափոխվեց, Միացյալ Նահանգների եւ Թուրքիայի հարաբերությունները լարվեցին, բայց նա զգացնել էր տալիս, որ դա որեւէ չափով չի կարող ազդել մեր անձնական մտերմության վրա: Սակայն, երբ լուր հասավ, որ Ամերիկան ու Գերմանիան իրար պատերազմ են հայտարարել, իրավիճակը բարդացավ: Ես այդ երեկո զորահրամանատարին ընթրիքի էի հրավիրել, որից չէր հրաժարվել, որոշել էր մասնակցել մի քանի բարձրաստիճան սպաներով: Առաջինն ինքն էր նորությունն իմացել՝ ցերեկն ինձ հայտնի դարձավ, որ լուրն ստանալիս մի պահ ցանկացել է նախազգուշացնել, որ ընթրիքին մասնակցել չի կարող, բայց ի վերջո վճռել է հարգել պայմանավորվածությունը: Չնայած մտահոգիչ նորություններին, երեկոն շատ լավ անցավ: Ես ձեւացնում էի, որ ոչնչից տեղյակ չեմ, ոչ ոք ոչինչ չէր ակնարկում: Լուրը տարածվեց հաջորդ օրը:

Իզեթ փաշան բոլոր առումներով ջենտլմեն էր՝ զգայուն, խորաթափանց անձնավորության տպավորություն էր թողնում: Ես ինքս երբեք հայերի մասին հետը չէի խոսել, բայց նա վստահեցրել էր նրանց, որ քանի Սարբերդում է, անվտանգ կապրեն:

Ջորահրամանատարը դուրս ռազմական նկատառումներով միջոցներ ձեռնարկեց հայերի փախուստը Ռուսաստան կանխելու համար, բայց իմ մեկնելուց հետո Սարբերդից ստացվող լուրերը վկայում են, որ տեղում մնացածներն, իրոք, նեղություն չեն կրում:

Իմ աշխատելու տարիներին ռազմական նախարարը՝ նորին գերագանցություն էնվեր փաշան, երկու անգամ եղավ Սարբերդում: Առաջին անգամ՝ 1916 թվականի մայի-

սին, գիշերը մնաց, վալին նրա պատվին խնջույք կազմակերպեց, որին ես էլ էի հրավիրված: Էնվեր փաշան գեղեցիկ արտաքինով, համարձակ, գրավիչ շարժումներով զինվորական էր, բայց նրա հաճելի տեսքի, առինքնող ժպիտի հետևում կային դաժանություն ու հավակնոտություն, որոնք վերջին շրջանում չափազանց մեծ վնաս հասցրին Օսմանյան կայսրությունը: Ես մյուս պաշտոնական անձանց հետ գնացել էի նրան զինավորելու ու հենց տեղավորվեցի, իմ մի դավազի միջոցով լուր ուղարկեցի, որ կցանկանայի իրեն այցելել: Ռազմական նախարարը պատասխանել էր, որ ուրախությունը ինձ հետ կհանդիպի: Անմիջապես օգտագործեցի առիթն ու սիրալիք ընդունելության արժանացա: Նա իմ կարծիքը հարցրեց վերջերս Գելիբոլուից ոտքով Նարբերդ հասած զինվորների մասին, եւ թվաց, թե գոհ մնաց, երբ ասացի, որ բոլորն էլ, ում տեսել եմ մեր նահանգում, ինձ վրա հաճելի տպավորություն են թողել: Դա հաճոյախոսություն չէր, այլ բացարձակ ճշմարտություն, մինչ այդ Նարբերդում տեղակայված զինվորները, որպես կանոն, երբեւէ իմ տեսած զենք կրող ամենաթշվառ ու խղճալի երիտասարդներն էին, նրանց մեծ մասը քաղցած, կիսամերկ էր: Երկրի լավագույն զինվորները գտնվում էին Կոստանդնուպոլսի շրջակայքում, հասկանալի է, այնտեղից եկողները Նարբերդում եղածներից անհամեմատ լավ տեսք պիտի ունենային:

Ընթրիքի ժամանակ ես նստած էի էնվեր փաշայի դիմաց, գերմանական ռազմական կցորդի կողքին⁶⁴: Վերջինս խոսակցության ընթացքում ինձ հարցրեց, թե ինչով եմ զվարճանում աշխարհի այս լքված անկյունում: Ես ուզում էի ասել, որ ձիով զբոսնում, բրիջ եմ խաղում, բայց նախքան իմ պատասխանելը էնվեր փաշան խոսակցության մեջ մտավ եւ սուր հայացքը դեմքիս հառելով ասաց. «Oui, Monsieur le Consul, que faites-vous maintenant pour vous

amuser? Vous avez fini vos rapports n'est-ce pas? Vous n'crivez plus de lettres, n'est-ce pas»⁶⁵: Ես պարզ է, իսկույն հասկացա, թե ինչ է ակնարկում, քանի որ Հայերի նկատմամբ գործադրվող դաժանությունների մասին իմ զեկուցագրերից շատերը առգրավվել էին, նա բովանդակությամբ, որը, ինչ խոսք, թուրքական կառավարության օգտին չէր կարող լինել, հաստատ ծանոթ էր:

Փոքր ինչ տհաճ իրավիճակ ստեղծվեց, բայց այդ մասին այլեւս խոսք չեղավ եւ երեկոյի մնացած մասը հաճելի անցավ: Էնվեր փաշան հետո էլի Նարբերդ եկավ, առանձնահատուկ ջերմ վերաբերմունք ցույց տվեց ինձ, ու երբ ես նրան այցելեցի, թվաց, թե մեր հանդիպման համար խիստ ուրախացավ: Այդ երեկո ինձ վրա անմոռանալի տպավորություն թողեց այն հանգամանքը, որ տեղի բարձրաստիճան պաշտոնյաները, ովքեր ծառայողական պարտականությունները կատարելիս չափազանց ամբարտավան էին, նախարարի ներկայությամբ խեղճացել եւ նույնիսկ չէին համարձակվում մտնել այն սրահը, որտեղ գտնվում էր ընթրիքից հետո: Խիստ զվարճալի էր տեսնել, թե ինչպես նահանգապետն ու մյուս իշխանավորները, որոնցից բոլորը դողում էին, ահարեկված նստել են դռան հետևում:

Բոլոր թուրքերն էլ զիտեին, որ ես տարբեր ձեւերով սատարում եմ Հայերին, բայց պատահեց այնպես, որ իրենց էլ օգնելու փորձ արեցի: Ոոսքը այն թուրքերի մասին է, որոնց նկատմամբ ճակատագիրը բարեհաճ չէր:

1915-1916 թվականների ձմռանը, ռուսների առաջանալուն զուգընթաց, հազարավոր մահմեդական մուհաջիրներ՝ փախստականներ անցան Մամուրեթ-ու-Ազիզով: Նրանք գալիս էին ռուսների նվաճած թուրքական գավառներից, տեղից տեղ քոչելով, փախչում: Ոմանք որոշ ժամանակով հաստատվում էին այն գյուղերում, որտեղից Հայերին տարագրել էին, ոմանք զբաղեցնում էին Մամուրեթ-ու-Ազիզի

դատարկ շինությունները, ոմանք էլ լեռների լանջին վրան էին խփում: Որոշ գյուղերում իշխանությունները թույլ էին տվել ամիսներով մնալ, բայց սովորաբար նրանք մի քանի օրից շարունակում էին իրենց ճանապարհը: Որպես կանոն, մուհաջիրները քարուքանդ էին անում զբաղեցրած տները, դռները, լուսամուտները հանում էին, որ կրակ վառեն, ջուր եռացնեն ու վերջում, նախկինից ավելի ողբալի վիճակում թողնելով, հեռանում էին: Իշխանավորներն իրենց հերթին ավարտին էին հասցնում ավերը՝ գերանները հանում էին, որ ձմռանը տաքանան, վերջին երկու տարիներին նահանգում վառելիք էր մնացել: Այսպիսով, տները, որոնք հիմնականում հարգախառն կավից էին կառուցված, փուլ էին գալիս:

Այս մուհաջիրները, որոնք գլխներին մշտական տանիք չունեին, ողբալի վիճակում էին, եւ չնայած կառավարությունը երբեմն չնչին քանակությամբ ուտելիք բաժանում էր, քաղցից, ցրտից տանջվում էին: 1916 թվականի նոյեմբերյան մի օր, երբ ձիով անցնում էի, հարյուրավոր մուհաջիրների տեսա, որոնք վրան էին խփել լեռան լանջին, ցուրտ, անձրեւոտ եղանակին հողին էին քնում: Նրանցից մեկը մոտեցավ, բռնեց ձիուս սանձից: Իմ դավազը բավական հեռու էր, հարկ եղավ սպասել, որպեսզի իմանամ, թե թուրքն ինչ է ուզում: Թարգմանությունից պարզ դարձավ, որ նրանք ցանկանում են տեղափոխվել Թուրքիայի ավելի տաք շրջան, բայց առանց իշխանությունների թույլտվության չեն կարող՝ թույլտվություն, որին արդեն երկրորդ շաբաթն են սպասում: Տղամարդն ավելացրեց, որ շատ կանայք, երեխաներ հիվանդացել են, եթե Նարբերդում երկար մնան, կմահանան: Նա խնդրում էր, որ իմ միջնորդությամբ իրենց օգնեն: Պատասխանեցի, որ ուրախությամբ կփորձեի, բայց ի պաշտոնն չեմ կարող, նման խնդիրների խառնվելու իրավասությունը չունեմ: Հաջորդ օրն իմ թարգմանին ուղարկե-

քի համապատասխան պայտույթի մաս, որը խիստ անարատական պատասխանել էր, որ անվիճաբան եղանակով մուհաջիրների մեկնաւարտով, հասարակած համար ներդրություն էր փոխել, բարատելի, որ նահանգում չի եղել, ինչ երբ է մի քանի օրից մեկ թվում էր, որ այնպիսի



Նարբերդ քաղաքը 1919-ին: Թե ինչ համապատասխան էի Լուսանկարը՝ Լ. Մակ-Գանիելի

ավել հարապատասխանական արդյունքներ էր ստացել: Թարգմանությունից ստացելով մարդկանց ասած վերջինս համար, միջին շատ-շատեր էլ, որոնք քաղաքում իրենց ունեցվածքը պահելու տեղ չունեին, ինչ էլիս համեմատ գրամներն ու արժեքավոր իրերը: Այն, այսպես թուրքացի շատ մեծազարմեր միջև է, երբառականորեն չէի գտնում մեկնում մեկ հեռույց շուրջ ուղարկելը, բայց ավել անգամ, երբ որեւէ մեկը գործով հարապատասխան էր գալիս, ավելի օգտագործում, ունեցվածքը հանձնում էի: Այդ մեծով, նախքան մեր երկրների ղեկավարության հարաբերությունների իրցումը, ամեն ինչ տեղերին տվեցի:

Ի վերջո, խոսելով, թուրքն, անդի ունեցավ: Առաջին անգամ եւ այդ մասին իմացա շուրջի օրը՝ ստրիկի 21-ին, 1919

ղավազին նամակատանը Հայտնել էին, որ դեսպանատնից իմ անունով պատվիրված թղթակցություններ են ստացվել, բայց նոր կարգի համաձայն, Հյուպատոսարանի փոստը պետք է նախ ուղարկվի իշխանություններին Հանձնվի: Ես իսկույն կասկածեցի, որ Թուրքայի եւ Միացյալ Նահանգների միջև պառակտում է տեղի ունեցել՝ սկսեցի նախապատրաստվել այն ամենին, ինչը կարող էր դրան հաջորդել: Երեկոյան մի ծանոթ սպա եկավ, գաղտնի հաղորդեց, որ Իզմիթ փաշան տեղյակ է նորությունը: Սպան գալն ու ինձ այդ մասին անհապաղ իմացնելը կարեւոր էր համարել, քանի որ պաշտոնական Հայտարարությունն ստացվելուց հետո, որն ամենայն հավանականությամբ հաջորդ օրը տեղի կունենար, Հյուպատոսարանին երկրից հեռանալու համար քսանչորս ժամ կտրամադրեին:

Ես սպային հոգածություն համար շնորհակալություն Հայտնեցի, նա գնաց: Նրա ենթադրությունը, մանավանդ, եթե նկատի ունենայի այն, ինչ առավոտյան նամակների հետ էր պատահել, այնքան հավանական էր, որ իսկույն եւեթ ձեռնամուխ եղա թվային ծածկագրերն ու ամենակարեւոր թղթակցությունները այրելուն: Դեսպանատունն ինձ հանձնարարել էր առձակատման չնչին իսկ կասկած ունենալու դեպքում անհապաղ դիմել այդ քայլին, այնպես որ, հենց նույն գիշերը անցա գործի: Դատարկեցի նաեւ իմ չհրկիզվող սնդուկը, քանի որ կարծում էի իշխանություններն ամենից առաջ այն կառգրավեն: Հաջորդ առավոտ վաղ վերկացա, շարունակեցի նախապատրաստվել մեկնելու: Միաժամանակ, քանի որ դեռեւս պաշտոնական ծանուցում չէի ստացել, իսկ օրը կիրակի էր, որոշեցի չխախտել ավանդույթն ու կարգադրեցի մեր դրոշը բարձրացնել: Քիչ ավելի ուշ ամերիկյան միսիոներներին, բոլոր նրանց, ովքեր դեռեւս ինձ մոտ արժեքավոր իրեր ունեին, խնդրեցի, որ գան, վերցնեն: Ես ամեն վայրկյան սպասում էի դիվանագիտական

հարաբերությունների դադարեցման Հայտարարությունը, որից հետո թերեւս ուշ լինելու որեւէ բան վերադարձնել: Նույնիսկ վախենում էի, թե ուր է, ուր չէ՝ Հյուպատոսարանի դռան մոտ ոստիկան կհայտնվի, այցելուներին կարգելի իրենց ունեցվածքը դուրս հանել: Այդ օրը իմ քարտուղարը ամբողջ ժամանակը հատկացրեց այն թղթածրարներն այրելուն, որոնք ես Հյուպատոսարանում պահելը հարմար չէի գտնում, իսկ Սարբերդում ուրիշ Հյուպատոսներ, որոնց վստահել կարողանայի, չկային:

Մենք արագ էինք աշխատում, չիմանալով, թե երբ ստիպված պիտի լինենք կանգ առնել: Ամեն դեպքում մինչեւ կեսօր ոչինչ տեղի չունեցավ, ես հասցրի անհետաձգելի գործերն ավարտել, այն ամենը, ինչն ինձ չէր պատկանում, տեղափոխել տալ: Ժամը մոտ 4-ին ոստիկանապետի պաշտոնակատարն այցելեց ինձ, նախկին մյուզիքը՝ Ռեչիդ բեյը, Հայ ազգարնակչությանը վերացնելուց հետո այլ վայրում էր աշխատանքի անցել:

Ես ենթադրում էի, որ փոխոստիկանապետը եկել է խզման մասին Հայտնելու, հետեւաբար նաեւ պահանջելու համար, որ երկրից հեռանամ: Բայց քաղաքավարական մի շարք արտահայտություններից հետո նա պարզապես ասաց, որ վալին խնդրել է դրոշն իջեցնել, որը պարտադիր է Թուրքիայի եւ Միացյալ Նահանգների դիվանագիտական հարաբերությունների կասեցումից հետո: Ոստիկանապետի պաշտոնակատարը խիստ բարեկիրթ էր արտահայտվում, այնպես որ նրա գնալուց հետո իսկույն եւեթ կարգադրեցի դրոշն իջեցնել, եւ հաջորդ երկու օրերին իշխանություններից որեւէ լուր չստացա: Փոխոստիկանապետի հեռանալուց որոշ ժամանակ անց ինձ հանձնեցին դեսպանատան՝ դիվանագիտական հարաբերությունների խզումը տեղեկացնող հեռագիրը, որը եւ հանձնարարում էր հետագա, հանգամանալի հրահանգների սպասել:

Հաջորդ օրը Հյուպատոսարանի առջևից անցնողները թաքուն էին շենքին նայում, եւ շատ քչերն էին Համարձակվում մտնել ներս, որովհետեւ բոլորին թվում էր, թե ես խոր հուսահատութեան, անելանելի դրութեան մեջ եմ: Երեքշաբթի փոխոստիկանապետը նորից եկավ եւ ասաց, որ նահանգապետը «սալամներ»^Ա է ուղարկում, ցանկանում է իմանալ, թե ինչ կարող է ինձ Համար անել: Նոր վալին՝ Միդհատ փաշան, ընդամենը մի քանի շաբաթ առաջ էր փոխարինել նահանգից մեկնած Սարիթ բեյին, եւ նրան մոտիկից ծանոթանալու հնարավորություն դեռեւս չէի ունեցել: Ամեն դեպքում փոխոստիկանապետն ինձ Հասկացնել տվեց, որ միջպետական առճակատումները չեն կարող ազդել մեր բարեկամական հարաբերությունների վրա, այնպես որ, եթե որեւէ բանի կարիք զգում էի, պետք է, ինչպես առաջ, Համարձակորեն դիմեի: Ես շնորհակալութիւն հայտնեցի մեծահոգութեան Համար, վալիին իմ Հերթին «սալամներ» ուղարկեցի: Դիվանագիտական հարաբերությունների դադարեցումից Հետո ես երեք շաբաթ մնացի Խարբերում եւ վայելեցի բոլոր պաշտոնյաների ամենաբարյացակամ վերաբերմունքը: Ոչ մեկից, երբեք, Հեռանալու վերաբերյալ հրահանգ չեմ ստացել, ամեն շաբաթ հրավիրագիր էին ուղարկում, խնդրում սովորականի նման մասնակցել չորեքշաբթի օրվա բրիջին: Մանավանդ Վեհիբ բեյը՝ 11-րդ գորարանակի հրամանատարը, ում Հետ մոտ տարիուկեւս մտերիմ էի եղել, այդ շրջանում հատկապես իմ նկատմամբ չափազանց ջերմ էր: Իզեթ փաշան, իր Հերթին, այնքան բարյացակամ գտնվեց, որ քննչական շրջագայութեան մեկնելուց առաջ Հյուպատոսարան եկավ, հրաժեշտ տվեց ինձ: Սակայն ժողովուրդը սխալ էր հասկացել նրա այցելութեան նպատակը, Հյուպատոսարանի առջև Հսկայական ամբոխ էր հավաքվել, որպեսզի, ինչպես ավելի ուշ իմացա, տեսնի շղթայակապ Հյուպատոսի ձերբակալումն ու արտաքսումը:

Ըստ մեր դեսպանատան հրահանգի, որը չորեքշաբթի օրը, չվեղական դիվանագիտական առաքելութեան Հեռագրով, ապրիլի 25-ին ինձ հասավ, եւ հնարավորին չափ արագ կոստանդնուպոլիս պիտի վերադառնայի ու Հետս վերցնեի այն բոլոր ամերիկյան քաղաքացիներին, ովքեր կուզենային մեկնել եւ կունենային Համապատասխան արտոնություն: Դա, իհարկե, բավական ժամանակ էր պահանջում: Նահանգում միսիոներներից բացի մեծ թվով ամերիկահայատակ հայեր կային: Մեր առաքելութեան անդամներից մեկը՝ միսիս Հենրի Չ. Ռիցը, ժանտատենդով ծանր Հիվանդ էր, ի վիճակի չէր ճանապարհորդել:

Հասկանալի է, որ ամուսինը Հետը պիտի մնար, այնպես որ մյուս միսիոներները, քանի որ երկու հոգի չէին վերադառնալու, չգիտեին ինչ անել: Մի քանի օր անց, սակայն, միսիս Ռիցը մահացավ, եւ բոլոր միսիոներները վճռեցին ինձ Հետ ճամփա ընկնել: Տեղական պաշտոնյաներն ասում էին, որ ուրախ կլինեին, եթե նրանք մնային, իրենք ոչ մեկին չեն պարտադրում Հեռանալ: Բայց գործունեութեան ասպարեզն այն աստիճանի սահմանափակ էր, որ եթե չգային էլ, թե՛ կրթական եւ թե՛ բարեսիրական առումով շատ բան չէին կարողանա անել:

Անհամեմատ բարդ էր հայերի խնդիրը: Ես նրանց երկու տարի սատարել, ամեն կերպ աշխատել էի արտասահման փոխադրել: Երբ վալիին հայտնեցի, որ բոլոր ամերիկահայատակներին Հետս տանելու հրահանգ եմ ստացել, ասաց, որ դա բնական է համարում, խնդրեց ցանկը պատրաստել: Ես, հասկանալի է, նչեցի բոլոր այն հայերի անուն-ազգանունները, որոնց ամերիկյան քաղաքացի լինելը հաստատված էր ու ներկայացրի իշխանութուններին: Սակայն նկատի ունենալով հայերի նկատմամբ եղած վերաբերմունքը, չէի հավատում, որ թույլ կտան, անընդհատ մտածում էի, որ արգելքներ կհարուցեն: Բայց ինձ տեղեկացրին, որ բոլոր

նրանք, ովքեր իրոք, bona-fide^բ ամերիկյան հպատակներ են, կարող են հետս մեկնել: Կառչելով այդ խոստումից ես սկսեցի հայերի ուղևորությունը նախապատրաստել այնպես, ինչպես միսիոներներին: Բոլորս միասին մոտ վաթսուհի հոգի էինք, կառք հայթայթելն անհնար էր գրեթե: Ի վերջո որոշեցի ճամփա ընկնել եզան սայլերով: Չնայած դա երկար, հոգնեցուցիչ ճանապարհորդություն էր, բայց եթե ուզում էի այդքան հոգու ողջ-առողջ փոխադրել, ամեն դժվարություն հաղթահարելու պատրաստ պիտի լինեի: Իշխանությունները, սակայն, ամերիկյան քաղաքացիների ցուցակը, որ, ինչպես հիշատակել եմ, իրենց պահանջով էի կազմել, երկար պահելուց հետո ինձնից հպատակությունը վավերացնող վկայություններ պահանջեցին: Եւ չնայած ներկայացրեցի շատերի անձնագրերը կամ այլ փաստաթղթեր, ի վերջո բոլոր հայերը՝ նրանք, ովքեր օրինական անձնագրեր ունեին, նրանք, ովքեր ծնվել էին Ամերիկայում, ինչպես նաեւ մնացածները, մերժվեցին, եւ միայն ես, Սարբերդում ծառայած ինը ամերիկյան միսիոներ մեկնելու արտոնագիր ստացանք: Իմ ղավազին՝ Ահմեդին էլ թույլատրեցին մինչեւ Կոստանդնուպոլիս ինձ ուղեկցել:

Ուրեմն՝ բացի ինձնից ու Ահմեդից, մեր քարավանում հինգ կին, մի տղամարդ, երեք երեխա պիտի լինեի: Չհաշված չորս միսիոներուհիներին, որոնցից երեքը Մարդինում էր, մեկը՝ Սվազում, այդքանն էին մնացել ամերիկյան առաքելության յոթանասուներկու անդամներից, որոնք, երբ 1914-ին աշխատանքի անցա, գտնվում էին Սարբերդի հյուպատոսական ենթատարածքում: Սայլակառքեր գտնելու համար նույնպես շատ ժամանակ անհրաժեշտ եղավ: Վեհիբ բեյը մեզ օգնեց, մինչեւ Մալաթիա (մոտ 30000 բնակչություն ունեցող քաղաք, ուր երեք օրում հասանք) անձնական ինքնաշարժն առաջարկեց, բայց քանի որ սեփական ձի ունեի, հրաժարվեցի: Բեյն ասաց նաեւ, որ այնքան, որքան

Թուրքիայի տարածքում գտնվեմ, պաշտոնական հյուր կհամարվեմ, Մամուրեթ-ուլ-Ազիզի իշխանությունները ուղևորությունս հեշտացնելու համար իրենցից կախված ամեն ինչ կանեն: 1917 թվականի հոկտեմբերի 19-ի՝ պետական դեպարտամենտ հղած զեկուցագրում, ներկայացնելով հանդերձ Թուրքիայի ընդհանուր վիճակը, անդրադարձել եմ կառավարություն անանձնահատուկ վերաբերմունքին: Իմ խնդրանքով զինվորական իշխանությունները միսիոներներին վերադարձրին այն ձեռքը, որոնք, ամերիկացիներին պատկանող բոլոր փոխադրամիջոցները առգրավելու հրամանի համաձայն, տարել էին: Քանի որ Կոստանդնուպոլիս հասնելու համար միսիոներները անասունի կարիք ունեին, կարող էին օգտվել իրենց իսկ նժույգներից:

1917 թվականի մայիսի 16-ին, իմ՝ Սարբերդից հեռանալու օրը, պաշտոնյաների մի մեծ խումբ bon voyage⁹ մաղթելու եկավ: Այդ ժամանակ ես հետաքրքրական խոսակցություն ունեցա Վեհիբ բեյի հետ: Մենք նրա՝ Սարբերդում աշխատանքի նշանակվելուց ի վեր մտերմացել էինք, վերջին պահին նա ինձ վստահեցնում էր, որ մեր երկու երկրների քաղաքական հարաբերությունների փոփոխությունը մեր անձնական հարաբերությունների վրա չի ազդի: Ես հավաստիացրի, որ շարունակում եմ իր բարեկամը մնալ եւ չնայած Սարբերդում համատեղ գտնվելու ընթացքում մի շարք խնդիրների վերաբերյալ տարբեր մտեցումներ ենք ունեցել, իրեն չափազանց հարգում, մտերմությունը թանկ եմ գնահատում: Բեյը պատասխանեց, որ նույն զգացմունքներն ինքն է իմ նկատմամբ տածում, մեզնից յուրաքանչյուրը ամենաարտասովոր իրավիճակներում փորձել է կատարել իր պարտականությունները, ինչը եւ, երբեմն, միմյանց հակադրվելու պատճառ է դարձել: Նա անուղղակիորեն ակնարկում էր հայերին Դերսիմ հասցնելու իմ համառ փորձերը, որոնք ամեն կերպ ձգտում էր կանխել:

Մեկնելու պահին մոտ 500 հոգի հավաքվել էին Հյուպատոսարանում, որ միսիոներներին ու ինձ հրաժեշտ տան: Ճիշտ է, իմ աշխատանքը Նարբերդում շատ ծանր էր, բայց ես կամքիս հակառակ էի հեռանում, բախտի քմահաճույքին թողնում իմ հովանավորած մարդկանց, որոնց, եթե հնարավորություն ունենայի, ոչ մի պայմանով չէի լքի: Ինչպես պետական դեպարտամենտին հայտնի է, ես երկու անգամ հրաժարվել եմ արձակուրդ մեկնելու՝ մեծահոգաբար ինձ արվող առաջարկից, որովհետեւ մնալն իմ պարտքն եմ համարել, մտածել եմ, որ նման ճակատագրական պահի դժվար կլինի փոխարինող գտնելը: Ես հույս ունեի աշխատել այնքան, մինչեւ իրավիճակը բարելավվեր, նահանգի ազգանակչությունն այլեւս վտանգ չսպառնար:

Ուղեւորությունը Նարբերդից Կոստանդնուպոլիս ամենեւին հեշտ չէր: Մենք տասնութ օրվա ճամփա կտրեցինք, որ երկաթուղուն հասնենք, երեք օրում էլ գնացքով մայրաքաղաք ժամանեցինք: Ես, երեք միսիոներ մինչեւ երկաթգիծ ընկած տարածքը՝ մոտ չորս-հինգ հարյուր մղոն, անցանք ձիով, մյուսները՝ սայլով: Մենք ստիպված էինք մեզ հետ փոխադրել ամբողջ ուղեւորության պաշարը, որովհետեւ ճանապարհին հաց գտնելն էլ էր անհնար: Ես հիմնականում քնում էի խաների տանիքներին, չնայած ամենուր մեզ լավ էին ընդունում, զգացվում էր, որ մեր ուղեւորությանը աջակցելու համար նախօրոք հեռագրերով կարգադրություններ են արված:

Մայրաքաղաքում մեզ անակնկալ էր սպասում: Քաղաքի դարպասների մոտ երկու ոստիկան դիմավորեցին, ուղեկցեցին հատուկ մեզ համար կահավորված մի դպրոցական շենք, որտեղ քաղաքապետը սպասում էր, որ բարի գալուստ մաղթի: Ծրջանի մութասարիֆը մեզ ճաշի հրավիրեց: Մեր ժամանման մասին նրան Նարբերդից նախազգուշացրել էին, եւ նա, ի պատիվ մեզ, միջոցառումներ էր նախատեսել:

Մեզ սպասարկում էին մի քանի ցածրաստիճան պաշտոնյա, դպրոցական շենքը հարդարված էր այնպես, ինչպես Իզեթ փաշայի Հյուրընկալություն ժամանակ, որը նախորդ շաբաթ էր անցել Մայրաքաղաքում:

Չնայած մեր նկատմամբ ցուցաբերվող նման հոգատարությունը, Նարբերդից մինչեւ Կոստանդնուպոլիս մեզ ուղեկցում, անմիջականորեն հսկում էին Մամուրեթ-ույ-Ազիզի նահանգապետի տրամադրած զինվոր-ոստիկանները, որոնք կցված էին մեր անվտանգությունը ապահովելու, բայց նաեւ այն բանի համար, որ թույլ չտան ճանապարհին մոտիկից այնպիսի բաներ տեսնել, որոնք ըստ երեւույթին պետք չէր, որ տեսնեինք: Այդ զինվոր-ոստիկանները չորան էին, առանց բացառության քաղաքավարի էին, պատրաստակամ: Երբ էրեզլի հասանք, հանդիպեցինք Կեսարիայում՝⁶⁶ Թալասում ծառայող երկու միսիոների: Նրանցից մեկը՝ Հենրի Կ. Վինհեյթը ամերիկահայատակ պատվելի էր, մյուսը՝ միստր էրվինը, բրիտանական քաղաքացիություն ուներ: Միսիոներներն ուղեւորվել էին Կոստանդնուպոլիս, բայց ճանապարհին նրանց ձերբակալել, երկու օր պահել էին ոստիկանատանը, թույլ չէին տվել շենքից դուրս գալ: Ես ոստիկանապետին ցույց տվեցի Մամուրեթ-ույ-Ազիզի նահանգապետի տված վկայագրերը, ասացի, որ միստր Վինհեյթին եւ միստր էրվինին ուղում եմ հետս տանել: Նա նրանց անմիջապես ազատ արձակեց, ճանապարհի մնացած մասը մենք միասին անցանք: Կոստանդնուպոլսում բոլորիս նախ ոստիկանատուն տարան, որոշ հարցեր տվեցին, ճշտեցին, թե որտեղ ենք իջեւանելու, որից հետո մեզ լիովին ազատ թողեցին եւ այն վեց շաբաթների ընթացքում, որ մայրաքաղաքում անցկացրինք, որեւէ նեղություն չունեցանք:

Ինչպես հայտնի է պետական դեպարտամենտին, Ամերիկա վերադառնալուց ի վեր ես հիմնականում զբաղված եմ

մեր երկրում բնակվող հայերին նամակներ գրելով, որոնցով իմ ունեցած տեղեկություններն եմ հաղորդում Թուրքիայի նրանց հարազատների մասին: Բացի դրանից, պետական ղեկարտամենտի 1917 թվականի սեպտեմբերի 20-ի հրահանգի համաձայն այցելել եմ մեծ թվով քաղաքներ, որպեսզի հանդիպեմ վերջին երկու տարիների ընթացքում իրենց ազգականների ու մտերիմների վերաբերյալ հարցումներ հղած հայերին: Խարբերդում ես շփվել եմ հազարավոր, որոնց թվում այն հայերի երկու-երրորդին, ում պետական ղեկարտամենտն ինձ հրահանգել էր օգնել: 1915 թվականի օգոստոսից մինչև 1917-ի մայիսը, 1200 հայի վերաբերյալ տեղեկություն պահանջող 277 հրահանգ եմ ստացել: Վերադառնալուց հետո անձամբ հանդիպել եմ լուրի սպասող 189 հոգու, մեծ մասին կարողացել եմ Թուրքիայում ապրող հարազատներին առնչվող որոշ նորություն հաղորդել՝ հաղորդել եմ, ինչպես նրանց վերաբերյալ, որոնցով հետաքրքրվել են, այնպես էլ հաճախ նրանց, ում չեն էլ հիշատակել: Այս ամենը ես պետական ղեկարտամենտին մանրամասն տեղեկացրել եմ 1917 թվականի նոյեմբեր 30-ի ճեպագրում: Այստեղ ես հնարավորություն ունեցա հետաքրքրվողներին ուղղակի՝ իրենց հարազատներին, բարեկամներին վերաբերող տեղեկությունների այն հիմնական մասը պատմել, որոնք լարված աշխատանք, մեծագույն ջանքեր ներդնելով հայթայթել եմ Խարբերդում, շարադրել իմ հանգամանալի զեկուցագրերում: Ցավոք մեծ մասը ճանապարհին կորել կամ տեղ չի հասել, չնայած պատճենները մի քանի անգամ եմ ուղարկել:

Մնացած փաստաթղթերը, ինչպես նաև հյուպատոսարանում պահվող նման բնույթի բոլոր զեկուցագրերի պատճենները, ղեսպանատնից ստացված հրահանգի համաձայն, նախքան Խարբերդից հեռանալը, այրել եմ: Չեկուցագրերը կազմելու համար այնքան ժամանակ, եռանդ եմ ներդրել, որ

չատ տվյալներ բարեբախտաբար հիշողությանս մեջ մնացել են: Ամերիկահայերի հետ իմ հանդիպումները մի նոր, ծավալուն նամակագրություն սկզբնավորեցին, որը շարունակվում է մինչև օրս:

Այս հաշվետվությունից հետևում է, որ վերջին երեք տարիների իմ գործունեությունը նվիրված է եղել հիմնականում հայերին: Ամեն ղեպքում այս շարադրանքը նրանց դատր պաշտպանելու նպատակ չի հետապնդում, ինչքան էլ որ հայերը արժանի լինեն դրան: Պաշտոնի բերմամբ ես ահավոր վերաբերմունքի ականատես եղա, որը նրանց նկատմամբ գործադրում էր Թուրքական կառավարությունն ու, բնականաբար, ինձնից կախված ամեն ինչ արեցի, որ տառապանքները թեթևացնեմ: Այնտեղ ես բարձրաստիճան պաշտոնյաների հետ բարեկամական կապեր եմ ունեցել, մի մասին խիստ հաճելի եմ համարել, բայց հույս ունեմ այսուհետ թուրքական իշխանությունները ոչ հայերին, ոչ էլ հպատակ որեւէ այլ ժողովրդի նման ճակատագրի չեն արժանացնի: Իմ աշխատանքային՝ զանգվածային բնաջնջման տարիներին համեմատաբար քիչ թվով մարդկանց հովանավորեցի եւ չնայած ում ի վիճակի էի՝ օգնեցի, այնուամենայնիվ եղան ղեպքեր, երբ որեւէ բան անելն անհնար է: Ամեն ղեպքում էականն այն է, որ այստեղ ոչ մի հայ, անկախ իմ հաղորդած լուրից, դժգոհություն չհայտնեց:

Այս հաշվետվությունում ես քիչ անդրադարձա Խարբերդում եւ հանգում ամերիկյան միսիոներների ծավալած գործունեությանը՝ ոչ թե նսեմացնելու, այլ այն պատճառով, որ նման զեկուցագրի չափերը թույլ չեն տալիս նկարագրել ջանքերն ու եռանդը, որ նրանք ներդրեցին տառապող ժողովրդին օգնելու համար: Դա առանձին հաշվետվության նյութ է, քանի որ իմը վերաբերում է Խարբերդի ամերիկյան հյուպատոսարանի վերջին երեք տարիների գործունեությանը: Հարկ է նշել նաև, որ այդ գործունեությամբ

յունը վերին աստիճանի առանձնահատուկ էր, բխում էր իրավիճակի արտասովորությունից:

Վերջում ցանկանում եմ պետդեպարտամենտին իմ երախտիքը հայտնել Սարրերդում կատարած աշխատանքիս մասին նման հաշվետվություն քննարկման ներկայացնելու հնարավորություն ընձեռելու համար: Բազմաթիվ առումներով այդ աշխատանքը անհեռանկար, անբավարար էր, քանի որ, ինչպես արդեն նշել եմ, շատ բան, որ փորձել եմ անել, կարելի էր եւ չանել, շատ բաներ էլ, որ արել եմ, հայտնի չեն: Սարրերդում անցկացրած իմ երեք տարիները չափազանց լարված էին, այդ ամբողջ ժամանակամիջոցում հազվադեպ էի մի քանի ժամ անընդմեջ հյուպատոսարանից դուրս գալիս: Ամառվա տոթ ամիսները նույնիսկ, ինչպես իմ նախորդները, Գյուլջուկ լճի ափին, վրանում անցկացնելու հնարավորություն չէր լինում: Նման մեկուսացած կյանքը, որն այդքան երկար տևեց, մանավանդ, եթե նկատի ունենանք տեղի պայմանները, չէր կարող առողջության համար նպաստավոր լինել, հատկապես այն պատճառով, որ իմ աշխատանքը հաճախ նյարդային մեծ լարում էր պահանջում: Վերջին մի քանի ամիսները, որ ես անց եմ կացնում Ամերիկայում, այդ առումով հիանալի փոխհատուցում են հանդիսանում:

Սոնարհ Հարզանքներով՝

ԼԵՍԼԻ Ա. ԴԵՎԻՍ

(ստորագրություն)

Սարրերդում (Թուրքիա) ամերիկյան նախկին հյուպատոս, Պորտ Ջեֆֆերսոն, Նյու Յորք 9-ը փետրվարի, 1918 թիվ

ՀԱՎԵԼՎԱԾ

ԼԵՍԼԻ Ա. ԴԵՎԻՍԻ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1915 թ.



Լեսլի Դևիս, 1940 թ.

Մեծարգո Հենրի Մորգենթաուին
Ամերիկյան դեսպանին
Կոստանդնուպոլիս

Միր,

պատիվ ունեմ դեսպանատանը տեղեկացնել երբեւէ, որ եւէ կառավարութեան նախաձեռնած ամենադաժան հղացման՝ մարդկային պատմութեան մեծագույն ողբերգություններից մեկի մասին: Եթե դեսպանատանը այլ աղբյուրներններից Հայտնի չէ, իմ Հունիսի 27-ի եւ 28-ի Հեռագրերը, 29-ի կարճ Հաղորդագրութիւնը պետք է որ այդ խնդրի վրա բեւեռին ձեր ուշադրութիւնը: Մեր Հյուպատոսարանի նախկին տեղեկագրերը դեսպանատանը ներկայացրել են այն ծայրահեղ լարված իրավիճակը, որ տիրում է այստեղ:

Իմ ապրիլի 19-ի, մայիսի 5-ի, Հունիսի 2-ի ճեպագրերում (Թղթապանակ Թիվ 1840.1) խոսվում է ստեղծված պայմանների, ժողովրդի տագնապի մասին, որին նախապատրաստվում են կոտորել: Հաճախակի Հղած իմ Հաղորդագրութիւններում եւ զեկուցել եմ վերջին ամիսներին ամերիկյան միսիոներների նկատմամբ ցուցարներվող թշնամական վերաբերմունքի, ամերիկյան բոլոր դպրոցների գործունեութեան կտրուկ դադարեցման մասին (Թղթապանակ Թիվ 360): Իմ Հունիսի 12-ի եւ 24-ի տեղեկագրում (Թղթապանակ Թիվ 300) նկարագրված էր իրական վտանգը, որն սպառնում է ամերիկյան միսիոներներին Թուրքիայի այս մասում: Հունիսի 24-ի ծածկագրված Հեռագրալուրում (Թղթապանակ Թիվ 300/840.1/703) եւ լրացուցիչ մանրամասներ էի Հաղորդել այն ամենի մասին, ինչ տեղի է ունենում այստեղ:

ինչպես նշել էի հիշատակված զեկուցագրերից մի քանիստում, որոշ հայկական շրջանակներում ապստամբական շարժում էր բացահայտվել, կանխելու համար ձեռք էին առնվել մի շարք խիստ միջոցներ: Կիրառվել էին համընդհանուր բնույթի պատիժներ, տարբերություն չէին դրել լիովին անմեղների եւ նրանց միջեւ, ում կասկածել էին շարժմանը մասնակցած լինելու համար: Գործնականում արական սեռի ամեն հայ, անկախ զբաղեցրած դիրքի կարելու թույլտվությունից, արդեն ձերբակալվել է, բանտ նետվել: Նրանք ենթարկվել էին ամենադաժան կտտանքների, որոնց մեծ մասը չէր դիմացել, մահացել էր: Մի քանի հարյուր առավել նշանավոր հայերի գիշերը ձերբակալել էին, ինչ որ տեղ տարել ու թվում է, լիովին հաստատված է, որ շատ-շատերին, եթե ոչ բոլորին, սպանել են: Անցած շաբաթ, հավասարի տեղեկությունների վրա հիմնված լուրեր էին պտտվում, որ կոտորած է նախապատրաստվում: Կարծում եմ, գրեթե կասկած չի կարող լինել, որ այն վաղուց ծրագրված է:

Հայ ժողովրդին բնաջինջ անելու ուրիշ միջոց էլ է հղացված: Ոստիկանները ազգաբնակչությանը բռնագաղթեցնելու մասին է, այն էլ ոչ միայն մեր, այլեւ, որքան հասկանում եմ, բոլոր վեց նահանգներից, որոնք Հայաստանն են կազմում: Ասում են, որ մեր նահանգում ապրում է 60000, վեց նահանգներում մոտ 1000000 հայ: Նրանք բոլորն էլ ենթակա են բռնագաղթի: Մարդկության պատմության ընթացքում հավանաբար նման զանգվածային տեղահանություն մտադրություն չի եղել:

Շաբաթ օրը, հունիսի 28-ին հրապարակայնորեն Հայտարարեցին, որ հինգ օր անց բոլոր հայերն ու ասորիները պետք է հեռանան այստեղից: Մամուրեթ-ուլ-Ազիզ եւ Սարբերդ քաղաքները բաժանել են թաղամասերի, յուրաքանչյուր տան բնակիչների հաղորդել, թե երբ պիտի ճամփա ընկնեն: Մամուրեթ-ուլ-Ազիզին երկու օր էր հատկաց-

ված՝ հուլիսի 1-ից 3-ը, Սարբերդին երեք՝ հուլիսի 4-ը, 5-ը եւ 6-ը: Այս երկու քաղաքներում ենթադրաբար քառասուն հազար հոգի է ապրում, որոնցից առնվազն տասնհինգ կամ տասնութ հազարը հայեր են, որոնք ամենաքիչը երեք հազար ընտանիք են կազմում: Ավելի շատ հայեր կան հարեւան գյուղերում, որոնց բնակիչները նույնպես մի քանի օրից պիտի թողնեն իրենց տները: Նման հրամանի բուն նշանակություն դժվար թե կարողանա պատկերացնել նա, ով ծանոթ չէ այս մեկուսացած տարածաշրջանի առանձնատահատուկ պայմաններին: Ջարդը, որքան էլ սարսափ հարուցի բառը, բռնագաղթի համեմատությամբ ավելի մարդկային կլինի: Կոտորածներից հետո ոմանք թերեւս ողջ մնան, մինչդեռ նման երկրում համընդհանուր տեղահանություն նշանակում է յուրաքանչյուրի համար թեւեւ դանդաղ, բայց թերեւս անհամեմատ ահավոր մահ: Ես չեմ հավատում, որ հարյուրից, հազարից մեկն անգամ ողջ կմնա: Այստեղից մեկնողների հավանական հանգրվանը Հայտարարված է Ուրֆան, բայց ես շատ լավ գիտեմ, որ խոսքը քաղաքի մասին չէ, այլ հարավ-արեւելք ընկած Միջագետքի հարթավայրի, որտեղ չի կարող ապրել ոչ մարդը, ոչ էլ անասունը: Բայց որն էլ լինի հանգրվանը, տարագրվելն այդ ուղղությամբ տարվա այս եղանակին չափազանց դժվար է նույնիսկ նրա համար, ով հանգամանորեն նախապատրաստվել, եւ նույնիսկ սայլ է գտել: Ճանապարհի մեծ մասն անցնում է տոթ, կիզիչ անապատով, ջուր, բուսականություն գրեթե չկա: Որոշ տեղերում սայլով մի ամբողջ օր առաջանալուց հետո անգամ անհնար է ջուր գտնել: Հետիոտն կանանց ու երեխաների քարավանից այդ նույն տարածությունն անցնելու համար անհամեմատ շատ ժամանակ կպահանջվի, նրանք այստեղից Ուրֆա հազիվ տասնհինգ-քսան օրում հասնեն: Ճանապարհին ընդամենը երկու քաղաք, երկու-երեք փոքրիկ գյուղ կա, այդ գյուղերից դժվար կլինի

Թեկուզ քսան-երեսուն մարդու համար ուտելիք գտնելը: Վրա կհասնեն օրեր, երբ մարդիկ ոչ ուտելիք կունենան, ոչ խմելիք: Նրանք չեն կարողանա այնքան սնունդ չալակել, որ բավականացնի մինչեւ մյուս բնակավայրը: Ամենալավ պայմաններում անգամ նման ճամփորդությունը ահավոր տառապանք է (ես դա ասում եմ՝ ելնելով անձնական փորձառությունից, անցած ամռանը, Ամերիկա ուղեւորվելու եւ Ուարրեթը վերադառնալու ժամանակ այդ ճանապարհը երկու անգամ անցել եմ): Մինչդեռ բռնագաղթողների՝ այսինքն հայերի մեծ մասի համար դա ստույգ մահ է:

Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ գործնականում հնարավոր չէ ոչ սայլեր, ոչ էլ ձի հայթայթել: Մեր տարածաշրջանից աքսորի նախապատրաստվող հինգ-վեց հազար ընտանիքը հազիվ քսանհինգ սայլ գտնի: Ընդհանուր առմամբ թերեւս հարյուր եզնասայլ, բավական մեծ թվով փոքրիկ ավանակներ լինեն, ոմանք էլ ուզենան կովերին տանել, որպեսզի ուտելիք, մի երկու ծածկոց բարձեն: Ահա ամբողջ փոխադրամիջոցը, որ այս պահին գոյություն ունի մեր շրջանում: Նույնիսկ բավարար քանակությամբ որեւէ տեսակի կենդանի չկա, որ հերիքի յուրաքանչյուր ընտանիքի՝ արդեն պարզ է, որ բոլորը գրեթե ստիպված պիտի լինեն ոտքով ճամփա ընկնել: Բարեկեցիկ ընտանիքներից շատ քչերը մեկ-երկու անասուն կունենան, որոնց վրա մայրերը, երեխաները կկարողանան հերթով նստել, բայց մեծ մասամբ կանայք՝ ամուսիններից գուրկ, նորածինները գրկներին, բազմաթիվ զավակներով, առանց փոխադրամիջոցի կմնան: Դժվար չէ պատկերացնել նման հայերի ճակատագիրը: Բռնագաղթը ջարդից թերեւս ավելի քաղաքակիրթ, բայց անհամեմատ արդյունավետ ու արմատական միջոց է: Ակնհայտ է, որ շատ-շատերը ելուզակների ու մարդապանների հարձակմանը կենթարկվեն, քանի որ ներկայումս ճանապարհները լեփ-լեցուն են ավարառու քրդերով:

Մի քանի որ առաջ ես վալիին հարցրի, թե ի՞նչ է նախաձեռնվում այդ մարդկանց պաշտպանություն համար: Նա պատասխանեց, որ մեծ քանակությամբ ղինվոր-ոստիկան նրանց կուղեկցի, որպեսզի չկրկնվի ավելի վաղ տեղահանվածների ճակատագիրը, որոնց ճանապարհին հանդիպել էին քրդերը, չափազանց դաժան վարվել: Ոչ մի կասկած չի կարող լինել, որ քրդերը նման հաշվեհարդարի հատուկ հրահանգ էին ստացել: Շատ-շատերը ոչ առանց հիմքի մտածում են, որ նույն ճակատագիրը այժմ մեկնողներին է սպասում: Ոխտ հավանական է, որ տղամարդկանց կսպանեն, ամենագեղեցիկ կանանց ստրկության կտանեն, մյուսներին երեխաների հետ անապատում կթողնեն, որպեսզի մահանան: Ամեն դեպքում տարակույս չի կարող լինել, որ գրեթե բոլորը, նախքան վերջնական հանգրվան հասնելը, որեւէ կերպ կոչնչանան: Նրանց ողջ-առողջ տեղ հասնելը կասկածի է ենթարկում նաեւ այն հանգամանքը, որ էրզրումից, Երզնկայից տարագրվածները, որոնց այստեղ սպասում էին, բացի մի քանի, մոտակա վայրերից քշվածներից, տեղ չեն հասել: Միաժամանակ լուրեր են պտտվում, որ նրանց բոլորին թալանել ու կոտորել են քրդերը: Շատերի անուններով այստեղ գումարներ են ուղարկել, բայց ոչ ոք չի ներկայացել, որ ստանա:

Մյուս մտահոգող հանգամանքն այն է, որ նահանգապետը որեւէ ամերիկացու թույլ չի տալիս ուղեկցել ճամփա ընկնող քաղաքացիներին: Մինչդեռ բազմաթիվ միսիոներներ կուզեին հայերի հետ մեկնել, որպեսզի նեցուկ լինեն օգնություն կարիք ունեցողներին: Կիրակի օրը, ամսի 27-ին ես այցելեցի վալիին, որ խոսեմ այս, մի շարք ուրիշ խնդիրների մասին: Նա կտրականապես մերժեց հայերին ուղեկցելու առաջարկը, ասաց, որ այդպիսի թույլտվություն չունի, բայց ավելացրեց, որ նոր բնակավայրերը հասնելուց հետո, ամերիկացիները, եթե ուզում են, կարող են միանալ նրանց: Ան-

չուչտ, սա պատասխանատուութիւնն չենթադրող խոստում է, քանի որ պարզ է՝ գաղթականներից շատ քչերը տեղ կհասնեն, եթե, իհարկե, ընդհանրապես որեւէ մեկը կհասնի: Կառավարութիւնը, նրանց ապահով վերջնական հանգրվան հասցնելու ցանկութիւնն ունենալու դեպքում, ամերիկացիների՝ ուղեկցելու առաջարկը չէր մերժի: Մյուս կողմից էլ, ո՞վ գիտե, քանի որ այժմ բոլոր ճանապարհներն անկասկած խիստ վտանգավոր են, թերեւս վալիին չի ուզում պատասխանատուութիւնն ստանձնել, թույլ տալ, որ ամերիկացիները կյանքները փորձութեան ենթարկեն: Հնարավոր է նաեւ, որ վալիի՝ հետագայում գնալ արքայականներին միանալու առաջարկը թափանցիկ ակնարկ է այն մասին, որ մոտ ապագայում միսիոներներին էլ են թելադրելու հեռանալ այստեղից:

Իմ հունիսի 27-ի, հունիսի 28-ի, ինչպես նաեւ միսսոր Ռիցի՝ միսսոր Փիթին հղած ամսի 28-ի հեռագրերում մենք անդրադարձել էինք վերջնական հանգրվանում հայերին օգնութեան հասնելու անհրաժեշտութեանը, ես առաջարկել էի մինչեւ իսկ Ամերիկայից օժանդակութիւնն ուղարկել: Մնում է որոշել, թե ի՞նչ չափով է կարելի աջակցել տարագիրներին ու ինչպե՞ս է հնարավոր իրագործել մեր աջակցութիւնը: Չափազանց մեծ է վտանգը, որ նրանց բոլորին կկոտորեն, կամ էլ այնպես կանեն, որ ճանապարհին մահանան: Եթե մինչեւ անգամ նրանք ինչ որ տեղ հասնեն, հայտնի չէ՝ հնարավոր կլինի՞ հետները կապ հաստատել: Իմ կարծիքով հատուկենտ վերապրողներին կքչեն Միջագետքի հարթավայրի ամենահեռավոր անկյունները՝ Ուրֆայից, մյուս քաղաքներից օրեր ու օրեր հեռու: Ուրֆայից նրանց օգնութիւնն հասցնելու հնարավորութիւնն լինելու դեպքում, մենք կարող էինք դա անել քաղաքում գտնվող Ամերիկյան առաքելութեան կամ Հալեպի հյուպատոսութեան միջոցով: Ամեն դեպքում անպայման պետք է նկատի ունենալ բռնա-

գաղթողների ահապոր տառապանքներն ու վերապրողներին աջակցելու անհրաժեշտութիւնը: Հարուստ ու աղքատ հավասարապես կգրկվեն ամեն ինչից, եթե հնարավոր է նրանց օգնութեան ձեռք երկարել, անհրաժեշտ է այսօրվանից սկսել:

Անկարելի է լիովին նկարագրել տագնապը, որ առաջացրել է տարագրութեան հրամանը: Մարդկանց ընդամենը հինգ, թե վեց օր է տրված ամբողջ ունեցվածքը տնօրինելու, թողնել-հեռանալու համար: Վաճառականներն այդքան կարճ ժամանակում չեն կարողանա իրենց գործերը կարգավորել: Ընտանիքի հայրերի համար նույնպես զժվար կլինի եղած-չեղածը վաճառելը, կենցաղային խնդիրներ կարգավորելը: Ահա այդ ամենի պատճառով առաջացել է մի խուճապ, որն այլուր հազվադեպ, մեզ մոտ ընդհանրապես չի եղել: Բոլոր նրանք, ովքեր արքայ են գնալու, աշխատում են հետները գոնե մի քիչ փող ունենալ, թուրքերն էլ, իհարկե, առիթից օգտվում, գրեթե ձրի, ինչ ուզում, գնում են: Սարեութիւնն ու թալանը երբեք այս աստիճանի բացահայտ չէին եղել: Թուրքերը՝ տղամարդ թե կին, մտնում են հայերի տները, ցանկացած իր չնչին դրամով առնում: Ապրանքի գինը հազվադեպ է իսկական արժեքի հինգ կամ տասը տոկոսը կազմում: Մի ամբողջ տան կահ-կարասի, որը կարծենա հարյուր կամ երկու հարյուր փաունդ, վաճառվում է տասը-տասնհինգ փաունդով: Հինգ-տասը փաունդանոց գորգերը գնում են հիսուն կամ յոթանասունհինգ պիաստրով: Մարդիկ են պատահում, որոնք գոհ են լինում, երբ ընդհանրապես որեւէ բան են ստանում իրենց ապրանքի կամ ունեցվածքի դիմաց: Փողոցները լցված են թալանը տեղափոխող ուղտերով, հարուստ թուրք տղամարդկանցով ու կանանցով, որոնք, ինչպես տոնական օրերին, հազել են իրենց ամենագեղեցիկ զգեստներն ու նմանվում են ճանապարհին աչքովն ընկած զոհի վրա պտտվող գիշանգլի: Դժվար է

պատկերացնել ավելի ճշող տեսարան, քան այն, ինչ այժմ տեղի է ունենում մեզ մոտ: Նման կարճ ժամանակում մեկնելու նախապատրաստվելն այնքան ծանր է, որ մենք վեց հոգով՝ արտասահմանցի ընտանիքների գրեթե բոլոր տղամարդիկս, ոչ պաշտոնական այցով վալիի մոտ գնացինք, հարցրեցինք՝ հայերին տարագրություն պատրաստվելու համար հնարավոր չէ՞ ավելի երկար ժամանակ տալ: Նա մեզ ընդունեց խիստ հարգալիր, բայց ասաց, որ դա անհնար է: Ամեն դեպքում մենք որոշակի իմացանք, որ աքսորվողներին կարող ենք տարբեր ձևերով օգնել: Նահանգապետը հայտնեց, որ ամենեւին դեմ չի լինի, եթե նրանց համար որոշ ապրանք գնենք կամ իրենք մեզ վստահեն իրենց գումարները: Ճիշտ է գայմագամը այդ ամենին դեմ էր, բայց այնուամենայնիվ մենք ինչ որ բան կարողացանք անել: Միսիոներները նույնպես փորձեցին բռնագաղթողներին դեղորայքով, ճանապարհորդության համար անհրաժեշտ այլ օգտակար իրերով ապահովել, ամենաչքավորներին ու կարիքավորներին դրամ բաժանել:

Վերջին երեք օրվա ընթացքում անընդհատ մարդիկ էին գալիս Հյուպատոսարան, Ամերիկյան առաքելություն, որ այս կամ այն կերպ օժանդակություն ստանան: Մի մասը նյութական օգնություն էր խնդրում, մյուսն ուզում էր վստահել որոշ իրեր: Հայերը բերում էին դրամ, փաստաթղթեր, զարդեղեն, կահույք, այլ ապրանքներ: Ես ընդունում էի միայն դրամ ու փաստաթղթեր, բայց միսիոներները շատ ուրիշ պարտականություններ էլ էին ստանձնում: Ոմանք դրամները թողնում էին, որ իսկույն ելեթ Ամերիկայի իրենց հարազատներին ուղարկենք, սակայն մեծ մասը խնդրում էր դա անել միայն այն դեպքում, եթե չորսից վեց ամսվա ընթացքում իրենցից ոչ մի լուր չստացվի: Ես երբեք ավելի որբերգական, հոգեմաշ տեսարան չեմ տեսել: Բոլորն զգում էին, որ դեպի ստույգ մահն են գնում ու իհարկե հիմնավոր

պատճառներ ունեին այդպես կարծելու: Նրանց վստահությունը ամերիկյան Հյուպատոսարանի, միսիոներների նկատմամբ սրտաշարժ էր, մեծ մասը չէր ուզում նույնիսկ այն դրամը հաշվել, որ վստահում էր: Հայերը մեզ էին թողնում իրենց ամբողջ կյանքում խնայած գումարն ու միմիայն խնդրում, որ եթե մի քանի ամսվա ընթացքում իրենց մասին որեւէ տեղեկություն չհասնի, հնարավորության դեպքում դրամները հարազատներին առաքել:

Հայերի անշարժ գույքը բռնագրավելու է կառավարությունը: Բացարձակ մեծամասնությունը չի էլ հասցնի տնօրինել ունեցվածքն ու շատ հավանական է, որ ամբողջ պարունակությունը թողնի տուն, խանութ, ամեն ինչ: Նրանք, ովքեր հարստության տեր էին, բոլորը կկորցնեն: Ոմանք, իհարկե, կկարողանան հետները մի քիչ փող վերցնել, բայց ամենքն էլ կվախենան թալանվելուց, շատ քիչ հայ կպատահի, որ կհանդգնի ճանապարհի համար մեծ գումարներ տանել: Ջքավորների, դրամ չունեցողների վիճակն ավելի ծանր է, ոչ ոք չգիտի, թե ինչ է լինելու նրանց վերջը: Կառավարությունը ավանակներ առաջարկել է, բայց ամեն անասունի, ամեն օրվա համար խոշոր գումարներ է պահանջել: Նա, ով ճանապարհ ընկնի մեկ-երկու լիրայով, մի քանի օրից դրամը կվերջանա ու այլեւս ոչ մի միջոց չի ունենա:

Առեւտրի ու արդյունաբերության տեսակետից Հայերի աքսորի հետեւանքն այն կլինի, որ նահանգը հետ՝ միջնադար կվերադառնա: Պաշտոնական վիճակագրությամբ վաճառականության եւ առեւտրական գործարքների իննսուն տոկոսը իրականացվում է այն դրամատների միջոցով, որոնք Հայերին են պատկանում: Բոլոր գործառույթյունները կխափանվեն ու վերականգնելու ոչ մի հնարավորություն չի լինի: Բազմաթիվ բնագավառներում ոչ մասնագետ, ոչ էլ նույնիսկ բանվոր կգտնվի: Եթե որոշ արհեստավորների նկատմամբ բացառություն չարվի, դժվար է նույնիսկ պատ-

կերացնել, թե ինչպես պիտի ապրեն այն թուրքերը, որոնք այս կամ այն չափով վարժվել են քաղաքակրթությանը: Մինչեւ այժմ, սակայն, այդ մասին ոչ ոք չի մտածում: Այլեւ ոչ դրամատուն կմնա, ոչ եկեղեցի, ոչ էլ քրիստոնեական դպրոց: Մի հարվածով երկիրը երկու-երեք հարյուր տարով հետ կգնա: Նույնը վերաբերում է Դիարբեքիին, տարածաշրջանի մյուս բնակավայրերին: Ես ոչ մի կասկած չունեմ, որ բոլոր ամերիկյան միսիոներները ստիպված կլինեն հեռանալ: Ամենեւին չեմ դարմանա, եթե նրանք մեկնելու հրաման ստանան, բայց, անկախ այն բանից, կվտարվեն, թե ոչ, այստեղ այլեւս անելիք չեն ունենա: Սարբերդի միսիոներների վաթսուն տարվա գործունեությունը մոտենում է իր վախճանին, ես չեմ էլ պատկերացնում, թե ինչպես են նրանք իրենց առաքելությունը շարունակելու:

Գործարար կյանքի ընդհատումից, միսիոներների հեռանալուց հետո հայտնի չէ, թե ինչով պիտի զբաղվի հյուպատոսարանն այստեղ, Դիարբեքիում, տարածաշրջանի այլ բնակավայրերում: Ծատ լուրջ վտանգ կա նաեւ, որ շուտով կկորցնեմ տասը տարուց ավելի հյուպատոսարանում ծառայող իմ խիստ կարեւոր երկու աշխատակիցներին, քանի որ հայեր են: Ես վալիից խնդրեցի թույլ տալ նրանց մնալու, բայց միակ բանը, որին հասա, արքայի առաջին քարավանից հետ պահելն էր: Կուսակալն ասաց, որ երկու հայերը կարող են եւս մի քանի օր մնալ, այդ ընթացքում ինքը համապատասխան հրահանգ ստանալու համար կղիմի Կոստանդնուպոլիս: Իմ հունիսի 27-ի հեռագրում ես դեսպանությունը խնդրել էի նրանց համար արտոնություն ձեռք բերել, բայց չեմ կարծում, որ այդ հեռագիրը տեղ է հասել: Իսկ իմ հունիսի 27-ի հեռագրով ես զիմել էի դեսպանատանը, որ տեղեկանամ, թե կարելի է արդյոք բացառություն հասնել այստեղ գտնվող այն անձանց նկատմամբ, ովքեր ամերիկյան հպատակություն ունեն: Մի անգամ այդ մասին

խոսեցի վալիի հետ, բայց նա խուսափողական պատասխան տվեց:

Հույս ունեմ ժամանակին դեսպանատնից համապատասխան հրահանգ ստանալ, որպեսզի իմանամ, թե ինչ իրավասություններից կարող եմ օգտվել նման մարդկանց ու նրանց երեխաներին փրկելու համար: Կան այնպիսի քաղաքացիներ, ովքեր անկասկած մեր պաշտպանությունը վայելելու իրավունքն ունեն: Սոսքը վերաբերում է հատկապես նրանց, որոնց ամուսինները ամերիկահպատակ են, գտնվում են Ամերիկայում, իսկ իրենք՝ կանայք, հարազատներին տեսնելու համար կարճ ժամանակով են Սարբերդ եկել: Այդպիսիները քիչ չեն, ընդ որում գրեթե բոլորը վերադարձել են Միացյալ Նահանգներում ծնված երեխաներով, ես նրանց օգնելու համար պատրաստ եմ ամեն ինչ անել:

Այս տարածաշրջանի ազգաբնակչության կեսի տարահանումը սկսվում է վաղը, եթե բոլոր հայերը այդ աստիճանի ընկճված ու հուսահատված չլինեին, ես կարող էի ընդվզման տեսարանների ականատես լինելու հույսն ունենալ: Ինչ էլ լինի, ոչ մի կերպ չեմ կարողանում հավատալ, որ իշխանությունները կհասնեն իրենց նպատակին՝ բոլորին կաքսորեն, չնայած առայժմ լարվածության թուլացման, բացառությունների ընդառաջելու ոչ մի նախանշան չեմ տեսնում:

Պատիվ ունեմ սիր, մնալու Ձեր խոնարհ ծառան՝

ԼԵՍԼԻ Ա. ԴԵԻԻՍ
(ստորագրություն)
Հյուպատոս

ԱՂԲՅՈՒՐ - Լեսլի Ա. Դեյսը Սարբերդից՝ Հենրի Մորգենթաուին, ամերիկյան դեսպանին, Կոստանդնուպոլիս, 30-ը հունիսի, 1915 թ., Կոստանդնուպոլիսի գործերի կառավարչի հերթական թղթատարով 1916 թ. փետրվարի 17-ին ուղարկված է պետքարտուղարին Ա.Ա., Պ.Գ., 59 Ն.Փ., տասնորդական թղթապանակ, թիվ 867. 4016/ 269:

Ամերիկյան Հյուպատոսարան
Մամուրեթ-ուլ-Ազիզ (Պարբերդ)
Թուրքիա, 11-ը Հուլիսի 1915 թ.

Մեծարգո Հենրի Մորգենթաուին
Ամերիկյան դեսպանին
Կոստանդնուպոլիս

Սիր,

Պատիվ ունեմ այս տարածաշրջանից Հայերի արտաքսմանը վերաբերող իմ Հունիսի 30-ի զեկուցագրին (Թղթապանակ թիվ 840.1) հետեւյալ լրացումները կատարել:

Մարդկային մի մեծ խումբ այստեղից ճամփա ընկավ Հուլիսի 1-ին, Հազարավորներ՝ 3-ին, շատ ուրիշներ՝ Հաջորդ օրերին: Որոշակի թիվը դժվար է ճշտել, բայց շատ-շատերն արդեն մեկնել են:

Ամեն դեպքում Պարբերդ քաղաքի բնակիչների աքսորը հետաձգվեց, բազմաթիվ կանանց ու երեխաների ժամանակավորապես թույլ տվեցին մնալ, մարդիկ սկսեցին Հուսալ, որ վտանգն արդեն անցել է, իրենց Հանգիստ կթողնեն: Բայց քիչ առաջ մուսնտիկը Հաղորդեց, որ բոլոր Հայերն անխտիր Հունիսի 13-ին պիտի մեկնեն: Եթե խոսքը միայն տունը-տեղը թողնել, մի այլ վայրում Հաստատվելու մասին լինեք, սարսափն այսքան մեծ չէր լինի, բայց յուրաքանչյուրը գիտե, որ դեպի մահ է գնում:

Այս կապակցությամբ եղած անգամ չնչին կասկածները վերջնականապես ի դերեւ ելան, երբ էրզրումից ու Երզնկայից մի քանի Հազար գաղթականների քարավան Հայտնվեց: Նրանց առաջին խմբերը Հասան իմ վերջին զեկուցագիրը պատրաստելուց մի երկու օր անց: Ես մի քանի անգամ այցելել եմ նրանց ճամբարները, շատերի հետ զրուցել: Ավելի սահմուկեցուցիչ տեսարան անհնար է պատկերացնել: Նրանք բոլորը, գրեթե առանց բացառություն, ցնցոտինե-

րով են, կեղտոտ, քաղցած ու հիվանդ: Դա զարմանալի չէ, քանի որ երկու ամսից ավելի ճանապարհին են եղել, Հագուստ չեն փոխել, լվացվելու Հնարավորություն, գլխներին տանիք չեն ունեցել, շատ քիչ են ուտելիք գտել:

Այստեղ կառավարությունը չնչին քանակությամբ սնունդ բաժանեց: Մի անգամ, երբ ուտելիքը բաշխում էին, ես ներկա էի: Գաղթականները Հարձակվում էին բերողների վրա, իսկ վերջիններս նրանց մահակներով քշում էին, երբեմն դիտմամբ շատ ուժեղ խփում, որ սպանեն: Դժվարությամբ կարելի է Հավատալ, որ նրանք մարդկային էակներ են: Հենց գաղթականի մոտով անցնում ես, կանայք մեկնում են իրենց զավակներին, խնդրում վերցնել: Իրոք, թուրքերն արդեն այդ տղաներից ու աղջիկներից շատերին ընտրել են, որպեսզի ստրկացնեն կամ շատ ավելի վատ նպատակների ծառայեցնեն: Նրանք նույնիսկ բժիշկներ են բերել, որ քննեն ամենաուշագրավ աղջիկներին ու առավել գեղեցիկներին տանեն: Տղամարդ շատ քիչ է մնացել, մեծ մասին ճանապարհին սպանել են: Բոլորը նույնն են պատմում՝ իրենց վրա Հարձակվել, թալանել են քրդերը: Շատերը մի քանի անգամ են գրոհի ենթարկվել, մեծ մասը՝ Հատկապես տղամարդիկ, կոտորվել են:

Ինչ խոսք, կանանց ու երեխաներին էլ չեն խնայել: Քիչ չեն նաեւ այնպիսիները, ովքեր Հիվանդություններից, Հյուծախտից են մահացել՝ այստեղ Հասնելուց ի վեր էլ ամեն օր մարդ է մեռնում:

Արդեն բազմաթիվ քարավաններ են իրար հետեւից եկել ու մեկ-երկու օր մնալուց հետո քշվել անհայտ ուղղությամբ: Իհարկե բնօրրաններից Հանվածների փոքր մասն է միայն Հասել այստեղ, այնպես որ եթե այսուհետեւ էլ նույն ձեւով շարունակեն Հալածել ճանապարհներին, Հնարավոր է, որ Համեմատաբար կարճ ժամանակում ոչ ոք կենդանի չմնա: Նրանց մեջ, ում հետ ինձ Հաջողվեց զրուցել, երեք քույրեր

կային: Երեքն էլ սովորել էին կոստանդնուպոլսում, Հիանալի անգլերեն գիտեին: Ասացին, որ իրենց ընտանիքը ամենահարուստն է եղել էրզրումում, ճամփա են ընկել քսանհինգ հոգի, բայց տասնչորսն են մնացել: Մյուս տասնմեկին, որոնց թվում զրուցակիցներիցս մեկի ամուսնուն ու գերդաստանի ծեր տատին քրդերը սպանել են նրանց աչքի առաջ: Ընտանիքի արական սեռի ամենամեծ վերապրողը, այսպիսով, հազիվ ութ տարեկան էր: Էրզրումից ելնելիս նրանք փող, ձի, անձնական իրեր են ունեցել, բայց այդ ամենը, ինչպես նաև հագուստները, թալանել էին: Գաղթականների մի մասը մերկ, մյուսը միայն շապիկով էր մնացել: Երբ ինչ որ գյուղ էին հասել, ուղեկցող զինվոր-ուստիկանները տեղի բնակչուհիներից նրանց համար ցնցոտիներ էին ձեռք բերել: Մյուս աղջիկը, ում հետ խոսեցի, էրզրումի ավետարանչական պատվելիի դուստրն էր: Նրանց ամբողջ ընտանիքը կոտորվել էր, փրկվել էր միայն ինքը: Սրանք, սրանց պես մի քանիսը տարագրված վերնախավի եզակի վերապրողներն են: Նրանց տեղավորել են Սարբերդի ծայրամասում գտնող մի լքված դպրոցում, ուր ոչ ոք իրավունք չունի այցելել:

Զրուցակիցներս ասացին, որ իրենք, փաստորեն բանտում են, չնայած կարող են օգտվել դպրոցի շենքից ոչ հեռու գտնվող աղբյուրից: Հենց այդտեղ էլ ես կարողացա հանդիպել նրանց: Մյուս տարագիրները ընդարձակ դաշտում էին, բաց երկնքի տակ, ոչնչով պաշտպանված չէին կիզիչ արեւից: Այսպիսի վիճակը որոշակիորեն պարզում է, թե ինչ է սպասում նրանց, ովքեր արդեն մեկնել են Սարբերդից կամ առաջիկայում մեկնելու են: Ինձ թվում է տարագիրներից դեռ ոչ մի լուր չի եկել, հավանաբար չի էլ դա: Անխափան գործող համակարգի համաձայն, քրդական ոճրախմբերը թաքնվում են ճանապարհին ու սպասում նրանց, որպեսզի բնաջնջեն հատկապես տղամարդկանց, ի միջի այլոց նաև

կանանց, երեխաների մի մասին: Սա թվում է ամենայն մանրամասնությամբ նախապատրաստված, ամենաարդյունավետ սպանողն է, որը երբեք տեղի է ունեցել այս երկրում: Տարագրվող քարավաններում շատ քիչ տղամարդ է մնացել, նրանցից ազատվելու ավելի վստահելի, արագ գործադրվող միջոցներ են կիրառվել:

Վերջին շաբաթների ընթացքում հազարավոր տղամարդկանց ձերբակալեցին: Նրանց նետում էին բանտերն ու հենց հարյուր հոգու հավաքում էին, գիշերը հանում էին դուրս: Առաջին քարավանը ճամփա ընկավ հունիսի 23-ի գիշերը: Բռնագաղթողների թվում էին ամերիկյան քոլեջի մի քանի դասախոսներ, ուրիշ ազդեցիկ հայեր, Սարբերդի հայկական եկեղեցու եպիսկոպոսը: Շշուկներ են պտտվում, որ բոլորին սրախողխող են արել, ու շատ քիչ հավանականություն կա, որ այդպես չլինի: Նույն ձեռով տարան հայ զինվորներին: Նրանց նախ հավաքեցին, բանտարկեցին քաղաքի արվարձանում գտնվող մի շենքում: Ոչ մի տարբերություն չդրեցին ծառայությունից ազատվելու համար տուրք չմուծածների ու մուծածների միջև: Վերջիններիս փողը վերցնում էին, մյուսների հետ ձերբակալում, ճամփա հանում: Ասում էին, թե տանելու, ճանապարհներին աշխատեցնելու են, բայց դա բացահայտ սուտ էր, որովհետև մինչև այժմ ոչ մեկից լուր չի եկել: Հուլիսի 7-ին, չորեքշաբթի օրը, վստահելի աղբյուրներից վերջնականապես հայտնի դարձավ նաև մնացածի ճակատագիրը, քանի որ նույն փորձությանն էին ենթարկվել: Սարբերդում, Մեղիրում մեծ թվով տղամարդկանց ձերբակալել էին, բանտ նետել: Երեքշաբթի, առավոտ վաղ հանել էին, ստիպել քայլել դեպի անմարդաբնակ լեռները: Բոլորը միասին եղել էին մոտ ութ հարյուր հոգի, որոնց տասնչորս հոգիանոց խմբերով կապկպել էին իրար: Կեսօրից հետո նրանք հասել էին մի փոքրիկ քրդական գյուղ, գիշերը փակված մնացել մզկիթում, հարե-

ւան շինություններում: Այս ամբողջ ժամանակ նրանց ոչ ուտելիք էին տվել, ոչ ջուր, բոլորի ամբողջ գումարը, հագուստների մեծ մասը խլել էին: Չորեքշաբթի հայ տղամարդկանց հասցրել էին քաղաքից մի քանի ժամ հեռու գտնվող հովիտն ու ստիպել նստել: Հետո զինվոր-ստիկանները կրակել էին այնքան, մինչեւ համարյա բոլորին կոտորել էին: Նրանց, ում փամփուշտը չէր սպանել, ոչնչացրել էին դանակի կամ սվինի հարվածներով: Ոմանք, այնուամենայնիվ, կարողացել էին կտրել իրենց՝ ընկերներին կապող թուկերն ու փախչել, բայց շատերը հենց փախուստի ժամանակ էին հրացանազարկ եղել: Հազիվ մի քանի՝ ըստ երեւույթին երկու-երեք հոգու էր հաջողվել սպանողից ճողոպրել: Ձոհերի թվում են ամերիկյան քոլեջի գանձապահը, ուրիշ շատ հարգելի անձնավորություններ: Նրանցից ոչ մեկին ոչ մի մեղադրանք չէր ներկայացվել: Այդ տղամարդկանց ձերբակալել ու ոչնչացրել էին ամբողջ հայ ազգը բնաջինջ անելու ընդհանուր ծրագրի իրագործման շրջանակներում:

Երեկ երեկոյան հարյուրավորների, որոնց թվում քաղաքացիական ու ռազմական իշխանությունների ձերբակալածներին, տարան այլ ուղղությամբ, բայց նույն ճակատագրին արժանացրին: Ասում են նախճիրն իրագործվել է այստեղից ընդամենը երկու ժամ հեռու գտնվող մի վայրում: Երբեւէ, հենց իրադրությունը փոքր ինչ խաղաղվի, անձամբ ձիով կզնամ, որպեսզի իմ աչքով տեսնեմ, համոզվեմ:

Նույնը, պարբերաբար, տեղի է ունենում գյուղերում:

Մի քանի շաբաթ առաջ Իջմեռ ու Հապուսի գուղերից, որոնք այստեղից չորս-հինգ ժամ են հեռու, երեք հարյուր տղամարդու հավաքել էին, տարել լեռները, մորթել: Դա ոչ մի կասկած չի հարուցում, այդ գյուղերից բազմաթիվ կանայք են եկել քաղաք, նույնը պատմել: Այլ բնակավայրերից էլ են պարբերաբար նման հաշվեհարդարի լուրեր հասնում: Թվում է գոյություն ունի բոլոր տղամարդկանցից ազատվե-

լու խիստ որոշակի ծրագիր, չնայած տեղահանություն հրամանը ստացվելուն պես, բազմաթիվ ընտանիքների մի քանի օր շարունակ տարագրելուց հետո, երբ հայտարարեցին, որ այն կանայք ու երեխաները, ովքեր առանց տղամարդու են մնացել, առայժմ կարող են ապրել իրենց բնակավայրերում, ակամա հույս ծագեց, որ վատթարը ետեւում է մնացել: Ամերիկյան միսիոներները սկսեցին անմիջապես քայլեր ձեռնարկել, որպեսզի օգնեն առանց գոյություն միջոցների մնացած կանանց ու երեխաներին: Մտածեցին, որ հնարավոր է նույնիսկ որբանոց բացել, պատսպարել որոշ քանակությամբ երեխաների, հատկապես նրանց, ովքեր ծնվել էին Ամերիկայում, ծնողներն էին Ռարբերդ բերել, կամ որբւէ առնչություն էին ունեցել մեր առաքելության, դպրոցների հետ: Չնայած միջոցների հավանական անբավարարությունը, հնարավոր կլինե՞ր պատսպարել նաեւ այն դեռահասներին, որոնք այստեղ էին հասել տարբեր վիճակներով, որոնց ծնողները մահացել էին աքսորի ճանապարհին:

Երեկ ես այցելեցի վալիին՝ այս ամենի շուրջը պայմանավորվելու համար ու վճռական մերժում ստացա: Նա ասաց, որ եթե ուզում ենք, այդ երեխաներին կարող ենք օժանդակել, բայց որբանոցներ նրանց համար կառավարությունն է բացել, մենք իրավունք չունենք նման քայլեր ձեռնարկել: Նահանգապետին հրաժեշտ տալուց մի ժամ անց հայտնի դարձավ, որ Ռարբերդում մնացած բոլոր հայերը, որոնց թվում եւ կանայք, երեխաները հուլիսի 13-ին պիտի տարագրվեն:

Բացահայտ է, որ կառավարությունը որոշել է ամեն կերպ թույլ չտալ, որ այստեղ մնացած արտասահմանյան միսիոներները կրթական կամ կրոնական գործունեություն ծավալեն: Որոշ հայուհիների ամուսնացնում են մահմեդականներին հետ, որոշ հայ երեխաների էլ մահմեդականացնում են, բայց ոչ ոքի թույլ չեն տալիս ուրիշ, օտար ազգե-

ցությունների ենթարկվել: Երկիրը պետք է զուտ մահմեդական լինի, ոչ մի այլ հեռանկարի մասին չի կարող խոսք լինել: Մեր միսիոներներից ոմանք նույնիսկ ուզում են մնալ ու մահմեդականների հետ աշխատելու փորձ անել: Ես դա ոչ միայն վտանգավոր եմ համարում, այլև չեմ կարծում, որ թույլ կտրվի այդ ուղղութայամբ որեւէ քայլ կատարել: Ամենեւին չեմ զարմանա, ինչպես արդեն կասկած եմ հայտնել, եթե առաջիկայում ամերիկյան միսիոներները երկրից հեռանալու հրաման ստանան: Մինչեւ անգամ դա ուղղակի էլ տեղի չունենա, նրանց բոլոր նախաձեռնությունները այնպիսի հետեւողականութայամբ կմերժվեն, որ այստեղ մնալը բացարձակապես անիմաստ կդառնա: Ավելին, տեղական իշխանություններն ամեն կերպ մեր միսիոներներին անհանգստություն կպատճառեն: Ես լիովին վստահ եմ, որ նրանց չեն թողնի վերաբացել դպրոցները, հավանաբար հիվանդանոցն էլ փակեն: Շատ հնարավոր է նաեւ, որ դպրոցների ու հիվանդանոցի շենքերը կառավարութայունը բռնազրավի: Ակնհայտ է, որ միսիոներներն այստեղ ոչ մի անելիք չեն ունենա, որեւէ նոր նախաձեռնութայան թույլտվութայուն չեն ստանա:

Այս պայմաններում, կարծում եմ, միակ խելամիտ ու վստահելի միջոցը, իհարկե հենց որ հնարավոր լինի, նրանց մեկնումը կազմակերպելն է: Ես հասկանում եմ անշուշտ, որ միսիոներների համար չափազանց դժվար է իրենց գործունեութայունից հրաժարվելը, բայց չպետք է մոռանալ, որ ներկա իրավիճակն էլ է չափազանց լուրջ, նման իրադրութայունում նրանց այստեղ բացարձակապես ոչինչ չի մնում անելու: Իհարկե, բոլորի միասին մեկնելը թերեւս լավագույն տարբերակը չէ, բայց ես գոնե մի քանիսին, հենց որ անվտանգութայունն ապահովված լինի, խորհուրդ կտամ ճամփա ընկնել: Միաժամանակ համառորեն պնդում եմ, որ ղեսպանատունը միտք Փիթի եւ վարչութայան ուշադրութայունը

հրավիրի բոլոր միսիոներների այս երկրից մեկնելու անհրաժեշտութայան վրա:

Անշուշտ, ես չեմ կարծում, որ որեւէ մեկը իսկույն եւեթ պետք է հեռանա: Մինչդեռ միսիոներներից ոմանք համոզված են, որ իրենցից գոնե ոմանք անմիջապես պիտի ճամփա ընկնեն, որպեսզի այս դժբախտների համար միջոցներ հայթայթեն: Սակայն, քանի որ բոլոր ճանապարհներին էլ քրդական ոճրախմբերը դարան մտած ուղեւորների են սպասում, դա կնշանակի դեպի ստույգ մահը գնալ: Ահա թե ինչու, երբ ես նահանգապետին հարցրի, թե արդյո՞ք մեկ կամ երկու ամերիկացի կարող են հենց հիմա կոստանդնուպոլիս, իսկ այնտեղից Միացյալ Նահանգներ ուղեւորվել, նա առանց թաքցնելու պատասխանեց, որ դա խելամիտ չէր լինի: Ըստ վալիի, ինքը քանի պահապան էլ հատկացնի, այժմ ճանապարհորդելու անվտանգութայունը դժվար է ապահովել, այնպես որ խորհուրդ տվեց մի քանի շաբաթ սպասել: Դա հիմնավորում է մեր ընդհանուր մտահոգութայունը նրանց ճակատագրի նկատմամբ, ում ճամփա են հանել այստեղից: Միաժամանակ թերեւս նաեւ այն, որ իշխանութայունները չեն ցանկանում ամերիկացիների կյանքը վտանգել: Բացի դրանից կուսակալը հասկացրեց, որ ամերիկացիներին երեւի թույլ չտան էլ մեկնել:

Ոմանց թվում է, թե մենք չափազանց շատ բան գիտենք այն ամենի մասին, ինչ այժմ տեղի է ունենում Թուրքիայի խորքերում, ուստի իշխանութայունները ամերիկացիներին ողջ-առողջ դուրս չեն թողնի, որպեսզի իրենց վկայութայունները չտարածեն: Ես իհարկե այդպես չեմ կարծում, բայց գտնում եմ, որ մերոնցից յուրաքանչյուրի կյանքն այստեղ վտանգված է, եւ այդ վտանգը հետզհետե մեծանում է: Ուստի, եթե միսիոներները բարեհաջող մեկնեն, ես հոգեպես ինձ թեթեւացած կզգամ: Ոչ միայն այն պատճառով, որ իրավիճակը չափազանց լարված է: Միսիոներները պարբերա-

բար այնպիսի քայլեր են ձեռնարկում, որոնք ավել կամ պակաս չափով անխոհեմ են, այնպես որ մի Հոգու անհեռատեսությունից կարող է տուժել մեր ամբողջ Համայնքը: Բնական է, նրանք Համակրում են այն մարդկանց, որոնց միջավայրում աշխատել են, ձգտում են սատարել, հովանավորել, բայց չափից ավելի բացահայտ արտահայտելով նման զգացումները, իրենք իրենց վտանգում, իրենք իրենց Համար լրացուցիչ դժվարություններ են ստեղծում:

Ինչ վերաբերում է տարագրվածների Համար օգնություն Հիմնադրամ ստեղծելու անհրաժեշտությունը, ինչի մասին Հիշատակել էի իմ Հունիսի 27-ի եւ 28-ի հեռագրերում, Հունիսի 30-ի ձեպագրում, Հակված եմ կարծելու, որ նման գումարներ գտնելու անհրաժեշտություն չի ծագի: Թվում է, շատ շուտով օգնություն կարիք ունեցող չի մնա: Բոլոր նրանք, ովքեր տեղահանված են, ամենայն Հավանականությամբ նախճիրի կենթարկվեն, կամ առաջիկա մի քանի ամսում աքսորի ճանապարհին կմահանան, իսկ ողջ մնացած կանանց ու երեխաներին անկասկած կմահմեղականացնեն:

Իմ ուշադրությունը գրավեց նաեւ այն Հանգամանքը, որ Մամուրեթ-ուլ-Ազիզի փոստատունը Հրաժարվեց ամերիկացիներին վճարել այն գումարը, որն իրենց անունով էրգրումից ու Երզնկայից ուղարկել էին այդ քաղաքներից Հասած գաղթականների Համար: Ամենայն Հավանականությամբ կառավարությունը բռնագանձի դրամները: Չգիտեմ, մեր դեսպանատունը կկարողանա՞ միջնորդել: Գումարները տեղ են Հասել ամերիկացիների Հասցեով, բայց նախատեսված են Հայ տարագիրների Համար:

Դեսպանատան թիվ 19 եւ 20 հեռագրերը ստացված են: Ես Հանդիպեցի վալիի Հետ ամերիկահպատակ քաղաքացիների, նրանց զավակների, ինչպես նաեւ Հյուպատոսարանի անձնակազմի վերաբերյալ պայմանավորվածություն կա-

յացնելու Համար: Ինչպես հեռագրել եմ այս առավոտ, նասաց, որ այդ կապակցությունը ոչ մի Հրահանգ չի ստացել: Քիչ առաջ տեղեկացրին, որ Հյուպատոսարանի աշխատակազմը, ինչպես նաեւ երկու-երեք կին, որոնց ամուսինները Ամերիկայում են, առայժմ կարող են մնալ: Թվում է այդ Հարցում մինչեւ Հիմա Հստակություն չկա: Ես շատ ուրախ կլինեի, եթե նման կանայք, հենց որ ճանապարհներն անվտանգ դառնային, Նահանգներ մեկնեին:

Կարծում եմ կարելի է Հասնել նաեւ այն բանին, որ գոնե այնքան ժամանակ, որքան որ Հյուպատոսարանը գործելու է, աշխատակիցները մնան այստեղ: Այլպես անհնարին կլինի այնպիսի մեկին գտնել, որը կարողանա կատարել նրանց պարտականությունները:

Պատիվ ունեմ, սիր, մնալու Ձեր խոնարհ ծառան՝

ԼԵՍԼԻ Ա. ԴԵԻԻՍ
(ստորագրություն)
Հյուպատոս

ԱՂԲՅՈՒՐ - Լեսլի Ա. Դեիար Նարբերդից Հենրի Մորգենթաուին, ամերիկյան դեսպանատուն, Կոստանդնուպոլիս, 11-ը Հուլիսի, 1915 թ. Մորգենթաուն օգոստոսի 10-ի թղթատարով ուղարկել է պետքարտուղարին, Ա.Ա., Պ.Գ., 59 Ն.Փ., տասնորդական թղթապանակ թիվ 867.4016/122:

Մեծարգո Հենրի Մորգենթաուին
Ամերիկյան դեսպանին
Կոստանդնուպոլիս

Սիր,

Պատիվ ունեմ իմ Հունիսի 30-ի եւ Հուլիսի 11-ի Հաղորդագրերին (Թղթապանակ թիվ 840.1), որոնք վերաբերում են այս տարածաշրջանից Հայերի արտաքսմանը, ավելի ճիշտ Համընդհանուր սպանդին, Հետեւյալ լրացումները կատարել:

Ցանկացած կասկած, որ իմ նախորդ տեղեկատվություններում թերեւս տեղ էր գտել կառավարություն՝ Հայերին բռնագաղթեցնելու բուն նպատակների վերաբերյալ, վերացավ, արտահայտված Հուլիսը, որ տարագրվողների մի մասը գոնե կփրկվի, չքացավ: Այլեւս գաղտնիք չէ՝ Հատուկ ծրագրով նախատեսված է բնաջինջ անել Հայերին որպես ցեղ, ազգ, ուղղակի նման նպատակը այնպիսի սառնասրտությունը ու բարբարոսությունը, ավելին՝ արդյունավետությունը էր իրագործվում, որ սկզբում գլխի էլ չէինք ընկնում, թե ինչ է կատարվում: Ակնհայտ է, որ տարվա այս եղանակին Նարբերդից քշվածների չնչին մասը կհասնի Ուրֆա կամ որեւէ այլ բնակավայր: Իրոք, անիմաստ է նման ճանապարհորդության դժվարություններին անդրադառնալը: Լիովին Հաստատվել է, որ մինչեւ այժմ այստեղից բռնագաղթածները քաղաքից դուրս գալուց ընդամենը մեկ-երկու օր անց մորթվել են, որեւէ այլ ձեւով սպանվել, ընդ որում դա արել են ոչ միայն ճանապարհին նրանց սպասող քուրդ Հրոսախմբերը, այլ Հիմնականում արտորական-

ներին ուղեկցող զինվոր-նստիկաններն ու չեթեները (կալանավորները), որոնց բանտերից ազատ են արձակել տարագրվող Հայերին կոտորելու համար:

Բազմաթիվ անգամ ահազանգեր ստացա, որոնց Հավաստությունն իմ կարծիքով կասկած չի Հարուցում, որ տեղահանված ոչ մի տղամարդ չի փրկվել: Միաժամանակ, կանխամտածված, սպանել են բազմաթիվ կանանց ու երեխաների: Առավել գեղեցիկ կանանց մի մասին փախցրել են, որպեսզի դարդարեն քուրդ բեկերի կամ Հենց իրենց՝ զինվոր-նստիկանների Հարեմները: Որոշ պառավների ու ինչ-ինչ երեխաների էլ զինվոր-նստիկանների ուղեկցությամբ թույլ են տվել շարունակել ճանապարհը՝ վստահ, որ շատ շուտով քաղցից, հիվանդությունից, ուժասպառությունից ցած են ընկնելու:

Ես չեմ կարծում, որ Համաշխարհային պատմության մեջ երբեւէ իրագործվել է ավելի Համընդհանուր ու արմատական նախճիր, քան այն, ինչ այժմ տեղի է ունենում մեր տարածաշրջանում եւ ոչ էլ Հավատում եմ, որ մարդկային ուղեղն ի դորու է Հղանալ ավելի ահավոր ու սաղայելական ծրագիր: Այն Հանգամանքը, որ պաշտոնական Հրամանը միմիայն Հայերին այս վիճակներից տեղափոխելու մասին է, արտաքին աշխարհին սոսկ որոշ ժամանակ կարող է թյուրիմացություն մեջ գցել, իրականում, այն, ինչ իրագործվում է, ամենադաժան սպանդն է:

Տեղի ունեցածը այդպես կկոչվեր նույնիսկ այն դեպքում, եթե թողնեին, որ բոլորն էլ ճանապարհին մեռնեն: Բայց քանի որ մեծ մասն ուղղակի է նախճիրի ենթարկվել, ոչ մի կասկած չի կարող լինել, որ կառավարությունը Հրամանն է կատարվել: Նշանակում է՝ անհնար է տպավորություն ստեղծել, թե իբր պատահածը Համազգային եղեռն չէ:

Մինչեւ այժմ Մամուրեթ-ուլ-Ազիզից տեղահանվել է 12000-ից 15000 Հայ: Մնացել է Հազիվ 1000-ից 1500 Հոգի,

որոնք կամ թույլտվություն են ձեռք բերել կամ կաշառք տվել, կամ էլ թաքնվել են: Հարեւան գյուղերից նույնպես հազարավոր հայեր են քշվել:

Անհավանական չէ, որ տարածաշրջանի ազգաբնակչության մեկ-երրորդն արդեն արտաքսվել է: Ներկա իրավիճակի ամենաակնբախ առանձնահատկությունը հայերի անօգնականությունն ու դիմադրություն իսպառ բացակայությունն է: Բացի երկու-երեք աննշան ըացառությունից, նրանց կողմից ոչ մի դիմադարձություն չի եղել: Ինձ ասացին, որ գյուղերում սպանել են մի քանի ոստիկանի, որոնց ընդհանուր թիվը ամենայն հավանականությամբ վեցից չի անցնի: Մինչդեռ թվում էր նման հրամանը առանց այս կամ չափով բռնություն գործադրելու անհնար կլինեք իրականացնել: Կարելի էր կարծել նույնիսկ, որ ոմանք կնախընտրեն այստեղ մեռնել՝ իմանալով, թե ինչ է սպասում իրենց տարագրվելուց մի քանի ժամ անց, մանավանդ որ մեծ մասն իրար ասում էր այդ մասին: Սակայն, երբ ժամանակը եկավ, բոլորը, առանց թեկուզ չնչին դիմադրության, տարագրվեցին: Ինչ խոսք, դա մասամբ պայմանավորված է Հայկական ցեղի վեհերոտությունը, բայց նաև ամենատարբեր միջոցների ճարպիկ գործադրումով, որով ծրագիրն իրագործվեց^Ա:

Անկասկած ամեն ինչ նախապատրաստված էր ամիսներ առաջ: Նախ կալանավորեցին մի քանի հոգու, որոնց մեղադրեցին հեղափոխական դավադրություն հրահրելու համար, հետո որոշ քանակությամբ ումբ գտան, ձերբակալությունները շարունակեցին: Բանտարկյալներին այնպիսի ահավոր կտտանքների էին ենթարկել, մինչև կեղծ խոստովանություններ էին կորզել, նույնիսկ ստիպել էին զրպարտել բոլորովին անմեղ մարդկանց:

Հրաման էր ստացվել ամեն տեսակի ամբողջ զենքը կառավարությունը հանձնել: Մարդկանց տանջել էին այնքան,

մինչև ընդունել էին, որ թաքցրած հրացան, ատրճանակ, այլ տեսակի հրազեն ունեն, երբ իրականում ոչինչ չէին ունեցել: Հայերը, գլուխներն ազատելու համար, անգամ առասպելական գներով թուրքերից զենք էին գնում, տալիս ոստիկանությունը: Այդ ժամանակ հուսադրող խոստումներ էլ էին հնչում, որ եթե բոլորը զենքերը հանձնեն, հետապնդումները կվերանան: Մինչդեռ զինվոր-ոստիկանները շրջապատեցին գյուղերն ու քաղաքները, գրեթե բոլոր տղամարդկանց ձերբակալեցին: Հետո նրանց պարբերաբար ծեծում ու տանջում էին, չնայած, հիմնականում, ոչ մի մեղադրանք չէին կարողանում ներկայացնել: Այդպես ոստիկանությունը կարողացավ մեծ թվով հրացան ու մի քանի ումբ հավաքել: Ըստ երեւույթին ոչ ոք, երբեք էլ չի իմանա, թե այդ ումբերից քանի՞սն էին իրենք՝ ոստիկանները թաքուն դրել, քանի-քանիսն էին բոլորովին անմեղ մարդիկ Հայթայթի, որ հանձնեն կառավարությունը: Հաստատ է միայն, որ մեծ թվով հայեր, որոնց ձերբակալեցին զենք ունենալու համար, ոչ մի հեղափոխական դավադրության էլ չէին մասնակցել, չնայած շատ-շատերին առանց զենք ունենալու պատրվակի էլ էին խոչտանգումների ենթարկում: Միաժամանակ ձերբակալեցին բոլոր հեղինակավոր հայերին: Իշխանությունները համառորեն պնդում էին, որ նրանք, ովքեր բանտարկված են, եղել են հակակառավարական խռովություն նախապատրաստող խմբերում, նրանցից ոչ մեկը անհիմն կալանավորված չէ: Իհարկե ամեն ինչ գաղտնի էր կատարվում, կողմնակի անձը չէր կարող ճշտել նման հայտարարությունների հավաստիությունը, առավել եւս կեղծիքը բացահայտել, իր վկայությունները ներկայացնել, չնայած հետագա իրադարձություններից դատելով, հավատալու համար պետք էր շատ վառ երեւակայություն ունենալ: Այսպիսով հարյուրավոր հարզարժան անձանց բանտ նետեցին, հետո քաղաքից հանեցին եւ ոչ մի

կասկած չի կարող լինել, որ մի քանի ժամ հեռավորություն վրա բոլորին սպանեցին; Հավաքեցին ու ճանապարհ կառուցելու պատրվակով տարան նաև հազարավոր հայ զինվորներ: Որքան ես տեղյակ եմ, մինչև հիմա նրանց մասին ոչինչ հայտնի չէ, որոշակի է միայն, որ շատերին արդեն կոտորել են: Անտարակույս, մնացածն էլ են նույն ճակատագրին արժանացել:

Ի վերջո, երբ բոլոր տղամարդկանց գործնականում վերացրել էին, զենքերը ոստիկանությունը կամ ստացել կամ հայտնաբերել էր, հայտարարեցին, որ մնացած հայերը պիտի տարագրվեն: Բնական է, բռնագաղթի հրամանին քիչ թե շատ լուրջ դիմադրություն ցույց տալու մասին այլևս խոսք չէր կարող լինել: Այդ ամենը այնքան խորամանկ էր ծրագրված, որ ոստիկաններն ու զինվոր-ոստիկաններն իրագործման անցան առանց իրենց թեկուզ չնչին վտանգի ենթարկելու: Այսպիսով մի քանի հազար ծառայողներ կարողացան մեր տարածաշրջանից 15000-ից 20000 հայի արտաքսել: Անհնար է ասել, թե քանի հայ է սպանվել, բայց ենթադրվում է, որ ընդհանուր թիվը հասնում է մեկ միլիոնի:

Տեղի հայ կաթոլիկական եկեղեցու եպիսկոպոս թե արքեպիսկոպոս գերապայծառ Խորայեյյանի վախճանը վկայում է, թե ինչ ճակատագիր է սպասում բռնագաղթող հայերին: Նրա մեկնումը, ճանապարհների վտանգավորության պատճառով, մեկ-երկու շաբաթ հետաձգվեց: Ի վերջո, տասը օր առաջ վալին, որը թվում էր խիստ բարյացակամ է վերաբերվում նրան, կյանքի ապահովության արտոնագիր տվեց: Գերապայծառը ճամփա ընկավ նման արտոնագիր ունեցող քառասուն այլ անձանց հետ: Տարագրվածներից ոչ ոք, երբեք կասկածի ենթակա չէր եղել, բոլորը հավատում էին, որ իշխանությունները հակված են նրանց անվտանգ տեղ հասցնել: Ուղեւորների ապահովության համար նույնիսկ զինվոր-ոստիկանների հատուկ խումբ հաստ-

կացրին, արտաքուստ անփորձանք ճանապարհորդելու ամեն միջոց ձեռնարկեցին: Մինչև իսկ կառքեր տրամադրեցին: Քառասուն հոգին, ուրեմն, հուլիսի 14-ի երեկոյան դուրս եկավ քաղաքից: Հաջորդ օրը նրանք Քյաղիմ խան էին հասել, որն այստեղից ութ-ինը ժամվա ճամփա է: Այնտեղ նրանց դիմավորել էին բաղմաթիվ զինվոր-ոստիկաններ, ասել, որ չեն կարող նույն ճանապարհը շարունակել, ճիշտ կլինի, եթե ուրիշ կողմով գնան:

Կառքերը շրջվել էին, մոտ կես ժամ սլացել մատնանշված ուղղությամբ, որտեղ եւ նրանց շրջապատել էին: Զինվոր-ոստիկանները բոլորի թեւերը կապել, ճանապարհից հանել էին դուրս: Ուղեւորներից շատերի ձեռքին աղոթագիրք է լինում, նրանք ծնկի են գալիս, որ աղոթեն: Սակայն զինվոր-ոստիկանները հայհույելով ոտքով հարվածում, ձեռքներից պահում են աղոթագրքերը, բացի երեք հոգուց, մնացածին տեղնուտեղը սպանում: Նահատակների թվում է Ֆրանսիայի քաղաքացի, մաղմաղել Մարգարիտ Գաման, ում մասին ես հիշատակել էի դեսպանատուն հղած իմ դեկտեմբերի 10-ի հեռագրում, դեկտեմբերի 31-ի ճեպագրում: Երեք փրկվածները դեռատի, գեղեցիկ կանայք են լինում, նրանց ողջ են թողնում, որ մահմեդականների հետ ամուսնացնեն: Մեկը, սակայն, կարողացել էր փախչել, նա է ինձ հաղորդել շարագրված տեղեկությունները: Նման մի ուրիշ փրկվածից էլ իմացել եմ այն 800 հոգու կոտորածի մանրամասները, որոնց հիշատակել էի իմ հուլիսի 11-ի գեկուցագրի 5-րդ էջում: Այժմ արդեն ասում են, որ այդ զոհերի ճշգրիտ թիվը 979-ի հասնում:

Այս երկու իրողություններն էլ այնպիսի մանրամասնությամբ են բացահայտված, որ կասկածի տեղ չեն թողնում: 977-ը հոգու մասին բաղմաթիվ վերապրողներ են պատմել, երկու դեպքի կապակցությամբ էլ կա իրենց՝ զինվոր-ոստիկանների վկայությունը:

Այն օրը ինձ Հաղորդեցին մի ուրիշ փաստ՝ այստեղից տարազրվածների որոշ մասին ողջակիզել են Պարբերդի ու Դիարբերդի միջև գտնվող քարայրում: Մանրամասներն ինձ պատմեց մի զինվոր-ոստիկան, որը եղել էր այնտեղ եւ ցույց էր տալիս, որ խիստ վրդովված է Հայերի դեմ գործադրվող բարբարոսությունների համար:

Հայերին քաղաքից հեռացնելուց մի քանի ժամ անց գնդակահարելն ու կոտորելն իրոք բարբարոսություն է եւ շատ որոշակի վկայում է, որ կառավարությունն նպատակը ոչ թե աքսորելը, այլ բնաջնջելն է: Չնայած անձամբ ես ընդհանուր առմամբ հակված եմ կարծելու, որ որքան նրանք շուտ մահանան, այնքան իրենց համար լավ կլինի: Դանդաղ, բայց անխուսափելի վախճանը, որը վրա է հասնում շաբաթների ու ամիսների տառապանքից հետո, ամենավատթարն է:

Երբ էրզրումից ու Երզնկայից հասած քարավանները մեր մոտից ճամփա ընկան, մի քանի հարյուր հոգու, որոնք կամ շատ հիվանդ կամ շատ թույլ էին, թողեցին, որպեսզի շարունակեն իրենց տառապանքները, այստեղ մեռնեն: Ժամբարը, ուր գտնվում են նրանք, դժոխքի է նման: Ավելի անտանելի թշվառությունն անհնար է պատկերացնել: Իհարկե առաջ էլ, երբ այնտեղ ողբալի վիճակում մի քանի հազար դժբախտ կար, տեսարանն ահավոր էր, բայց այժմ, քանի որ միայն անհուսալիներն են մնացել, ուղղակի աննկարագրելի է: Ամենուր մահացածներ ու մահացողներ են: Մի տեղ երկու-երեք երեխա լալիս են իրենց մեռած մոր դիակի վրա, քաջքշում հագուստը, չնայած նրա մազերը զգզգված են, Հայացքը սառած է: Ուրիշ փոքրիկներ մերկ կամ գրեթե մերկ են, ցնցոտիներով հողի վրա կծկված, արդեն մեռել են կամ հոգի են տալիս: Կան կանայք ու մանուկներ, որոնք այնքան հյուծված դեմքեր ունեն, որ կմախքի գանգի են նմանվում: Մի տղա, ում մարմինը շապիկի միայն մի ծվեն

է ծածկում, իրոք, կմախքից չի տարբերվում: Շատ երեխաներ էլ, ուռած փորերով, պառկած են արեւի տակ: Տղամարդքից է մնացել, հիմնականում կանայք, անչափահասներ են, բոլորն էլ թշվառություն վերջին՝ ծայրաստիճանին հասած սպասում են, որ մահը գա, ազատի իրենց: Ես ենթադրում եմ, որ գաղթականներին փոքր-ինչ սնունդ բերում են, բայց մեծ մասն այլեւս ի վիճակի չէ ուտել: Օրեցօր դիակների թիվն ավելանում է եւ այսպես կշարունակվի այնքան, մինչև ոչ ոք կենդանի չի մնա: Դիակների կարելի է հանդիպել ամեն թույլ՝ այնքան երկար են արեւի տակ թողնում, որ օդը նրանց ու ամենուր տարածված մարդկային աղտեղություններից հոտից ապականվում է: Ի վերջո զինվոր-ոստիկանները մեռելները խառնիխուռն նետում են ճամբարի ճիշտ կենտրոնում փորված փոսը:

Դիակներ կան նաեւ ճանապարհներին, բոլոր կողմերում, ոչ միայն քաղաքից շատ հեռու, այլև շրջակայքում: Հարեւան գյուղերից եկողները պատմում էին, որ հազիվ մի ժամ հեռու, կածանի երկայնքով տասը թե տասներկու դիակ է ընկած: Մի տղամարդ, որը կարողացել էր Սվազից ողջ Պարբերդ հասնել, հավատացնում էր, որ ճանապարհին ավելի քան 500 դիակ է տեսել: Ամբողջ երկիրն այժմ մի ընդարձակ դիարան, ավելի ճիշտ սպանդանոց է դարձել:

Իհարկե նրանց ճակատագիրը, ում արդեն սպանել են, ովքեր արդեն մեռել են, ցավալի է, բայց բռնի տեղահանվածներինը, ցիրուցան եղածներինը ծանր է անհամեմատ: Որոշ կանանց հետ են բերել: Նրանց թվում է տասներեք տարեկան մի սիրունիկ աղջիկ, ում հայրը չափազանց հարգված անձնավորություն էր, քաղաքի ամենազեղեցիկ տներից մեկի սեփականատերը: Նրան սպանել էին հենց իր տան շեմին: Դստերը բաժանել էին մորից, կրտսեր եղբայրներից, այնպես որ չգիտեր, թե ո՞ւր են եւ ի՞նչ վիճակում: Այժմ, այդ տարիքում նա ստիպված է ամուսնանալ մեր քա-

ղաքի ամենարժի և նվազագույններից մեկի հետ, միասին ապրել հորենական տանը:

Ես արդեն այն ամենն, ինչ տեղի է ունենում այստեղ, գրավոր, ամենախիստ ձեռակերպումներով նկարագրել եմ, որովհետև անհնար է լուր, այլ կերպ արտահայտվել: Եվ դա ամենեւին էլ ոչ այն պատճառով, որ ուզում եմ հանդես գալ որպես հայ ցեղի պաշտպան: Դա այն ազգը չէ, որով կարելի լիներ հիանալ, որի հետ հնարավոր լիներ ապրել: Բայց ինչպիսի սխալներ էլ որ թույլ տված լինեն հայերը, որքան էլ համոզվիչ հնչեն որոշ մասի հեղափոխական դավադրություն մասնակցելու փաստարկները, պատիժը նրանց նկատմամբ այնքան դաժան է, ողբերգությունն ահավոր, որ անհնար է այդ ամենը տեսնել, այդ ամենի միջավայրում լինել ու մինչև հոգու խորքը չազդվել: Երբ հաղիպում ես յոթանասուն-ութուն տարեկան կույր, հիվանդ ծերունիների ու պառավների, անպաշտպան, անմեղ կանանց ու երեխաների, որոնց քշում են կոտորելու, որեւէ այլ կերպ մեղցնելու, եւ ավելի ուշ, իրոք, շուրջ ամենուր դիակներ ես տեսնում, նրանք արդեն մեռած են լինում կամ մեռնում են, անհնար է դառնում նման խիստ պատժամիջոցներն արդարացնող թեկուզ չնչին պատրվակ գտնելը:

Ամեն դեպքում տեղական իշխանությունները կարծես թե այժմ փորձում են իրենց արածը չքմեղացնող միջոց փնտրել:

Հուլիսի 16-ին ինձ մոտ եկավ ոստիկանապետն ու խնդրեց դեպքն անտեսել գրել հարեւան գյուղում մի քանի հայերի՝ հրազենով երկու թե երեք զինվոր-ոստիկան սպանելու մասին: Ես նման ինչ որ բան, իհարկե, լսել էի, բայց մանրամասներին տեղյակ չէի, անձամբ ոչ մի պատկերացում չունեի: Ոստիկանապետին պատասխանեցի, որ եթե ուզում է, սիրով մեր դեպքն անտեսելու ուղարկությունը կհրավիրեմ այդ դեպքի վրա, բայց դրա համար անհրաժեշտ է, որ ինքը գրի,

իսկ ես դեպքն անտեսելու ուղարկեմ: Նա համաձայնեց: Հունիսի 23-ին, նահանգապետին իմ պաշտոնական այցելությունը տալուց հետո, երեք հոգով որոշեցինք միանալ ու միջոցներ մտնտալ, թե հանուն մարդասիրություն ինչ կարելի է ձեռնարկել այդ արհավիրքին վերջ տալու համար: Սոսքս միստր էհմանի (ավստրիացի միսիոների) ու միստր Պիլիոտոյի (օսմանյան դրամատան տեղական մասնաճյուղի փոխտնօրենի) մասին է: Մենք որոշեցինք վալիին ոչ պաշտոնական այցելություն տալ եւ առանց ձեռականությունների հարցնել, թե հնարավոր չէ՞ արդյոք խնայել տեղում մնացած հայերին:

Նա մեզ շատ ջերմ ընդունեց: Մենք բացատրեցինք մեր այցելության նպատակը, ցանկացանք իմանալ, թե կարո՞ղ է արդյոք կոստանդնուպոլիս հեռագիր ուղարկել ու մինչև այժմ չտարագրված հայերին տեղում թողնելու հրաման ձեռք բերել: Միաժամանակ ավելացրինք, որ մենք էլ կուզեինք համատեղ հեռագիր հղել ամերիկյան, գերմանական ու ավստրիական դեպքնություններին, խնդրել, որ նրանք էլ ամեն միջոցի դիմեն, նման հրաման ձեռք բերելուն աջակցեն: Վալին անընդհատ ցավ էր հայտնում այն պարտադրված քայլերի համար, որոնց վերջերս ինքը ստիպված է եղել դիմել, ձեռացրեց թե տարագրվողների տառապանքներն իրեն շատ են ճնշում: Թվաց նա անմիջապես հավանություն տվեց մեր ծրագրի իրագործմանը, ավելացրեց, որ եթե նման հրաման ստանա, իրեն շատ երջանիկ կզգա: Հետո պայման դրեց՝ հասկացրեց, որ լավ կլինի, եթե մեզնից յուրաքանչյուրը նամակ գրի նահանգապետարան, խնդրի չաքսորվածներին խնայել, որն իրեն՝ կենտրոնական իշխանություններին դիմելու հիմք կհանդիսանա: Վալին առաձնահատուկ շեշտեց՝ ինքը կուզեր, որ նամակները հնարավորին չափ հանգամանալի լինեին, որպեսզի պարզ դառնար, որ բոլոր ինչ-ինչ մեղք ունեցող հայերն արդեն տարհանված

են, տեղերում մնացածները անմեղ են: Ակնհայտ դարձավ, որ նորին մեծութունը ամեն կերպ ձգտում է մեզ գրել տալ, որ բոլոր աքսորված Հայերը մեղքեր են ունեցել: Նա Հավաստիացրեց նույնիսկ, որ իր խնդրանքով ոստիկանատարը երեկոյան ինձ կայցելի, Հանգամանորեն մանրամասները կբացատրի:

Մենք Հավաքվեցինք Հյուպատոսարանում եւ, ինչպես պայմանավորվել էինք, ոստիկանատարը եկավ: Նա ամենեւին չէր ձգտում միտք էհանի կամ միտք Պիչիտոյի նամակներն ունենալ, բայց Համառորեն պնդում էր, որ ես նահանգապետարան նամակ գրեմ, ուշադրություն Հրավիրեմ Հայերի՝ մի քանի ոստիկան սպանելու եւ այն Հանգամանքի վրա, որ Հեղափոխական խռովություն նախապատրաստելու Համար մեղադրվող Հայերը, նրանց ընտանիքները, ինչպես նաեւ բոլորը, ովքեր դավադրությանը այս կամ այն կերպ առնչություն ունեցել են, արդեն պատժվել են, իսկ խարբերում մնացածներն անմեղ կանայք, երեխաներ են: Հեռագրում պիտի Հատուկ նշեի, որ Հանցանք ունեցող Հայերն ստացել են իրենց պատիժը, մնացել են միայն անմեղները, ուստի ցանկալի է, որ նրանց խղճան: Ես ոստիկանատարին պատասխանեցի, որ բացարձակապես անկարող եմ մեղավորների ու անմեղների վերաբերյալ Հայտարարություն անել, որ չի բացառվում նաեւ, որ անմեղները պատժված, մեղավորները անպատիժ մնացած լինեն, ու քանի որ Հնարավորություն չունեն ման ճշտումներ կատարել, նահանգապետարան գրելիք նամակիս մեջ ի վիճակի չեմ անդրադառնալ ոչ զինվոր-ոստիկանների դեմ գործադրված բռնություններ, ոչ էլ այս կամ այն անձնավորության անմեղությունը: Հատուկ շեշտեցի նաեւ, որ ի պաշտոնս իրավասու չեմ նման Հարցով նահանգապետարան դիմել, կամ էլ Հեռագիր ուղարկել, որ այդ ուղղությամբ ձեռնարկած իմ բոլոր քայլերը անպաշտոն բնույթ ունեն, դրդված են միմիայն մարդա-

սիրությունից եւ ի վերջո ամենաշատը, որ կարող եմ անել, սովորական միջամտությունը պիտի լինի:

Նա իսկույն ելեթ ընդդիմացավ, ջանաց Հասնել այն բանին, որ թեկուզ կարճ, որեւէ Հայտարարություն անեմ:

Ես երբեք նման Համառ մարդու չէի Հանդիպել: Նա մնաց մինչեւ գիշերվա մեկ անց կեսն ու ամեն կերպ փորձեց Հասնել այն բանին, որ նահանգապետարան Հայտարարություն ուղարկեմ: Ակնարկեց, որ Հրաման է ստացվել Հենց Հաջորդ օրն Հայերի Հանդեպ ավելի դաժան միջոցների դիմել, բայց նա կարող է գործադրումը որոշ ժամանակով Հետաձգել, եթե ես Համապատասխան Հայտարարությամբ Հանդես գամ: Պատասխանեցի, որ, իհարկե, ուրախ կլինեի ասել այն, ինչ գիտեմ, բայց նահանգապետարան Հասցեագրված նամակում անհնարին է այնպիսի խնդիրների անդրադառնալ, որոնք իմ պաշտոնի Հետ առնչություն չունեն կամ այնպիսի փաստեր Հիշատակել, որոնց մասին ինձ ոչինչ Հայտնի չէ: Ու քանի որ ոստիկանատարը միտք չունեւ իր գաղափարից Հրաժարվել, որոշեցինք գիշերը մտմտալ, առավոտյան վերսկսել զրույցը:

Հաջորդ առավոտ ես տեղեկացրի ոստիկանատարին, որ քանի որ մեր դիմումը պիտի ներկայացվեր սահմանադրության տարեդարձի կապակցությամբ, իսկ այդ օրն արդեն անցել է, ճիշտ կլինի գաղափարից Հրաժարվելը: Բոլոր դեպքերում նա իմ պատասխանը վերջնական չհամարեց, Հետկեսօրին արդեն ինքս մտքը գնացի: Բացատրեցի, որ ոչ մի դեպքում նահանգապետարան չեմ կարող գրել իր ցանկացած նամակը, բայց, քանի որ խոստացել եմ, սիրով դեսպանատան ուշադրությունը կհրավիրեմ այն Հարցերի վրա, որոնք ինքը գրավոր կներկայացնի: Նա պատասխանեց, որ ավելի կնախընտրեւ բանավոր, քան թե գրավոր արտահայտվել (չատ կգարմանայի, եթե երբեւէ մտքերը գրավոր ձեւակերպելու որոշում կայացնեւ), այնպես որ ամենայն

Հավանականությունը շուտով կայցելի ինձ, կներկայացնի այն փաստերը, որ նշածս խնդրի կապակցությունը կանցնեն մտքով: Ես անպատեհ չեմ համարում դեսպանատուն նման նամակ գրելը, այդ զեկուցագրում կշարադրեմ այն ամենը, ինչ ինձնից խնդրել են հաղորդել, եւ ոչ մի այնպիսի բանի պատասխանատվություն, ինչի անձնական համոզվածությունը չունեմ, չեմ ստանձնի: Ոստիկանապետն ըստ երեւույթին կպնդի, որ ես իր փաստարկներն այնպես ներկայացնեմ, որ իր անձամբ տեղյակ եմ: Դրան ես ոչ մի պայմանով, պարզ է, չեմ կարող համաձայնվել, չնայած վախենում եմ, որ նպատակին հասնելու համար չափից ավելի համառի:

Ելնելով իրավիճակից, հակված եմ կասկածելու, թե որքանով էր խելամիտ իմ այցելությունը վալիին: Նման քայլն իմ իրավասությունների մեջ չէր մտնում, այնպես որ կարող է հյուպատոսի՝ տեղական իշխանությունների ներքին գործերին անհարկի միջամտելու միտում համարվել, չնայած դրությունն այն աստիճանի ողբերգական էր, Հենց սկզբից տեղի ամերիկացիներն ու հայերն իմ վրա այնպիսի ճնշում էին գործադրում տարագրվողներին ինչ որ ձեւով օգնելու համար, որ անհնար էր անտարբեր մնալ, ընդառաջելու փորձ չանել: Սակայն քանի որ դեսպանատունը չպատասխանեց իմ թիվ 15 եւ թիվ 16՝ համապատասխանաբար հունիսի 27-ի եւ 28-ի հեռագրերին, որոնցով խնդրել էի հնարավորն անել ընդազաղթի հրամանի իրագործումը հետաձգելու համար, անդրադարձել էի տարագրվողներին աջակցելու հիմնադրամ ստեղծելու անհրաժեշտությունը, ենթադրում եմ, որ իմ առաջարկները հավանություն չեն արժանացել:

Տեղյակ էլ չեմ, թե արդյո՞ք հեռագրերի ընթերցանակները տեղ հասել են, բայց վավերացված պատճենները, որ ուղարկել եմ հունիսի 29-ին, պետք է, որ հասած լինեն:

Ես, անշուշտ, համոզված եմ, որ որեւէ միջամտություն

այստեղ կամ որեւէ այլ բնակավայրում, ներկա պայմաններում եւ անհույս է եւ թե անիմաստ, բայց նման տառապանքը թեթեւացնելու համար ինչ որ բան անելու անկարողությունը ծանր փորձություն է:

Այս կապակցությունը շատ ուրախ կլինեի, եթե ստանալի այն հրահանգները կամ հանձնարարականները, որ դեսպանատունը կուզեր ինձ տալ, որոնցով կհստականար, թե ինչ քաղաքականություն պիտի որդեգրեմ: Ես հավանություն կտամ նաեւ այն բանին, եթե դեսպանատունը որոշի բացեփրաց քննադատել անցյալում իմ թույլ տված հավանական սխալները: Հաճախ չափազանց դժվար է որոշելը, թե ինչ պետք է անել այս կամ այն պարագայում, խորհուրդներ ստանալու կարիք ես չատ եմ զգում:

Ինչ վերաբերում է ամերիկյան քաղաքացիներին եւ հյուպատոսարանի աշխատակազմին առնչվող դեսպանատան թիվ 21՝ հուլիսի 12-ի հեռագրին, կարծում եմ կասկած չի կարող լինել, որ տեղական իշխանությունները համապատասխան հրահանգներ արդեն ստացել են: Հնարավոր է, որ դրանք տեղ են հասել հուլիսի 10-ի իմ ու վալիի հանդիպումից հետո: Թվում է, թե հենց հաջորդ օրը կտրուկ փոփոխություն նկատվեց մեր քաղաքացիների նկատմամբ, նրանք, բոլորը, մնալու արտոնություն ստացան: Սակայն, քանի որ շատ քչերը կանոնավոր փաստաթղթեր ունեն, մի մասն էլ, ճիշտ է, ունի, բայց որպես հպատակ չի կարող պաշտպանություն պահանջել, քանի որ Թուրքիա վերադառնալուց հետո ընդունել է, որ օսմանյան հպատակ է, թաքցրել է ամերիկյան քաղաքացի լինելը, հավանաբար համապատասխան քննությունը միայն կպարզի, որ ճշող մասը, եթե ոչ բոլորը, փաստական իրավունքից զուրկ է: Եվ քանի որ, ես դա արդեն իմացել եմ, Թուրքական կառավարությունը չի ընդունում իր քաղաքացիների հպատակությունից հրաժարվելը, հատկապես ներկա պայմաններում,

ամենայն հավանականութեամբ չափազանց դժվար կլինի համառ հետեւողականութեամբ նման բնույթի պահանջներ ներկայացնելը: Ամեն դեպքում ինձ հաջողվեց մի քանի հոգու փրկել, ուրախ եմ այդ քիչը գոնե անել կարողանալու համար: Անշուշտ, դա ամեննեւին հեշտ չէր, որովհետեւ անգամ նրանցից շատերին, ում իշխանութիւնները մնալու արտոնագրեր էին տվել, զինվոր-ոստիկանները արտաքսել էին, տները կնքել: Նրանք նույնիսկ նման փաստաթղթերը հաշվի չէին առել: Այդ ընտանիքներից շատերը Հյուսիսատոսարան եկան, ժամանակավորապես ես նրանց ապաստան տվեցի: Հենց Հնարավոր լինի, պիտի փորձեմ մոտակայքում բնակարան գտնել, որտեղ, մինչեւ անվտանգ երկրից մեկնելը, կկարողանան ապրել:

Առայժմ ճանապարհորդելն անհնար է, որովհետեւ, չնայած կառավարութեան հավաստիացումներին, մահվան վտանգը գրեթե անխուսափելի է: Կաթոլիկ արքեպիսկոպոսի սպանութիւնը վկայում է, որ կյանքի ապահովութեան արտոնագրերը ոչ մի արժեք չունեն: Կառավարութիւնը, եթե նույնիսկ ցանկանա, հազիվ թե կարողանա ուղեւորների անվտանգութիւնն ապահովել, քանի որ ճանապարհներին վլատում են քրդերի ու չեթենների հրոսախմբերը, որոնք իրենց իրավունք են վերապահում հարձակվել ցանկացած ուղեւորի վրա եւ ամեննեւին հաշվի չեն առնում, թե ո՞ւմ են կոտորում, ո՞ւմ թալանում: Ինձ հայտնի դարձավ, որ ճանապարհորդելիս թուրքեր էլ են շատ սպանվել: Ակնհայտ է դառնում նման մարդկանց՝ ամեն հսկողութիւնից դուրս մնալու, երկիրը ամայացնելու վտանգը: Այժմ նույնիսկ քաղաքում ոչ ոք ապահով չէ եւ ամեն անգամ բնակավայրերից դուրս գալը մեծ հանդգնութեան հետ է կապված:

Ինչ վերաբերում է դեսպանատան թիվ 21՝ Հուլիսի 12-ի հեռագրի այն հարցին, թե ինչո՞ւ եմ ֆրանսերեն հեռագրում, հարկ եմ համարում տեղեկացնել, որ մոտ մեկ ամիս

առաջ փոստատան պետն ինձ հայտնեց, որ նորից հեռագրերը անգլերեն չընդունելու հրահանգ է ստացել: Ավելի ուշ ես նրա ուշադրութիւնը հրավիրեցի այն հանգամանքի վրա, որ դեսպանատունն ինձ անգլերեն է հեռագրել, նույնիսկ ծանոթացրի հիշատակած հեռագրի այդ կապակցութեամբ ինձ տրված հարցին: Պետն ինձ ասաց, որ ինքն իհարկեւ անգլերեն հեռագրեր կընդուներ, բայց քանի որ փոստատանն այդ լեզվին տիրապետող չկա, գրաքննութիւնն ապահովելու համար ստիպված պիտի լինի դրսում ինչ որ մեկին գտնել, որը եւ կուշացնի առաքումը: Համենայն դեպս ես կփորձեմ հեռագրերը անգլերեն ուղարկել եւ ամենայն հավանականութեամբ կկարողանամ այնքան հստակ բացատրել բովանդակութիւնը, որ առաքումը չուշանա:

Բոլոր դեպքերում, քանի որ դեսպանատան հետ փոստային հաղորդակցութիւնից զրկվելու վտանգը թշոււմ է, թե արդեն անցել է, ես չեմ շարունակի հեռագրեր ուղարկել, ինչպես առաջարկել էի իմ Հունիսի 12-ի ճեպագրում (թղթապանակ թիվ 300), բացի այն դեպքերից, երբ նման անհրաժեշտութիւն կառաջանա: Իսկ դա, չեմ կասկածում, բավական հաճախ կլինի:

Պատիվ ունեմ, սիր, մնալու Ձեր խոնարհ ծառան՝

ԼԵՍԼԻ Ա. ԴԵԻՍԻՍ
(ստորագրութիւն)
Հյուսիսատոս

ԱՂԲՅՈՒՐ - ԼԵՍԼԻ Ա. ԴԵԻՍԻՍ Նարբերդից Հենրի Մորգենթաուին, ամերիկյան դեսպանին, Կոստանդնուպոլիս, 24-ը Հուլիսի, 1915 թ., Կոստանդնուպոլիսում գործերի կառավարիչ Հոֆման Ֆիլիպը 1916 թվականի փետրվարի 17-ի թղթատարով ուղարկել է պետքարտուղարին, Ա.Ա., Պ.Դ., 59 Ն.Փ., տասնորդական թղթապանակ թիվ 867.4016/269:

Պատճենը պետք է պարտամենտին
Ամերիկյան Հյուպատոսարան
Մամուրեթ-ու-Ազիզ (Նարբերդ)
Թուրքիա, 6-ը սեպտեմբերի 1915 թ.

Մեծարգո Հենրի Մորգենթաուին
Ամերիկյան դեսպանին
Կոստանդնուպոլիս

Սիր,

Կատարելով ունեմ ներկա ուղարկել դեսպանատան՝ փոստային Հաղորդակցությունների կնիքը կրող անդորրագիրը այն ճեպագրի, որը Հյուպատոսարանը Հուլիսի 4-ին Մամուրեթ-ու-Ազիզի փոստից պատվիրված, թիվ 912 գրանցման Համարով առաքել է դեսպանատուն: Այդ օրը՝ Հուլիսի 4-ին ես ծրարով դեսպանատուն եմ ուղարկել իմ Հուլիսի 30-ի ամսաթվով ճեպագիրը, որի փոստային անդորրագիրը կրում է 912 Համարը:

Այդ ճեպագիրն ինչ որ առեղծված ունի: Այն դրված էր գլխավոր Հյուպատոսարան Հասցեագրված ավելի փոքր ծրարում, որն իր հերթին դրված էր դեսպանատուն Հղված ծրարում եւ պարունակում էր գլխավոր Հյուպատոսարան ուղղված կից գրութուն, որով խնդրվում էր ճեպագիրը փոխանցել դեսպանատուն: Թե դեսպանատունը, եւ թե գլխավոր Հյուպատոսարանն ինչ տեղեկացրին, որ այդպիսի նամակ չեն ստացել, մինչդեռ պարզ է, որ ճեպագիրը պարունակող ծրարն ստացել է այնպիսի մեկը, որը դեսպանատան կնիքից օգտվելու իրավասություն է ունեցել:

Ճեպագիրն այս տարածաշրջանի Հայերի արտաքսման վերաբերյալ տասնհինգ էջանոց զեկուցագիր էր պարունակում եւ քանի որ անընդհատ լուրեր են պտտվել, որ դեսպանատուն Հղած իմ նամակները առգրավվում են, ես երբեք վստահ չեմ եղել, որ Հաղորդագրություններս տեղ են Հաս-

նում: Այս դեպքում, սակայն, փաստերի Հաջորդականությունն, իրոք, խիստ տարօրինակ է: Նախ եւ առաջ դեսպանատան թիվ 24՝ Հուլիսի 27-ի Հեռագիրը իմ վերջին ճեպագրի ամսաթվի վերաբերյալ, բնական է, ինչ ենթադրել տվեց, որ ինչ որ բան կորել է: Բոլոր դեպքերում այնքան էլ լավ չհասկացա Հեռագրի պահանջը, քանի որ Հուլիսի 24-ի ամսաթվով իմ վերջին ճեպագիրը չափազանց նոր էր, որպեսզի պարզաբանման կարիք զգացվեր, բացի դրանից ոչ մի կերպ ի վիճակի չէի գլխի ընկնել, թե ուրիշ ինչ ամսաթվով կարող էր դեսպանատունը նկատի ունենալ: Ուստի, որպես պատասխան դեսպանատան Հարցմանը, նշեցի բոլոր այն վերջին առաքումների ամսաթվերը, որոնց տեղ Հասնելու Հաստատումները մինչ այդ չէի ստացել: Դեսպանատունը պատասխանեց, որ Հունիսի 29-ից Հետո ոչ մի նամակ տեղ չի Հասել:

Եվ ես Հիշեցի, որ Հուլիսի 5-ին Մամուրեթ-ու-Ազիզի փոստատան ծառայողը Հյուպատոսարան բերեց իմ՝ Հունիսի 30-ի ճեպագիրը պարունակող ծրարը, որը, ինչպես քիչ առաջ նշեցի, Հուլիսի 4-ին, պատվիրված Հանձնել էի փոստին, ստացել թիվ 912 անդորրագիրը: Ծառայողն ինչ ասաց, որ իմ նամակը վալին դեռեւս քննության չի ենթարկել՝ որպեսզի ինքը կարողանա ուղարկել, անպայման նախ նրան պիտի ներկայացվի: Ես նկատել տվի, որ չնայած ինքն ստուգել է իմ առաքած բոլոր կնքված ծրարները, ինչ թույլատրված է առանց նախօրոք վալիին ցույց տալու, կնքված նամակներ ուղարկել դեսպանատուն: Հետո ես անձամբ փոստ գնացի, Հանդիպեցի պետին: Հարցրի, թե ինչո՞ւ էր անհրաժեշտ այդ նամակը վալիին ներկայացնել, երբ արտոնություն ունեի ծալքը կնքելով ուղղակի դեսպանատուն նամակ առաքել, որը եւ տարուց ավելի մի քանի օրը մեկ անում էի: Պետը պատասխանեց, որ ծառայողը սխալվել է, նամակը սահմանված կարգին Համապատասխանում է:

Դեպքանատան՝ Հուլիսի 27-ի Հեռագիրն ստանալուց մի քանի օր անց մի պաշտոնյա ինձ ասաց, որ ինքն իր աչքերով տեսել է դեպքանատուն Հղած իմ նամակներից մեկը, որը բացված է եղել: Օգոստոսի 9-ին ես ուղարկեցի թիվ 26 Հեռագիրը, որով կրկին Հարցնում էի, թե արդյո՞ք իմ Հունիսի 30-ի ճեպագիրը տեղ Հասել է: Երբ դեպքանատնից ստացա թիվ 28՝ օգոստոսի 17-ի Հեռագիրը, որը տեղեկացնում էր, որ իմ առաքումը տեղ չի Հասել, ուղարկեցի թիվ 28՝ օգոստոսի 14-ի Հեռագիրը, որով Հայտնում էի, որ ըստ ինձ Հասած տեղեկությունների, տեղական իշխանությունները բացել ու կարդացել են դեպքանատուն Հղած իմ վերջին ճեպագրերը: Ես Հեռագրեցի նաև գլխավոր Հյուպատոսարան՝ ճշտելու Համար, թե արդյո՞ք Հունիսի 30-ի ճեպագիրը ստացվել է, բայց բացասական պատասխան ստացա: Ի պատասխան դեպքանատան թիվ 27-ը Հեռագրի, որը պահանջում էր Հայտնել վերջին ճեպագրերի Համարներն ու ամսաթվերը, Հղեցի թիվ 30՝ օգոստոսի 17-ի Հեռագիրը, որով Հայտնում էի առաքումների ամսաթվերն ու Մամուրեթ-ու-Աղիզի փոստի անդորրագրերի Համարները: Ցուցակում առաջինը թիվ 912՝ Հուլիսի 4-ի անդորրագիրն էր, որը վերաբերում էր իմ Հունիսի 30-ի ճեպագիրը պարունակող ծրարին: Հետո, երբ դեպքանատունը թիվ 32 Հեռագրով տեղեկացրեց, որ Հնարավորություն չունի ճշտելու իմ առաքումների ցանկը, ուղարկեցի թիվ 34 Հեռագիրը, որը ճշգրիտ պարզաբանում էր ամեն մի ճեպագրի ամսաթիվը, փոստին Հանձնելու օրն ու Համապատասխան անդորրագրի Համարը:

Նույն օրը՝ օգոստոսի 23-ին ես գրություն ուղարկեցի վալիին՝ խնդրելով գտնել իմ նամակի Հետքը: Հետո դեպքանատնից ծրարով ստացա ներփակ անդորրագիրն ու Հեռագրի Հաստատման պատճենը: Ես մինչև Հիմա նահանգապետից պատասխան չեմ ստացել, դեպքանատունը տվ-

յալ խնդրի մասին ինձ ոչինչ չի Հաղորդել: Ելնելով այս ամենից՝ փոստատան ծառայողի՝ առանց վալիի քննությունն անկն առաքելը Հրաժարվելուց, տեղական պաշտոնյաներից մեկի այն Հայտարարությունից, որ ինքը դեպքանատուն Հղած իմ մի նամակը բաց վիճակում տեսել է (նա մինչև Հիմա էլ պնդում է նույնը), դեպքանատան՝ իմ վերջին առաքումների ամսաթվերը ճշտող Հարցումից, ինչպես դեպքանատան, այնպես էլ գլխավոր Հյուպատոսարանի Հեռագրերից, բնական է դառնում ենթադրելը, որ այդ նամակը առգրավված է: Նույնիսկ այս ծրարում ներփակված դեպքանատան կնիքը կրող անդորրագիրն է Հուշում, որ նամակի Հետինչ որ բան պատահել է: Հնարավոր է, որ տեղ չի Հասել, խարեությունը ուրիշ մեկն է դեպքանատան կնիքով կնքել անդորրագիրը:

Գոհ կլինեմ, եթե դեպքանատունը Համապատասխան պարզաբանումներ անի եւ ինձ տեղեկացնի: Եթե ճեպագիրը կորել է, ես կարող եմ պատճենը պատրաստել, ուղարկել դեպքանատուն:

Պատիվ ունեմ, սիր, մնալու Ձեր խոնարհ ծառան՝

ԼԵՍԼԻ Ա. ԴԵԻՏՍ
(ստորագրություն)
Հյուպատոս

ԱՂԲՅՈՒՐ - Լեսլի Ա. Դեվար Նարբերդից Հենրի Մորգենթաուին, ամերիկյան դեպքանատուն, Կոստանդնուպոլիս, 6-ը սեպտեմբերի 1915 թ. Ա.Ա., Պ.Դ., 59 Ն.Փ., տասնորդական թղթապանակ թիվ 867.4016/210B:

Պատճենը պետական դեպարտամենտին
Ամերիկյան Հյուպատոսարան
Մամուրեթ-ուլ-Ազիզ (Նարբերդ), Թուրքիա
7-ը սեպտեմբերի, 1915 թ.

Հարգարժան Հենրի Մորգենթաուին
Ամերիկյան դեսպանին
Կոստանդնուպոլիս

Սիր,

պատիվ ունեմ շարունակելու Հայերի բռնազաղթին ու
Ջարդերին առնչվող իմ Հունիսի 30-ի, Հուլիսի 11-ի, Հուլիսի
24-ի եւ օգոստոսի 23-ի (Թղթապանակ թիվ 840) տեղեկագ-
րերը՝ Հետեւյալ Հաղորդագրութեամբ.

Օգոստոսի 23-ի իմ Համառոտ տեղեկագիրը կազմել էի
ոստիկանապետի դրոմամբ, Հենվել այն փաստերի վրա, որ
ինքն ինձ տրամադրել էր: Պատճառները, որոնք ինձ մղեցին
նման քայլի, ես Հանգամանորեն նկարագրել եմ իմ Հուլիսի
24-ի տեղեկագրի 9-ից 13-րդ էջերում: Ոստիկանապետը
թվարկված դեպքերի կապակցութեամբ ինձ Հուշագիր ներ-
կայացրեց, որի վրա Հիմնվելով էլ կազմեցի տեղեկագրութ-
յունը: Ուղարկելուց առաջ ես այն ցույց տվեցի վալիին, որը
ձեւացրեց, թե շատ գոհ մնաց, որ իմ Հաղորդագրությունում
անդրադառնում եմ այդ խնդիրներին: Նկարագրված շատ
իրողություններ ինձ Հայտնի են անձամբ, չեմ էլ կասկա-
ծում, որ բոլոր պնդումները իրական Հիմք ունեն, մի Հանգա-
մանք, որը ոստիկանապետն էլ ինձ Հավատացրեց: Ես այդ-
պիսի խնդիրներ դեսպանատանը տեղեկացնելու մեջ վնա-
սակար ոչինչ չեմ տեսնում եւ, ինչպես ինձ է թվում, վալին ու
ոստիկանապետը չափազանց մեծ նշանակութիւն են տա-
լիս իմ այդ նախաձեռնութեանը: Իհարկե, ես ամենեւին չեմ
ուզում Հայ ժողովրդի Հովանավորի կեցվածք ընդունել կամ
Հայ Հեղափոխականներին պաշտպանել: Հետեւաբար, նկա-

րագրելով այստեղ տիրող իրավիճակը, ձգտում եմ անկողմ-
նակալ մնալ՝ ուրախ կլինեի, եթե Հնարավորութիւն ունե-
նայի այնպիսի իրողութիւններ նկարագրել, որոնք Հիմնա-
վորեին կառավարութեան ձեռնարկած քայլերը: Միաժամա-
նակ, օգոստոսի 23-ի տեղեկագրում իմ Հիշատակած փաս-
տերի մեծ մասը այնքան աննշան, անկարելոր է թվում մեր
տարածաշրջանում տեղի ունեցող անսահման ողբերգութ-
յան Համեմատութեամբ, որ դժվար է պատկերացնել, թե
ինչպես է Հնարավոր այդ ամենին արդարացում գտնել:

Բացի օգոստոսի 23-ի Համառոտ Հաղորդագրութիւնից,
Հուլիսի 24-ի զեկուցագրից Հետո դեսպանատուն՝ Հայկա-
կան Հարցի մասին ոչինչ չեմ տեղեկացրել: Այդ ժամանակա-
միջոցում չգրելուս պատճառներից մեկը դեսպանատուն ու-
ղարկած իմ նամակների բացարձակ անապահովութիւնն է,
ինչպես արդեն երեկվա ճեպագրում նշել էի Հունիսի 30-ի
Հաղորդագրութեան վերաբերյալ:

Մյուս պատճառն էլ այն է, որ վերջին վեց-յոթ շաբաթվա
ընթացքում իրավիճակը Համեմատաբար խաղաղ էր: Հուլի-
սի առաջին երկու-երեք շաբաթում Հայ ազգաբնակչութեան
մեծ մասին բռնազաղթեցնելուց Հետո, Հետագա տարհա-
նումները, բնականաբար, նախկին ընդգրկումները չունեին,
ավելի մեծ ընդհատումներով էին իրագործվում: Ինչպես
արդեն Հիշատակել եմ իմ Հուլիսի 24-ի զեկուցագրում, մին-
չեւ Հիմա երկու քաղաքներից՝ Նարբերդից ու Մամուրեթ-
ուլ-Ազիզից 12000-ից 15000 Հայ է բռնազաղթել, Հազարա-
վորներ ստիպված են եղել թողնել մերձակա գյուղերը:
Մնացել է չնչին մասը՝ բոլորը գրեթե կանայք ու երեխաներ:
Ելնելով վալիի Հայտարարութիւններից, Հույս կա, որ այդ
փոքրաթիվ կանանց ու երեխաներին կխնայեն: Տղամարդ-
կանց, գրեթե բոլորին, տարել են, Համարյա կասկած չի կա-
րող լինել, որ աննշան բացառութեամբ, ամենքին սպանել են:
Ինչ էլ լինի, բռնազաղթը դեռ չի ավարտվել եւ ամենեւին

Հույս չկա, որ շուտով կավարտվի: Հուլիսի վերջին շաբաթ-
վա, օգոստոսի առաջին կեսի ընթացքում ինչպես այստե-
ղից, այնպես էլ գյուղերից բազմաթիվ կանանց, երեխաների
հավաքեցին: Նրանց հսկիչների ուղեկցութեամբ տարան եւ
ըստ պատվող համառ լուրերի, բոլորին, ինչպես դրանից
առաջ տղամարդկանց, կոտորել են: Դա ամենեւին անհնար
չէ, ես հակված եմ հավատալու, որ առնվազն նրանց մի մա-
սին կանխամտածված սպանել են: Բոլորովին վերջերս մեծ
թվով Հայ երեխաների, որոնց պահում էին թուրքական որ-
բանոցում, տեղահանեցին, դժվար է հավատալ, որ դրա հա-
մար, բացի սպանելուց, կամ թողնելուց, որ ճանապարհին
մեռնեն, կարող է ուրիշ պատճառ լինել: Այսպիսով, Հայերի
բռնազաղթն ու կոտորածը, որը շարունակվեց ամբողջ
ամառը, անհնար է կանխատեսել, թե երբ պիտի վերջանա:

Ես կարծում եմ, որ տարածաշրջանի Հայերի առնվազն
երեք քառորդն արդեն վերացված է: Մնացածների մեծ մա-
սը թաքնվել է եւ շարունակում է թաքնված մնալ: Ոմանք
օգտվում են կաթոլիկներին ու բողոքականներին չաքսորե-
լու հրամանից, չնայած ճշող մեծամասնութեանը, հրամանը
ստացվելուց կամ առնվազն հրապարակվելուց առաջ, ար-
դեն աքսորել էին: Նրանք, ովքեր բախտ ունեցան մինչեւ
հրամանի տարածվելը թաքնված մնալ, այժմ բացելիքաց
ապրում են: Սակայն, ընդամենը մի քանի օր առաջ բողոքա-
կաններին մի մեծ խմբի տեղահանեցին, ասում են, որ
առայժմ նրանք գտնվում են Մալաթիայի մոտերքում: Ես
վալիին քսանչորս հոգու ցուցակ ներկայացրի, խնդրեցի,
եթե հնարավոր է, բոլորին հետ բերել տալ, բայց դեռեւս վս-
տահ չեմ՝ այդ ուղղութեամբ որեւէ քայլ կձեռնարկվի: Բացի
կաթոլիկներից ու բողոքականներից, թողել են մի քանի
խիստ անհրաժեշտ արհեստավորների ու բանվորների, ինչ-
պես օրինակ հացթուխների, կոշկակարների: Մնացածների
մյուս՝ ոչ մեծ խումբը ամերիկյան քաղաքացիներն են կազ-

մում: Ննայել են նաեւ ամերիկյան դպրոցների ու հիվանդա-
նոցի աշխատակիցներին, ծառայողներին, չնայած իշխա-
նությունները շարունակում են պնդել, որ նրանց առնչութե-
ամբ կոստանդնուպոլսից ոչ մի հրաման չեն ստացել: Քանի
որ առայժմ այս մարդկանց չեն անհանգստացնում, կարծում
եմ հարկ չկա չափից ավելի հետեւողական լինել հրամանի
հարցում, չնայած նրանք իրենց անհամեմատ ապահով կզ-
գային, եթե տեղական իշխանություններից հիմնական
բնակավայրերում մնալու հավաստիացումներ ունենային:
Շատ հավանական է թվում, որ անկախ պաշտոնական ու-
րացումներից, համապատասխան հրամաններ, ինչպես
ամերիկյան քաղաքացիների դեպքում, ստացվել են, չնայած
տեղական իշխանությունները երբեք բացելիքաց դա չեն
խոստովանել:

Նշանակում է տեղում մնացած Հայերի մեծ մասը թաքն-
վածներն են, չնայած նրանց ճշգրիտ թիվը դժվար է ասել:
Ոմանք թաքնվում են Նարբերդում ու Մամուրեթ-ու-Ազի-
զում, ուրիշները գյուղերում, բոլորովին վերջերս էլ տարբեր
վայրերում թաքնված տղամարդկանց մի մեծ խումբ անցավ
Դերսիմ, ապաստան գտավ քրդերի մոտ: Նրանց թվաքա-
նակը, բնականաբար սահմանափակ է, բայց ես իմացա, որ
այդ ուղղութեամբ զգալի շարժում է նկատվում, ինչ խոսք,
կյանքի անվտանգությունն ապահովող որոշակի գումարով:
Շատերը, հիմնականում կանայք, մնացել են թուրքական
ընտանիքներում, հատկապես այն գյուղերում, որոնց բնակ-
չությունը խառն է: Զուտ Հայկական գյուղերը ամբողջովին
դատարկվել են, իսկ խառն գյուղերում հարյուրավոր կա-
նայք են ապաստան գտել իրենց թուրք հարեւանների տնե-
րում:

Կաշառակերությունը խիստ տարածված է եւ լայն կի-
րառում ունի իշխանությունների ինչպես վերին, այնպես էլ
ստորին օղակներում: Այդ առումով ամենախոշոր հանցա-

գործներից մեկը Սարբերդի գայմագամն է, որն ասում են, մարդկանց պաշտպանելու համար տասնյակ Հազարավոր փառունդ է գրպանել: Ահա նրա հովանավորության օրինակներից մեկը: Մի կին, ում ես անձամբ եմ ճանաչում, հիսուն լիրա է տվել, որպեսզի իրեն ու երեխաներին չաքսորեն: Գումարը վերցնելուց հետո գայմագամն ասել է, որ քանի դեռ բռնագաղթը շարունակվում է, նա լավ կանի, եթե Սարբերդում չմնա, տեղափոխվի Մամուրեթ-ուլ-Ազիզ, այնտեղ որոշ ժամանակ թաքնվի: Կինն, ուրեմն, եկավ, մի քանի օր ապաստանեց ամերիկյան հիվանդանոցում, բայց քանի որ ոստիկանությունը խուզարկումներ էր կատարում, վեց երեխաներով Հյուպատոսարան տեղափոխվեց: Մինչ այդ ոստիկանապետից, որպես առանձնահատուկ շնորհ, խնդրել էի, որ տիկնոջն ու երեխաներին թույլ տա Հյուպատոսարանում մնալ, եւ նա համաձայնվել էր: Այնպես որ ես նրանց որոշ ժամանակ Հյուպատոսարանում պահեցի, մինչեւ Հնարավոր եղավ այլ միջոց գտնել: Տիկինը չէր կարող Սարբերդ վերադառնալ, այնպես որ գայմագամին տված հիսուն լիրան ոչ մի նշանակություն չունեցավ: Իմ տիկնոջն օգնելու ջանքերն ավելի արդյունավետ եղան, քան գայմագամի արածը ստացած գումարի փոխարեն: Մինչդեռ գայմագամը շարունակում էր կանոնավոր ու այնքան բացահայտ կաշառք վերցնել, որ շուտով բոլորն իմացան այդ մասին: Երկու-երեք շաբաթ առաջ նրան պաշտոնանկ արեցին, ձերբակալեցին ու բանտ նետեցին, որտեղ եւ գտնվում է մինչեւ հիմա: Իմացա նաեւ, որ բանտարկվելու պահից նրա տունը հակողության տակ է վերցված: Ես չգիտեմ նրան ձերբակալելու բուն պատճառը, թերեւս եկամուտը չի կիսել պաշտոնակիցների հետ կամ որեւէ այլ պատրվակ է եղել, բայց համենայն դեպս լավ է, որ աշխատանքից հեռացվել է: Բացի պաշտոնյաների կաշառակերությունից, բոլոր այն թուրքերը, որոնք իրենց տներում հայեր են պատսպարել, դրա համար անընդհատ

ահուելի գումարներ են պահանջում: Ծատ Հաճախ, նրանք փախստականներին որոշ ժամանակ պահում են, բայց հենց գումարներն սպառվում է, ստիպում են գնալ, ուրիշ տեղ ապաստան որոնել:

Ինչ վերաբերում է Հյուպատոսարան եկած կնոջը, ում մասին քիչ առաջ հիշատակեցի, նա ամերիկյան հիվանդանոցից տեղափոխվեց, նրա համար ինքս խնդրեցի բացառություն անել, չաքսորել, բայց պիտի ասեմ, որ թե ինքը, եւ թե իր նման մի քանի հոգի, խիստ անխոհեմ ձեւով, գիշերը հայտնվեցին: Ոստիկանությունն իմացել էր, որ ամերիկյան հիվանդանոցում բազմաթիվ հայեր են թաքնվում, որոնք հիվանդ չեն, մի հետկեսօրի խուզարկություն էր կատարել: Արդյունքն առանձնապես մեծ չէր եղել, քանի որ քիչ մարդ էր հայտնաբերվել: Վերցրել էին մոտ տասներկու տղամարդու, կանանց ու երեխաներին թողել էին: Նրանց մեջ էին եղել իմ հիշատակած կինն ու երեխաները, ինչպես նաեւ ամերիկյան քոլեջի դասախոսներից մեկը: Մինչ այդ ես նրանց համար, ընտանիքներով հանդերձ, թույլտվություն ստացել, նախօրոք էլ դոկտոր Ատկինսոնին հարցրել էի՝ անախորժություններ կունենա՞, եթե ոստիկանությունը հայտարարի, որ նրանք գտնվում են ամերիկյան Հյուպատոսարանի հովանավորության ներքո: Նա այդպես էլ արել էր, եւ ոստիկանությունը հիշատակածս անձանց հանգիստ էր թողել: Բայց հենց նույն գիշերը, երբ մութն ընկել էր, իմ հովանավորյալներին, մի քանի ուրիշ հայերի հետ ուղարկել էին Հյուպատոսարան: Այդպես, անսպասելի, անկողիններով, իրերով, ունեցած-չունեցածով մոտ քսան հոգի հայտնվեց: Ճանապարհին նրանց կանգնեցրել էր մի ոստիկան, հարցրել, թե ո՞ւր են գնում, ու բոլորն էլ ասել էին՝ ամերիկյան Հյուպատոսարան: Հայերն ստիպված էին եղել անցնել նաեւ մուսուլմանական ամբոխի կողքով, որը բացօթյա աղոթքի էր հավաքվել: Ես իսկույն եւեթ հետ ուղարկեցի

նրանց, ովքեր մնալու իրավունք չունեին, բայց, այնուամենայնիվ, այդքան շատ հոգու խմբովին հայտնվելը ուշադրություն գրավեց եւ շուտով քաղաքով մեկ տարածվեց, որ ամերիկյան հյուպատոսարանում «հազար» հայ է թաքնվում: Դա տեղի ունեցավ այս ամառվա այն ամենալարված, վտանգավոր պահին, երբ շատ կարելու էր կասկածից զերծ մնալը: Միջադեպը, բարերախտաբար, հետեւանքներ չունեցավ, բայց, ամեն դեպքում, ամերիկյան հիվանդանոցի աշխատակիցների՝ նման ձեռով հյուպատոսարան հայեր ուղարկելը անխոհեմ եւ անհեռատես քայլ էր:

Իրականում հյուպատոսարանում ես պատասպարում եմ երեսուն-քառասուն հոգու, որոնք բոլորն էլ մնալու թույլտվություն ունեն, այնպես որ հարկ եղած դեպքում կարող եմ համապատասխան պատճառարանություններ ներկայացնել, ինչպես, օրինակ, ամերիկահպատակ քաղաքացիների կանանց ու երեխաների, այնպես էլ հյուպատոսարանի աշխատակիցների ընտանիքների դեպքում: Զերբակալություններն ու բռնագաղթը այնքան արագ, հապճեպ տեղի ունեցան, որ նույնիսկ նրանց, ովքեր կարծում էին, թե պիտի մնան, իսկույն եւեթ հավաքեցին ու աքսորեցին, ոչ ոք չկարողացավ փրկվել: Հետեւաբար, ավելի խելամիտ թվաց, որ գոնե մասամբ, այն հայերը, որոնց ես փորձում եմ պաշտպանել, հյուպատոսարանում ապաստանեն: Քանի որ հյուպատոսարանի այգին չափազանց ընդարձակ է, նրանց ամառն այստեղ պահելը դժվար չէ: Բացի դրանից, հենց վերջերս, ես մոտակայքում երկու-երեք տուն եմ գտել, որտեղ կարող եմ որոշ մասին տեղավորել:

Հասկանալի է, չափազանց դժվար է եղել կողմնակի մարդկանց հիվանդանոց մտնելն արգելելը, առավել եւս վոնդելը, մանավանդ երբ հայտնի է դարձել, որ նրանք դեպի ստույգ մահը պիտի գնան: Սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայերի մեծ մասը այս կամ այն հիվան-

դուծյան պատրվակով է հիվանդանոց դիմել, վերջիվերջո դուրսը Ատկինսոնն այդ տեսակետից դժվարություններ չի ունեցել: Նարբերդի ամերիկյան միսիոներները պատասպարել են միայն հիսուն դաստիարակի ու որբերի, որոնց տեղ են տվել աղջիկների վարժարանում, ինչպես նաեւ մոտ տասներկու ծառայողների: Ինչպես արդեն նշել եմ վերելում, իշխանությունները համառորեն ժխտում էին, որ բացառություններ անելու հրաման են ստացել, բայց նման հրահանգի առկայությունը հավանական է թվում հենց թեկուզ այն պատճառով, որ նշածս անձանց տարագրելու ոչ մի փորձ չի արվում:

Ընդհանուր առմամբ տեղի ամերիկացիները վերջին երկու ամսում համեմատաբար քիչ նեղություններ կրեցին, հնարավորություն ունեցան որոշ ծառայություններ մատուցել: Ամեն դեպքում ինձ հայտնի դարձավ, որ բարձրատիճան պաշտոնյաների նախաձեռնություններ գիշերային հարձակում է նախապատրաստվել Նարբերդի ամերիկացիների վրա՝ բռնագաղթած հայերի՝ նրանց վստահված դրամը գողանալու նպատակով: Բոլորին քաջ հայտնի էր, որ հայերը ամերիկացիներին խոշոր գումարներ էին պահ տվել, խիստ հավանական է, որ ոմանք ձգտեին տիրանալ: Առավել եւս անհնարին չէ, որ այդ ուղղությամբ ինչ-ինչ քայլեր կատարված լինեն, չնայած ես հաստատ չեմ կարող պնդել: Իմ լրատուն տեղեկացրեց, որ այդ գործում ներգրավված պաշտոնյան ի վերջո գտել է, որ խելամիտ չէ նման սաղրանքի դիմելը, մյուսներին էլ համոզել է հրաժարվել այդ գաղափարից:

Անկախ այդ բանից, այդպիսի դավ նյութվե՞լ է, թե՞ ոչ, միստր կնապի մահը Դիարբեքիրում (որի մասին ես դեսպանատանը ահազանգել էի իմ՝ օգոստոսի 19-ի հեռագրում եւ օգոստոսի 31-ի ճեպագրում) խիստ տարօրինակ պայմաններում տեղի ունեցավ: Ավելին, ոչ մի կասկած չի կարող լի-

նել, որ դուրսը Սմիթի կյանքը Տիգրանակերտում լուրջ վտանգի տակ է եղել և նույնիսկ նրա վտարումը այդ քաղաքից ոչ մի լավ բան չի խոստանում: Բավականաչափ փաստարկներ կան մարդկանց գոնե մեծ մասին Համոզելու համար, որ ամերիկացիների գոյությունն այստեղ ապահով չէ, այնպես որ, եթե նրանք ստիպված լինեն մնալ, չափազանց հավանական է, որ նոր գոհերն անխուսափելի լինեն:

Հենց վերջերս ինձ Հանձնեցին միստր Փիթի օգոստոսի 19-ի շրջաբերական նամակը, որը նա հասցազրել էր Թուրքիայի ամերիկյան Հաստատություններին: Ակնհայտ է, որ նրա տեսակետը ստեղծված իրավիճակի մասին իմիսից տարբերվում է: Ես իմ սեփական Համոզմունքները պնդելու ոչ մի ցանկություն չունեմ, և ոչ էլ ուզում եմ հակադրվել իր ծրագրերին, բայց այն ամենից Հետո, ինչ տեղի ունեցավ այստեղ վերջին վեց ամիսների ընթացքում, չեմ պատկերացնում, թե ինչպե՞ս կարելի է Հուսալ, որ աշնանը ամերիկյան դպրոցները կվերաբացվեն, ինչպե՞ս է Հնարավոր ասել, որ անհրաժեշտ է Հասնել այն բանին, որ աքսորված մանկավարժներին Հետ վերադարձնեն, առավել ևս այնպիսի տպավորություն ունենալ, որ բոլոր ամերիկացիների անվտանգությունը լիովին երաշխավորված է: Միստր Ռիցը նրան Հաճախակի նամակներով, ամենայն մանրամասնությամբ նկարագրել է տիրող վիճակը, ես ինքս էլ իմ հերթին այստեղի պայմանների մասին բազմաթիվ Հանգամանալի ճեպագրեր եմ Հղել դեսպանատուն, բայց քանի որ ըստ մեր՝ տեղում կազմած պատկերացման՝ մեր Հաղորդումներին քիչ ուշադրություն է դարձվում, ինչպես նաև ելնելով միստր Փիթի վերոհիշյալ նամակի դրույթներից, որոշակի է թվում, որ մեր զեկուցագրերին կարեւորություն ընծայվում:

Ամերիկյան դպրոցների վիճակը շատ լավ էր ներկայացված միստր Ռիցի՝ միստր Փիթին գրած Հուլիսի 19-ի նամակում, որի պատճենը ես ուղարկել էի դեսպանատուն: Նա-

մակը ուշադրություն էր Հրավիրում այն Հանգամանքի վրա, որ աշակերտների՝ աղջիկների երկու-երրորդը և տղաների վեց-յոթերորդը դեպի ստույգ մահն են ուղարկված, աքսորված են կամ տեղավորված մահմեդականների ընտանիքներում, յոթ դասախոսներից չորսը սպանված են զանգվածային նախճիրի ճանապարհին, երկուսը թաքնված են և միայն մեկն է (երաժշտության դասախոսը) տեղում, մյուս՝ տասներկու տղամարդ ուսուցիչներից յոթին ամենայն Հավանականությամբ խողխողել են ճանապարհին, երկուսը հիվանդ են, պառկած են Հիվանդանոցում, մեկը թաքնված է և միայն երկուսն են քաղաքում: Ինչ վերաբերում է մնացածին, մի ուսուցչուհու ուղարկել են Թուրքական Հարեմ, երեքի մասին ընդհանրապես տեղեկություն չկա, չորսին տարագրել են, մնացել են տասը: Ամերիկյան դպրոցներին պատկանող ութը շենքերից յոթը կառավարության ձեռքում է, միայն մեկն է ազատ, որի մի մասը սակայն զինվորական հիվանդանոցի են վերածել:

Այսպիսով, ուրեմն, աշակերտների երեք-քառորդը, մանկավարժների կեսը, որոնց թվում և բոլոր առաջատար դասախոսները, բոլոր շենքերը, բացի մեկից, այլևս գոյութուն չունեն: Անտեսելով մնացած նկատառումները, դժվար է պատկերացնել, որ այս պայմաններում Հնարավոր է ուսուցման գործընթացը շարունակել, ներկա իրավիճակում դպրոցները վերաբացելու նախաձեռնություն Հանդես բերել: Միակ ոլորտը, որտեղ Հնարավոր է ինչ որ բան անել, որբերին օգնելն է, բայց դա էլ արգելված է ամերիկյան միսիոներներին: Ինչ վերաբերվում է կանանց ու երեխաներին, այստեղ բացահայտ տարվող քաղաքականության նպատակը նրանց մահմեդականացնելն է: Ընդհանուր առմամբ, կոստանդնուպոլսում ինչպիսի երաշխիքներ էլ որ տրվեն ամերիկյան Հաստատությունների Հետագա գործունեության վերաբերյալ, պարզորոշ է, որ այս տարածաշրջանում

քրիստոնեական ուսուցում կամ թույլ չեն տա ձեռնարկել կամ էլ այնպիսի խոչընդոտներ կհարուցեն, որ անհնարին կլինի շարունակելը՝ գոնե մինչև քաղաքական պայմանների արմատական փոփոխությունը:

Ինչ վերաբերում է միստր Փիթի նամակում արտահայտված՝ ամերիկյան դպրոցների աքսորված ուսուցիչների վերադարձի պահանջ ներկայացնելու մտքին, հասկանալի է, մինչև դեսպանատնից համապատասխան ցուցում չստանամ, այդ ուղղությամբ ոչինչ չեմ ձեռնարկի: Մեր արխիվներում նման խնդիրների վերաբերյալ վկայագրեր որոնելիս, 1903 թվականի մի հրահանգ գտա, որը կոստանդնուպոլսի դիվանագիտական առաքելությունը հյուպատոսարան էր հղել ամերիկյան քոլեջի մի դասախոսի կապակցությամբ, որին այն ժամանակ ձերբակալել էին, իսկ հիմա նորից են ձերբակալել ու սպանել: Հրահանգը թելադրում էր սահմանափակել մարդասիրական ջանքերը, պաշտոնապես չմիջամտել: Քանի որ ես հակառակ բնույթի ոչ մի հրահանգ չստացա, իսկ ամերիկյան դպրոցների մանկավարժները նախքան նրանց տեղում թողնելու հրամանի հրապարակվելը ձերբակալվեցին, կոտանքների ենթարկվեցին, աքսորվեցին ու կոտորվեցին, միակ բանը, որ կարող էի անել դեսպանատանը տեղեկացնելն էր, որը եւ իսկույն արեցի: Ուսուցիչների վերադարձը պահանջելն անօգուտ է, ինչպես նաև տեղական իշխանություններից բացատրություն ակնկալելը, թե ինչ եղան նրանք: Ես չեմ կարծում, որ թեկուզ մի պաշտոնյա կկարողանա ապացուցել, որ որեւէ ուսուցիչ որեւէ մեղք է ունեցել: Նրանք առաջիններից մեկն աքսորվեցին իրենց զբաղեցրած դիրքի պատճառով:

Գալով Թուրքիայի բոլոր ամերիկացիների զանգվածային պաշտպանությունն երաշխիքներին, թվում է, թե փաստերը դա չեն հաստատում: Դոկտոր Սմիթի տարագրությունն ու կյանքին սպառնացող հավանական վտանգը,

միստր կնապի մահվան կասկածելի պայմանները, Պարբերդի ամերիկացիների դեմ նյութված դավի շշուկները, այն հանգամանքը, որ միստր Բարնումի մահը, թերեւս նաև ուրիշներինը, արագացավ ներկա իրավիճակի պատճառով, չնայած մանրամասները ես չկարողացա ճշտել, վկայում են, որ այժմ Թուրքիայի նահանգներում կյանքն ու առողջությունը ապահովված չեն: Ելնելով միսիոներների գործունեությունը ներկա սահմանափակումներից, որը, գրեթե կասկած չի կարող լինել, դեռ երկար կտեւի, ինչպես նաև վտանգներից, որոնք ամենայն հավանականությամբ ցանկացած պահի կարող են ի հայտ գալ, ինձ ավելի խելամիտ է թվում այն, որ բոլոր նրանք, ովքեր կարող են, մեկնեն:

Ոոսելով ընդհանուր երաշխիքների մասին, որոնցով այնքան շուտ է կոստանդնուպոլիսը, ինչպես նաև նկատի ունենալով մեր վերջին վեց ամիսների այստեղի փորձառությունը, իմ նախորդներից մեկի գրած ճեպագրի հետևյալ պարբերությունն այնքան հետաքրքիր եմ գտնում, որ արժանի եմ համարում մեջ բերելու.

«Ես իսկույն խնդիրը ներկայացրի նորին գերազանցություն վալիին, որն ինձ հավատացրեց, որ այդ կապակցությամբ ոչ մի հրաման չի ստացել: Նա անմիջապես հեռագրեց կոստանդնուպոլիս, պահանջելով, որ իրեն ուղարկեն այդ լիազորությունը, որի մասին հայտարարել էր Ջերդ գերազանցությունը:

Մեր գրույցի ընթացքում նա պնդեց, որ կոստանդնուպոլսի նախարարները ցավալի ու վնասակար սովորություն ունեն արտասահմանյան դեսպանատներին հավատացնելու, որ այս կամ այն հրամանն արդեն ուղարկված է տեղական իշխանություններին, այն դեպքում, երբ համապատասխան հրահանգը ոչ ուղարկված է, ոչ էլ նման հայտարարություն անելուց հետո անմիջապես ուղարկելու ճիգ է արվում:

Վալին Հաճախակի էր տուժում այդ վրդովեցուցիչ սովորությունից, ահա թե ինչու խորհուրդ տվեց բոլոր պարագաներում պնդել, որ ինձ տեղեկացնեն լիազորությանն ուղեկցող ճեպագրի ամսաթիվն ու համարը, ինչպես նաև հայտնեն՝ հեռագրով, թե՞ նամակով է ուղարկված»:

Լավ կլիներ, եթե Հնարավոր դառնար այդ բնույթի ճեպագրերի ամսաթիվերն ու համարները ձեռք բերելը, որոնք եւ բոլոր Հնարավոր դեպքերում դեսպանատունը հայտնեիր ինձ:

Այս տարածաշրջանում տիրող ընդհանուր վիճակը ահավոր է: Բացի անվտանգության բացակայությունից, թվում է, թե համաճարակն անխուսափելի է: Մեծ թվով դիակները, որոնք սփռված են ամենուր՝ նույնիսկ քաղաքի շրջակայքում, տարբեր ժամանակներում այստեղից անցած աքսորականների քարավանների աղտեղությունը, մաքրություն իսպառ բացակայությունը հանգեցնում են դրան: Այժմ պետական ծառայողները ձգտում են թաղել գլխավոր ճանապարհներին հանդիպող դիակները, բայց փոսերը, որ նրանք փորում են, երբեմն այնքան մակերեսային են, որ մարմինների մի մասը հաճախ բաց է մնում:

Իմ նախորդ ճեպագրերում ես անդրադարձել էի քաղաքի մուտքի մոտ գտնվող ճամբարին, որտեղ որոշ ժամանակ հանգրվանեցին էրզրումի ու Երզնկայի տարագիրները: Նրանցից հետո եկողների համար ավելի հարմար տեղ որոշվեց՝ խոսքը համարյա քաղաքի տարածքում գտնվող ընդարձակ գերեզմանոցի մասին է, որը շրջափակված է բարձր պարիսպով: Այնտեղ քաղաքից անցնող քարավաններին բազմիցս պահեցին, նրանց, ովքեր ուժասպառ կամ ծանր հիվանդ էին, թողեցին, որ մեռնեն ու հենց տեղում էլ թաղեցին: Իմ Հուլիսի 24-ի ճեպագրի 7-րդ եւ 8-րդ էջերում նկարագրված գերեզմանոցի տեսարանը կրկնվեց բազմիցս: Վերջում հասած աքսորականները հանգրվանեցին հինգ

մղոն հեռու գտնվող մի հայկական գյուղում, որտեղից եւ շարունակեցին իրենց ճանապարհը:

Այս աքսորի նկատելի առաձնահատկություններից մեկն էլ այն է, որ վերջերս տարագիրների խմբերի հետ տղամարդիկ հայտնվեցին, այն դեպքում, երբ նախորդ քարավանների տղամարդկանց, այս վիլայեթը հասնելուն պես սպանում էին: Խարբերողը շատ դիպուկ է Թուրքիայի «Սպանդի նահանգ» կոչվում, քանի որ բոլոր կողմերից բռնագաղթածներին բերում են այստեղ միայն այն բանի համար, որ կոտորեն: Հասկանալի է, ինքս անձամբ նախճիրներին ականատես չեմ եղել, սակայն ոչ մի կասկած չի կարող լինել նրանց ճակատագրի հանդեպ, որոնք անհետացել են այս վիլայեթում՝ դեռևս քաղաք հասնելուց առաջ, ինչպես գործնականում ոչ մի կասկած չի կարող լինել, որ այստեղից ճանապարհը շարունակող կանանց ու երեխաների մեծ մասը կոտորվելու է: Դա շատ հաճախ հաստատում ու պնդում են նախճիրից փախած, քաղաք վերադարձած վերապրողները, ինչպես նաև զինվոր-ոստիկանները, որոնք իրագործում են ջարդը: Վերջերս հասած քարավաններում կան Սվազի նահանգի Ջարայի, ինչպես նաև Տրապիզոնի, Օրդույի, Կիրասունի բնակիչներ, չհաշված էրզրումից եկած չափազանց մեծ քարավանը, որը մի քանի հազար մարդուց էր կազմված: Բոլոր նրանք, ում հետ ես զրուցել եմ, պնդել են, որ այլ վիլայեթներում իրենց հետ անհամեմատ լավ են վարվել: Ինձ հայտնեցին նաև, որ այստեղից մեկնելուն պես տղամարդկանց բաժանում են կանանցից ու երեխաներից, որի նպատակը կարծում եմ խիստ հասկանալի է:

Պարզ է, այն երկիրը, որտեղ գրեթե հենց մեր աչքերի առաջ նման զանգվածային նախճիրներ են իրագործվում, չի կարելի վստահելի համարել: Տեղական պաշտոնյաներն ու զինվոր-ոստիկանները, որոնք, թվում է, բարյացակամ են իմ նկատմամբ, անընդհատ խորհուրդ են տալիս զգուշանալ

ուտքով կամ ձիով հեռուներում զրոսնելուց, հորդորում են անպայման որեւէ մեկին վերցնել ինձ հետ: Բոլորը խոսում են քրդերի մասին, որոնք թափառում են ճանապարհներին ու խիստ վայրենաբարո են: Իհարկե ճշմարիտ է, որ չափազանց շատ քրդեր են տուն-տեղ թողել, թալանի ելել: Այդ ցեղի մի հետաքրքիր ներկայացուցիչ հյուպատոսարան՝ ինձ մոտ եկավ, ցույց տվեց այն, ինչը ինքը 100 դոլարանոց արժեթուղթ էր համարում ու հարցրեց, թե փոխարենը ինչ կարող եմ տալ իրեն: Պարզվեց, խոսքը գովազդային հայտարարության մասին է, որը նման էր ամերիկյան դրամի: Երբ հարցրի, թե որտեղից իրեն այդ թուղթը, սկզբում ասաց, որ Ամերիկայում են իրեն տվել որպես 100 դոլարանոց, բայց երբ շարունակեցի հարցուփորձը, խոստովանեց, որ իր մորթած գյավուրի գրպանից է հանել: Ահա այսպիսին են մարդիկ, որոնց այս օրերին կարելի է հանդիպել այստեղ:

Բոլոր դեպքերում ես լիովին չեմ հրաժարվել ձիով շրջագայելուց, բայց սովորաբար հետս միշտ ինչ որ մեկին վերցնում եմ: Վերջերս եղա երկու հայկական գյուղերում, որտեղից գրեթե բոլոր բնակիչներին տարհանել էին: Քաղաքից դեռ շատ չհեռացած երկու տղամարդու տեսա, որոնք ճանապարհից երկու հարյուր ոտնաչափ հեռու փոս էին փորում: Մոտեցա, որ իմանամ պատճառը: Պարզվեց գետնին տարածված, մեռած կնոջ համար գերեզմանափոս են փորում: Նրա կողքին երկու ուրիշ կին կային, որ մեռնում էին: Նրանցից բացի ես երկու կնոջ ու մի երեխայի էլ տեսա: Նրանք ասում էին, որ չեն ուզում ճանապարհը շարունակել, ուզում են, որ իրենց թողնեն հենց այդտեղ մեռնել: Մենք մեզ հետ հաց էինք վերցրել, որպեսզի սովյալներին բաժանենք, մի քիչ տվեցինք նրանց: Տղամարդիկ, որոնք փոս էին փորում, ինչ խոսք, պետական ծառայողներ էին: Նման տեսարանների, ամենայն հավանականութամբ այժմ, Թուրքիայի խորքերում, կարելի է հանդիպել ամենուր: Այստեղ մի կնոջ,

այնտեղ երեխայի դիակ կա, երբեմն-երբեմն էլ անասունի լեշ է հանդիպում: Բացի մեռելներից ու մեռնողներից, զինվոր-ոստիկաններից ու քրդերից, ճանապարհներին ոչ ոք չկա: Տարածաշրջանը լիովին մեկուսացած է:

Երկու գյուղերը, որտեղ ես եղա, գրեթե ամբողջովին ամառի էին, մինչդեռ յուրաքանչյուրը երկու-երեք հազար բնակիչ էր ունեցել: Իմ ձիապանը այդ գյուղերից մեկում էր ծնվել: Այժմ այնտեղ միայն երկու ընտանիք է մնացել: Զիապանս իր ընտանիքով գտնվում է հյուպատոսարանում, նա իմ ծառայողը լինելու համար է տեղահանությունից ազատվել: Գյուղի իր տունն զբաղեցրել էին զինվոր-ոստիկանները: Քանի որ այդ գյուղում թուրքեր չեն ապրում, ոստիկաններն ու իմ հիշատակած երկու հայ ընտանիքները ինձ հանդիպած միակ կենդանի էակներն էին: Հավանական է, որ մյուս գյուղերում կան թաքնված հայեր, որոնք իրենց տները կվերադառնան հենց որ պայմանները լավանան, չնայած նրանց թիվը հազիվ թե մեծ լինի: Այդ գյուղը Պոմպեյի նման մեռած է ու ամառի: Մեր այցելած մյուս գյուղն ավելի լավ վիճակում չէր: Այնտեղ մնացել էր հազիվ վեց ընտանիք: Մենք հանդիպեցինք երեք կույր, դողդոջուն ծերունիների, որոնց ընտանիքների բոլոր անդամներին աքսորել էին, իրենց թողել: Նրանցից մեկը ութսունհինգ տարեկան էր, ուներ երեսուն երեխա եւ թոռ, որոնցից երկուսը Ամերիկայում էին: Մնացած քսանութը բռնազաղթել ու երեւի մահացել էր: Այս երեք ծերունիներն ու նրանց ընտանիքները բողոքական էին, քաջ ծանոթ ամերիկացի միսիոներներին: Հենց վերջիններս էլ այժմ գյուղից բերել ու խնամում են նրանց: Այդ գյուղը նույնպես, ինչպես մյուսները, արդեն ամառի է ու ավերակ: Այստեղ սակայն, հատկապես այն գյուղերում, որտեղ միաժամանակ թուրքեր եւ թե հայեր են ապրել, բազմաթիվ հայուհիներ են մնացել: Այդ կանայք ապաստան են գտել թուրքական օջախներում, որի շնորհիվ

էլ բռնագաղթից փրկվել են: Վերջին մի քանի օրում նրանցից շատերը գալիս են Հյուպատոսարան, խնդրում են Ամերիկայի իրենց Հարազատներին գրել, որ փող ուղարկեն ու գրեթե բոլորը ուզում են այնքան ստանալ, որ երբ ճանապարհորդելու հնարավորություն ստեղծվի, Ամերիկա գնան: Ես, իհարկե, ջանում եմ օգնել նրանց, բավարարել յուրաքանչյուրի խնդրանքը, բայց դիմողներն այժմ չափազանց շատ են, ահագին ժամանակ են խլում: Ոմանք էլ նույն խնդրանքով դիմում են միսիոներներին: Այս ամենը ցույց է տալիս անելանելի վիճակը, որի հորձանուտում հայտնվել են նման մարդիկ, ինչպես նաև այն համոզվածությունը, որ իրենք այլևս այստեղ չեն կարողանալու ապրել:

Վերջերս լուրեր եկան այն մի քանի անձանցից, ում հաջողվել էր հասնել Հալեպ: Հարկ է նշել, որ խոսքը միայն կանանց է վերաբերում: Ակնհայտ է, որ ոչ մի տղամարդ մինչև Հալեպ ողջ չի մնացել:

Այն հատուկներ կանայք ու երեխաները, որոնք այստեղ են ապրում, ձմռանը դժվարություններ ունենալու են հագնելիք կզտենն: Այդ խնդրով ամենայն հավանականությունները միսիոներները կգրադվեն ու ոչ մի կասկած չի կարող լինել, որ շատերին կօգնեն:

Պատիվ ունեմ, սիր, մնալու Ձեր խոնարհ ծառան՝

ԼԵՍԼԻ Ա. ԴԵԻՒՍ
(ստորագրություն)
Հյուպատոս

ԱՂԲՅՈՒՐ - Լեսլի Ա. Դեյվիսը Նաբրեբրդից Հենրի Մորգենթաուին, Ամերիկյան դեսպանատուն, Կոստանդնուպոլիս, 7-րդ սեպտեմբերի, 1915 թ., Ա.Ա., Պ.Դ., 59 Ն.Փ., տասնորդական թղթապանակ թիվ 867.4016/210B:

Ամերիկյան Հյուպատոսարան
Մամուրեթ-ու-Ազիզ (Նաբրեբրդ)
Թուրքիա, 30-րդ դեկտեմբերի 1915 թ.

Հարգարժան Հենրի Մորգենթաուին
Ամերիկյան դեսպանին
Կոստանդնուպոլիս

Սիր,

Պատիվ ունեմ իմ Հունիսի 30-ի, Հուլիսի 11-ի, Հուլիսի 24-ի, օգոստոսի 23-ի եւ սեպտեմբերի 7-ի (թղթապանակ թիվ 840.1) զեկուցագրերը՝ մեր տարածաշրջանի Հայերի բռնագաղթի ու կոտորածի մասին շարունակել, ավելացնել հետեւյալը.

Վերջին չորս ամիսները անորոշ ու անհանգիստ էին յուրաքանչյուրի համար: Հուլիսի եւ օգոստոսի բռնագաղթից հետո այստեղ մնացած փոքրաթիվ Հայերը, որոնք չէին աքսորվել բողոքական, կաթոլիկ, ամերիկահպատակ լինելու կամ այլ պատճառներով, ապահովության ոչ մի երաշխիք չունեին, ինչպես մինչև հիմա չկա վստահության արժանի որեւէ հավաստիացում, որ Հայկական հարցը փակված է: Մեկ կամ երկու անգամ քաղաքի մուկները վալիի հրամանով հավաստիացրեց, որ այլևս ոչ մի Հայ չի աքսորվելու, բոլորը առանց վախենալու կարող են թաքստոցներից դուրս գալ, բայց նման Հայտարարությունների կեղծիքը բացահայտվեց մի քանի շաբաթ անց, քանի որ այդ ամենին հաջորդեց նրանց զանգվածային ձերբակալությունն ու աքսորը, ովքեր միամիտ էին գտնվել, հավատ ընծայել նման լուրերին:

Նորամանկությունն այնքան արդյունավետ եղավ, որ ամենայն հավանականությամբ նորից կկիրարկվի, չնայած որքան հաճախ էլ կրկնվի, ես ամենեւին չեմ կասկածում՝

ճիշտ նույն ձևով ուրիշներ էլ ի հայտ կգան, եւ այս ամենը կշարունակվի այնքան, մինչեւ ոչ մի հայ չմնա: Կարծում եմ, այստեղ մնացած փոքր քանակութեամբ հայերը նոր ձերբակալութուններից ու աքսորից վախենալու նույնքան պատճառ ունեն, որքան վերջին վեց ամիսների ցանկացած պահին: Ոչ ոք չգիտեմ, թե առաջիկայում ե՞րբ, ի՞նչ է տեղի ունենալու: Հայտնի չէ՝ այն մի քանիսը, ովքեր մինչեւ այժմ խույս են տվել տեղահանությունից, վերջիվերջո փրկվելու են, ինչպես հայտնի չէ, թե նրանք, ովքեր գործադրել են երբեւէ՝ որեւէ ցեղի կամ ազգի նկատմամբ ծրագրված ամենադաժան ոճիրը, մինչեւ այս երկրի վերջին հայի բնաջնջումը շարունակվելու են իրենց հանցագործությունը:

Նախազգացումները եւ մտավախությունները, որոնք ես այդ կապակցությամբ արտահայտել էի իմ նախորդ գեկուցագրերում, մեծ մասամբ լիովին իրականացան: Եվ քանի որ հաղորդագրություններից երկուսը (Հունիսի 30-ի թիվ 62-ը եւ Հուլիսի 24-ի թիվ 71-ը) ակնհայտորեն կորել են կամ իշխանություններն են առգրավել, ես դրանց պատճենները կցել եմ իմ երեկվա՝ թիվ 172 փոստային համարանիշը կրող ձեպագրին: Ինքներդ էլ կնկատեք, որ այդ գեկուցագրերը թուրք պաշտոնյաների ընթերցման համար նախատեսված չէին, բայց ես ենթադրում եմ որ դա, համենայն դեպս տեղի ունեցել է: Իմ Հուլիսի 11-ի, օգոստոսի 23-ի եւ սեպտեմբերի 7-ի հաղորդագրությունների ստացման հաստատումը տեղ հասել է:

Վերջին հաղորդագրությունում, 4-րդ էջում (էջ 169) ես խոսում էի այն մասին, որ բողոքականների մի մեծ խմբի, նրանց տարագրումից ազատելու հրամանի ստացումից մի քանի օր առաջ բռնագաղթեցին: Ասում էին, որ հրամանը տեղ հասնելու պահին նրանք գտնվում էին Մալաթիայի մոտ, եւ ես ամեն ինչ արեցի, որ ձգտեմ ետ բերել, բայց ապարդյուն: Մի քանիսը, սակայն, առանց իշխանություն-

ների թույլտվությամբ, կարողացել էին հետ դառնալ: Դա նրանց հաջողվել էր ի հաշիվ խոշոր գումարների՝ հաճախ նրանք քրդերին 50-ից 100 թուրքական լիրա էին տվել, որոնք եւ գիշերով տեղ էին հասցրել: Սոսքը հասկանալի է՝ հիմնականում կանանց է վերաբերում, քանի որ բոլոր տղամարդկանց ավելի վաղ՝ ամառվա ընթացքում էին աքսորել: Ոստիկանությունը, սակայն, սկսեց հետապնդել նրանց, ովքեր նման ձևով հետ էին դարձել եւ մեծ մասին ձերբակալեց: Բողոքականներին նորից բռնագաղթեցրին, կարծում եմ նրանց հետագա ճակատագիրը դժվար չէ պատկերացնել:

Շարունակվող ողբերգության ամենաուշագրավ եւ ահավոր առանձնահատկություններից մեկն այն է, որ կառավարությունը բացեիբաց աճուրդ է կազմակերպում, մեծ քանակով վաճառում բռնագաղթի ընթացքում սպանված հայերի հագուստները: Այս տեսակ հագուստների բազմաթիվ հակեր են բերվել, որոնց վաճառքը քանի օր է արդեն շարունակվում է շուկայում: Ինձ հայտնեցին, որ նույնը տեղի է ունեցել վիլայեթի այլ քաղաքներում: Այդպիսի մի աճուրդի այստեղ ինքս էլ ներկա եղա: Ավելի ահավոր ու զարչելի տեսարան անհնար է պատկերացնել:

Սակայն բարբարոսության անհամեմատ սոսկալի դրսեւորումը, որի մասին ինձ պատմեց կոտորածից փրկված մեկը, այն է, որ զինվոր-ոստիկանները գաղթականներին 50-100 հոգիանոց խմբերով վաճառել են քրդերին, որպեսզի վերջիններս կոտորեն ու տիրանան վրաների ունեցվածքին: Չնայած, քանի որ մինչ այդ զինվոր-ոստիկանները տարագիրներին հիմնավորապես խուզարկել ու թալանել էին, քրդերին՝ զոհերին սպանելուց հետո, բացի հին հագուստներից, շատ քիչ բան էր մնացել: Ահա թե ինչպես է իրագործվում հայերի «վերաբնակեցումը»: Մի այլ իրողություն, որը պետք է հիշատակել ներկա իրավիճակում, շրջակա գյուղե-

րի քրիստոնեական եկեղեցիների մասնակի ավերումն է: Հականալի է, տարածաշրջանի բոլոր եկեղեցիները թուրքերի ձեռքում են:

Սեպտեմբերի 26-ին, կիրակի օրը, վալին Հայտարարութիւն տարածեց, որ Հայերն այլեւս չպետք է աքսորվեն: Դրանից հետո, մի քանի շաբաթ շարունակ, իրավիճակը խաղաղ էր թվում, այնպես որ բազմաթիվ Հայեր, որոնք մինչ այդ շարունակում էին թաքնված մնալ, Համարձակացին ասպարեզ ելնել: Ոմանք մահմեդականութիւն ընդունեցին, կարծելով, թե այդպես ավելի ապահով կլինեն: Հանկարծ, նոյեմբերի 4-ին, Հինգշաբթի օրը, հետկեսօրին, հենց տոնավաճառի ժամանակ, երբ ժողովուրդը լցվել էր փողոցներն ու շուկայի հրապարակը, ոստիկանութիւնն սկսեց որսալ պատահած Հայերին ու ասորիներին: Ծատերին հենց փողոցում ձերբակալեցին, խուզարկեցին այն տները, որտեղ, ըստ լուրերի, Հայեր էին թաքնվում, բոլորին դուրս հանեցին, որոնց թվում եւ իմ դավազներից մեկի ամբողջ ընտանիքը: Ոստիկանութիւնը շրջապատեց նաեւ ամերիկյան հիվանդանոցը, ներխուժեց ու կալանավորեց ներսում գտնվողների մեծ մասին: Մի ոստիկան ժամապահի նման կանգնել էր մեր Հյուպատոսարանի առջեւ, որպեսզի ոչ ոքի թույլ չտա ներս մտնել, ապաստան խնդրել: Ձերբակալվածների, բանտարկվածների թվում էին որոշ ամերիկյան քաղաքացիներ, որոնց ես հովանավորում էի, ինչպես նաեւ մի մեծ խումբ այլ անձիք, ում Համար տեղում մնալու արտոնութիւն էի ձեռք բերել: Երկու-երեք ժամվա ընթացքում ոստիկանութիւնը բանտ լցրեց քաղաքում գտնվող մոտ 500 հոգու: Ես ամբողջ հետկեսօրը, երեկոն, ինչպես նաեւ հաջորդ օրը որոնում էի նրանց, ում փորձել էի պաշտպանել, որպեսզի ճշտեմ, ովքեր են դրսում, ովքեր՝ բանտում: Այնուհետեւ այցելեցի զորահրամանատարին, որն այդ պահին փոխարինում էր վալիին, ինչպես նաեւ ոստիկանապետին, որպեսզի

ազատ արձակել տամ նրանց, ովքեր ձերբակալվել էին: Երբեք չեմ մոռանա տեսարանը, որին ներկա եղա նույն երեկոյան, երբ երկրորդ անգամ այցելեցի ոստիկանապետին ու ներկայացրի այն մարդկանց ցուցակը, ում փորձում էի ազատել: Ձերբակալվածները խոնվել էին նրա առանձնասենյակի դռան մոտ, յուրաքանչյուրն զգում էր մահվան վտանգը, մահվանն սպասում էր, բայց այնուամենայնիվ հույսը չէր կորցնում, որ մեկնումեկը կհայտնվի, իրեն կազատի: Նրանց մեկ առ մեկ կանչում էին ներս, որտեղ ոստիկանապետի եւ զինվոր-ոստիկանների հրամանատարի հետ նստած էի նաեւ ես: Բոլորը, ում Համար միջնորդեցի, ազատվեցին, բացի մեկից: Այդ երիտասարդը դասավանդել էր թուրքական դպրոցում, եղել իմ քարտուղարի մտերիմը: Ամառվա ընթացքում ես նրա մնալու թույլտվութիւնը ձեռք բերել էի, մի քանի ամիս պահել Հյուպատոսարանում: Սակայն նա որոշեց մահմեդականութիւն ընդունել, հակառակ մեր՝ մեծամասնության կարծիքի ու կրոնափոխ լինելուց մի քանի շաբաթ առաջ դուրս եկավ Հյուպատոսարանից: Ավելի ուշ փորձեց վերստանալ ուսուցչի իր պաշտոնն ու աշխատավարձի կուտակված պարտքը: Նրան եւ երկու ուրիշ երիտասարդների, որոնք նույնպես մահմեդականութիւն էին ընդունել, ձգտել ստանալ այն գումարը, որը կառավարութիւնն իրենց պարտք էր եղել, մեկ, թե երկու օր անց հանել էին բանտից, քաղաքից ոչ հեռու սպանել: Ես վստահելի աղբյուրներից իմացա, որ այս երիտասարդներին չէին ազատել միայն այն պատճառով, որ նրանք ուղել էին իշխանութիւններից ստանալ իրենց փողերը: Մարդկային կյանքն այստեղ մեծ արժեք չի ներկայացնում, կառավարական պաշտոնյաները պետական գումարների խնայման շատ արդյունավետ միջոց են գտել:

Մեր քաղաքում, նոյեմբերի 4-ին ձերբակալված բոլոր ասորիները, ինչպես նաեւ Հայերի մեծ մասը ի վերջո այս

անոց խմբերով էրզրումից այստեղ բերեցին մեծ թվով հայերի: Նրանք ճանապարհին կրած զրկանքների, անբարենպաստ եղանակի պատճառով թշվառ վիճակի էին հասել: Նման տառապանքների ենթարկելուց, այդքան երկար քայլեցնելուց հետո հայտնի դարձավ, որ մեր քաղաքից հեռանալուց ընդամենը մի քանի ժամ անց գրեթե բոլորին կոտորել են: Մի քանի հոգի, որոնք կարողացել էին փախչել, պատմեցին, որ այստեղից դուրս գալուց քիչ անց զինվոր-ուստիկանները գաղթականներին կապկպել են: Դրան պատակը հասկանալի է դարձել՝ շատերը դիմադրել են: Նրանց դիակները այժմ էլ է հնարավոր տեսնել ճանապարհի երկարություն: Մնացածին ավելի հեռու են տարել, խողխողել լեռներում: Ամենատխուր տեսարաններից մեկը, որին կարելի է ականատես լինել այս քաղաքում, ժամանակ առ ժամանակ հայտնվող զինվորական միավորումներն են, քանի որ պարզ է՝ նրանց անասունների պես կոտորելու են:

Մեր տարածաշրջանի ներկա իրավիճակի ամենացատուն առանձնահատկություններից մեկն էլ Վանի, Մուշի, Բիթլիսի գավառներից հասնող մահամեղական գաղթականների ահռելի թվաքանակն է: Այն բազմաթիվ հայկական գյուղերում, որոնք ամառվա ընթացքում ամբողջովին դատարկվել են, այժմ փախստական մահամեղականներ են վերաբնակվում: Շատերը կարծում են, որ հայերին բնաջնջելու շարժառիթներից մեկն էլ մահամեղականների համար ապրելու տեղ ստեղծելն է: Ինչ էլ լինի, նրանք այնքան շատ էին, որ կարողացան զբաղեցնել ազատված տարածքները: Եվ քանի որ բոլորն էլ չափազանց աղքատ են թվում, դժվար չէ պատկերացնել, թե ազգաբնակչության կազմի փոփոխությունն ինչ ազդեցություն կունենա տարածաշրջանի արդյունաբերության վրա:

Այս վիլայեթում ապրող 100000 հայից մի տարվա ընթացքում ամենայն հավանականությամբ մնացել է 4000-ից

ոչ ավելին: Վերջերս նույնիսկ ասում էին, որ հայերի հազիվ հինգ տոկոսն է ողջ: Սակայն, այժմ, մինչև անգամ այդ թիվն է կասկածելի թվում: Ամենայն հավանականությամբ Մամուրեթ-ուլ-Աղիզ եւ Ուարբերդ քաղաքներում հիմա համեմատաբար ավելի շատ հայ կա, քան այլ բնակավայրերում, որովհետեւ ոմանք գալիս են գյուղերից, որտեղ ոչ մի հայ չի մնացել, ուստի իրենք էլ չեն կարողանում այնտեղ ապրել, տեղափոխվում, այստեղ են ապաստան որոնում:

Հաշվված է, որ վիլայեթի հայ ազգաբնակչության մեկ երրորդը հազիվ է կենդանի, որն այժմ բնակվում է երկու քաղաքներում եւ մոտակա գյուղերում, ընդ որում հիմնական մասը կազմում են վերելում հիշատակված, վերջերս տեղափոխված մարդիկ: Գերմանական որբանոցի երեխաները, որոնց թիվը չորս-հինգ հարյուրի է հասնում, վերապրող ազգաբնակչության կարելու մասն են:

Ամենայն հավանականությամբ շատ հայեր շարունակում են թաքնված մնալ Դերսիմի քրդերի մոտ, բայց նրանց թիվը ճշտելն անհնար է: Կարող է հինգ հարյուրից հազարի հասնել: Վիլայեթի այլ մասերում շատ քիչ հայ կա, բազմաթիվ քաղաքներում ու գյուղերում ոչ մեկը չի մնացել, եթե նկատի չունենանք այն կանանց, ովքեր մահամեղականություն են ընդունել եւ ապրում են թուրքերի հետ:

Իմ երեկվա թիվ 170 կարճ ճեպագրում ես անդրադարձել էի այն ճնշմանը, որ գործադրում են հայ կանանց, այդ թվում եւ ամերիկյան Հպատակություն ընդունածների կանանց վրա, որպեսզի նրանց մահամեղականացնեն: Դեսպանատան նոյեմբերի 30-ի հրահանգի համաձայն ես, իհարկե, ամեն ինչ անում եմ, որպեսզի նման քայլից հետ կանգնեցնեմ: Վերջին շարաթների ընթացքում բազմաթիվ կանայք են ինձ դիմել այդ հարցով: Նրանք ասում են, որ երբ հրաժարվում են կրոնափոխ լինելուց, իրենց տեղահանություններ են սպառնում, որը ըստ էության մահ է նշանակում: Ամենեւին

անհավանական չէ, որ կանանց բռնագաղթը որոշ դեպքերում հենց այդ մերժման հետեւանքն է: Հասկանալի է, ես ամեն ինչ կանեմ, որպեսզի այն կանանց, ովքեր ամերիկյան պաշտպանութեան իրավունք ունեն, փրկեմ թե մեկ, թե մյուս փորձութեանից:

Ներկա ահավոր իրավիճակում հուսախարութեաններէ մեկը, որն անխուսափելի է դառնում, ինչպես ամենատխուր հետեւութեաններէ մեկը, որ կարելի է անել՝ ելնելով Հայկական միջավայրում ամերիկյան հաստատութեաններէ գործունեութեանից, այդ ցեղի՝ բարոյական ու կրօնական սկզբունքներից զուրկ լինելը, ինչպես նաեւ ընդհանուր ցածր մակարդակն է: Անցնող տարում, այն ամենի ընթացքում ինչ տեղի ունեցավ, ես հերոսականութեան, ինքնագոհողութեան ոչ մի քայլի մասին չեմ լսել, եթե անգամ վեհանաճութեան ղեկավար պատահել են, շատ քիչ են եղել: Ընդհակառակը՝ մայրերն իրենց սեփական կյանքը փրկելու համար աղջիկներին տվել են ամենարժի ու ամենավայրենաբար թուրքերին, շատերի համար կրօնը փոխելը առանձնակի նշանակութեան չունեցող երեւույթ է դարձել:

Ստախոսութեանը, նենգամտութեանը, անհազ սերը փողի նկատմամբ գրեթե բոլորի սովորական արատներն են, նույնիսկ այն դեպքում, երբ մահվան ստվերը մոտենում է: Ամերիկյան հոգեւոր ճեմարանի ուսանողներին ձերբակալելու ժամանակ, համարյա բոլորը, մահից ազատվելու համար այս կամ այն ձեւով ստել էին: Բացարձակ անկեղծութեանը գրեթե խորթ է այս ցեղից յուրաքանչյուրին:

Նրանք ամեն, նույնիսկ իրենց կյանքը վտանգելու գնով դրամի են ձգտում, ինչպես իմ այս ճեպագրում արդեն հիշատակված երիտասարդի դեպքում, որին ես փրկեցի մահից, բազմաթիվ ամիսներ հյուպատոսարանում պահելով օգնել ջանացի: Թե՛ նրանք, ովքեր կարիք չունեն, թե՛ նրանք, ում համար դա պահանջ է դարձել, ամեն խորամանկութեան ու

հնարանքի դիմում են, որպեսզի դրամ ձեռք բերեն, հաճախ զրկելով այնպիսիներին, որոնք անհամեմատ չքավոր են: Ամեն առումով էլ սա մի ցեղ է, որով չի կարելի հիանալ, բայց որին խղճալ պետք է՝:

Այժմ նրանց ոչ թե արժանիքները, կարիքները պետք է հաշվի առնել: Այն հազար կամ երկու հազար հայերը, ովքեր ապրում են շրջակայքում, մեծ մասամբ ամեն ինչից զրկված են, կախված են բարեսիրութեանից: Ոմանք Ամերիկայից են դրամի սպասում, չնայած անհամեմատ շատ են այնպիսները, ովքեր ոչ այնտեղից, ոչ էլ ուրիշ բնակավայրից օգնութեան չեն կարող ակնկալել:

Գործնականում բոլորը, ովքեր մնացել են այստեղ, կանայք ու երեխաներ են, նրանցից շատ քչերը հաց գնելու միջոց ունեն կամ գնելու համար կարողանում են դրամ վաստակել: Հիմնական օգնութեանն ապահովում են գերմանական ու ամերիկյան միսիոներները, բայց առայժմ ներդրված միջոցները բոլոր կարիքները հոգալու համար բավարար չեն:

Ուրախ կլինեի, եթե ամեն կերպ աջակցեի բարեսիրական այս գործունեութեանը, ինչպես արել եմ դեսպանատան՝ այդ նպատակով ուղարկված միջոցները բաշխելու ժամանակ, այնպես որ եթե դեսպանատունը առաջիկայում էլ կարողանա դրամ տրամադրել, կշարունակեմ նույն կերպ:

Այժմ կարելու է այդ մարդկանց կենդանի պահելն է, հետո օգնելը, որ հենց հնարավոր լինի, թողնեն երկիրը: Ամեն դեպքում իմանալու ոչ մի հնարավորութեան չկա, թե ինչ է ձեռնարկվելու այստեղ մնացած փոքրաթիվ վերապրողների նկատմամբ, իսկ դժվարութեանը, որ ներկա պայմաններում վտանգի պահին կարող է առաջանալ նրանց տարածաշրջանի մարդասպաններից ազատելու համար, անհամեմատ մեծ է, քան ի վիճակի է պատկերացնել ավելի քաղաքակիրթ վայրերի բնակիչը:

Ինչպես արդեն բացատրել եմ՝ միակ արդյունավետ միջոցը, որ ես գտել եմ, մարդկանց հյուպատոսարանում պահելն է, սակայն հասկանալի է այդ կերպ փրկվածների թիվը սահմանափակ է:

Պատիվ ունեմ, սիր, մնալու Ձեր խոնարհ ծառան՝

ԼԵՍԼԻ Ա. ԳԵԻԻՍ
(ստորագրություն)
Հյուպատոս

Ծածկագրված է.

Ես նպատակ ունեմ հայերի բռնագաղթի ու կոտորածի վերաբերյալ այս զեկուցագրերը լրացնել իմ երկու ուղեւորությունների հաշվետվությամբ, որ մինչև այժմ կատարել եմ այստեղից մոտ 5 ժամ հեռու գտնվող լճի շրջակայքում, որտեղ տեսել եմ առնվազն 10000 հայերի դիակներ, որոնց մեծ մասը վերջերս էր սպանված, ինչպես նաև պատկերագրողել լուսանկարներով, որոնք նկարահանել եմ, երբ տարագիրները դեռևս ողջ՝ ճամբարում են եղել: Նման հաշվետվություն այժմ ուղարկելը խելամիտ չեմ համարում:

ԱՂԲՅՈՒՐ - Լեսլի Ա. Գեիսը Նարբերդից Հենրի Մորգենթաուին, Ամերիկյան դեսպանին, Կոստանդնուպոլիս, 30-ը դեկտեմբերի, 1915 թ., Կոստանդնուպոլսում գործերի կառավարիչ Հոֆման Ֆիլիպի՝ ներփակված ծրարով 1916 թվականի փետրվարի 17-ին ուղարկված է պետքարտուղարին, Ա.Ա., Պ.Գ., 59 Ն.Փ., տասնորդական թղթապանակ թիվ 867. 4016/269:

ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆ Է

ԹԱՐԳՄԱՆՁԻ ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մտայնություն կա, որ մենք մեր պատմությունը լավ գիտենք, ավելին՝ անցյալով չափազանց շատ ենք տարվում: Իհարկե այդպես չէ: Պատմությունը սոսկ թվեր ու կենսագրություններ չեն, մեր նկարագիրն է, որը որքան անխաթար ըմբռնենք, այնքան ինքներս մեզ լավ կճանաչենք: Կգտնենք մեր տեղը այս աշխարհում ու անելիքը, ցավոք, ոչ այնքան երկար կյանքի ընթացքում: Ցավոք, որովհետև իմ խորին համոզմամբ ամեն հայ ծնվում է ազգային նվիրական նպատակներ իրագործելու համար եւ եթե չի գիտակցում այդ նպատակները կամ իրագործել չի հասցնում, հուսահատություն է ապրում: Կյանքն անիմաստ, անհեռանկար վատնելուց մեծ կորուստ կարող է լինել:

Ես մեծացել եմ Երեւանի արվարձանային՝ Ջանգլի քարափին տարածված Արարկիր թաղամասում: Այն իր տափակ կտուրներով, խոխոջուն առվակներով ու թթաստաններով հիշեցնում էր Արածանի ափամերձ Արարկիրը, որն արդեն հայաթափվել, փլատակների էր վերածվել: Մինչև հիմա չեմ մոռանում ու երբեք չեմ մոռանա, թե մեր թաղի արարկիրցի, ակնցի, ղեթունցի, կարինցի ծերունիները ինչպես էին հավաքվում այս կամ այն թթենու ստվերում ու կուռ-կուռ սուրճ ըմպելով կարոտում իրենց բնօրրանը: Ահավոր էր արդեն տարիքներն առած, կոտորած ու տեղահանություն տեսած, հայրենիք կորցրած տղամարդկանց մորմոքը, բայց ես նրանց հափշտակությամբ էի լսում: Ես

սիրում էի Արեւմտահայաստանի բոլոր գյուղերն ու քաղաքները, որոնք չէի էլ տեսել: Հետո չափահաս դարձա, սփյուռք գնալու հնարավորութիւն ունեցա ու համոզվեցի, որ այդպիսի հայ ծերունիներ կան աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Բայց երբ վերջին ակնցիներն ու զեյթունցիները, արարկիրցիներն ու կարինցիները հեռացան աշխարհից, տազնապով համակվեցի: Ինձ թվաց թե հորիզոնում մշուշվում, անդարձ կորչում է դրախտային մի աշխարհ՝ մե՛ր աշխարհը ու որ ամենասարսափելին էր՝ խզվում է մեզ մեր արմատներին միացնող այն կապը, առանց որի անհնար է պատկերացնել որեւէ երկրի ու ժողովրդի գոյութիւն:

Հիմա վաղուց արդեն չկա Զանգվի քարափի Արարկիրը, չկան մեր թաղի պատվասեր ու պատվարժան ծերունիները, ու որքան տարիներն անցնում են, այնքան ես նրանց հանդեպ չհատուցված պարտք, պարտավորութիւն եմ զգում: Թերեւս այդ հոգեկան, բարոյական պարտքը հատուցելու, մեր պատմական հայրենիքի հիշատակները գեթ մասամբ անդարձ կորստից փրկելու համար նախաձեռնեցի եւ շնորհիվ Մեսրոպ արք. Աշճյանի նախանձախնդրութեան, հետզհետե իրագործեցի Արեւմտահայաստանի բնօրրանների մասին պատմող վավերագրքերի հրատարակութիւնը: Արդեն լույս են տեսել, տարածվել են Սեբաստիայի Կովտուն, Բալուի Հավավ գյուղերը հանգամանորեն ներկայացնող հուշապատումները, որոնք ոչ միայն վերապրողների հավաստի վկայութիւններ են, այլ նաեւ կենցաղագրութիւն, ազգագրութիւն, տեղական բարբառի անաղարտ օգտագործմամբ սովորութիւնների ու ծեսերի նկարագրութիւն:

Ամերիկյան հյուպատոս Լեալի Դեւիսի այս գիրքը, ավելի ճիշտ զեկուցագիրը Նարբերդի մասին է, այն մասին, թե ինչպիսի դաժանութեամբ ու մոլագարութեամբ տեղահանվեց, ապա նաեւ բնաջնջվեց հազարավոր տարիներ իր խաղաղ ինքնութիւնը պահպանող հայ ազգաբնակչութիւնը: Իսկ

դա շատ կարեւոր է, որովհետեւ որքան էլ մեզ ուզեն հավատացնել՝ 1915 թվականը պատմութեան շրջված էջ չէ: Համազգային վիշտն այնքան խոր, ցավատանջ էր, որ անցնող տարիներին, անգամ տասնամյակներին մենք ի վիճակի չենք եղել մեր մեծագույն ողբերգութիւնը իմաստավորել, անհրաժեշտ հետեւութիւնների հանգել: Հավանաբար արդեն եկել է նաեւ դրա ժամանակը, որին, պետք է հուսալ ամերիկացի դիվանագետի անկողմնակալ ու հավաստի վկայութիւնները կնպաստեն:

Թող ամենեւին տարօրինակ չթվա այն հանգամանքը, որ Լեալի Դեւիսի՝ հայ ժողովրդին բնորոշող որոշ անվերապահ ձեւակերպումներ ու արտահայտութիւններ, որոնք հաշվետվութեան այլ լեզուների հրատարակիչները վիրավորական են համարել, կրճատել, հայ թարգմանիչը պահպանել է: Նախ ես կարծում եմ, որ արեւմտահայութեան ճակատագրով այդքան մտահոգված, կյանքի լավագույն տարիները բռնագաղթողների փրկութեանը նվիրաբերած ամերիկացի հյուպատոսը դրան դիմել է թուրքերի վստահութիւնը շահելու, զգոնութիւնը բթացնելու, ապա թերեւս վերապրողներին հիշեցնելու համար, որ չի կարելի ջարդերի ու աքսորի համար միմիայն թշնամուն մեղադրել, որ ամեն հայ իր մեջ սխալներ գտնելու, սխալներն ուղղելու վճռականութիւնը պիտի ունենա:

Իրոք, հայ ժողովուրդը սկսեց համազգային նպատակներ իրականացնել, բռնագրավված տարածքներ ազատագրել այն պահից, երբ հաղթահարեց զոհի հավերժական թվացող բարդութիւնն ու իր պատմական իրավունքները նաեւ զենքով պաշտպանելու արժանապատվութիւնը, վճռականութիւնն ունեցավ: Արդարութիւնը վերականգնելու ձգտումը երբեւէ ռազմատենչութիւն, այլատյացութիւն համարվե՞լ է:

Արցախի ազատագրութիւնը մեր անժամանցելի պա-

Հանձատիրութեան մի փուլը, Հանգրվանն է միայն: Քսանմեկերորդ դարի ժամացույցի սլաքները կշարունակեն ի նպաստ մեզ պտտվել, եթե մենք մեր պատմութեան վրա Հենվելով, պատմութեան դասերը յուրացնելով, ճշգրիտ Հետեւութիւններ անենք նախ եւ առաջ ապագայի Համար:

Ամերիկացի Հյուպատոս Լեսլի Դեւիսի վավերագիրը դրա գրավականն է:

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿՅԱՆ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Արարական թվատառերով ծանոթագրութիւնները տիկին Բլերինն են, Հայկականները՝ թարգմանչինը)

ՆԱԽԱԲԱՆ

1. Կայսերական Հրամանը ընդունվել էր նախարարների խորհրդի որոշմամբ, որը Հաստատել, վավերացրել էին սուլթանն ու Համապատասխան նախարարները: Կառավարական պաշտոնաթերթում «Տեղահանութեան» Հրամանը լույս է տեսել 1915 թվականի մայիսի 19-ի թիվ 2189-ում, ստորագրել են սուլթան Մուհամմեդ Ռեշադ 5-րդը, վարչապետ Սաիդ Հալիմ փաշան ու ռազմական նախարար էնվեր փաշան: Տեղահանութեան կանոնադրութեան մի օրինակը 1915-ի Հունիսին տպագրվել է Տրապիզոնի քաղաքային օրաթերթում, որից Հետո նահանգապետը Հանձնել է ամերիկյան Հյուպատոս Օսկար Հեյզերին, եւ այժմ պահպանվում է ԱՄՆ-ի Ազգային արխիվում: Հեյզերը, 1915 թվականի Հունիսի 28-ին, Հայերի բռնազաղթին առնչվող առաջին իսկ զեկուցագրով այն ուղարկել է պետդեպարտամենտին (Ազգային արխիվ, պետդեպարտամենտի դիվան, 59-ը խմբահամարի փաստաթղթեր, տասնորդական թղթապանակ, թիվ 867.4016/85): Արխիվային փաստաթղթերի Հետագա Հղումները կնշվեն Ա.Ա., Պ.Գ., Ն.Փ. Հապավումներով:

Ա. Տիկին Բլերի սկզբնաղբյուրը վստահելի չէ: Ըստ պաշտոնապես ընդունված վիճակագրութեան, ցեղասպանութեանը զոհ է գնացել առնվազն 1500000 Հայ:

2. Օսմանյան թուրքիայի կայսրութեան Հայ ազգաբնակչութեան թվաքանակը շարունակում է վիճելի մնալ: Զատին Մակարտին իր «Մահմեդականները եւ ազգային փոքրամասնութիւնները, օսմանյան Անատոլիայի ազգաբնակչութիւնը եւ կայսրութեան անկումը» (Նյու Յորք, 1983 թ.) գրքում նշում է, որ

Առաջին աշխարհամարտից առաջ ասիական նահանգների Հայ ազգաբնակչության թիվը հասել է 1493276-ի: Սա, ամենայն հավանականությամբ, փոքր ինչ նվազեցված թիվ է, քանի որ նրանք, որոնց թվում եւ ամերիկացի միսիոներներն ու բրիտանական դիվանագետ սիր Մարկ Սայկսը, ովքեր Առաջին աշխարհամարտից առաջ այցելել են արեւելյան նահանգները նշել են, որ Հայերը մարդահամարի կառավարական պաշտոնյաներից, այլ պետական ծառայողներից հաճախ թաքցրել են իրենց ազգությունը: Դա հատկապես վերաբերվել է գյուղական բնակչությանը: Միաժամանակ Մակկարտին արտամիջարկել է իր տրամադրության տակ եղած առավելագույն եւ նվազագույն թվերը՝ նվազագույնը համարելով թուրքական մարդահամարը, առավելագույնը՝ Հայկական աղբյուրների ավելի վաղ շրջանի տվյալները: Նա օգտագործել է նաեւ Վիտալ Գիննի «Ասիայի թուրքերը» (Փարիզ, 1890-1894 թթ.) գրքի վիճակագրությունը, որը բնակչության բնական աճի համեմատությամբ կարող էր հնացած լինել, եթե անգամ նկատի ունենանք 1890-ական թվականների եւ 1908 թվականի ջարդերի ընթացքում Հայերի անբնականորեն մեծ չափերի՝ զանգվածային կորուստները: Հայ գեղջկուհիները ազգաբնակչության բնականոն աճը կասեցնող ցեղասպանությունից հետո նույնիսկ ի Հայտ են բերել արտասովոր բարձր ծնելիություն (ապշեցուցիչ է, օրինակ, 1000 ծննդաբերության տարիքի կանանց 246,1 ծնելիությունը՝ ըստ դոկտոր Եվգենի Պրոստովի՝ Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին Ռուզվելտի վարչապետարանի համար պատրաստած հետախուզական հաշվետվության («M» նախագիծ): (Տե՛ս՝ արտագաղթի եւ ներբնակեցման ուսումնասիրությունը, R-102 գեկուցաշար, 11-ը դեկտեմբերի 1944 թ.): Եթե նույնիսկ ընդունենք թուրքական իջեցված թվաքանակը, որը մոտ երեք միլիոն էր ներկայացնում Հայերին, դարձյալ ցեղասպանության հասցրած երկարաժամկետ վնասն ահավոր կդառնա: Պետդեպարտամենտի ուսումնասիրություններն ու 1946 թվականի ապրիլի 10-ի «Հայկական ազգային ձգտումները»՝ թիվ 3485

վերլուծական հաշվետվությունը նշում են, որ այդ ժամանակ՝ 1915 թվականի զանգվածային բռնազաղթից երեք տասնամյակ անց աշխարհում եղել է 2968000 Հայ:

3. Վ. Պիտեր՝ դեսպան Մորգենթաուին, 4-ը դեկտեմբերի 1915 թ.: Այն քաղաքներում, որտեղ ԱՄՆ-ի առևտրական, այլ բնույթի շահերը պաշտպանելու համար ամերիկյան ներկայացուցիչների կարիք էր զգացվում, բայց համապատասխան դիվանագետներ չէին լինում, հաճախ Հյուսիսատոսական գործակալ էին նշանակվում չեզոք կամ բարեկամ երկրների քաղաքացիները: Պիտերի զեկուցումը գրված է Փրանսերեն՝ Առաջին աշխարհամարտի ժամանակների դիվանագիտական լեզվով (Ա.Ա., Պ.Դ., 59 Ն.Փ., թղթ. 867.4016/259):

4. Դեսպան Մորգենթաուին Հաղորդած տեղեկատվությունում Դեիսը մանրամասն շարադրում է դեսպանատուն առաքումներ կատարելու իր դժվարությունները (տե՛ս Ա.Ա., Պ.Դ., 59 Ն.Փ., թղթ. 867.4016/210B՝ Դեիսը Կոստանդնուպոլսի դեսպան Հենրի Մորգենթաուին): Հյուսիսատոս անձնական նամակներ ստանալու դժվարությունները ներկայացնում է 1915 թվականի սեպտեմբերի 26-ին պետդեպարտամենտ՝ պետքարտուղարին ուղարկած ճեպագրում (տե՛ս՝ Ա.Ա., Պ.Դ., 59 Ն.Փ., թղթ. 123D291/40):

Բ. Նոսքը 1919 թվականին Կոստանդնուպոլսում կազմակերպված ռազմական ատյանի դատավարության մասին է, որը հեռակա կարգով մահվան դատապարտեց ցեղասպանության գլխավոր հանցագործներին:

5. «Թուրքիայում Նարբերդի Հյուսիսատոսական ծառայության տեսչություն» 1913 թ. նոյեմբեր 20-23, (Ա.Ա., Պ.Դ., 59 Ն.Փ.):

6. Տե՛ս Մակկարտիի հիշատակված աշխատությունը, էջ 112:

7. Տե՛ս հավելվածը:

8. Սամսուն, Էրեզլի, Հալեպ, Նիզբին, Մարդին: 1917 թվականին, երբ Դեիսը, ԱՄՆ-ի դիվանագիտական ծառայությունների մյուս աշխատակիցները հեռանում էին Օսմանյան կայսրությունից, Դարդանելը փակ էր, ուղեւորությունը Սամսունով ու Սեւ ծովով՝ անհնար:

9. Սիր Մարկ Սայկսը այդ մարդկանց նկարագրում է իր երկու՝ «Նալիֆների վերջին ժառանգությունը» (Նյու Յորք, 1983 թ.) եւ «Դար-ուլ-իսլամ» (Լոնդոն, 1904 թ.) գրքերում, որոնք նվիրված են 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության արեւելյան նահանգները կատարած իր երկարատեւ ուղեւորություններին: Վերելում հիշատակված աշխատության մեջ (էջ 7, 30) Մակկարտին քննադատում է թուրքերի՝ մարդահամարի ժամանակ քրդերին եւ մյուս մուսուլմաններին միախառնելու, բոլորին մահմեդական համարելու սովորությունը:

10. Կրոնի փոփոխութեան Գեորգի Գյուրջիելը, որը մեծացել է Արեւելյան Թուրքիայում՝ Կարսում, իր «Հանդիպումներ նշանավոր անձանց հետ» ինքնակենսագրական գրքում (Նյու Յորք, 1969 թ. էջ 64-65) հանգամանորեն նկարագրում է կենցաղում հայտնի այն նախապաշարումը, ըստ որի, եթե եզդիի չուրջը, գետնին չըջան զծես, չի կարողանա դուրս գալ: Գյուրջիելը պատմում է, որ այդպիսի դեպքի ականատես է եղել Ալեքսանդրապոլում (Գյումրիում-Թարգմ.), երբ խաղաչրապարակում եզդի երեխայի չուրջը չըջան են զծել: Նրանք, ումից Գյուրջիելը հարցրել է պատճառը, տարբեր կերպ են մեկնաբանել, վերագրելով կամ անոտիապաշտությունը կամ էլ նախապաշարումի:

11. Տե՛ս Ա.Ա., Պ.Դ., 59 Խ.Փ., թղթ.123L, 367.116 շաբլոն՝ ամենուր:

12. Լեսլի Ա. Դեիսը Նարբերդից Կոստանդնուպոլիս՝ ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուին՝ 1915 թ. Հուլիսի 24-ին հղած զեկուցագիրը կցված է Հոֆման Ֆիլիպի՝ Կոստանդնուպոլսում Միացյալ Նահանգների քարտուղարի (գործերի կառա-

վարչի) 1916 թ. փետրվարի 17-ի հաշվետվությանը՝ Ա.Ա., Պ.Դ., 59 Խ.Փ., թղթ. 867.4016/269: Դեիսի՝ դեսպանատուն ուղարկած այդ զեկուցագրի առաջին օրինակը երբեք էլ հասցեատիրոջը չի հասել, ինչպես նաեւ մի շարք այլ հաղորդումներ, որոնցում նկարագրել է հայերի վիճակը: Որպես դեսպանատան հարցման պատասխան նա ուղարկել է երկրորդ օրինակները:

13. Պետդեպարտամենտի Լեսլի Ա. Դեիսի անձնական թերթիկը (Ա.Ա., Պ.Դ., 59 Խ.Փ.):

14. Տեսուչը, ում մասին կարելի է ասել, որ միտումնավոր է որակավորել Դեիսին, նրան բնութագրում է որպես «անտաշ գյուղացի տղայի», որի շարժումները «այնքան էլ ընդունելի չէ ամերիկյան ընտրյալ միջավայրում»: Գոտշուկը գտել է, որ Դեիսը ընկերային կամ գործնական շփումների փորձ չունի՝ այն Դեիսը, որը մի քանի տարի իրավաբան է եղել Մանհեթենի գործարար շրջաններում:

Այնուամենայնիվ Մամուրեթ-ուլ-Ազիզում Դեիսի նախորդի բնութագրականում, չնայած Հյուպատոսական հաշվետվությունները ոչ ճիշտ կազմելու, հաշվապահական գործերը վարել չկարողանալու, ամերիկյան քաղաքացիների առողջության տվյալները, այլ գրանցումները թերի կատարելու եւ ծառայողական անձնակազմը ըստ էության չղեկավարելու քննադատական դիտողություններին, Գոտշուկը երաշխավորում է պաշտոնի բարձրացման համար, նկատի ունենալով գորգ եւ կահույք ընտրելու լավ ճաշակը՝ «Ռուսաստանում՝ Բաթումում Հյուպատոսական ծառայության տեսչություն» 1913 թվականի հոկտեմբերի 22-ից 25-ը (Ա.Ա., Պ.Դ., 59 Խ.Փ.):

15. Ա.Ա., Պ.Դ., 59 Խ.Փ., թղթ.123D291 -ում եւ ամենուր:

16. Նույն տեղում:

17. Լեսլի Ա. Դեիսի անձնական թերթիկն ու գործը, պետդեպարտամենտի թղթապանակներ, Ազգային արխիվ եւ վարչական արձանագրությունների գլխավոր ու լիազոր Հյուպատոս

Ա.Լ.Մ. Գոտշուկի տեսչական ղեկույցը՝ Բաթում, 22-25-ը հոկտեմբերի, 1913 թ. (59 Ն.Փ., թղթ. 123D291):

18. Ամերիկա-թուրքական հարաբերությունների պատմությանն առավել ամբողջական ծանոթանալու համար տե՛ս Ռոբերտ Լ. Դանիելի «Ամերիկյան մարդասիրությունը Մերձավոր Արևելքում՝ 1820-1960 թթ.» (Օհայո, 1970 թ.) եւ Ժոզեֆ Լ. Գրարիլի «Ավետարանչական դիվանագիտությունը Մերձավոր Արևելքում» (Միններապոլիս, 1971 թ.) աշխատությունները:

19. Ջեյմս Լ. Բարտոն՝ Արտասահմանյան առաքելությունների ամերիկյան լիազոր խորհրդի արտերկրի քարտուղարը պետքարտուղար Ռոբերտ Լանսինգին, 6-ը ապրիլի, 1916 թ. (Ա.Ա., Պ.Դ., 59 Ն.Փ., թղթ. 367.116/469):

20. Նույն տեղում:

Գ. Ամերիկյան քաղաքական կազմակերպություն, որը Նյու Յորքում ստեղծվել է անկախության պատերազմից հետո: Հայտնի է իր կոմսիտությունը ու կաշառակերությունը:

21. Տե՛ս՝ սիր Հենրի Մորգենթաուի՝ «Դեսպան Մորգենթաուի հուշերը», (Գարդեն սիթի, Նյու Յորք, 1918 թ. էջ 14), ինչպես նաև Ֆրանկլին Դելանո Ռուզվելտի գրադարանում, Հենրի Մորգենթաուի թղթերի 7-րդ եւ 8-րդ պահեստաարկղներում պահվող 1915 թվականի օգոստոս եւ սեպտեմբեր ամիսներին տուն գրած նամակները: Երիտթուրքերի առաջնորդներին համեմատելով ամերիկյան քաղաքական ղեկավարների հետ, Մորգենթաուն իր պնդումը հիմնավորում է հետեւյալ բացատրությամբ. «Թուրքերն իրենց համակարգում ավելացրել են մի մանրամասն, որն ամերիկյան քաղաքականության մեջ լայնորեն չի կիրառվում՝ ահաբեկչական գործողություններ եւ օրինականացված սպանություններ» («Մորգենթաուի հուշերը», էջ 15):

Դ. Կրոնական ուսմունք, որն ընդունում է Հիսուս Քրիստոսի միայն մի՝ աստվածային ընույթը:

22. Տե՛ս՝ Լորդ Կինրոս, «Օսմանյան դարեր՝ թուրքական կայսրության վերելքն ու անկումը» (Նյու Յորք, 1977 թ.) եւ այլուր՝ Գրարիլ՝ «Ավետարանչական դիվանագիտությունը», էջ 11, Ստեփան Գ. Սվաճյան՝ «Ուղեւորություն հայկական պատմության միջով» (Նյու Յորք, 1977 թ.) գրքերը:

23. Բեռնար Լեիս, «Ժամանակակից Թուրքիայի ստեղծումը» (Լոնդոն, 1961 թ.), էջ 203-205:

24. Թուրք նշանավոր լրագրող Ահմեդ էմին Յլմանը, որը սերտորեն համագործակցել է «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեի ղեկավարների հետ, «Թուրքիան եւ իմ ժամանակը» հուշերի գրքում հավատացնում է, որ Գյուկալպը «եղել է կանխագուշակ եւ երիտթուրքական հեղափոխության մեջ աստվածաշնչյան մարգարեի դեր է կատարել: Նա դարձել է «Միություն եւ առաջադիմություն» կենտրոնական կոմիտեի ամենաազդեցիկ անդամներից մեկը, կոմիտե, որը պատերազմի տարիներին կառավարում էր Թուրքիան: Զիա Գյուկալպին, ավելի քան որեւէ մեկ ուրիշի է պատկանում պատմական փաստերը վերլուծողի եւ թուրքական մշակույթի հին ավանդույթներով, թուրքական նպատակամետ գերիշխանականությամբ ազգային հպարտությունն ոգեշնչողի ու ոգեկոչողի դերը»: (Նորման, Օկլահոմա, 1956 թ., էջ 34-35, տե՛ս նաև էռնեստ էդմոնդսոն Ռամասոների «Երիտթուրքերը, 1908 թվականի հեղափոխության նախասկիզբը» (Պրինստոն, 1957 թ.), ինչպես եւ Շերիֆ Մարդինի «Երիտասարդ օսմանցիների գաղափարախոսական ծագումնաբանությունը» (Պրինստոն, 1962 թ.):

Ե. Ոոսքը Հայկական Տավրոսի Ծովք (հետագայում Գյուջուկ, Ոսղար) լճի մասին է, որից սկիզբ է առնում Արեւմտյան Տիգրիսը:

25. Հենրի Հ. Ռիցի «Անձնական փորձառություններ՝ Կարպուտ (Նարբերդ)՝ 1915-1917 թթ.» գրքից, տեղեկատվական փաստաթուղթ 482, խաղաղության բանակցությունների ամե-

րիկյան Հանձաժողովի ղեկուցագիր (Ա.Ա., Պ.Դ., Խ.Փ. 256, էջ 166-168):

26. Արեւելյան Լիբանանում՝ Անտիլիբանանյան լեռան ստորոտում, սիրիական սահմանի մոտ գտնվող Այնճար գյուղը Հիմնվել է որպես տեղահանված Հայերի բնակավայր: Հայտնի է ձկնաբուծական կայաններով:

27. Բեքաաի դաշտավայրում՝ Դամասկոս տանող ճանապարհին, մոտ չորս հազար հայ ազգաբնակչություն ունեցող գյուղը Հիմնադրել են Մուսա լեռան շրջանի տարագիրները: Նրանք են տնկել խնձորի նշանավոր այգիները, որոնց բերքը արտահանվում է ընդհուպ Ֆրանսիա (տե՛ս ՀՍՀ, 1-ին Հատոր, էջ 347):

28. Մակ-Դանիելը սխալ է հիշում Հյուսիսային «առետրական կցորդի» անունը, բայց անդրադառնում է, որ ոչ թե անմիջապես, ավելի ուշ է գրել: Վողսվորտ անունով մարդ երբեք չի ապրել Նարբերդում:

29. Ա.Ա., Պ.Դ., 59 Խ.Փ., Տ.Թ., Թղթ. 126.4633/18, 20, 33: Պետրոսյանը Հյուսիսային շրջանի ղեկավար է ընդհուպ 1922 թվականի օգոստոսը: Դեիսը որպես ձիապան ու պահակ աշխատանքի է ընդունել նաև Պետրոսյանի աներոջը՝ Գրիգոր Մաղաքյանին: Դրանով, ամենայն հավանականությամբ, փրկել է նրա կյանքը:

30. Դեիսը պետք է պարտամենտի քարտուղարին, Պորտ Զեֆֆերոսին, Նյու Յորք, 18-ը Հոկտեմբերի 1917 թ., պետք է պարտամենտի տեղեկագրություն, 59 Խ.Փ., Թղթ. 125.4632/7:

31. Ա.Ա., Պ.Դ., 59 Խ.Փ., Դեիսը պետք է քարտուղարին, Թղթ. 123D291/61:

32. Ա.Ա., Պ.Դ., 256 Խ.Փ., խաղաղության բանակցությունների ամբերիկյան Հանձաժողովի ղեկուցագիր, տեղեկատվական փաստաթուղթ 810:

33. Պետրոսյանը Պաուտկետում, Ռոդ Այլենդ, Վիլբուր Զ. Կարրին, 25-ը Հուլիսի 1923 թ., Դեիսի անձնական գործում:

34. Նարբերդի մասին տեղեկատվական այլ՝ Հայկական աղբյուր է Նազարեթ Փիրանյանի «Նարբերդի աղետը» գիրքը (Բեյրութ, «Պայքար» հրատարակչություն, 1937 թ.: Տե՛ս Հատկապես 128-129 էջերը):

35. Միսս Ռիցը վարժ խոսել է թուրքերեն ու Հայերեն (Ա.Ա., Պ.Դ., 256 Խ.Փ. տեղեկատվական փաստաթուղթ 808): Հրապարակված է:

36. Ա.Ա., Պ.Դ., 59 Խ.Փ., Թղթ. 123D291/57, Դեիսը պետք է քարտուղարին, 30-ը նոյեմբերի 1917 թ.

37. Ա.Ա., Պ.Դ., 59 Խ.Փ., Թղթ. 123D291/58, Ռիցը Վիլբուր Զ. Կարրին, 3-ը ղեկտեմբերի 1917 թ.

38. Ա.Ա., Պ.Դ., 59 Խ.Փ., Թղթ. 123D291/59, Բարտոնը պետք է քարտուղարին, 11-ը ղեկտեմբերի 1917 թ.

39. Ա.Ա., Պ.Դ., 59 Խ.Փ., Թղթ. 123D291/56, Դեիսը պետք է քարտուղարին, 30-ը նոյեմբերի 1917 թ. եւ Վիլբուր Զ. Կարրը Դեիսին, 2-ը Հունվարի 1918 թ.

40. Ա.Ա., Պ.Դ., 59 Խ.Փ., Թղթ. 123D291, ամենուր:

41. Նույն տեղում:

42. Լեսլի Ա. Դեիսի անձնական թերթիկն ու գործը, պետք է պարտամենտի թղթապանակներ, Ազգային արխիվ եւ վարչական արձանագրություններ, ինչպես նաև գլխավոր եւ լիազոր Հյուսիսային Ա. Լ. Մ. Գոտշոլկի տեսչական ղեկույցը՝ Բաթում, 22-25-ը Հոկտեմբերի 1913 թ. (59 Խ.Փ., Թղթ. 123D291):

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Միսոր կարրը իրավաբանական կրթություն ունեն, պետ-
ղեպարտամենտի բազմափորձ պաշտոնյաներից էր, սակայն
մինչ այդ դեռևս արտասահմանում չէր ծառայել:

2. Դեւիսն ինքն է այդպես խորագրել իր հաշվետվությունը:
Բնօրինակը պահպանվում է Ազգային արխիվի պետղեպարտա-
մենտի դիվանում՝ 59 Ն.Փ., թղթ. 867:

3. Բեռլին-Բաղդադ երկաթգծի հանրահայտ նախագիծը, որի
չինարարությունը ձեռնարկել էին գերմանացիները, ասում են
Վիլհելմ 2-րդ կայսերը չափազանց շատ էր հավանել: Երկաթգծի
կառուցապատումը չնայած Առաջին աշխարհամարտի վերջում
դեռևս ավարտված չէր, անգլիացիները բրիտանական Հնդկաս-
տանի հանդեպ գերմանական սպառնալիք էին համարում: Մեծ
Բրիտանիան դեմ էր նաև Միջագետքի նավթային հարուստ շր-
ջանում գերմանական առևտրական գերակայության հաս-
տատմանը, ինչի համար կառուցվում էր երկաթգիծը:

4. 1914-ի օգոստոսին Եգիպտոսից Նարբերդ վերադառնա-
լիս, քանի որ Թուրքական զինուժը զորահավաք էր ենթարկ-
վում, Դեւիսը ճանապարհին, ամենուր տեսնում է քաղցից ու ծա-
րավից տանջվող նորակոչիկների, որովհետև կառավարու-
թյունը նրանց բավարար քանակությունը պաշար ապահովելու հա-
մար ոչինչ չէր արել: «Ինձ հայտնեցին, որ ուրֆացի երեք զինա-
կոչիկներ, երկուսը մահմեդական, մեկը՝ քրիստոնյա, քաղցից ու
հիվանդություններից մահացել են Այնթապի (Գաղիայնիսթար)
ճանապարհին»: Դեւիսը գրում է պետքարտուղարին. «Ասում են
իրր այստեղ, մեկ գիշերվա ընթացքում, զորանոցից երեք հար-
յուր դասալիք է փախել»: Նա անընդհատ հյուժված ու քաղցած
զորակոչիկների «անվերջանալի հեղեղ» է տեսնում, որոնք մին-
չևս անգամ իրենից հաց են մուրում: «Մինչդեռ պետք էր ենթադ-
րել, որ Թուրքական կառավարությունն իր բանակի զինվորնե-

րին ավելի լավ կվերաբերվի, քան տարագրվող հայերին» (Տե՛ս՝
Դեւիսը պետքարտուղարին, 3-ը սեպտեմբերի, 1914 թ. Ա.Ա.,
Պ.Դ., 59 Ն.Փ., թղթ. 123D291/31):

5. Այդպես էին կոչվում տեղական, նախնադարյան հյուրա-
նոցները:

6. Այդ խաները լեցուն էին մակարոյծ միջատներով, որոնք
հաճախ մահ հարուցող ժանտատենդ էին տարածում: Պատե-
րազմի տարիներին Թուրքական բանակի պայմանները նպաս-
տում էին ժանտատենդի բռնկմանը, որն ասում էին ավելի շատ
զինվոր է շարքից հանել, քան ուսական բանակը: Այդ «հյուրա-
նոցներում» գիշերող ամերիկացի ճանապարհորդները հաճախ
իրենց ծալովի մահճակալի ոտքերը ջրով լցված թասերի մեջ էին
դնում, որպեսզի խուսափեն գիշերային անկոչ այցելուներից:

7. Լեյտենանտ Մաքս էրվին Շյոբներ-Ռիխտերը էրզրումում
գերմանական հյուպատոս է եղել 1915 թվականին: Գերմանիայի
դեսպան Հանս Ֆրեյզեր Ֆոն Վանդենհայնը հյուպատոսին
հանձնարարել է հայերի հալածանքների վերաբերյալ «Սպիտակ
գիրք» պատրաստել: Շյոբներ-Ռիխտերը Բիթլիս է գնացել
1915-ի սեպտեմբերին, որպեսզի ուսումնասիրի մի գերմանացի
միսիոնների մահվան պատճառները: Նույն ժամանակ այդ ար-
յունուշտ քաղաքում դեռևս շարունակվում էր հայերի կոտո-
րածը: Երկրորդ անգամ Շյոբներ-Ռիխտերի պատմական ասպա-
րեզում հայտնվելը բավական վարկաբեկիչ է՝ ըստ գերմանացի
գիտնական Ուլրիխ Տրամպենների նա եղել է Հիտլերի վաղ շրջա-
նի համախոհներից մեկը եւ որպես Ֆյուրերի կողմնակից 1923-ի
նոյեմբերին, Մյունխենի խռովության ժամանակ սպանվել է
(Տե՛ս՝ Auswartiges amt (Արտգործնախարարություն), Թուրքիա
138, Bd 36 ամենուր, ինչպես նաև Տրամպեններ՝ «Գերմանիան եւ
Օսմանյան կայսրությունը՝ 1914-1918» գրքերը, Պրինստոն,
1968 թ., էջ 207):

8. Այժմ էյազըզ է կոչվում:

9. Քրդերը մերձավոր Արեւելքի ժողովուրդներից են, ենթադրվում է, որ Հինավուրց Կորդուենի ժառանգորդներն են: Կարծիք կա, որ նրանք արիական ծագում ունեն, ապրում են մի տարածաշրջանում, որը Հարավային Կովկասից Հասնում է Թուրքահայաստան, Հյուսիսային Իրաքից՝ Հյուսիսային Իրան: Առաջին աշխարհամարտի տարիներին քրդերի մեծամասնությունը քոչվոր էր, ձմռանը Հաստատվում էին Հայկական բարձրավանդակում, Հայկական գյուղերի միջև, ամռանը շարժվում դեպի Հյուսիս՝ Կովկաս: Նրանք վայրենաբարո ու դաժան, բայց իրենց օջախում Հյուրընկալ ժողովրդի Համբավ ունեին: Քրդուհիներն ավելի ազատ էին, քան նույնիսկ Մերձավոր Արեւելքի քրիստոնյա կանայք: Նրանք առանց քողի էին շրջում, միայն Թուրքերի Հանդիպելիս էին ծածկում դեմքները:

10. Դեւիսը սկզբնական շրջանում ենթատարածքի Հայերի թիվը ավելի շուտ 100000, քան թե 150000 է Համարում, բայց Հետո՝ 1918-ի փետրվարի 26-ին պետքարտուղարին ուղարկած նամակում ճշտում է այդ տվյալները: Խարբերդի Հայ ազգաբնակչությունը կենտրոնացած էր Հին քաղաքում, որը, երբ 1919-ին ամերիկացիները վերադարձել են, ըստ էության ավերակի է վերածված եղել: Ասում են քաղաքի անունը ծագել է Հին քաղաքը շրջապատող ամրոցի «Բարե բերդ» Հայկական անվանումից:

11. Առաջին ամերիկացի միսիոներին, որը Հաստատվել է Խարբերդի շրջանում, Հայ գյուղացիների կենցաղը, Հիրավի, ապշեցրել է: Գյուղերը Հեռվից Հողակույտերի են նման եղել: Ամեն ընտանիք առանձին, առանց պատուհանի բլրածե շինություն է ունեցել, օդափոխություն միակ միջոցը դուռը, տանիքի կենտրոնում բացված կլոր անցք է եղել, որի տակ վառվել է օջախը: Ընտանի կենդանիները նույն Հարկի տակ, միջնապատով բաժանված, իրենց Համար առանձացված անկյունում են ապրել: Փայտի պակասության պատճառով օջախը վառել են չորացած թրիքի ծեփոններով: Այդ խոնավ, մութ կառույցներն են միսիոներները

Համարել Հայերի վատ առողջության, բնավորության ընկճվածության պատճառներն ու շատ արագ իրենց Համար կառուցել են ամուր Հիմքերով, բազմաթիվ պատուհաններով առանձնատներ:

Միսիոներները ողջունել են Հայերի՝ ամերիկյան ոճի տները ընդօրինակելու փորձերը, ուրախացել են այնպես, ինչպես այն ժամանակ, երբ Հայերը Հայկական առաքելական եկեղեցուց չեղվել, բողոքականությունն են Հարել: Ում Հետաքրքրում է միսիոներների՝ «մշակութային կայսերապաշտության» խոշոր ներդրումը, կարող է կարդալ միստր Ս.Ա. Ուիլլերի «Daughters of Armenia» («Հայաստանի դուստրերը»), Նյու Յորք, ամերիկյան «Տրակտ» ընկերակցություն, 1877 թ. գիրքը: Միստր Ուիլլերի կինը եղել է Եփրատ քոլեջի առաջին տնօրենը: Նա, Հաճախ, ամուսինների կամքին Հակառակ, Հայ գեղջկուհիներին Ավետարան ընթերցել է սովորեցրել:

12. Արճիճ եւ պղինձ Հայտնաբերվել է Խարբերդի Հարավում, պղինձ՝ Դիարբեքի ճանապարհին՝ Բաքրում, արճիճ՝ Արխանայում եւ Մաղենում: ԱՄՆ-ի առեւտուրն այդ տարածաշրջանում սահմանափակվում էր Ջինգեր կարի մեքենայի խանութով, որի տնօրինողներն ու մշտական Հաճախորդները Հայերն էին:

13. Վերապատվելի Ջեյմս Լ. Բարտոնը՝ Արտասահմանյան առաքելությունների ամերիկյան լիազոր խորհրդի (Եկեղեցիների միաբանության եւ Հիսուս Քրիստոսի եկեղեցու միսիոներական ընդհանուր ծրագրի) արտասահմանյան քարտուղարը, 1914 թվականին արտասահմանում ավելի մեծաքանակ անձնակազմ ուներ, ավելի շատ երկրների Հետ էր առնչվում, քան պետքարտուղարը: Նա իր գործունեությունը որպես միսիոներ սկսել էր Խարբերդում, որոշ ժամանակ եղել Եփրատ քոլեջի տնօրենը: «Հայկական քոլեջը» «Եփրատ քոլեջ» վերանվանվեց Թուրքերին չվիրավորելու Համար, որոնք Հիվանդագին էին ընդունում տարածաշրջանի նախաթուրքական պատմության ամեն մի Հիշատակություն:

14. Ղավազ էին կոչվում դեսպանատների կամ Հյուպատոսարանների պահապան-թիկնապահները: Արտահայտությունը տարածված էր ոչ միայն Օսմանյան Թուրքիայում:

15. Պատերազմի վերջում Սարիթ բեյը պատասխանատվության ենթարկվեց այն դերի համար, որ խաղացել էր Հայերին հալածելու գործում: Նրան մեղադրում էին նաև Հայերի ունեցվածքի հափշտակությանը մասնակցելու համար, որը, ինչպես ենթադրվում էր, պիտի բռնագրավվեր «Միություն և առաջադիմություն» կոմիտեի, երիտթուրքերի կուսակցության օգտին:

16. Օսմանյան կայսրությունում արտասահմանյան քաղաքացիներին արտոնություններ սկսեցին շնորհել 1535 թվականից, երբ կնքվեց Ֆրանսա-թուրքական պայմանագիրը: Ըստ այդ առանձնաշնորհումների՝ արտասահմանցիներին Թուրքիայում պիտի դատեր ոչ թե տեղի, այլ իրենց երկրի Հյուպատոսական դատարանը: Բացի դրանից, օտարահպատակներն իրավունք ունեին թուրքերին հավասար առեւտրով զբաղվել, ապրանքների ներկրման ու արտահանման համար որոշ տուրքերից ազատվել: Մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը Ֆրանսիացիներն ու անգլիացիները նույնիսկ իրենց փոստային համակարգը ունեին: Քսաներորդ դարասկզբին այդ արտոնությունները թուրքական կառավարության համար տնտեսական բեռ դարձան, որը եվրոպական դրամատներին ունեցած ահռելի պարտքերը վճարելու համար խոշոր եկամուտների խիստ կարիք էր զգում: 1914 թվականի օգոստոսի 2-ի՝ գերմանա-թուրքական գաղտնի պայմանագիրը հավաստում էր, որ Գերմանիան պատրաստ էր Կապիտուլյացիայի վերացումը պաշտպանել: Բրիտանական, ֆրանսիական, ռուսական կառավարությունները չգիտեին այդ գաղտնի դավադրության մասին, դեռևս հույս ունեին, որ Թուրքիային կներգրավեն իրենց կողմը, սակայն վերջինս իրավիճակից օգտվելով, 1914 թվականի սեպտեմբերի 8-ին հայտարարեց Կապիտուլյացիայի միակողմանի վերացման մասին: ԱՄՆ-ի կառավարությունը չընդունեց առանձաշնորհումների արգելումը:

17. Եվրոպական «Բարձր դուռ» արտահայտությունը թեև ծագել է Հին թուրքական՝ պատվիրակներին կամ Հյուրերին պալատի մուտքի մոտ ընդունելու սովորությունից: Սուլթանը կամ խալիֆը իր երկրում Ալլահին էր ներկայացնում: Ժամանակին «Բարձր դուռ» ասելով ընդհանրապես Օսմանյան կայսրությունն էին պատկերացնում, բայց հետո սկսեցին գործածել արտաքին գործերի նախարարության իմաստով:

18. Նոսքը մահմեդականների կարմիր Նաչի մասին է, որը թուրքական կառավարությունը ավելի խիստ էր վերահսկում, քան Եվրոպայում և Ամերիկայում են վարվում նույնանման կազմակերպության նկատմամբ:

19. Այժմ թուրքական կառավարությունը մեղադրում է տեղական իշխանություններին 1915 թվականին և հետո Հայերի նկատմամբ գործադրվող ցանկացած խստություն և պատժամիջոց՝ ավելորդ չափազանցությունների, անհեթեթ ծայրահեղության հասցնելու համար: Սակայն ամբողջ կայսրությունում Հայերի հանդեպ գործադրվող միջոցների միակերպությունը, 1915-ին տեղական իշխանությունների մշտական հայտարարությունները, թե սոսկ Հրաման են կատարում, ժխտում են նման պնդումները, այնպես, ինչպես թուրքական ռազմական ատյանի՝ Հանցագործների դատավարության ընթացքում հրապարակված վկայությունները:

20. Թուրքական առաջնորդներն իրենց այդպես էին պահում նաև խորհրդարանում: Դեսպան Մորգենթաուն իր 1915 թվականի օրագրում շատ հաճախ է նշում, որ ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը, երբ իրեն դիմում էին, ընդունակ էր խղճալ առանձին Հայերի, բայց ամբողջ ժողովրդի նկատմամբ մարդկային լինելու հորդորների հանդեպ անհողողղ էր մնում:

21. Չչիոթել անհամեմատ երիտասարդ Հաֆիզ Հաքքի փաշայի հետ, որին ռազմական նախարար էնվեր փաշան, 1914-15 թթ. ձմեռային ամոթալի պարտությունից հետո նշանակեց կով-

իրեն: «Շատ նամակների գրաքննիչը Կոստանդնուպոլսում հրա-
ժարվում է ընթացք տալ սոսկ այն բանի համար, որ չափազանց
երկար են...»: Նման նամակներից Դեւիսին սովորաբար հաս-
նում էին միայն առաջին ու վերջին էջերը, մնացածը պատռված
էր լինում: «Վերջին ժամանակները,- վերհիշել է Դեւիսը,-
գրաքննիչը ծրարի վրա մի քանի անգամ մեկ-երկու բառով առա-
ջարկեց նամակները համառոտ դարձնել: Նամակներից մեկում
երկտող էր դրել, առանձնահատուկ նշել. «Ավելի լավ է ձեր թղ-
թակիցներին խորհուրդ տաք կարճ գրեն, քանի որ երկար նա-
մակները հասցեատիրոջը երբեք չհասնելու սովորությունն ու-
նեն»՝ Դեւիսը՝ պետքարտուղարին, 29.09.1915 թ., թղթապա-
նակ 123D291/40:

29. Այն քաղաքներից ստացված տվյալները, որտեղ տեղա-
կայված էին Կովկասյան բանակի զորամիավորումները, վկայում
են ժանտատենդից ամենօրյա մահացածությունների ահռելի չափերի
մասին: Գերմանացի զեներալ Լիման ֆոն Սանդերսը մեջբերում
է կատարում պաշտոնական հաշվետվությունից, որը հաղոր-
դում է, որ այդ ձմեռ Սարիղամիշի մատույցներում ռուսներին դի-
մագրաված երրորդ բանակի 90000 զինվորներից վերադարձել
են 12000-ը, մնացածը մահացել է սառնամանիքից կամ ուժաս-
պառությունից, ինչպես նաև սպանվել, գերի է ընկել: Փրկվող-
ներն ավելի ուշ դո՛հ են գնացել որովայնային կամ բժավոր ժան-
տատենդին:

30. Պրոֆեսոր Թենեքեջյանից բացի գործնականում հայեր
էին Եփրատ քուլեջի, Պարբերդի հյուպատոսական ենթատարած-
քի միսիոներական բոլոր տարրական ու միջնակարգ դպրոցների
ոչ ամերիկացի մանկավարժները:

31. 1917 թվականին Թուրքական կառավարությունը լույս
ընծայեց «Հայկական կոմիտեների հեղափոխական ձգտումներն
ու գործունեությունը օսմանյան սահմանադրության հռչակու-
մից առաջ եւ հետո» խորագրով մի գիրք, որտեղ փորձում էր ար-
դարացնել Հայերի հանդեպ դրսևւորված վերաբերմունքը: Գր-

քում տեղ են գտել նաև զենքերի բազմաթիվ լուսանկարներ,
որոնք, իբր, բռնագրավվել էին Հայերից: Շատ լուսանկարներում
պատկերված են գերմանական զենքերի վերջին նմուշները՝ բա-
նակային հրացաններ ու ինքնաշարժ մաուզերներ, որոնք 1917
թվականին շատ բարձր էին գնահատում թուրք զինվորական
սպաները: Նման զենքերը այդ ժամանակ՝ այսինքն 1915-ի առա-
ջին կեսին բացարձակապես անգտանելի էին Օսմանյան կայս-
րությունում, ուստի չէին կարող հայերը ձեռք բերած լինել: Մի
քանի լուսանկարներ ներկայացնում են մաշված, հնաճո՛ր որսոր-
դական հրացաններ, թրեր, որոնք այդ օրերին հնարավոր է, որ
գտնվեին Հայերի մոտ, քանի որ 1908 թվականի հեղաշրջումից
հետո զենք կրելու թույլտվություն ստացել էին: Թուրքական այդ
գրքից մի օրինակ պահվում է Ազգային արխիվում (59 խմբահա-
մար): Օսմանյան կայսրություն տարբեր քաղաքներում բնակվող
ամերիկացիներն ու գերմանացիները նույնպես հայտնել են Հա-
յերի նկատմամբ դրսևւորվող նման վերաբերմունքի մասին:

32. Միսիոներները պարզագույն ծածկագիր ունեին, որը օգ-
տագործում էին միմիայն բացառիկ հաղորդումների համար:
Քանի որ պատերազմ էր, թուրքական իշխանությունները դրան
այլ կերպ էին նայում, գաղտնի հաղորդակցության նույնիսկ
ամենաանմեղ փորձերին կասկածով էին վերաբերվում:

33. 1915 թվականի մայիսի 6-ին Դեւիսը տասնինը էջանոց
գեկուցագիր է գրել, թվարկել պատճառները, որոնց համար
հյուպատոսարանը չպետք էր Դիարբեքի փոխադրել՝ Ա.Ա.,
Պ.Գ., 59 Խ.Փ., 195.463/1:

34. Հայկական առաքելական, կաթոլիկական եկեղեցիների
բազմաթիվ քահանաներ, եպիսկոպոսներ ու արքեպիսկոպոս-
ներ, ինչպես նաև կաթոլիկ միանձնուհիներ ու ավետարանչա-
կան պատվելիներ Հայ մտավորականության հետ սպանվեցին:
Ազգային առաջնորդող ուժերը այնպես հիմնավոր էին բնաջնջ-
վել 1915-ին, որ Հայ ժողովրդին, վերականգնելու համար, տաս-
նամյակներ հարկ եղավ:

35. Ինձ չհաջողվեց գտնել Հաղորդագրություն պատճենը ոչ Հյուպատոսարանի, ոչ էլ պետղեպարտամենտի արխիվում:

36. Այդ նույն ճանապարհով 1914-ի ամռանը Դեւիսը Պարբերդից եզիպտոս էր Հասել, Հետ վերադարձել:

37. Հանձնախումբը ստեղծվել էր կայսերական հրամանագրով, որը կազմել էր «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեն, սուլթանական կնիքով վավերացվել էր 1915 թվականի սեպտեմբերի 13-ին: Դա Հայերի տեղահանությունը (14-ը մայիսի 1915 թ.) նախապատրաստող հրամաններից մեկն էր, ըստ որի նրանց սեփականությունը պիտի անցնեի Հանձնախմբին, ունեցվածքը պետականացվեր (26-ը հոկտեմբերի 1915 թ.), չեղյալ համարվեր 1863 թվականի օսմանյան սահմանադրությունը, որը Հայերին ներքին ինքնակառավարման որոշ իրավունքներ էր տվել, արգելեր Երուսաղեմի եւ Կոստանդնուպոլսի (28-ը հուլիսի 1916 թ.) պատրիարքարանների գործունեությունը: Դեւիսը թյուրիմացաբար է հանձնախումբը «Լքված կայքի» կոչում:

38. Ռուսական սահմանից ոչ հեռու փոքրիկ գյուղ է:

39. Տիկին (Թուրքերեն):

40. Տարագրություն կայսերական օրենսդրության, Հետագա հրամանների համաձայն Հայերին արգելվում էր իրենց անձնական ունեցվածքը որեւէ մեկին հանձնել:

41. Ձիերը, ավանակներն ու եզները դեռեւս մեկ տարի առաջ բռնագրավել էին բանակի կարիքների համար: Թիկունքում շատ քիչ անասուն էր մնացել:

42. Այդ հանցախմբերը ստեղծել էր «Թեչքիլաթը մահսուսե» կամ հատուկ կազմակերպությունը՝ դոկտոր Բեհաէդդին Շաքիրբեյի գլխավորությամբ: Նա երիտթուրքերի այն կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամն էր, որը պատերազմի տարիներին, որպես բռնապետական խմբիչխանություն, ղեկավարեց Օսմանյան կայսրությունը: Կառավարությունը հանցագործներ-

րին բանտերից ազատեց, զինեց, հատուկ համազգեստ հագցրեց ու Հայերին ոչնչացնելու նպատակով ոճրախմբեր կազմեց: Հատուկ կազմակերպությանն առնչվող մանրամասները, կազմավորումն ու գործունեությունը բացահայտվեցին պատերազմից հետո՝ 1919-ին, «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեի ղեկավարների դատավարություն ժամանակ:

43. Հալեպում ԱՄՆ-ի Հյուպատոս Ջեսի Ջ. Ջեկսոնը քաղաքում տեսել է Պարբերդից եւ Սիրիայից գաղթած Հայերի վերապրողներին, նրանց վիճակի մասին հետեւյալը հայտնել Վաշինգտոն. «Ավելի ուշ, 1915 թվականի հուլիսին, երբ Չերմաչափը ցույց էր տալիս 105-ից 115 աստիճան, խարբերդցի մի խումբ կանանց ու երեխաների, որոնց ընդհանուր թիվը 1000-ից ավելի էր, հասցրին Վերին Ջիհեր՝ Դիարբեքիից հարավ, հանձնեցին վայրենաբարո քրդերի մի ոճրախմբի, որոնք ձիերով աքսորականների մեջ պտտվում, ընտրում էին առավել հմայիչ կանանց, աղջիկներին ու երեխաներին: Սարսափած այն հեռանկարից, որ կարող էր վիճակվել իրենց, եթե այդ բոլ բարբարոսների ձեռքն ընկնեն, կանայք, որքան կարողացան, ղիմադրեցին, որը կատաղեցրեց քրդերին, եւ նրանք այդ ղժբախտներից շատերին սպանեցին: Նախքան նրանց, ում ընտրել էին ու հնազանդեցրել, առեւանգելը, քրդերը մյուս կանանց հագուստները պատռոտեցին եւ ստիպեցին ճանապարհը մերկ շարունակել: Այդ անարգանքի ականատեսներն ինձ պատմեցին, որ ավելի քան երեք հարյուր կին Ռաս-էլ-Այն՝ այդ ժամանակ Բեուլին-Բաղդադ երկաթուղու վերջին կայան են հասել բոլորովին մերկ, գզգզված մազերով, որը նրանց վայրենիների տեսք է տվել՝ հատկապես այն բանից հետո, երբ վեց օր անընդհատ քայլել են կիզիչ արեւի տակ: Որոշ ժամանակ անց այդ կանանց մեծ մասը եկավ Հալեպ, ոմանք անձամբ ներկայացան Հյուպատոսարան, ցույց տվեցին իրենց այրված, ձիթապտղի գույն ստացած մարմինները, որոնց մաշկը լայն շերտերով պոկվում էր: Կանանցից շատերը սպիներով եւ վերքերով էին ծածկված, որոնք թուրքերի հասցրած սոսկալի հարվածների հետեւանք էին» (Ջեկսոնը՝ պետքարտուղարին, խո-

րագրված է՝ «Բարրարոսություններ Հայերի Հանդեպ», 4-ը մարտի 1918 թ. Ա.Ա., Պ.Դ., 59 Ն.Փ., թղթ. 867.4016/105):

44. Արչակ Շմավոնյանը եղել է Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպանատան իրավաբանական խորհրդականը: Շվեյցարիայում բարձրագույն կրթություն ստանալուց հետո նա իրավաբանական աշխատանքի է անցել Կոստանդնուպոլսում, նախ Հյուպատոսարանում, ապա՝ դեսպանատանը: Նրա ծառայություններն այնքան բարձր են գնահատվել, որ 1917 թվականի ապրիլին, երբ Թուրքիան դիվանագիտական Հարաբերությունները խզել է ԱՄՆ-ի հետ, դեսպան Աբրահամ Այ. Էլկասը հետք բերել է Ամերիկա: Նա հինգ տարի՝ մինչև սրտի նոպայից մահանալը ծառայել է Վաշինգտոնում, պետդեսպարտամենտի Մերձավոր Արեւելքի բաժնում: Իր բացառիկ ազնվություն, անկողմնակալության համար ունեցել է թե՛ շատ բարեկամներ եւ թե՛ հակառակորդներ:

45. Անկախություն տոնի առթիվ մինչև այժմ էլ ընդունելություններ են կազմակերպում ամբողջ աշխարհի ամերիկյան Հյուպատոսարաններն ու դեսպանատները:

46. Հայերին Հյուպատոսարանում թաքցնելով, Դեւիսը, փաստորեն, հանցանք էր գործում, որովհետեւ տարագրության օրենքը զգուշացնում էր. «Նրանք, ովքեր Հայերին ապաստան, ուտելիք, այլ օգնություն ցույց կտան, կհանձնվեն ռազմական դատարանին, կպատժվեն» (Ա.Ա., Պ.Դ., 59 Ն.Փ., թղթ. 867.4016/105):

47. Ինչպես շատ այլ հայկական ազգանուններ, սա եւս ծագել է մասնագիտությունից (դազանչի թուրքերեն կաթնայագործ է նշանակում): Թուրքիայում շատ հայեր էին այդ արհեստով զբաղվում, դրա համար ազգանունը չափազանց տարածված էր:

48. Դեւիսը գյուղը Բիզմաչեն է կոչում, որը ճիշտ է:

49. Թուրքական քարոզչությունը այս մի քանի դեպքերը

թվարկել է հայերի հալածանքների պաշտոնական արդարացումներում, որոնք Կոստանդնուպոլսում հրատարակվել են 1916, 1917 թվականներին, բաժանվել արտասահմանյան դիվանագետներին:

50. Վկան ի հայտ է եկել պատերազմից հետո, Հայտարարել, որ ինքը տեսել է, թե ինչպես են Կնապին կապել ծառին, գնդակահարել:

51. Դեւիսը միակ ականատեսը չէ, որը հայերի գաղթականները համեմատել է Դանթեի դժոխքի հետ: Շվեյցարացի մի գործարար, ում Հյուպատոս Ջեկսոնն ուղարկել էր Եփրատի երկարությունը ձգվող ճամբարներում ծվարած Հայ տարագիրներին օգնություն բաժանելու, գրում է, որ նրանք նույնիսկ շարժվելու ուժ չունեին. «Այստեղ մտնելիս թող Հույսերդ»՝ պետք է գրվեր այդ անիծյալ գաղթականի մուտքին», - նշում է Ջեկսոնը պետդեսպարտամենտին ուղարկած իր ղեկուցագրում, որը գոհերի օգնության համար ԱՄՆ-ում ստեղծված կոմիտեն բաժանել է մամուլին (Մորգենթաու ավագ, արխիվ: Պատճենը գտնվում է պետդեսպարտամենտի դիվանում):

52. 1915 թվականի այս փաստը յուրովի է բացատրում համակենտրոնացման ճամբարներում դիակիզարանների գործադրությունը, որոնք կառուցվեցին ընդամենը քսանհինգ տարի անց:

53. Գյուլշուկից ելնող մի վտակ թափվում է Տիգրիսը: Չի կարելի չանդրադառնալ այն հանգամանքին, թե ինչ հետեւանք է ունեցել լիճը սպանված հայերի դիակներով լցնելը: Բաղդադում ամերիկյան Հյուպատոս Չարլզ Բրիտելի ղեկուցագրերից հայտնի է դառնում, որ 1915-16 թվականներին այնտեղ որովայնախտի ու արնալուծի ահավոր համաճարակ է բռնկվել:

54. Պատերազմից հետո կայացած ռազմական դատավարության վկայությունները հավաստում են, որ նույնը կիրառվել է Օսմանյան կայսրության այլ տարածաշրջաններում:

55. Հայ կանայք դրամները թաքցնում էին կամ ոմանք կարծում էին, որ թաքցնում են, հեշտոցում, ինչպես Սարբերդում ծառայող բժիշկ-միսիոներուհուն խոստովանել է Սեւ ծովի ափին գտնվող Օրդու քաղաքից մի հայուհի: Նրանց կտտանքների ենթարկողները ամենայն հավանականությամբ ոսկի էին փնտրում: Թուրքերի, քրդերի՝ նման քայլերի դիմելու մյուս բացատրությունը ծայրահեղ այլասերվածությունը կարող է լինել (Ազգային արխիվ, խաղաղության խորհրդատուի ամերիկյան հանձնախմբի փաստաթղթեր, 256 Ն.Փ., քննական վավերագիր թիվ 811): Պարմալինը բժշկուհի էր, որպես բժշկուհու ու կնոջ նրան կարելի էր ավելի վստահել, քան տղամարդուն:

56. Միսիս Ատկինսոնի վկայությունն այդ ուղևորության մասին տեղ է գտել այս գրքի նախաբանում:

57. Լորդ Ջեյմս Բրայսը՝ Ֆոլդանի կոմսը, նախքան Առաջին աշխարհամարտը եղել է ԱՄՆ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանը: Նա ավելի հայտնի էր Արեւելք կատարած գիտահետազոտական ուղևորություններով, որպես արեւելագետ: Բրայսը առաջինն էր, որ Արարատ լեռան լանջին փայտի մի հին կտոր գտավ, որը հետագա սերունդներին Նոյյան տապանը որոնելու մղեց:

58. Դեւիսի զեկուցագրերը ոչ միշտ էին հասնում դեսպանատուն կամ պետղեպարտամենտ: Թուրքական իշխանությունները պարզապես չէին ուզում թույլ տալ, որ երեք միսիոներները Սարբերդում մնան: Տե՛ս՝ Դեւիսը պետքարտուղարին, 17-ը հոկտեմբերի, 1915 թ. (Ա.Ա., Պ.Դ., 59 Ն.Փ., թղթ. 367.116/424): Վաշինգտոնում ստացվել է դեկտեմբերի 6-ին:

59. Միսս Միրթլ Օ. Շեյնը քսանից քիչ անց էր: Չնայած երիտասարդությունը, արտակարգ խիզախ էր եւ անկախ այն վտանգներից, որոնց ենթարկվում էին ինքն ու Մակ-Լորենը, ամիսներ շարունակ հրաժարվում էր հեռանալ Բիթլիսից: Հինգ տարի անց նա լծվելով Կովկասի հայերին օգնելու գործին, նույնիսկ այն բանից հետո, երբ Կարմիր բանակը Հայաստան մտավ եւ ԱՄՆ-ի հատուկ լիազոր-ներկայացուցիչ զննապետ Հասկելը

պահանջեց հեռանալ Հայաստանից, հրաժարվեց լքել հայ որբերին: Հասկելն ու մյուս ամերիկացիները զնացին, Միրթլ Օ. Շեյնը մնաց: Հասկելը չենթարկվելու համար աշխատանքից ազատեց նրան, բայց պատվելի էոնեստ Ա. Յարոուն, որը հաջորդեց լիազոր-ներկայացուցչին, նորից վերականգնեց:

60. Ամերիկյան հյուպատոս Ջեսի Ջեկսոնը, որը պաշտոնավարել է Հալեպում, 1918 թվականի մարտի 4-ին պետքարտուղարին ուղարկած զեկուցագրում նկարագրել է Դեյր-էլ-Ջորի ջարդերը: Այժմ Միրթայում գտնվող այդ բնակավայրն այն ժամանակ Օսմանյան կայսրության տարածքում էր:

«Անմիջական սպանողներն իրավունք ունեին վերցնելու դիակների վրայի հագուստներն ու մյուս իրերը: Հագուստները, որոնք հափշտակել էին ելուզակներն ու այլ անձիք, հետագայում վաճառել, շատերին ծանոթ էին: Բացի փախուստով փրկված մոտ հարյուր հոգուց եւ երկու հարյուր հիսուն փոքրիկ երեխաներից, որոնք քաղաքի փողոցներում թափառում էին շան ձագերի պես, ընդամենը մի շարաթվա ընթացքում վաթսուն հազար հայ կոտորվեց: Նրանցից շատերը հաջողակ գործարարներ էին, որոնց հետ Հալեպի եւ Ալեքսանդրետի հյուպատոսարանները երկար տարիներ համագործակցում էին: Սպանվեցին նաեւ մեծ թվով բժիշկներ, փաստաբաններ, դասախոսներ եւ ուսուցիչներ, ինչպես նաեւ բազմաթիվ ավետարանչական եւ կաթոլիկ քահանաներ, նույնիսկ մեկ կամ երկու կաթոլիկ եպիսկոպոս, չխոսելով արդեն հազարավոր հարգարժան մանր առեւտրականների ու արհեստավորների մասին, որոնցով Թուրքիան կարող էր հպարտանալ» (Ջեկսոնը՝ պետքարտուղարին, Ա.Ա., Պ.Դ., 59 Ն.Փ., թղթ. 864.4016/373):

61. Հայերին գործուն օգնություն ցույց տալու համար Դեւիսը բազմիցս կարող էր մահվան դատապարտված լինել:

62. Վեհերը 1918 թվականի դեկտեմբերի 5-ին զեկուցագիր է գրել, որտեղ արյունոտ ռճրախմբերին, որոնց բանտերից ազատել էին, որպեսզի հայերին վերացնեն, կոչում է «մարդկա-

յին մտազործներ՝ նրանք ասես Հենց այդ նպատակով էին խույս տվել կախաղաններից ու ցցապատից»։ Այդ զեկուցագիրը ընթերցվեց 1919 թվականին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած ռազմական դատավարությունից ժամանակ։

63. Դեիսը գրում է Իսաթ, բայց ճիշտ ձևն, իհարկե, Իզեթն է։ Նա Հայտնի էր ուղղամտությունը, ռազմական նախարարի պաշտոնում նախորդել ու Հաջորդել էր էնվերին։ 1918 թվականին, երբ երիտթուրքերը կորցրեցին իշխանությունը, Թուրքիայի պատերազմից դուրս գալուց քիչ առաջ, նույնիսկ Մեծ վեզիր դարձավ։

64. Ոստիկանական հավանարար էնվերի մտերիմ՝ Կոստանդնուպոլսում գերմանական ղեկավարության ռազմական կցորդ Հանս Հյունմանի մասին է։

65. «Այո, միտք Հյուպատոս, զվարճանալու Համար ա՞յժմ ինչ եք անում։ Դուք Ձեր զեկուցագրերը վերջացրել եք, այնպես չէ՞, այլևս նամակներ չեք գրում» (Փրանսերեն)։

Ա. Բարե, ողջույն (թուրքերեն)։

Բ. Անազարտ, վավերական (լատիներեն)։

Գ. Բարի ճանապարհ (ֆրանսերեն)։

66. Այժմ՝ Կայսերի։

Ա. Լեսլի Դեիսը, որը 1917 թվականի մայիսի 16-ին ընդմիջտ հեռացել էր Նարբերդից, Միացյալ Նահանգներ վերադարձել, տեղյակ չէր կարող լինել այն հերոսամարտերին, ինքնապաշտպանական կռիվներին, որ Հայ ֆիդայիները, շատ Հաճախ նրանց միացած կանայք ու անգամ երեխաները անձնագոհարար մղեցին Սասունում, Մուսա լեռում, Շապին-Գարահիսարում, Վանում, Արեւմտահայաստանի բազմաթիվ այլ բնակավայրերում։

Բ. Հասկանալի է՝ Դեիսը, որը մինչև Նարբերդում ծառայություն անցնելը Արարատ էր բարձրացել, ցեղասպանության տարիներին, կյանքը վտանգելով, Հյուպատոսարանում մի քանի տասնյակ Հայերի պատսպարել, շատերին անձամբ Դերսիմի քրդերի միջոցով Արեւելահայաստան փախցրել, հետագա վկայությունների համար գաղտնի անցել քարավանների ուղիով, լուսանկարել նախճիրի տեսարանները, նույնիսկ դիակներն ու ոսկրակույտերը, չէր կարող նման կարծիք, առավել եւս վերաբերմունք ունենալ իր հովանավորյալների նկատմամբ։ Ինչպես բուն Հաշվետվությունից, այնպես էլ զեկուցագրերից ակնհայտ է դառնում, որ Թուրքական իշխանությունները թշնամաբար էին վերաբերվում, խոչընդոտում էին նրա Հայնապատ գործունեությունը, բոլոր նամակները գրաքննում, շատ-շատերը ազդրավում էին։ Հենց այդ Հանգամաքն էլ նկատի ունենալով, Դեիսը, որը փորձված դիվանագետ էր, ամենայն հավանականությունը միտումնավոր կերպով է բացասական կարծիք Հայտնում Հայերի մասին, որպեսզի Թուրքերի վստահությունը չահի, հնարավոր ու անհնարին բոլոր միջոցներով շարունակի մարդասիրական իր առաքելությունը։

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Լեւի Ա. Դեւիս 5-8, 10, 15,
 16, 19-26, 27-37, 43, 46-49,
 53, 61-68, 70, 71, 73-77, 91,
 103, 115, 127, 139, 151,
 163, 175, 187, 199, 260,
 261, 273, 283, 299, 303,
 320, 332, 334-336, 339-341,
 344-348, 352-363, 365, 366
 Մորգենթաու Հենրի 7, 10, 18,
 24, 28, 30, 37, 40, 47, 49,
 263, 273, 274, 283, 284,
 299, 300, 303, 304, 320,
 321, 332, 339, 340, 342,
 351, 359
 Բլեր Կ. Սյուզան 8, 76, 337
 Գերգերյան Գրիգոր 9, 19, 43-
 46, 48-51, 63
 Աշճյան Մեսրոպ (արք.) 8, 10,
 334
 Հովհաննիսյան Ռիչարդ 10, 19
 Նաջարյան-Սվաճյան Պերճու-
 չի 10
 Սվաճյան Գ. Ստեփան 10, 343
 Հաջիդիմիտրու Կոստանդին
 10
 Թաչման Բարբարա 10
 Պիտեր Վ. 13, 339
 Կարր Զ. Վիլլուր 16, 21, 35,
 66, 70, 77, 345, 346
 Վիլսոն Վուլբրո 18, 33, 49
 Հարրորդ Ջեյմս 18, 53
 Պրիստոլ Մարկ 18
 Հուվեր Հերբերտ 18
 Ռուզվելտ Դ. Ֆրանկլին 18,
 338, 342
 Ռյուսեր 18
 Շյորնեյ-Ռիխտեր Մաքս էր-
 վին 19, 347
 Հիտլեր Ադոլֆ 19, 347
 Ջոնսոն Դ. Ջոն 20
 Գենսլեր Ս. Հերբերտ 21
 Ռայտ Ռ. Օլմեն 22
 Անդերսոն Վ. Գ. 22
 Գուստաֆսոն Օ. Միլտոն 23
 Մակկարտի Ջաստին 23, 337-
 340
 Ահմեդ Հաջի աղա 25
 Սայկա Մարկ 26, 338, 340
 Վաչինգտոն Ջորջ 32, 33
 Կարման Կատարին 33
 Գոտշոլկ Ա. Լ. 33, 34, 341,
 342, 345
 Էնվեր փաշա 36, 39, 243-245,
 337, 351, 362
 Նապ Հենրի 36
 Լեւի Ա. Ֆրենսիս 36
 Մուհամմեդ 2-րդ 37
 Թալեաթ բեյ 39, 351
 Ջեմալ փաշա 39
 Աբդուլ Համիդ 2-րդ 42
 Գյուկալպ Ջիա 42, 343
 Բրայս Ջեյմս 49, 182, 360
 Թոյնբի Առնոլդ 49
 Պոստ Վիլֆրեդ 49, 50
 Լանսինգ Ռոբերտ 49, 342
 Ֆրանկլին Բենջամին 52
 Մոնթ Չարլզ 54
 Ռից Հ. Հենրի 55, 63, 71, 73,
 102, 105, 268, 312, 343, 345
 Սարիթ բեյ (վալի) 55, 66, 85-

87, 232, 252, 350
 Մակ-Դանիելս Լ. էյջ. 58-61,
 70, 77, 211, 223, 235, 247,
 344
 Պետրոսյան Կարապետ 61, 63,
 64, 70, 90, 93, 94, 129, 130,
 189-191, 204, 344, 345
 Ատկինսոն (բժիշկ) 68-70,
 102, 131, 133, 138, 162,
 165, 174, 186, 197, 229,
 309, 311,
 Ատկինսոն Թեյսի 68, 360
 Տոնապետյան Պետրոս 71
 Շիրվանյան Ս. 71
 Ռից Մերի (միսիս) 71, 253,
 345
 Բարտոն Լ. Ջեյմս 74, 342, 345,
 349
 Նալլի փաշա 89
 Հաքքի փաշա 89, 90, 93, 95,
 352
 Էզադողլու Նեման 89, 130,
 131
 Թայրոզլու Ահմեդ 90, 107,
 130, 185, 254
 Մյուհիդդին բեյ 90
 Յունգ (փոխհյուպատոս) 94
 Հայր Ռաֆայել 95, 96
 Թեննքեջյան (պրոֆեսոր)
 100, 108, 354
 Ռից Էռնեստ 102, 191
 Սմիթ (բժիշկ) 102, 105-107,
 157, 312, 314
 Սմիթ (միսիս) 105-107, 109,
 130
 Կնապ Պ. Ջորջ 107, 156, 157,
 311, 314, 359
 Կնապ (միսիս) 157
 Լյուկեջյան 108, 141
 Մահմուդ չավուչ (մունետիկ)
 109

Մեծիկյան Տիգրան 111
 Նապլին Պոլ 111
 Էհման Յոհաննես 112, 113,
 122, 293, 294
 Պիչիոտո Շաուլ 112, 241, 293,
 294
 Ուրֆայան Կարապետ 117
 Ուրֆայան (Հանրմ) 117, 118
 Շմավոնյան Արչակ 126, 358
 Մեհմեդ Ալի բեյ 130
 Վարթեր Ջորջ 135, 136
 Հարուժյունյան Վարդեր 136
 Մուշեղյան Ջավեն 136, 137,
 232, 233
 Մկրտչյան Եսթեր (Էսթեր)
 137, 138, 189
 Մկրտչյան Կ. Թոմաս 137
 Մոնկ-Մեյսոն 137
 Պետերսոն Կարեն 138, 148,
 241
 Ղազանչյան Հայկանուշ 138,
 239
 Ղազանչյան Մարտիրոս 138
 Մաղմանյան Աղեկինա 142
 Մաղաքյան Գրիգոր 143, 162,
 165, 344
 Իսրայելյան (արքեպիսկո-
 պոս) 147, 288
 Գամա Մարգարիտ 147, 148,
 289
 Ղայա Հաջի 148
 Մեծիկյան Թագուհի Տիգրան
 148
 Ռեշիդ բեյ (մյուզիկ) 149, 251
 Ֆիքրի (մյուզիկ) 149
 Ջուլյունյան Սեդրակ 155
 Ալի Քեմալ 156, 157
 Բաղդասարյան Մարիամ 157
 Հողկրոզյան Սիրանույշ 158,
 159
 Հողկրոզյան Հրահատ 159

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

0001

Թոմ Մ. Բ. Դանիել 182, 185
 Անդրյուս Մ. Ալֆեուս 182, 184
 Ֆենեզա Ազնես 182, 183
 Շեյն Օ. Միրթլ 185, 360, 361
 Մակ-Լորեն 185, 360
 Սուվեյման Ֆաիկ փաշա 189,
 190-192, 198, 242
 Սմիթ Վիդգրայ 214
 Թամզարյան Տրդատ 219, 220,
 225
 Դանիելյան Սեդրակ (Սամուել
 Դանիել) 229
 Արթինյան Մ. Առաքել 229
 Բեքմեղյան Հարություն 229,
 241
 Մարստոն-Աղազարյան էթել
 230
 Վարթեր Նազլին 230
 Ղասարյան էլիա 230, 233
 Ճանճիկյան Ռուբեն 231, 233
 Տեր-Հակոբյան Աղավնի 234,
 237
 Յաղջյան Մարիցա 234, 237,
 Յաղջյան Բրաբրոն 234, 237,
 238
 Նուրի բեյ 234, 237, 238
 Տեր-Կարապետյան Ներսես
 238
 Հազգելդյան Նոյեմզար 239,
 240
 Տեր-Պողոսյան էլման 239
 Ասլան բեյ 240
 Մեհմեդ Վեհիբ բեյ 242, 252,
 254, 255, 362
 Ահմեդ Իզեթ փաշա 242, 243,
 250, 252, 254, 257, 362
 Միդհատ փաշա (վալի) 252
 Վինչեյթ Կ. Հենրի 257

Էրվին (պատվելի) 257
 Փիթ (դիվանագետ) 268, 280,
 312, 314
 Հոֆման Ֆիլիպ 299, 332, 340
 Մուհամմեդ Ռեշադ 5-րդ 337
 Սաիդ Հալիմ 337
 Հեյդեր Օսկար 337
 Գինե Վիտալ 338
 Պրոստով Եվգենի 338
 Գյուրջիև Գեորգի 340
 Դանիել Լ. Ռոբերտ 342,
 Գրաբիլ Լ. Ժողեֆ 342, 343
 Լանսինգ Ռոբերտ 49, 342
 Կինրոս (լորդ) 343
 Լեւիա Բեռնար 343
 Յլման Ահմեդ էմին 343
 Ռամաստեր Էռնեստ Էրմոնդ-
 սոն 343
 Մարդին Շերիֆ 343
 Փիրանյան Նազարեթ 345
 Վիլհելմ 2-րդ 346
 Վանզենհայմ Հանս Ֆրեյդեր
 347
 Տրամպեներ Ուլրիխ 348
 Ռիլլեր Ա.Ս. 349
 Հաքքի Հաֆիզ 351
 Սանդերս ֆոն Լիման 354
 Բեհաէդդին Շաքիր բեյ 356
 Ջեկսոն Ջ. Ջեսի 357, 359, 361
 Էլկաս Աբրահամ 358
 Բրիսել Չարլզ 359
 Պարմալին (բժշկուհի) 360
 Հասկել (գնդապետ) 361
 Յարոու Ա. Էռնեստ 361
 Հյուսման Հանս 362

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՅԱՍԻՐՈՒԹՅԱՆ
 ՆՈՐ ՎԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՄԸ 5
 ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ 9
 ՆԱԽԱԲԱՆ 13
 Ցեղասպանություն, վկայում է փաստաթուղթը:
 «Հեռավոր ու դժվարհասանելի» Նարբերդը:
 Դեխը բոի հեծյալ է: Օսմաններն ու երևութուբքերը:
 Գերգերյանը ցեղասպանության վերապրող է ու գիտնական:
 Աստրալի լուսանկարները գտնվում են:
 Հետեւանքը՝ երախտագիտություն եւ պաշտոնանկություն
 ԼԵՍԼԻ Ա. ԴԵԻՒՍԻ՝ 1915-1917 ԹԹ. ԽԱՐԲԵՐԳՈՒՄ ԱՄԵՐԻԿՅԱՆ
 ՀՅՈՒՊԱՏՈՍԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 77
 ՀԱՎԵԼՎԱԾ 261
 Լեսլի Ա. Դեխի հյուպատոսական հաղորդագրությունները
 Նարբերդից՝ 1915-ի հունիս-դեկտեմբեր ամիսներին
 ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆ Է 333
 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 337
 ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 364

1000

Հայաստանի 182, 183
Գրքեր 185, 360, 361
Հայերեն 187, 360
Հայերենի համար 187,
188, 192, 193, 362
Հայերենի 314

312, 314
Հայերենի համար 202, 203
Մեծ Հայաստանի համար 202
Մանկ. Հայերեն 237
Հայերենի համար 237

ԼԵՍՆԻ Ա. ԳԵՎԻՍ

ՄԳԱՆԴԻ ԼԱՄԱՆԳԸ

Խմբագիր՝ ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿՅԱՆ

Գեղ. խմբագիր՝ ԱՇՈՏ ԳԱԼՍԱԲՅԱՆ

Շարվածքը՝ ՀՌԻՓՄԻՄԵ ԽՈՋԱԲԱՇԷՅԱՆ

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

11

9(47925)

7-41

